

6103

6104

6105

6106

6107

4. Ambur 1912

9(497)

U-62

66

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ



Կ Ա Ջ Մ Ե Ց
ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ



ՍԵՐՊ ՉՕՐԱՎԱՐ ԶԻՎՕՎԻԶ

Գ. ԼԱՏՈՐ

Կ. ՊՈՒԻՍ
ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ
1913

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
№ 155

6637-57 2

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԻՆՉՊԷՍ ԾԱԳԵՑԱԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ներկայ պատերազմին բուն պատճառը նոյն իսկ այն շրջափոխութեան մէջն է՝ որուն թուրքիա ենթարկուեցաւ 1908 Յուլիսին, և որ ժէօն-թիւրքերը անցուց իշխանութեան զլուխ: Մակեդոնիոյ մէջ գոյութիւն ունեցող ցեղային վէճերը քննած ատեննիս տեսանք թէ ինչպէ՛ս Յոյները, Պուլկարներն ու Սերպերը, Եւրոպական թուրքիան իրարու ձեռքէ խելու աշխատած ատեննին բնաւ կարեւորութիւն չէին ընծայեր թուրք տարրին, հակառակ անոր որ բուն տէրը ան էր և իրենց ակնկալութեանց հիմ կազմող յաւակնութիւններէն անհունապէս աւելի ամուր իրաւունք մը ունէր այդ երկրին վրայ, -- սուրի, աշխարհակալութեան, արիւնի իրաւունքը: Երբ ծագեցաւ նոր Բէժիմը, Մակեդոնիոյ զանազան ցեղերը մեծ խանդավառութեամբ ողջունեցին կատարուած շրջափոխութիւնը, որովհետեւ այն հաւատքը ունէին թէ ազատ ու թոյլատու պայմաններու շնորհիւ աւելի դիւրաւ պիտի կրնան իրականացնել իրենց բարոյական աշխարհակալութիւնը վիճելի վիլայէթներուն մէջ, սպասելով այն օրուան ուր քաղաքական փոթորիկ մը հնարաւոր պիտի դարձնէր անոնց վերջնական ազատագրութիւնը: Եւ յետոյ, Սահմանադրութեան վերահռչակման մեղրալուանի օրերուն՝ Սամ. Կայսրութեան մաս կազմող բոլոր ցեղերուն քով այն յոյսը կար թէ նոր Բէժիմը իրեն հիմ պիտի առնէ վարչական ապակեզրոնացման դրութիւնը, -- բուն փրկութեան ճամբան, -- աստիճանաբար իրականացնելով դաշնակցական կայսրութեան մը գաղափարը, ինչ որ երկրին ցրիւ ցրիւ տարրերէն ու բեկորներէն միաձոյլ և ուժեղ տէրու լին մը


հիմնելու միակ կարելի միջոցն էր տակաւին : Յանկարծածին և ինքնաբուղի եղբայրական զեղումը որ հերուան թշնամի կամ անտարրեր ցեղերը իրարու գիրկ նետած էր սահմանադրական գինովութեան անդրանիկ և անվերադարձ օրերուն , շատ ալ հնարաւոր ցոյց կու տար այդ աղուոր հեռանկարը : Այս տեսակ բէժիմ մը բոլորովին ձեռնտու պիտի ըլլար անշուշտ պալքանեան ժողովուրդներու յետին մտքերուն յաջողութեան :

Առաջին երեսփոխանական ընտրութիւնները և ժէօն-Թիւրքերուն ազգայնամոլ միտումները պղտիկ հիասթափութիւն մը առաջ բերին թէև , բայց ոչ-Թուրք ցեղերը տակաւին շատ հեռու էին վերջնական յուսահատութենէն . յեզափոխութիւնը դեռ չէր լրացած , երկիրը փոխանցման շրջանի մէջ էր . կրնար ըլլար որ ժէօն-Թիւրքերը հասկնային իրենց սխալը . յետոյ՝ Իթիհատին դէմ Ահրարը և միւս ոչ-իթիհատական տարրերը կային՝ իրենց գլուխը ունենալով Իշխան Սապահէտօնը որ ապակեղրոնացման դրութեան խանդավառ պաշտպան մըն էր : Անոնց գոյութիւնը կը բաւէր որ ոչ-Թուրք տարրերը չյուսահատին Նոր Բէժիմէն , ընդհակառակը հաւատքով նային անոր և աշխատին զայն ամրապնդելու : Այդ հաւատքով լեցուած էին նաև Մակեդոնիոյ ժողովուրդները , և ապացոյցը սա է որ երբ 1909 Մարտ 31ի յետաշրջական փորձը վտանգեց Սահմանադրութիւնը , Յոյն , Պուլկար , Սերպ ինքնաբերաբար փութացին կամաւոր արձանագրուիլ և Մահմուտ Շէվքէթ փաշայի կազմած ազատարար բանակին մասնակցելով՝ Պոլսոյ գրաւումն ու Սահմանադրութեան վերանստատումը դիւրացուցին :

Մարտ 31ի շարժման ձախտութիւնը իրեն հետեանք ունեցաւ յաղթական տարրին՝ Իթիհատին տիկթաթութիւնը : Անոր դէմ ուղղուած էր շարժումը . ան գլուխ կանգնած էր դիմադրութեան գործին . միւս կողմէ՝ Սահմանադրութեան միակ զօրավիզը՝ բանակը՝ անոր հետ էր . ընական բան մըն է որ անիկա օգտուէր յաղթութենէն : Եւ օգտուեցաւ չարաչար կերպով : Տարամերժ իր ազգայնամոլութեամբ , տակաւ իր ափին մէջ կեղրոնացուց երկիրն վարչական գրեթէ բովանդակ կազմը , դժգոհ թողով մասնաւորաբար ոչ-Թուրք տարրերը , որոնք ո՛չ միայն հետզհետէ կը հեռացուէին հանրային պաշտօններէ , այլ միշտ աւելի վտանգի մէջ կը տեսնէին իրենց ցեղային առանձնաչնորհումները : Տարին չլրացած՝ անցած էր Սահմանադրութեան յարուցած զմայելի խանդավառութիւնը . 1908 Յուլիսի և 1909 Ապրիլի գինովութեան յաջորդած էր տեսակ մը ցրտութիւն որ կը սպառնար մշանջենաւորուիլ , վաղանցուկ՝ ինչպէս ամէն ժողովրդային խանդավառութիւն , այդ գինովութիւնն ալ տեղի տուած էր ընթացիկ կեանքի պահանջներուն ու վտանգներուն առջև :

Հիասթափութիւնը մեծ էր մասնաւորաբար Մակեդոնիոյ մէջ : Այնտեղ մանաւանդ զգալի կ'ըլլար ժէօն-Թիւրք տարրին ազգայնամոլութիւնը , որ մէկ նարուածով շրջած էր բնիկ ցեղերու բոլոր ակնկալութիւններն ու երազները : Առաջ՝ Մակեդոնիան իրարմէ խլելու աշխատող այդ ցեղերուն համար Թուրքը գոյութիւն չունէր . Թուրքը լոկ աւանդապահ մը կը նկատէին և հաշուի չէին առնէր . բայց ահա յանկարծ ժէօն-Թիւր-

քերը սկսած էին հասկցնել անոնց թէ ընաւ տրամադիր չեն իրենց տրուած այդ աւանդապահի հանգամանքը պահելու այն տեսակ հողերու համար որոնք կայսրութեան մասերն են ինքնին , և թէ ընաւ չպիտի



Յոսուպի գիւղի մէջ իրենց սեփականատիրութեան իրաւունքը անոնց վրայ : Մակեդոնիոյ բնիկ ցեղերը հիւանդը չմեռած ժառանգութիւնը բաժնելու ելած էին . բայց ահա հիւանդը ողջացած էր , և կը յաւակնէր տէր մնալ իր ստացուածքին : Անհամբեր ժառանգորդ-

ներեն որ այլեւս կասկածի չենթարկուի իրենց սեփականատիրութեան իրաւունքը անոնց վրայ : Մակեդոնիոյ բնիկ ցեղերը հիւանդը չմեռած ժառանգութիւնը բաժնելու ելած էին . բայց ահա հիւանդը ողջացած էր , և կը յաւակնէր տէր մնալ իր ստացուածքին : Անհամբեր ժառանգորդ-

ները սակայն, այդ անակնկալ յարութեան վրայ պիտի մոռնային զիրենք բաժնող հակառակութիւնները, համաձայնութեան մը պիտի գային իրենց յաւակնութեանց մասին և ձեռք ձեռքի տալով պիտի աշխատէին հիւանդը իրապէս մեռցնելու, վախնալով որ ժամանակ անցնելով ուրիշ աւելի զօրեղ ժառանգորդ մը կ'ելլէ մէջտեղ, և իրենց բաժինը կը տանի:

Մակեդոնիոյ ժողովուրդները այս տեսակէտով զօրավիգ պիտի ունենային իրենց ազգակից Պալքանեան անկախ Պետութիւնները՝ որոնք նոյնպէս վրդովուած էին ժէօն-Թիւրքերու 1909ի վերադարձէն: Եւ արդէն այդ ժողովուրդներուն դատը իրենց դատն էր ամէն բանէ առաջ, ինչո՞ւ անոնք կը տենչային ազատագրուիլ՝ եթէ ոչ իրենց միանալու համար: Կրէտէ և Եպիրոս Յունաստանի ձեռք կը մեկնէին, Մակեդոնիա Պուլկարիոյ, Գոսօլիան ու Նովի Պաղարը Սերպիոյ և Գարատաղի: Հիւանդը որուն ժառանգութիւնը բաժնելու ելած էին՝ իր ողջ ըլլալը միայն Եւրոպական Թուրքիոյ ժողովուրդներուն չէր հասկցներ, կը զգացնէր մանաւանդ անոնց պաշտպան Պալքանեան Պետութեանց, օրէ օր աւելի զօրացնելով իր բանակը, և երկրին հասոյթներուն մեծագոյն մասը միանգամայն թէ ցամաքային և թէ ծովային սպառալիսութեանց յատկացնելով: 1910ի աշնան՝ 70,000 հոգինոց բանակ մը Պալքաններու ամէնէն զօրաւոր Պետութեան՝ Պուլկարիոյ սահմաններուն առջեւ ռազմափորձ կը կատարէր: Փօն տէր Կօյց փաշա և գերման մարզիչներ անընդհատ կ'աշխատէին բանակը վերակազմելու. անդիւրացի ծովակալ մը նաւատորմը կարգի կը դնէր. Համիտի շրջանին զանազան միջին միջոցներով աստիճանի բարձրացում ստացած սպաները հեռացուած էին բանակէն, և անոնց տեղը բռնած էին Եւրոպայի մէջ զինուորական կրթութիւն ստացած սպաներ: Կ'ամրացուէին նաև Եւրոպական Թուրքիոյ կարեւոր կէտերը. էտիրնէ, Քրք Քիլիսէ, Շքօտրա, Սկիւպ, Եանեա՝ յաջորդաբար ամենի բերդաքաղաքներ կը դառնային Փօն տէր Կօյց փաշայի հսկողութեամբ: Քայլ առ քայլ՝ Թուրքիա կը զօրանար Մահմուտ Շէվքէթ փաշայի երկաթեայ թաթին տակ, և ասիկա մեծ վտանգ մըն էր Պալքանեան Պետութեանց համար: Զօրաւոր Թուրքիա մը իրենց կողքին, եթէ ուզողակի իրենց անկախութեան ալ չսպառնար, զոնէ չպիտի թոյլատրէր որ իրականացնելու աշխատին իրենց երկրակալական ծրագիրները, որոնցմով վարժուած էին օրօրուելու համիտեան բռնակալ բայց նաև տկար վարչութեան օրով:

Այսպէս ուրեմն ժէօն-Թիւրքերը իրենց մարմնացուցած Նոր Բէժիմով հասարակաց թշնամի կը դառնային միանգամայն թէ Եւրոպական Թուրքիոյ ոչ-Թուրք տարրերուն և թէ Պալքանեան Պետութեանց: Կը հետեւի ինքնին թէ ընդհանուր վտանգը բռնաբար իրարու պիտի միացնէր մէկ կողմէ Եւրոպական Թուրքիոյ ոչ-Թուրք տարրերը ու միւս կողմէ ալ Պալքանեան Պետութիւնները. հերուան անհամաձայնութիւնները աճապարանքով, նոյն իսկ կիսկատար ու վիճելի կերպով մը պիտի հարթուէին, թշնամիները պիտի դառնային բարեկամ ու դաշնակից, և կատաղի պայքար մը պիտի սկսէին Թուրք Կառավարութեան դէմ, առանց անոր ժա-

մանակ ձգելու որ իրենց ամէնուն մէկանց յաղթելու չափ ուժովնայ: Հետեւինք այդ պայքարին զլիսաւոր երեւոյթներուն, որոնք ուղիղ ներկայ պատերազմին պիտի առաջնորդեն մեզ:

Մակեդոնիոյ ժողովուրդներուն և Պալքանեան Պետութեանց այդ մտավախութիւնը տարակոյս չկայ որ ուշ կամ կանուխ պատճառ պիտի



(Վերը) Բուլղարիցայի առժամեայ գաղտնադեմ հիւանդանոցը
(Վարը) Պուլկարական Կարմիր Խաչը վերաւորներ կը փոխադրէ

ըլլար Եւրոպական Թուրքիոյ խառնակման: Լաւագոյն որսը պղտոր ջուրի մէջ կ'ըլլայ. անոնք պիտի աշխատէին միշտ աւելի պղտորելու ջուրը, չափունակ խռով վիճակի մէջ պիտի պահէին երկիրը, անկարելի դարձնելու

չըջանը վերաբանալով Նոր Բէժիմին գլխուն: Ընկերակցութեանց օրէնքին քուէարկումը 1910ին, որուն 4րդ յօդուածը բացարձակապէս կ'արգիլէր ազգային անունով ու ծրագրով Ընկերակցութեանց կազմութիւնը, և որ յայտնապէս կայսրութեան մաս կազմող ազգերու ինքնաշատուկ քաղաքական խմբակցութիւնները ջնջելու կը միտէր, բոլորովին աւելցուց դժգոհութիւնը Մակեդոնիոյ մէջ, ուր բազմաթիւ Պուլկար, Յոյն ու Սերպ քաղաքական Քիւլպներ կազմուած էին Սահմանադրութեան հռչակումէն ի վեր: Բոլոր այդ քիւլպները պէտք էին «Օսմանեան» քիւլպներու վերածուիլ, վաւերացնել տալով իրենց ծրագիրը: Այդ կերպով կրօնքան յարատեւել մեր Գաշնակցական, Հնչակեան, Վերակազմեալ Հնչակեան և Սահմանադրական-Ռամկավար կազմակերպութիւնները: Սակայն օրինադիժը պատրաստողները այնքան նկատի չունէին հայ քաղաքական Ընկերակցութիւնները, որքան Մակեդոնիոյ Քիւլպները որոնք ազգային և յաճախ նաև անջատողական բրտրականտի վտանգաւոր վառարաններ կըրնային դառնալ: Ինչ որ անցեալին մէջ գաղտնի կ'ըլլար, Սահմանադրութեան պարզեւած համեմատապէս ազատ պայմաններուն շնորհիւ կը յաջողէին ընել յայտնի համարձակ, հետեւաբար նաև աւելի հեշտիւ: Կարելի էր սակայն նուազ սրբաբնեան դրութեամբ մը մաքառիլ անոնց բրտրականտին դէմ մասնաւորաբար ստեղծելով կեանքի հեշտ պայմաններ բնիկ ժողովուրդին համար: մինչդեռ Ընկերակցութեանց օրէնքը, իր բոլոր խրատութիւններով ո՛չ միայն չկրցաւ անջատողական Բրտրականտը արգիլել, այլ պատճառ դարձաւ որ հրոսախուժներն ու գաղտնի Ընկերակցութիւնները բազմանան և անոնց դաւադրական գործունէութիւնն ալ հետզհետէ աւելի տարածուի:

Նոյն այդ 1910 տարուան ընթացքին՝ Երեսփ. ժողովը քուէարկեց նաև ուրիշ օրէնք մը, չէթէներու օրէնքը, որ Բումէլին պիտի խառնակէր մէկ ծայրէն միւսը, պիտի յարուցանէր այսպնական ապստամբութիւնը և կայսրութեան եւրոպական ստացուածքները պիտի ենթարկէր անխնայութեան մը զոր այլևս ոչինչ պիտի կրնար դարմանել, և որ տեւեց մինչև ներկայ պատերազմը: Մակեդոնիոյ և Ալպանիոյ մէջ առաջ եկած անջատողական շարժումները զսպելու արմատական միջոց մըն էր այդ օրէնքը: սակայն խմբագրուած էր անանկ եղանակով մը որ կրնար դուռ բանալ զեղծումներու: իր 14րդ յօդուածը՝ չէթէներու գործունէութեան պատասխանատու կը նկատէր գիւղերու Բէսը, գորուճին և ընդհանրապէս բովանդակ բնակչութիւնը: Եթէ ասոնք՝ հակառակ իրենց բովանդակ բարիկամեցողութեան՝ չկարենային այդ պատասխանատուութենէն ճողոպտիլ, իրր մեղսակից պիտի նկատուէին: Խիստ էին պատիժները զորս օրէնքը կը սահմանէր: չէթէի մը մասնակցող ամէն մարդ 10 տարուան բանտարկութեամբ պիտի պատժուէր: Եթէ մէկը վիրաւորած կամ սպաննած ըլլար՝ կախաղան պիտի հանուէր: մահու պատիժ կը սահմանուէր նաև հրոսապետներուն և հրոսակախուժներ կազմակերպողներուն: Զանազանութիւն չկար զէն ի ձեռին կամ առանց զէնքի ձերբակալուող հրոսակներուն միջև: Մահուամբ պիտի պատժուէին նաև այն բոլոր մարդիկը որոնք հրոսա-

խուժներ հալածող զինուորներուն սխալ տեղեկութիւններ տալով՝ անոնց սպանութեան կամ վիրաւորուելուն պատճառ պիտի դառնային: Եթէ չէթէ մը գիւղի մը մէջ ապաստանէր և այնտեղէն կրակէր զինուորներուն վրայ, նոյն գիւղին բոլոր բնակիչները հինգ տարուան աքսորի պիտի դատապարտուէին և պիտի քշուէին ուրիշ վիայէթներ: Յետոյ՝ պատերազմական ատեաններ պիտի կազմուէին ամբողջ երկրին մէջ՝ հրոսախուժներու վերաբերող հարցերը քննելու համար: Ամէնէն վտանգաւորը սակայն 17րդ յօդուածն էր որ ընդհանուր զինահաւաքում կը տրամադրէր: բովանդակ ժողովուրդը կառավարութեան պիտի յանձնէր իր քով գտնուող զէնքերը: անոնք որոնց քովէն արգիլուած զէնք պիտի ելլէր զինահաւաքութենէն վերջ՝ մէկ տարիէն վեց ամսուան բանտարկութեան պիտի դատապարտուէին: Զէնքերը հաւաքելու կոչուած պաշտօնեաներն ու ոստիկան-զինուորները իրաւունք ունէին գանակոծութեամբ պատժելու բոլոր անոնք որոնք իրենց զէնքերը կը ծածկէին:

Այս տեսակ տրամադրութիւններ բնական է որ ցաւալի ծայրայեղութեանց և զեղծումներու դուռ պիտի բանային, ինչպէս որ ալ եղաւ: Ալպանիոյ մէջ ուրկէ սկսան առաջին զէնքի հաւաքումները, գանակոծութիւնն ու ընդդիմացողներու տուններուն հրկիզումը, և աւելի տխուր ծայրայեղութիւններ՝ ինչպէս կիներու լիւում, սպանութիւններ, ամուսիններու խոշտագում իրենց կիներուն առջև, և այն, ստեղծեցին զարհուրանքի դրութիւն մը, որուն շնորհիւ կարելի եղաւ բաւական քանակութեամբ զէնք հաւաքել: սակայն հողիւ խստութիւնները դադրած, հաւաքուածներուն տեղ ուրիշ աւելի լաւ զէնքեր կրցան երկիր մտնել, ինչպէս ցոյց տուին յաջորդ ալպանական ապստամբութիւնները: Ալպանիոյ մէջ այսքան խստութեամբ գործող իշխանութիւնները բնական է աւելի անողորմ միջոցներու պիտի դիմէին Մակեդոնիոյ մէջ, ուր չէթէներու գործունէութիւնը վերսկսած էր քիչ մը ամէն կողմ: Մանաւանդ որ հաւաքուած զէնքերը երբեք գոհացուցիչ չէին: բնիկ ժողովուրդը կը փութար յանձնելու խեղճ ու կրակ, ընդհանրապէս անպէտ զէնքեր, բայց լաւ զէնքերը երևան չէին ելլեր: Իշխանութիւնները դիմեցին քաւազանին, կատարուեցան խմբական ձերբակալութիւններ, ստեղծուեցաւ սարսափի ու զուլումի դրութիւն: 1910 յուլիսին՝ Սկիւպի սանճագին բոլոր քաղաքներուն պուլկար ժողովուրդը տունը տեղը թողով անցաւ Պուլկարիա: Եթիպի մէջ՝ պուլկար հասարակութեան վարչական ժողովին նախագահը, տանջանքի չդիմանալով անձնասպան ելաւ: Անատոլըն բերուած երկու վաշտ զօրքեր Մանասթըրի վիայէթը տակն ու վրայ կ'ընէին զէնք փընտըռելու համար: խուզարկութեանց ընթացքին զարհուրելի զէպքերը անպակաս էին: Գործուած ծայրայեղութիւնները կ'աւելցնէին դժգոհներութիւր, և այս վերջինները կամ սահմանը անցնելով Պուլկարիա կ'ապաստանէին և կամ չէթէներու կը մասնակցէին: Քրուչէվօի, Տէմիր-Հիսարի, Բէրլէբէ մէջ՝ գիւղացիները սոսկալի գանակոծութեանց տակ կիսամեռ կ'իլնային, իրենց գիւղերը կը հրկիզուէին, ցանքն ու ծառերը կը փճացուէին: Եւ բոլոր խոշտանգողները, մահուան սպառնալիքի տակ, իրենց փեռեկ-

տուած ձեռքերով ստիպուած էին ստորագրել թուղթեր թէ բնաւ բռնութիւն չէ գործուած :

Նոյեմբեր 24ին՝ Սէրէզի երեսփոխան Խրիսթօ Տալչէֆ Խորհրդարանին մէջ պատմեց Քալայչիէֆ քահանային մասը Սելանիկի վիլայէթին եւ նիճէ-Վարտար քաղաքին մէջ, ուր մասնաւորաբար խիստ եղած էին բռնութիւնները, այն կասկածով թէ տեղւոյն գիւղացիները կ'օժանդակին քաղան պապատակող Աբասթօյի հրոսախուժքին : Տալչէֆ էֆ-ի պատմութեան համեմատ, հոկտեմբեր 16-29՝ քաղան ամբողջովին պաշարման ասկ կ'առնուէր, զինահաւաքութեան պատրուակով, գիւղացիներէն ոչ ոք



ՆԱՆՔՈՒՅԵԱԼ Տ. ԵՈՒՔԻՄ ՊԱՏՐԻԱՐԺ

կրնայ տուններէն դուրս ելլել, նայն իսկ ջուր բերելու կամ անասուններուն ջուր տալու համար : Աւելի քան 300 հոգի, իբր քօմիթէճիներուն մեղսակից, իրարու ետեւէ կը պառկեցուին գետնին վերայ և կը գանակոծուին անխնայ, յետոյ բանա կը նետուին գրեթէ կիսամերկ, առանց անկողնի, նոյն իսկ առանց սընուկի : Չարաչար կը գանակոծուին ահաւազերէց Քալայչիէֆը : Վայրագութեան նրբութեամբ մը գաւազաններ կը տրուին ձերբակալուած Պուլկարներուն, որոնք, սպառնալիքներու տակ, կը ստիպուին երկարել իրենց քահանային տանջանքը, բռնի զայն գանակոծելով : Յետոյ, քահանային կիսամեռ մարմինը կը նետուի անկողնի մը վրայ և կը


տարուի կառավարական պաշտօնատունը, ուր քիչ ետքը պիտի սպանուէր հրացանի հարուածով մը (*) : Սէրէզի երեսփոխանին այս յայտնութիւնները շատ լուռն ընդունելու տեղի տուին Խորհրդարանին մէջ : Յաջորդ օրը՝ Սկիւպի երեսփոխան Թէօտօր Բավլօլ ու Մակեդոնիայէն կը դառնար, աւելի զահանդական մանրամասնութիւններ հարդրեց Խորհրդարանին : — «Ճշմարտապէս յուզիչ տեսարան մը պարզուած էր այժմիկ յոյն երկրին մէջ, կ'ըսէր, հասուն ցորենի ահագին դէզեր, որոնք կը փտին դաշտերուն ու հովիտներուն մէջ, տունները ամայի, ընտանի անասուններ մնացած անտէր և դաշտերուն ու մարգագետիններուն մէջ սլքապալու վրայ, այգիներն ու պարտէզները քարուքանդ, ահա ինչ որ կը տեսնուէր հոն» : Բավլօլ էֆէնտի յետոյ մանրամասնաբար կը նկարագրէր կատարուած խոշտանգումները, անուններով, տեղերով, կը յիշատակէր կարգ մը պաշտօնականներ ու կառավարիչներ՝ որոնք կատարուած բռնութիւն

(*) Տեղական իշխանութիւնները պնդեցին թէ քահանան ինք հրացանը խլած է ժանտարմույի մը ձեռքէն և ինքզինքը սպաննած : Ըստ վկայութեան կը հաստատէին որ քահանայն ոչ ոք անգամ չուներ հրացանը վերցնելու :

ները քաղաքի պահելու համար թոյլ չէին տար գիւղացուց որ մտանկայ քաղաքները երթան բժշկական խնամք փնտռելու : Կը յայտնէր մասնաւորաբար թէ Քօրրիլի քաղաքին Չիչէլօ նահիյէին միւստիքը նոր տեսակ նոր բացած տանջանք մը հնարած է, — մետաղեայ թելերով բռնութիւնները սեղմելու շարժարանքը : Իր հաշիւներուն համաձայն՝ 1910 յուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներուն՝ Սկիւպի շրջանակին մէջ 1104, Մանասթըրի շրջանակին մէջ 285 և Սելանիկի շրջանակին մէջ ալ 464 հոգի խոշտանգուած էին զինահաւաքութեան պատրուակով : Ասոնցմէ զատ՝ խրմբական գանակոծութեան ենթարկուած էին (Սկիւպի և Մանասթրի շրջանակներուն մէջ) 700 հոգի, բանտարկուած էին 1436 հոգի : մեծ մասամբ գանակոծուելէ վերջ, 73 հոգի ալ այս խոտուածներէն հետեւանքով մեռած կամ խեղանդամ դարձած էին : Իսկ յուլիսէն տեւջ Եէնիճէ-Վարտարի, Վօտէնայի և Կէվկէլի քաղաքներուն մէջ խոշտանգուած էին 911 հոգի, ինչ որ զինահաւաքութեան զոհերուն ընդհանուր թիւը կը բարձրացնէր 4973ի : Տակաւին ատար վրայ պէտք էր բարդել Պուլկարի ապաստանած 2053 փոխատականներն ու բռնութիւններու հետեւանքով լեռը ելած 2010 հոգին : Սերպ երեսփոխան Բօրիչ, Երեսփ. Ժողովոյ նոյն նիստին մէջ միւսնոյն գանգատները յայտնեց շին Սերպիոյ գրեթէ ամէն կողմը զինահաւաքութեան պատրուակով գործուած ծայրայեղութեանց մասին : Իրեն յաջորդեց Բօզիտի էֆէնտի, որ գանգատեցաւ Յոյն Ժողովուրդին անունով, Իսկ Վլախով էֆէնտի, Սելանիկի Պուլկար ընկերվարական երեսփոխանը, անդրադառնալով Եէնիճէ-Վարտարի ցաւալի դէպքերուն, մանրամասն հաշիւներով ցոյց տուաւ թէ ինչպէ՞ս 100-120 գիւղեր՝ սեպտեմբեր ամսուն երկար ժամանակ պաշարուած մնացին զինահաւաքութեան սրտածառու : «Ահրող տասներինը օր, յարեց, գիւղացիք չկրցան իրենց հողերը խնամել, չուշմաները (սուսալ), խաղողները և սիւս բոլոր բերքերը փճացան, գիւղացիք, 15-20,000 ոսկիի կորուստ մը ունեցան, և տարակոյս չկայ որ կառավարութիւնն ալ իր կարգին վնասի ենթարկուեցաւ» : Այս բոլոր յայտարարութիւնները ծանր տպաւորութիւն գործեցին ժողովին մէջ : Իթիհատի խորհրդարանական խմբակցութեան շիքըր Խալիլ պէյ՝ այդ տպաւորութեան թարգման եղաւ, ժողովին բեմէն յայտարարելով. «Բաղմաթիւ երեսփոխաններ իշխանութեանց կողմէ գործուած անկանոնութեանց արձագանգ եղան այստեղ, Մենք այն կարծիքէն ենք որ կառավարութիւնը, ի շահ արդարութեան, պէտք է ճշդէ իրողութիւնները և դատաստանի ենթարկէ յանցաւորները, ըլլան զինուորական թէ ոչ-զինուորական : Ասկէ զատ, կը պահանջենք որ կառավարութեան կիրարկած միջոցները՝ ապագային՝ աւելի անկողմնակալութեանք ու փափկութեամբ ի գործ դրուին» :

Այս երկար վիճարանութիւնները որոնք տեղի ունեցան Խորհրդարանին մէջ, ինչպէ՞ս նաև մեծամասնութեան անունով Խալիլ պէյի կողմէ եղած պահանջումը, օգուտ չունեցան : Կառավարութիւնը հեռու էր Մակեդոնիայէն, Ալպանական հարցը և ուրիշ կնճռոտութիւններ զինքը շղաքըզիւ դարձուցած էին, ու Մակեդոնիոյ մէջ ծայրայեղութիւնները և բռն

նութիւնները կը շարունակուէին անխնայ: 1911 Յունուար 2ին, ընդդիմադիր երեսփոխան մը՝ Լուսթի Ֆիքրի պէյ, Խորհրդարանի բեմէն պէտք տեսաւ ծանրանալու Մակեդոնիոյ ցաւալի դէպքերուն վրայ. յայտնեց նաև թէ Իսլամներն ալ նոյն բէժիմին ենթակայ են, հոգ չէ թէ տարբեր պատճառներով(*), և այդ առթիւ նկարագրեց զոնքերուն տրուած կարգ



Էջը վնասանակ շուրջ թիւսնուտոր կրեանքտան

մը շարչարանքներ, — ինչպէս տուող քօփը, զնսան, և այլն: Մինչեւ յաջորդ տարին՝ մինչեւ ալպանական վերջին ու մեծ ապստամբութիւնը՝ այդ բռնութիւնները պիտի շարունակուէին Մակեդոնիոյ մէկ ծայրէն միւսը: Ծայրայեղութիւնը անշուշտ ծայրայեղութիւն պիտի հրաւիրէր. լեռ բարձ


(*) Սթօքոլմի նախորդ դեսպան և Բարիզ ապաստանած Շէրիֆ փաշայի դաւաճարական մէկ մթին ձեռնարկին մասնակցութեան ամբաստանութեամբ:

բացող Պուլկար հրոսակները պարագ չէին կենար. իւրաքանչիւր բռնութեան կը պատասխանէին աւելի կամ նուազ շունդալից մահափորձով մը. պօմպաները նորէն սկսած էին պայթիլ այս ու այն կողմ, և մասնաւորաբար երկաթուղիի գիծերու վրայ: Ծանօթ է Շիֆալի մզկիթին մէջ պայթած պօմպայի դէպքը որ Իսլամներու մահուան և պուլկարական բաւական կարեւոր շարդի մը պատճառ դարձաւ: Միայն զինահաւաքութեան առթիւ կիրարկուած բռնութիւնները չէին դժգոհութեան շարժառիթ. կըրթական հարցը, զինուորագրութեան հարցը, առանձնաշնորհմանց և անհաւասարութեան հարցերը որոնք անպատեհ ժամանակներու մէջ կը յուզուէին առանց բնաւ գոհացուցիչ կերպով մը կարգադրուելու, նոյնքան դժգոհութեանց պատճառներ էին: Պուլկարիոյ Ֆէրոսիմանտ Չարին, յետոյ Սերպիոյ Բէթար թագաւորին յաջորդական այցելութիւնները Պոլիս, 1910ի դարնան, որքան ալ զուտ տնտեսական նպատակ ունէին. յոյս կը ներշնչէին թէ կարելի պիտի դարձնեն Մակեդոնիոյ խաղաղեցումը: Այդ ակնկալութիւնները չպսակուեցան: Պուլկարիա, Սերպիա, Յունաստան և Դարատաղ հետզհետէ աւելի կը խճողուէին Եւրոպական Թուրքիոյ փախստականներով, ինչ որ իրենց բարգաւաճման գործը կը դժուարացնէր և թշուառութեան դուռ կը բանար: Այս բոլոր իրադարձութեանց ընթացքին նշմարելի էր կարեւոր երեւոյթ մը. — Յոյն, Պուլկար, Սերպ այլևս իրար չէին ուտեր առաջուան պէս, այլ իրարու ձեռք կուտային. երբեմնի իրերասպան չէթէները սկսած էին միասին գործել: Ճիշտ այդ տեսններն է որ Պալքանեան Դաշնակցութեան հիմերը կը դրուէին, ինչ որ փաստ մըն է թէ Պալքանեան Պետութիւնները կարծուածին, մանաւանդ իրենց յայտարարածին չափ անհաղորդ չէին չէթէներու գործունէութեան: Շատ չանցած՝ Պոլսոյ մէջ պիտի իրականանար նաև Յունաց Պատրիարքարանին և Պուլկարներու Էկզարքարանին հաշտութիւնը, միշտ Պալքանեան Պետութեանց ուղղակի թելադրութեանց շնորհիւ(*): Պատրիարքարանը և Էկզարքարանը, չէթէներուն պէս, բոլորովին անհաղորդ չէին Աթէնքի և Սօֆիայի քաղաքական թաքուն անցքերուն:

1910ի սկիզբը՝ Յոյն և Պուլկար տարրերը տակաւին չատ հեռու էին այդ մերձեցումէն. եկեղեցիներու և դպրոցներու սեփականութեան մասին վաղուց գոյութիւն ունեցող անհամաձայնութիւնը որ շատ սերտորէն կապուած էր արդէն իրենց քաղաքական յաւակնութեանց հետ, զիրենք բոլորովին իրարու ներհակ ուղղութեանց մէջ կը մղէր: Նոյն տարուան մարտ ամսուն Օսմ. Երեսփ. Ժողովէն ու Ծերակոյտէն ընդունուած և Սուլթանին կողմէ վաւերացուած Եկեղեցիներու Օրէնքը բոլորովին կը մեծցնէր իրենց անհաշտութիւնը: Նոր օրէնքին տրամադրութեանց համաձայն, վիճելի վայրերու մէջ՝ բնակչութեան երկու երրորդը կազմող մեծամասնութիւնը պիտի տիրանար եկեղեցիներուն: Բնական է այս տեսակ օրէնք մը մեծապէս պիտի նպաստաւորէր Պուլկար տարրը, ի վնաս Յոյն

(*) Ռուսիա, թէ՛ ուղղակի Բէթերսպուրկէն և թէ՛ իր Պոլսոյ դեսպանին՝ Պ. Չարիքօֆի միջոցաւ, մեծագոյն դերը խաղացած է այդ հաշտութեան մէջ, որ անհրաժեշտ էր Պալքանեան Դաշնակցութեան կազմութեան համար:


տարրին, քանի որ վիճելի շրջանակներուն մէջ ընդհանրապէս Պուլկար
ները կը կազմէին ընակչութեան մեծագոյն մասը: Շուտով բողոքները
ծայր տուին: Իզմիրի, Պէրիայի, Սէրէզի, Ակուսթօսի, Սաթիսթայի, Աե



Պուլկար բանակին հետեւող պարենաւորման սայլերը Մուսթաֆա փաշայի մէջ
ԻՐԱՆԻՄ ԿԸ ԿՇՏԱՑՈՒՄԻՆ ԲԱՆԱԿՆԵՐԸ

լանիկի, Մանասթրի և Էքսթերնիի մէջ Յոյները միթիւններ գումարե-
լով բուռն ճառեր արտասանեցին: Հանգուցեայ Տ. Եոաքիմ Պատրիարքը
այս առթիւ ծանր միջադէպ մը ունեցաւ Մահմուտ Շէվքէթ փաշայի
հետ. յետոյ զնաց պալատ՝ Սուլթանին ներկայացաւ, և ձէնէր վերա-

դարձին նիստի հրաւիրեց Պատրիարքարանի երկու վարչական ժողովները,
որոնք որոշեցին միջազգային դաշնագիրներու հիման վրայ պաշտպանել



Դեղվածքը մեղքովն զնազանջուց. Ճ.Պ. վնաստակ, զգրհատակէտի ներդրուից ժմուք

Օրթոտոքս Եկեղեցիին իրաւունքները(*), թեմակայ Մէտրապոլիտներու տե-
ղեկագրի իրողութիւնը և գումարել Համադգային Ընդհանուր ժողով.
(*): Բաւէրիուած օրէնքը շատ համաձայն չէր Պէրլինի Դաշնագրին 62րդ յօդ-
ուածին որ Թուրքիոյ մէջ կրօնքներու ազատութիւնը կը հասցէ:

եթէ կառավարութիւնը արգիլէր Համազգային ժողովին գումարումը, Պատրիարքն ու վարչական ժողովները պիտի հրաժարէին և եկեղեցիները պիտի փակուէին, ինչպէս երբեմն ըրած էր արգի Երմանոս Է. Պատրիարքը, Համախի օրով, երբ Տեղապահ էր: Այս որոշումները տրուած միջոցին՝ Պուլկարներու էկզարքը, Տ. Եոսիֆ, Պայատ երթալով Կայսեր երախտագիտութիւն կը յայտնէր՝ վերոյիշեալ օրէնքով իր հօտին իրաւունքները նուիրագործած ըլլալուն համար: Այսպէս ուրեմն՝ Ֆէնէրի Պատրիարքարանն ու էկզարքարանը իրարու բոլորովին ներհակ տրամադրութեանց մէջ էին այդ օրերուն(*):

Պատրիարքարանը, Ժէ, ԺԷ և ԺԹ դարերու մէջ տեղի ունեցած նախընթացներու վրայ հիմնուելով, Սեպտեմբեր 14ի համար նիստի հրաւիրեց Համազգային Ընդհանուր ժողովը, որ պիտի գումարուէր Պատրիարքին նախագահութեամբ. պիտի մասնակցէին Սինոդին և Քաղաքական ժողովին անդամները, Մակեդոնիոյ եպիսկոպոսները ներկայացնող տասերկու Մէտրապոլիտներ, Կ. Պոլսոյ արքեպիսկոպոսական թեմը ներկայացնող երկու աշխարհականներ, և բոլոր նահանգներէն ընտրուած մէյ մէկ աշխարհական պատգամաւոր: Կառավարութիւնը արգիլեց գումարումը, ծանուցանելով որ խիստ միջոցներու պիտի դիմէ՝ եթէ անհնազանդութեան մը հանդէպ գտնուի: Պատրիարքարանը, առանց այդ արգիլքին կարևորութիւն ընծայելու, պատգամաւորներ ընտրել տուաւ և որոշեալ օրը նիստի հրաւիրելու ղարկեց: Բայց Կառավարութիւնը զինուորական շղթայի տակ առած էր Պատրիարքարանը: Ինը պատգամաւորներ ձերբակալուելով իսկոյն ոստիկանատուն առաջնորդուեցան: Քիչ ետքը ուրիշ մէկ քանի պատգամաւոր ալ ձերբակալուեցան և Պատրիարքարանը ստիպուեցաւ անորոշ ժամանակով «յետաձգել» Համազգային ժողովին գումարումը:

Միջադէպէն յաղթական ելած Կառավարութիւնը սա գոհացումն ալ ունէր տակաւին թէ Եկեղեցիներու Օրէնքին շնորհիւ Յոյն և Պուլկար տարրերը չպիտի կրնան ձեռք ձեռքի տալ իրեն դէմ: Վեց ամիս վերջ սակայն, մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցած էր. անանկ ատեն մը ուր առաջին անգամ ըլլալով Պուլկարիոյ և Յունաստանի Կառավարութեանց մերձեցման խօսքը կը դառնայ Եւրոպայի մէջ, Պոլիս ալ Յունաց Պատրիարքարանը ու Պուլկարներու էկզարքը հաշտութեան ձեռք կը կարկառէին իրարու: Օսմ. Խորհրդարանին Պուլկար երեսփոխաններուն այցելութիւնը Յունաց Պատրիարքին, յետոյ Յոյն երեսփոխաններու այցելութիւնը Պուլկարներու էկզարքին, և այս կրկին այցելութեանց յաջորդող փոխադարձ համակրական արտայայտութիւններ կը զուգադիպէին այն սիրալիր յայտարարութեանց զորս Աթէնք և Սօֆիա նոյն օրերուն կը շուրջէին իրարու: Մայիսին էկզարք Տ. Եոսիֆ կը յայտարարէր. «Երկու

(*) Քիչ ետքը երբ Ֆէրիսիման Չար Պոլիս այցելեց, Յունաց Պատրիարքը յայտնաբեր անտարբեր ու արհամարհոտ ցոյց տուաւ ինքզինքը. յոյն ժողովուրդը նոյնպէս Ընդհակառակը, Պատրիարք և ժողովուրդ համակրութեան նոյն իսկ չափազանցուած ցոյցերով ողջունեցին Սերպիոյ Թագաւորը, որ նոյնպէս Պոլիս այցելեց Ֆէրիսիմանի մեկնումէն վերջ:

եզրայր տարրերուն համաձայնութիւնը օր օրի կը շեշտուի: Երկուքս ալ օրթոտոքս ժողովուրդներ ենք և չենք կրնար մոռնալ անցեալը: Այսօր՝ ուր բովանդակ Եւրոպայի մէջ մերձեցման հով մը կը փչէ, ժամը եկած է այլեւս համախուսմբ գործակցութեան. երկու տարրերն ալ շատ լուրջ պատճառներ ունին համաձայնելու: Մենք արդէն զաւակներն ենք Մեծ Եկեղեցիին, որուն ծոցին մէջ մեծցած ենք: Համաձայնութեան գաղափարը լայնօրէն կը տարածուի, և ասոր ապացոյցը սա է որ զաւառներու մէջ հիմակուց դադրած են հերուան արիւնալի ընդհարումներն ու կռիւները՝ արդէն իսկ բարեկամացած երկու տարրերուն միջեւ»: Համիմաստ յայտարարութիւն մը կ'ընէր նաև Տ. Եոսիֆ Պատրիարք՝ ըսելով. «էկզարքարանին հետ բանակցութեան մէջ ենք՝ համաձայնութիւն մը գոյացնելու համար: Հերձուածը սխալում մը եղաւ: Ինչ որ ալ մտածեն Պուլկարները՝ սա ստոյգ է որ Ֆէնէր հակառակ չէր Պուլկար ազգին: Իմ կարծիքովս՝ հերձուածը վերնալու համար պէտք է որ Պուլկարական Եկեղեցին ներողութիւն խնդրէ Պատրիարքարանէն: Ս. Սինոդին կը պատկանի որոշել թէ կարելի է այդ հարկէն խուսափիլ», — այսինքն առանց ներողութիւն ստանալու հերձուածը բառնալ (*): Թէ այս անակնկալ համաձայնութիւնը թեղադրուած էր նոյն ինքն Պուլկար և Յոյն կառավարութեանց մերձեցումէն, ասիկա բնաւ տարակոյս չի վերցնել: Նոյն տարուան օգոստոսին՝ նախկին պուլկար երեսփոխան մը՝ Պ. Հաճիէֆ՝ վարագոյրը կը բանար, հաւաստելով թէ Մակեդոնիան որ երբեմն պուլկարեւոյն վէճերուն շարժառիթն էր, ո՛չ միայն անհամաձայնութեան տեղի չպիտի տայ այլեւս, այլ ընդհակառակը մերձեցման պատճառ մը պիտի դառնայ (**): Կրնար աւելցնել՝ —, իրենց կառուած միջոցին պատառը ուրիշին բերանը չձգելու համար...



ՀԱՍՈՒՆ ԲԻՉՂՔ ՓԱՇՒԱ
ԵՊՕՏՐԱՅԻ ԿԵՐՈՍ ԱՂԱՏԱՍԱՆՆԸ


Օսմ. կառավարութեան մէկ նոր կարգադրութիւնը Մակեդոնիոյ մասին, բոլորովին պիտի աւելցնէր վտանգը երկու տարրերուն համար ալ հաւասարապէս և պիտի ստիպէր զանանք որ աճապարեն իրենց համաձայնութիւնը աւելի դրական ձևի մը վերածելու, և ուրիշ շահակիցներ

(*) Այդ օրերուն՝ Տ. Եոսիֆ Պատրիարքի նախաձեռնութեամբ Դրան մատուցուեցաւ հաւաքական Թաքիր մը՝ զինուորագրութեան և կրթական հարցերու մասին. Պուլկարներու էկզարքը, ինչպէս մեր Դուրեան Պատրիարքն ալ ստորագրեցին այդ Թաքիրը:
(**) L'Europe et la politique orientale (1878—1912). Par le Comte de Landemont. Paris, 1912.

իրենց թմրութենէն արթնցնելով գործակցութեան հրաւիրելու: Ճիշտ այն միջոցին ուր Պ. Հաճիէֆ վերոյիշեալ յայտարարութիւնը կ'ընէր, Աթէնքի ամէնէն կարևոր թերթերէն մէկը, այլևս ամէն զգուշաւորութիւն մէկ կողմ թողած, կը գրէր. «Ինչնախարհ Մակեդոնիան կրնայ հիմը կազմել Պարսնեան Գաշնակցութեան որ Արեւելեան ինդրին ամէնէն գրական լուծումն է ինքնին: Անգամ մը որ համաձայնութիւնը կնքուի Պուլկարիոյ և Յունաստանի միջև, Կարատաղ բնական կերպով մը անմոռ պիտի յարի իսկ Սերպիա ելիէ մերձէ միանայ Գաշնակցներուն. Աւարիոյ և Մակեդոնիոյ միջև սեղմում մնայով չնշանկեղծութենէ մնանելու պիտի դատապարտուի: Վտանգը իրօք մեծ պէտք էր լլրար որ այսպէս ոչ միայն դանկիւններու, այլ նաև արքունիքներու դատունիրք մէջտեղ կը դրուէր: Ինչ բան որ իրենց վախ կու տար՝ Մուհաճիրներու հարցն էր: Մակեդոնիոյ բնիկ ցեղերու յաւակնութիւնները հիմնուած էին զուտ իրենց թուական առաւելութեան վրայ: Իսլամ տարրը, ինչպէս գիտենք, թուով շատ ետ կը մնար անոնցմէ: Կարելի չէր ձեռք ասել այն տեսակ միջոցներ, որոնց շնորհիւ իւրաքանչիւր շրջանակի մէջ Իսլամները աւելի բազմաթիւ դառնային քան Պուլկարը, Սերպը, Աւրան ու Եսթըն: Բէճն-Թիւրքերը ասոր գաղտնիքը գտնել կարծած էին եւրոպական Թուրքիոյ շրջակայ երկիրներուն մէջ գտնուող Իսլամները, զբամական վարձատրութեամբ կամ հողատէր դարձնելու խոստումով Մակեդոնիա հրաւիրելով: Պոսնայի, Հէրսէքի, Պուլկարիոյ, Սերպիոյ, Ռուսիոյ, Ռումանիոյ մէջ այս մտքով բրորականաւ կը մղէին, կոչուած ընելով նաև կրօնական զգացմանց, և բարորութեան յոյսեր տալով այդ տեղերը բնակող Իսլամներուն, որոնք սակայն դոնէ նիւթապէս աւելի թախտաւոր էին քան թուն իսկ Օսմ. Կայսրութեան մէջ գտնուողները: Բայց վերջապէս Կայսրութիւնը իր այն ատենուան վիճակին մէջ չպիտի մնար, պիտի շինարար, զօրանար, հարստանար, — ինչպէս կ'ընէին, — և իր լոյսը բնակիչներուն բարօրութիւն ու երջանկութիւն պիտի պարգևէր: Յոյս ունէին որ այս բրորականտին շնորհիւ կը յաջողին 2,000,000ի մօտ Իսլամ համախմբել Մակեդոնիոյ մէջ և մէկ հարուածով ու ամենապարզ կերպով մը լուծել մակեդոնական հարցը, — քանի որ բնակչութեան մեծամասնութիւնը Իսլամ էր. ուրևմի Մակեդոնիա ոչ Պուլկարինն էր, ոչ Յոյններ, ոչ Սերպներ, այլ միայն Իսլամներունը» (*):

Այս նպատակով եղած առաջին փորձերը, ինչպէս նաև անոնց ընծայած անդրանիկ արդիւնքը ամենաբուռն զգո՞ւթեանց տեղի տուին Մակեդոնիոյ մէջ: Բոլոր քրիստոնէայ ցեղերը միահողջին աղմուկ բարձրացուցին: Դրկից երկիրներէ եկած Իսլամները դիւրին չեղաւ հաստատել, շատ տեղեր՝ կառավարութիւնը ստիպուեցաւ բռնի ոյժ գործածել ասոր համար: Քրիստոնէայ տարրին դիմադրութիւնը լիկ ապագայի յոյսերու կամ

երազնեալ սիրոյն չէր, կը վտանգուէին մանաւանդ իրենց կեանքի պայմաններն ու ապրուստի միջոցները. նոր եկող գաղթականներուն հող տալու համար՝ կառավարութիւնը, ստիպուած, բնիկ տարրը պիտի զրկէր



Բաղդատութիւն պատերազմիկ տէրութեանց տարածութեան, բնակչութեան, հանրային հասցիներուն և գինուորական ոյժին

(*): Տեղն է յիշելու որ նոյն փորձանքը Համիտ մեր գլխուն բերաւ. Հայաստանի մէջ, այն ատիճան արմատական կերպով մը (Թէ՛ մեր Թիւրք շարքերով կը պահեցնէր և Թէ՛ Իսլամներու Թիւրք կը բազմացնէր) որ այսօր Հայաստանի մը գոյութիւնն անգամ ուղանալու կը մտին:

հողէ: և անոս հողային հարց մըն ալ այդ հարցերով բնուաւորուած փորձանաւոր երկրին զլտուն: Դժգո՞ւթիւնները քանի՛ շատցան, այնքան մանաւանդ չէ՝ կառավարութիւնը կրկնապատկեց իր ջանքերը, այնքան մանաւանդ չէ՝

դարարել Պալքունեան Պետութեանց որ հանդարտ կենան և թուրքիոյ դէմ
 ո՛ր և է շարժումէ զգուշանան: Իսկ Պերկրատի աւստրիական դեսպանը՝ իր
 կառավարութեան անունով բողոքեց Սերպ կառավարութեան՝ թրքական
 սահմանագրոյ իր զինուոր համախմբելուն համար: Եւ սակայն Պալքունե-
 եան կառավարութիւնները չէին կրնար անտարբեր մնալ հանրային արտա-
 յայտութեանց հանդէպ որոնք յայտնադուր կը հակառակէին ամէն խա-



ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅՈՒՆԵՐ

Գարատաղի կեն մը կը հետեւի իր վերաւոր
 ամուսինը կրող պատգարակին

զրուեցին արինալի կսիւ է մը վերջ, որուն մէջ մեծագոյն զո՛հ տուողները
 թուրքերը եղան: Գարատաղի կառավարութեան կողմէ օգոստոս 4
 թուականով հրատարակուած պաշտօնական զեկոյց մը որ բնականաբար
 ամէն պատասխանատուութիւն թուրքերուն վրայ կը բեռնէր, կը
 յայտարարէր թէ կսիւր ամբողջ գիշեր մը տեւեց և թուրքերը կռուի
 դաշտին վրայ թողուցին 63 մեռեալ, իսկ Գարատաղիք՝ որոնց օգնու-
 թեան փութացած էր սահմանագրութիւն մերձակայ վայրերուն ժողո-
 վուրդը, 10 մեռեալ և 15 վիրաւոր ունեցան: Ղաղի Մուխթար փաշայի
 Գահլիճը խստիւ բողոքեց Չէթինեէի իր ներկայացուցչին միջոցաւ. պահ
 մը նոյն իսկ վախ կար թէ յաջարկութիւնները պիտի խզուին երկու եր-
 կիրներուն միջեւ, սակայն ներքին կնճռոտութիւնները՝ որոնցմէ չըջապատ-

զազասիրական արամադրու-
 թեան. նոր դէպքեր՝ բոլո-
 բովին պիտի շեշտէին պալ-
 քանեան երկիրներու մէջ ա-
 ռաջ եկած պատերազմասէր
 հոսանքը:


Գարատաղի սահմանա
 գրոյ խին վրայ կատարուած
 զինուորական համախմբում
 մը զոր Մալխարմերու ամե-
 նորեայ յարձակումները ան-
 նրամեշտ դարձուցած էին,
 առաջ բերին փոխադարձ ջը-
 զազրգոութիւն մը, որուն
 հետեւան բով սահմանագրու-
 թի ընդհարումները ո՛չ միայն
 շատցան, այլ սկսան հեռզնե-
 տէ աւելի վրդովիչ դառնալ:
 Յուլիսի վերջերք՝ 6000 հո-
 ղի, ժասամը Մալխար, մա-
 սամը նաև Գարատաղի, —
 և այս վերջիններուն մէջ
 նոյնիսկ կանոնաւոր զինուոր-
 ներ, — սահմանը անցնելով
 յարձակեցան Մայքովիչի օսմ.
 պահականոցին դէմ և դայն



Թղանջներու փոխադրութիւնը Երասրայե լիճին վրայ

Պայտեանի Պատերազմ. — Յանկոյի Թիւ 5. — Տպագր. Օ. Արզումանի

նուծ էր Մուխթար փաշայի դահլիճը, և ալպանական ապստամբութիւնը որ կը տեւէր հակառակ ամէն զիջումներու, ստիպեցին թուրք կանաւարութիւնը որ զգուշաւոր ընթացքի մը հետեւի: Մնաց որ՝ չէր ուզեր բոլորովին զրգանել Մալխորները, որոնց խլրտումը միշտ անելի սպան-



ՊՈՒԿԱՐ ԲԱՆԱԿԻՆ ԼՈՒՍՏՐՈՅՑ ՕՍՏՐՈՒԿՆԵՐԸ
Մակեդոնացի չեթեներու կայք մը

նալից կը դառնար, և որոնց հետ բանակցութեան մտած էր՝ ազատելու համար բազմաթիւ թուրք զինուորներ զորս գերի բռնած էին: Զուր ջանք սակայն. ընդհարումները երբեք վերջ չպիտի գտնէին այդ կողմէն: Կացութիւնը՝ արդէն իսկ տաքնապալից, բոլորովին ծանրացաւ Քո-

չանայի շարդով որ յանկարծ տակնուվրայ ըրաւ բոլոր խաղաղասէրներու հաշիւները: Վերջին միթիւններէն ի վեր, Պուլկար յեղափոխական քօմիթիները սկսած էին տենդագին գործունէութեան մը որ միշտ պօմպաներով կ'արտայայտուէր: Թէքվիչի մէջ՝ Տիմօ հրոսակը փորձած էր օդը հանել թաղապետական շէնքը, առանց սակայն յիշատակուելու: Աւելի բախտաւոր եղան Քօչանայի մէջ գործող հրոսակները, որոնք օգոստոսի սկիզբը շուկային մէջ պօմպայով սպաննեցին 11 թուրքեր: Այս յաջողութիւնը սակայն շատ սուղի նստաւ տեղւոյն Պուլկար ժողովուրդին: Իսլամները՝ իրենց կրօնակիցներուն դիակները տեսնելով, իսկոյն յարձակեցան Պուլկար ժողովուրդին վրայ, որ սակայն բնաւ յանցանք չունէր: Տեղւոյն իշխանութիւններն ու պահակազօրքը մնացին անտարբեր. երբ ջարդը դադարեցաւ՝ 120 դիակներ կային մէջտեղ. 200 հոգի ալ վիրաւորուած էին: Այս դէպքը մեծ յուզում պատճառեց Պուլկարիոյ մէջ: Վարչապետ Պ. Կէչօֆ որ Չամքօրիա կը գտնուէր, փութով Սօֆիա դարձաւ, և Նախարարաց Խորհուրդ գումարեց ստիպողաբար: Որոշուեցաւ Պոլսոյ դեսպանին միջոցաւ ազդու կերպով պահանջել պատասխանատուներու պատժուիլը, ինչպէս նաև դրամական հատուցում զոհերու ընտանիքին և վիրաւորներուն: Պոլսոյ Պուլկար էկզարքն ալ դիմում ըրաւ կառավարութեան որ խոստացաւ դէպքին վայրը զրկել յանձնաժողով մը, Պուլկարի մը անդամակցութեամբ: Դանիճը բռնեց իր խոստումը, և քիչ ետքը ճանչցաւ Քօչանայի զինուորական ու քաղաքային իշխանութեանց պատասխանատուութիւնը. նոյն իսկ կարեւոր գումար մը որոշեց իբր հատուցում արկածեալներուն:


Այս բոլոր զիջումները սակայն չպիտի կրնային Պուլկարիոյ մէջ առաջ եկած յուզումը հանդարտեցնել: Մայրայեղ ու պատերազմասէր տարրերուն համար՝ Քօչանայի դէպքը լաւագոյն առիթն էր, և ոչ մէկ գնով կ'ուզէին զայն ձեռքէ փախցնել: Կառավարութիւնը, հակառակ իր զգուշաւորութեան, նոյն հոսանքէն բռնուած էր. պաշտօնական Միւր հետեւեալը կը գրէր դէպքին վաղորդայնին. «Տէրութեանց անգործութիւնը միջազգային ոճիր մը կը դառնայ նմանօրինակ դէպքերու (Քօչանայի ջարդին) առթիւ: Փամանակ է որ Եւրոպա, խաղաղութեան սիրոյն համար միջամտէ թուրքիոյ մօտ: Որքան ատեն որ թուրքերը Եւրոպական հակաշուրի տակ չգտնուին, խորհուրդ և ճնշում չպիտի կրնան աւելի երկար ատեն անվրդով պահել Պալքաններու խաղաղութիւնը: Եթէ սրբաբոլոսի պահպանում ըսելով Քրիստոնեաներու ամբողջական բնաջնջումը կը հասկնան, պէտք է զիտնան որ Պալքանեան Պետութիւնները որոնք ազգակիցներ ունին թուրքիոյ մէջ, պիտի ստիպուին բողոքել այդ արարքներուն դէմ. և այն պարագային ուր զիրենք մտիկ ընող չըլլայ. իրենք անձամբ ձեռք պիտի առնեն հարկ եղած միջոցները»: Այս տեսակ յայտարարութիւն մը ընական է բոլորովին սիրտ պիտի տար պուլկար ծայրայեղ տարրերուն: Լուր կար նաև թէ Ֆէրաինանտ Չար, Եւրոպայի մէջ կատարած ուղեւորութիւնը ընդհատելով, կ'աճապարէ Պուլկարիա դառնալու, ինչոր ազդու գործողութեանց նախանշան մը կը նկատուէր: Երբոր

Ֆէրաինանտ Չար Սօֆիա դառնալու համար Չարիպոտ ժամանեց, ահագին բազմութիւն մը զինքը դիմաւորելով ցոյցեր ըրաւ ի նպաստ պատերազմի: Ֆէրաինանտ՝ հազիւ իր մայրաքաղաքը հասած, ստացաւ Վառնայի ժողովուրդին կողմէ զրկուած և աւելի քան 3000 ստորագրութիւն կողմ հեռագիր մը որ կը պահանջէր «Մակեդոնիոյ մասին ազգային խտէալը իրականացնել՝ պատերազմ յայտարարելով թուրքիոյ դէմ»: Երկրին մէջ ամէն կողմ գրգռութիւն կար: Պուլկարիոյ կողմէ Քօչանա բժիշկ, դեղ և կարմիր Խաչի անդամներ զրկելու համար կատարուած առաջարկութեան մերժումը թուրք կառավարութեանէն, բոլորովին կ'աւելցնէր գրգռութիւնը: Միթիւններ կը գումարուէին ամէն կողմ, հրաւիրելով Պուլկար կառավարութիւնը որ կորովի ընթացք մը բռնէ թուրքիոյ դէմ և պատերազմի դիմէ: Շարժման գլուխը գտնուող կազմակերպութիւնները՝ բովանդակ Պուլկարիոյ ժողովուրդին կոչեր ուղղելով կը հրաւիրէր զայն որ մէկ կողմ դնէ կուսակցական ամէն նկատում և միահամուռ ոտքի ելլէ՝ պատերազմ պահանջելու համար:

Օր օրի կը ծանրանային նաև Գարատաղի սահմանագլուխին դէպքերը: Ան Լեռնցի զինուորներ յայտնի համարձակ կ'օժանդակէին Մալիսորներուն: Օգոստոս 6ին պաշարեցին Պէրանան, բայց բուռն ընդդիմութեան մը հանդիպելով ետ քաշուեցան՝ երեք աշտարակ քանդելէ և երեք թուրք զինուորներ սպաննելէ վերջ: Յարձակմանց պատճառը սահմանագլուխի ճշդման հարցն էր. խնդրական հողամասերու իւրացման պատեհ առիթ կ'ընծայէին թուրքիոյ ներքին խառնաշփոթութիւնները. այս պատճառաւ Գարատաղ կը պահանջէր ճշդումը կատարել անմիջապէս, և Ռուսիա ալ ոյժ կու տար իր պահանջման, Պոլսոյ մէջ ճնշում բանեցնելով Օսմ. կառավարութեան վրայ: Այս վերջինը սակայն՝ վտանգը նախատեսելով՝ կը ձգձգէր խնդրին կարգադրութիւնը, և այդ ձգձգման դէմ բողոքի եղանակ մըն էին Գարատաղցոց յարձակումները սահմանէն ասդին: Պէրանայի խնդիրը, թէև աւելի պղտիկ չափով, երկրորդ Քոչանա մը դարձաւ. գրգռուած Իսլամները յարձակեցան Քրիստոնեայ ընակչութեան վրայ և փոխադարձաբար սկսաւ արիւնալի ընդհարում մը թուրքերուն և Քրիստոնեաներուն միջև: Օսմ. զինուորներն ալ անտարբեր չմնացին, և իրենց կարգին յարձակեցան Քրիստոնեաներուն վրայ, որոնցմէ 20 հոգի սպանուեցան. թուրքերը որոնք նոյնպէս կորուստ տուած էին, արեցին մէկ քանի եկեղեցիներ: Գարատաղցիք շուտով օգնութեան հասան քաղքին Քրիստոնեաներուն, որոնք Սերպ էին մեծ մասամբ, և զէնք բաժնեցին անոնց, որով ընդհարումները վերսկսան: Պոլսոյ մէջ հրատարակուած պաշտօնական զեկուցի մը համեմատ, այդ ընդհարմանց միջոցին Գարատաղցիք քանդեցին բազմաթիւ պահականոցներ, սպաննեցին սպայ մը և շատ մը Իսլամներ, ու գերի բռնեցին 54 թուրք զինուորներ. գրաւեցին նաև 58 մավզէր հրացան, 8 ձի և պահականոցներուն մէջ գտնուող բոլոր պատերազմական իրերը:

Պէրանայի դէպքերուն վրայ իրար անցաւ նաև Սերպիա, և սկսաւ բողոքել, որովհետև ջարդուողները Սերպ էին: Արդէն ո՛չ միայն Նովի

Բազարի, այլ Գոսովայի մէջ ալ սերպ ժողովուրդը բռնութեանց ենթակայ կը մնար այդ օրերուն: Տեղ տեղ, Ալպանացի ապստամբները կատարեալ ջարդեր կը կատարէին. Քէօփրիւլիէն և Սկիւպէն ամէն օր խուճար խուճար Օսմանցի Սերպեր կ'անցնէին Սերպիա, իրենց տունն ու ստացուածքը լքելով: Սերպ չէթէներ ալ փոխադարձաբար կը մտնէին օսմ. հողը և



ԿՈՒՄՍ ՊԵՐԻՅՈՒՏ

ճեղք, ծաւայեցաւ նաև Սերպիոյ մէջ. գիւղացիներն անգամ պատերազմ կը պահանջէին: Սերպ մամուլը յայտնարար կը զգացնէր թէ այդ տեսակէտով համաձայնութիւն գոյացած է Պուլկարիոյ, Սերպիոյ, Յունաստանի և Գարատաղի միջև: Բ. Գուսը սակայն կ'երեւայ թէ չէր բմբռններ կացութեան ծանրութիւնը և կամ կարեւորութիւն չէր ընծայեր այդ պատերազմաշունչ ցոյցերուն ու շարժումներուն, որովհետև ճիշտ նոյն օրերուն Սելանիկ հասած սերպիական Յ(1) վական ռազմանի թիւ ու թնդանօթնը թողուց որ անցնին թրքական հողէն (*): Այս արտօնութիւնը կուտար անանկ տանն մը ուր Սերպիա սահմանադրութենները կ'ամրացնէր. բոլոր ռազմական դիրքերուն վրայ զինուոր համախմբելով, և հրահանգ կու տար Պէլկրասս գտնուող սպաներուն որ փութով իրենց զօրագունդերը մեկնին:


(*) Աւելի ետքը խեղճ գլուխը եկաւ և վար դրաւ Սերպիոյ սահմանուած թնդանօթները, որոնք նոյնպէս Սելանիկ ժամանած էին. օր եղաւ որ պէտք ունեցաւ այդ թնդանօթներուն:

Յոյները նոյնպէս հակաթուրք հոսանքի մը յանձնուած էին, և այդ շարժումը մասնաւորաբար կը յայտնուէր Եպիրոսի մէջ: Ալպանիա քայլ առ քայլ դէպի ինքնավարութիւն կը դիմէր և Եպիրոսը մաս կը կազմէր այն երկիրներուն զորս Ալպանացիք ընկուղած էին իրենց յաւակնութեանց շրջանակին մէջ: Ատկէ Յունաստանի իրարանցումը. Եանիան՝ Եպիրոսի գոհարը՝ Հէլլենականութեան կայուած կը նկատուէր վաղուց. միանալով ինքնավար Ալպանիոյ որ միանգամայն թէ՛ Աւստրիոյ և թէ՛ Ռուսիոյ պաշտպանութեան տակ պիտի գտնուէր, Եպիրոսը անդարձ կը կորսուէր Յունաստանի համար: Այս նկատումով մանաւանդ Յոյները մտած էին Պալքանեան Դաշնակցութեան մէջ, և դարձեալ այդ վախն էր որ զիրենք կուսակից դարձուցած էր պատերազմի: Յոյն չէթէներ կառավարութեան դիտումներուն յաջողութեան կ'աշխատէին սահմանադրութիւն աստիճանով խառնակ և անապահով կացութիւն մը որ Յունաստանի առիթ պիտի ընծայէր աւելի քան 40,000 զինուոր համախմբելու սահմանադրութիւն վրայ:

Օրէ օր աւելի մեծցող այս վտանգին առաջքը առնելու համար՝ Մուխթար փաշայի դահլիճը, ներքնասպէս տակաւին անհաստատ, գրեթէ ոչինչ կրնար ընել: Թերեւս այն յոյսը ունէր թէ Քեամիլ փաշայի ազդեցութեան չնորհիւ Անգլիա կը վերադառնայ իր վաղընջուց աւանդութեանց՝ Թուրքիոյ հանդէպ, ու կը լուծէ տագնապը: Միայն Թուրքիան էր սակայն այս տեսակ յոյսով մը օրօրուող. իրմէ դուրս, բոլոր տէրութիւնները սկսած էին հասկնալ թէ ծանրագոյն դէպքերու նախօրեակին հանդէպ կը գտնուին, և թէ այդ ընթացքով պատերազմը անխուսափելի պիտի դառնայ: Վըրդովուած էին մանաւանդ Աւստրիա և Գերմանիա, որովհետև կը զգային թէ չպիտի կրնան առաջքը առնել պատերազմին՝ եթէ իրօք անխուսափելի դառնար. եթէ խլրտողը միայն մէկ պետութիւն ըլլար, դիւրին էր ճշուում բանեցնել և զայն բռնադատել հանդարտ մնալու. բայց այլևս գաղտնիք մը չէր Պալքանեան Դաշնակցութիւնը. նոր ոյժ մը գոյացած էր Եւրոպայի կողքին, տեսակ մը եօթերորդ մեծ տէրութիւն, որ ո՛չ միայն առանձինն բաւական ուժեղ էր իր խօսքը լսելի ընել տալու համար, այլ իրեն պաշտպան ու զօրավիգ ունէր Երրեակ Համաձայնութիւնը: Գերմանիա և Աւստրիա այդ ոյժին դէմ ինքզինքնին տկար կը զգային անոր համար մանաւանդ որ իրենց դաշնակիցը՝ Ռուսիա՝ այդ միջոցին Երրեակ Համաձայնութենէն աւելի սիրալիր ու թոյլատու ընթացք մը բռնած էր Պալքանեան Պետութեանց հանդէպ, և անկեղծօրէն կը բաղձար որ անոնք պատերազմ յայտարարեն Թուրքիոյ դէմ, ինչ որ Օսմ. կառավարութիւնը պիտի բռնադատէր Տրիպոլսոյ հաշիւը գոցելու և հաշտութիւն կնքելու Ռուսիոյ հետ:

Աւստրիոյ արտաքին գործոց նախարար կոմս Պէրխիթզա այս յուսահատական դրութենէն ազատելու փորձ մը բրաւ՝ տէրութեանց առաջարկելով Մակեդոնիան օժտել վարչական ինքնավարութեամբ մը, աստիճանական ապակեղբոնացման դրութեամբ. բոլոր Օսմ. տարրերը

հաւասարապէս պիտի օգտուէին այդ դրութենէն: Ասիկա միջոցն էր. իսկ նպատակը յայտնապէս կ'երևար այս առաջարկին կցուած ուրիշ պահանջով մը՝ այն է «հանդարտ կենալու խորհուրդ տալ բոլոր Պալքանեան Պե-



Ա Ն Ա Ռ Ի Կ Ա Մ Բ Ո Յ Ը
Թրքական դերք մը թալապօղի բարձունքը

տութեանց»: Աւելի կամ նուազ իրականանալի խոստմամբ մը պատերազմին առաջը առնելու հնարք մըն էր ասիկա, որուն իսկոյն ոյժ տուաւ Գերմանիա: Ռուսիա, Ֆրանսա և Անգլիա սակայն կասկածով ընդունեցին այդ առաջարկութիւնը: Պալքաններու մէջ ծագելիք պատերազմէ մը տուժողը գլխաւորաբար Աւստրիա պիտի ըլլար: հաւանական չէր որ Թուր-

քիա յաղթէր, և Օսմ. կառավարութեան Եւրոպայի մէջ ունեցած իրաւունքներուն տրուած հարուած մը նոյն չափով պիտի վնասէր նաև աւրասիական յաւակնութեանց. — դէպի Արևելք ծաւալման: Տարակոյս չկաւ որ Աւստրիա ամէն բանէ առաջ իր շահը կը մտածէր, և դժուար թէ Երեւակ Համաձայնութեան մաս կազմող տէրութիւնները, — որոնք արդէն հակոտնեայ շահեր ունէին, — անկեղծօրէն հաւանէին իր առաջարկին: Ամէնէն զարմանալին սակայն Թուրքիոյ ընթացքն էր. Պէրխիթոյտի առաջարկը փրկութիւն մըն էր իրեն համար, և սակայն ինք ալ տնտեսութիւն յայտնեց անոր նկատմամբ: Առաջարկը եթէ ընդունուէր, բնականաբար դուռ պիտի բանար անվերջանալի բանակցութեանց, — ինչպէս եղած էր Համիտեան օրերու բարեկարգութեան փորձերուն առթիւ, — պատերազմի վտանգը պիտի անհետանար, միջոց պիտի ունենար ինքզինքը գտնելու, ներքին խռովութիւնները զսպելու, իր թէ՛ դիւանագիտական դիրքը և թէ՛ զինուորական ոյժը ամրապնդելու. այդպէս զօրացած, մանաւանդ թափած սպառնալիքը ահարկու պատերազմի մը որուն դէմ ճշմարտապէս անպատրուստ էր, անշուշտ աւելի հեշտիւ պիտի կրնար մաքառիլ իր իրաւունքներուն պաշտպանութեան համար:

Պալքանեան Պետութիւնները նոյնպէս ամապարեցին մերժել Կոմս Պէրխիթոյտի առաջարկը. նոյն իսկ անոք իրականացումէն վախճանալուն համար է որ փութացուցին պատերազմը, ինչ որ ուրիշ ամէն բանէ աւելի լաւագոյն կերպով մը ցոյց կուտայ թէ Թուրքիոյ բուն շահը իսկապէս առաջարկին ընդունելութեան մէջ էր:



Գարատաղի Բէթրօ Էշլանը



ԳԼՈՒԽ ԺԵ.

ԵՐԿՈՒՆՔԻ ՕՐԵՐ

Մինչդեռ կոմս Պէրխթոլտ կը ճգնէր Արեւելեան տազնապը դիւանագիտութեան անել բաւիղներուն մէջ մտցնելով փոթորիկին առաջքը առնել, Պալքանեան Պետութեանց մէջ պատերազմին ի նպաստ շարժուիլը հետըզհետէ աւելի կը մեծնար, կը դառնար ճշմարտապէս անխորտակելի, գըրգըռած մանաւանդ Աւստրիոյ արտաքին գործոց նախարարին ձեռնարկէն:

Օգոստոս 12ին՝ Սօֆիայի մէջ գումարուեցաւ համազգային հսկայ միութիւնը զոր պատերազմասէր տարրերը վաղուց կը պատրաստէին և որ պատմական դէպքի մը մեծվայելուչ նշանակութիւնը ստացաւ: Ամէն քաղաք, ամէն աւան, ամէն գիւղ զրկած էր յատուկ պատգամաւորներ, որոնց մէջ կը գտնուէին պաշտօնի վրայ եղող և նախկին երեսփոխաններ, նախկին նախարարներ, բարձրաստիճան անձնաւորութիւններ, զինուորականներ և ազգային բոլոր կազմակերպութեանց ներկայացուցիչներ: Ընդհանուր պատգամաւորներու թիւը 1000ը կ'անցնէր. իսկ միթիւնկին ներկայ էր աւելի քան 30,000 ժողովուրդ՝ կը նախագահէր նախկին հազարապետ Փրոթէկէրօֆ, որ միթիւնկը բացաւ Ատանայի, Շիթիպի և Քօչանայի ջարդերուն պատմութեամբ, քննադատեց Թուրք կառավարութիւնը, պարզեց վերջին դէպքերը և յարեց թէ «400,000 զօրքով և հազարաւոր թնդանօթներով այս արատը տանիլ ամօթ է»: Իրարու յաջորդող բոլոր ճառասոսնները դառն խօսքերով դատափետեցին Թէրաթիմանտ Զարին և Պուլկար կառավարութեան խաղաղասիրութիւնը. Վառնայի ներկայացուցիչը ըսաւ. «1885ի Թրակիոյ (Արեւել. Բուլղարի) յեղափոխութեան ժամանակ՝ Պաթէմպէրկի Աղեքսանդր իշխանը (Պուլկարիոյ վեհապետը) հարցուցած էր իր նախարարապետին թէ ի՞նչ ընէ, և նախարարապետը պատասխանած էր. — Կ'ամ դէպի Ֆիլիպպէ և կ'ամ առէք պայուսակնիդ ու գացէք հոն ուրկէ եկած էք: Հիմայ պէտք է Թէրաթիմանտին ալ նոյնը ըսել. — Կ'ամ սուրդ

հանէ և մեզ տար դէպի Մակեդոնիա ու Էտրնէ և կ'ամ կառախուժող պատրաստէ»: Ոլացուցիչ ծախանարութիւններով սղջունուեցաւ այս ըսպառնալիքը: Վիտինի ներկայացուցիչը աւելի առաջ գնաց՝ յայտնելով որ եթէ Զարն ու կառավարութիւնը մտիկ չընեն ազգին պահանջներուն, ժողովուրդը պիտի յարձակի զօրանոցներուն վրայ և գէնքերը յափշտակելով պիտի քալէ դէպի Մակեդոնիա: Ուրիշ ատենասոսններ յարձակեցան կոմս Պէրխթոլտի առաջարկին դէմ: Ամէնէն վերջը խօսեցաւ Դաւթաւա թերթին հանրապետական խմբագիրը՝ Սթանչէֆ, յայտնելով որ եթէ «Կառավարութիւն և Զար մտիկ չընեն ազգային բաղձանքը զոր Պուլկարիոյ 12 գաւառներուն պատգամաւորները արտայայտած են միթիւնկին մէջ, այն ատեն թող վստահ ըլլան թէ հոն պատերազմ ունենանք առաջ հոս է որ պիտի ունենանք պատերազմ և փոթորիկ»: Յետոյ, ընարովի պատգամաւորները գաղտնի նիստ մը գումարելով խմբագրեցին որոշմագիր մը որ յայտնելէ ետքը թէ Թուրքիա յարեցողութեան կը գործադրէ միայն ոյժի առջեւ տեղի տալով, և թէ կոմս Պէրխթոլտի ապակեղրոնացման առաջարկն ալ նպատակ ունի մակեդոնական գաւառներուն ազատումը յետաձգել, կը պահանջէր որ՝



Օսմանեան հեծեակագործը դէպի Մակեդոնիա գալիս

1. Պուլկար թագաւորութեան կառավարութիւնը տնտեսապէս գէնքի տակ կոչէ ազգային բանակը, միևնոյն ժամանակ պահանջէ մեծ տէրութիւններէն լայն ինքնավարութիւն Մակեդոնիոյ և Էտրնէի նահանգներուն, գաւառային ազգ. ժողովով, ազգային պահակազօրքով ու բնակչութեան ազատ քուէով ընտրուած և տէրութիւններէն վաւերացուած քրիստոնեայ ընդհանուր կառավարիչով:

2. Այն պարագային ուր ամենակարճ ժամանակամիջոցի մը մէջ չիրագործուի ազգային այս բաղձանքը, Պուլկար կառավարութիւնը յատարարէ ազատարար պատերազմը, եթէ չուզեր որ երկրին մէջ սարսափելի հետեւանքներով ցնցուժներ առաջ գան:

Անվերջ ծափերով, խանդավառ ու ռազմաչունչ ալաղակներով ողջունուեցան այս որոշումները: Մակեդոնական կազմակերպութիւնները ուրոնք սև զրօշներով ներկայ էին գումարման, իրենց շնորհակալութիւնը

յայտնեցին Պուլկար Համագգային ժողովին: Յետոյ կազմուեցաւ հսկայ թափօր մը, որ շրջեցաւ Սօֆիայի փողոցներուն մէջ, աւէն կողմ ան. նրկարագրելի ոգեւորութիւն մը յարուցանելով: Թափօրը վարողները պըսակներով պննեցին Ազատարար Զարին և Պուլկար յեղափոխական Վասիլ Լիւսքիի արձանները, որոնց առջև նոյնպէս բուռն ճառեր արտասանուեցան: Շատեր կը պոռային որ եթէ «Վեհապետը ինքզինքը չզոհէ ազգին համար, Ազգը զինքը պիտի զոհէ»: Այս մտայնութիւնը տարածուած էր մասնաւորաբար բանակին մէջ. սպաներ յայտնաբար կ'ըսէին. «Մակեդոնիոյ եղբայրները փրկելու բաղձանքը պէտք է իրր հոսանք առաջ մղէ բոլոր Պուլկարները. վա՛յ անոնց որոնք այդ հոսանքին պիտի դիմադրեն. անոնք պիտի խորտակուին, պիտի ջախջախուին, պիտի ոչնչանան. ժողովուրդին կամքը Աստուծոյ կամքն է»: Խօսելով այս մարտահրաւէր միթինկին վրայ, Մուխթար փաշայի դահլիճին կէս պաշտօնական օտկանը՝ Իգսաւ՝ հետեւեալը կը գրէր. «... Ինչպէս որ Օսմ. ազգը չսիրեր աղմուկ յարուցանել, այնպէս ալ երբեք չպիտի վախնայ ուրիշներու սնտի պոռչտուքներէն: Եթէ Պուլկար բանակը համարձակութիւնը ունենայ անցնելու Օսմ. սահմանագլուխը, իր դէմը պիտի գտնէ տենդագին կատաղութեան ամենամեծ չափով գերագրգռուած բանակ մը: Այս կատաղութեան պատճառը իր երկարատեւ հանդարտութիւնն է: Հակառակօրդ մը կ'ըսէ ան իրեն դէմ, որպէս զի երկար ժամանակէ ի վեր կուտակուած և մշտակայ ատելութեան մաղձը անոր գլխուն թափէ: Եթէ պուլկար բանակն է որ կը փափաքի այդ հակառակօրդի դերը ստանձնել, այն ատեն օսմ. բանակը իր շնորհակալութիւնը պիտի յայտնէ անոր, որովհետեւ անիկա պիտի ծառայէ մասամբ թիթեղներու իր կատաղութիւնը: Ասկէ զատ, այդ բանակին ետեւ կանգնած է հաստատակամ ազգ մը, պատմական բազմաթիւ և անմոռանալի վրէժներ լուծելու պատրաստ: Պուլկար ազգայնականները պէտք են ամէնէն առաջ գիտնալ թէ մենք վստահ ենք Բուսէլի մեր վառօդին զօրութեան և մեր զինուորներուն ոյժին վրայ»: Սակայն կ'երեւայ թէ Պուլկարները չէին բաժներ այդ հաւատքը, և կամ Թուրքիոյ զինուորական ոյժին նկատմամբ աւելի լաւ տեղեկութիւն ունէին քան Իգսաւն, որովհետեւ պատերազմի հրաւերները ո՛չ միայն չդադրեցուցին, այլ ընդհակառակը աւելի բարձրագոյն շեշտ մը տուին անոնց: Վրայ հասաւ Շիրքայի պաշտպանութեան տարեդարձը(*), որուն առթիւ կատարուած կրօնական արարողութենէն ետք՝ պատերազմական նախարարը զօրանցք կատարել տուաւ և Պուլկարիոյ երբեմնի ռազմիկներուն քաջութիւնը դրուատելով, զինուորներուն յանձնարարեց որ անոնց օրինակէն թելադրուին: Զօրանցքին ներկայ էին Շիրքայի կուռին մասնակցողներէն բոլոր անոնք որ ողջ էին. պարզուած էր նաև Սամարայի պատմական դրօշակը՝ Օսմ. գնդակներէն ծակծկուած: Հանդէսը առիթ

(*) 1877ի ռուսեթուրք պատերազմին՝ Պուլկար կամաւորներու վաշտերը Շիրքայի կիւրճը յաղթականօրէն պաշտպանեցին իրենցմէ անհամեմատ կեպով հզօր թըրքական բանակի մը դէմ, և այդ պաշտպանութեան շնորհիւ Ռուսերը ժամանակ գտան համախառնելու իրենց ցոյցերը:

դարձաւ նոր ցոյցերու՝ ի նպաստ պատերազմին: Խանդավառ ծափահարութիւններու առարկայ դարձաւ Ազատարար Զարին արձանը, որուն վրայ պսակներ դրուեցան ի ներկայութեան ռուսական դեսպանին: Տէրտինանտ Զար, խօհեմութեան համար, ներկայ չգտնուեցաւ հանդէսին որուն սակայն իրր ներկայացուցիչ զրկած էր արքայական տան գրեթէ բոլոր անդամները: Դարձեալ մեղադրանքներ սկսան լսուիլ իր խաղասիրութեան դէմ, թէև այդ միջոցին ան ալ պատերազմէ զատ ուրիշ բանի վրայ չէր մտածեր:

Սօֆիայէն ետք՝ միթինկները շարունակուեցան Պուլկարիոյ ամէն կողմերը. Ռուսճուքի և Ֆիլիպէի մէջ նոյնքան մեծաշօնիդ գումարումներ տեղի ունեցան: Ժողովուրդը ծանր ցոյցեր կատարեց զինուորական հաստատութեանց առջև: Ֆիլիպէի մէջ՝ սպայ մը ոտնակոխ բրաւ կարգապահական ամէն նկատում, հրապարակաւ գոռալով. «Պուլկարիոյ բանակին սուրը յաւէ՛տ պիտի ժանգոտի, եթէ չճօճի այս գերագոյն վայրկեանին»:


Անդին՝ Մակեդոնիոյ մէջ, հրոսախուժներու գործունէութիւնը կը շարունակուէր ամենաբուռն կերպով, և պօմպաներու դէպքերը կը կրկնուէին անընդհատաբար: Քօջանայէն ի վեր՝ պուլկար հրոսախուժներ պօմպա նետած էին նախ Օխրիտայի մէջ, յետոյ Քէօփրիլի մէջ, ուր հինգ վակօններ օղը ելան, յետոյ նաև Իրէքի և Մանասթըրի մէջ: Աւելի ետքը քանդեցին Սելանիկի աւստրիական նամակատունը, սպաննելով երկու պաշտօնեայ. ուրիշ պօմպա մը, դարձեալ Սելանիկի մէջ, օղը հանեց թրանվէյի պարապ վակօն մը որ կայարան կը դառնար: Աւելի զարհուրելի մահափորձ մը տեղի ունեցաւ Տօյրանի մէջ (Սելանիկի նահանգ). գիւղացի մը շուկայ իջնելով սակարկած էր պարկ մը ալիւր. երբ պարկը պիտի կըշուէին, մէջը գտնուող պօմպա մը յանկարծ պայթեցաւ անաւոր աղմուկով մը, սպաննելով 11 Իսլամ և երկու Քրիստոնեայ. ասոնցմէ զատ ծանրապէս վիրաւորուեցան 17 Իսլամ և չորս Քրիստոնեայ, ու համեմատաբար թեթեւ վէրքեր ստացան 15 հոգի, որոնց մէջ նաև պզտիկ տղաք: Վիրաւորներէն չատեր չկրցան ապրիլ: Յաջորդ օրը Սկիւպի գիծին վրայ պահակ կեցած յօյն զինուոր մը նշմարեց երկու խոշոր պօմպաներ, անանկ ատեն մը ուր դէպի Սելանիկ մեկնող վաճառաբարձ կառախումբը ճամբայ պիտի ելլէր. պահակին հանած աղմուկին վրայ հասնող զինուորները՝ համազարկի դիմեցին կեցնելու համար կառախումբը և յաջողեցան առաջը առնել անեղի արկածի մը: Պօմպաներու յաճախանքը տարածուած էր մինչև Պոլիս. օր մը նոյն իսկ լուր ելաւ թէ պուլկար հրոսակներ մայրաքաղաք ժամանելով փորձած են օղը հանել Այա Սօֆիայի մզկիթը:

Անպակաս էին նաև սահմանագլուխի ընդհարումները: Օգոստոսի վերջերը՝ Գարա Թէփէի դիրքին վրայէն թուրք զինուորներ սպաննեցին երկու պուլկար տասնապետներ, Պուլկարները, փոխադարձաբար յարձակում գործեցին Թուրք զինուորներու դէմ, սահմանագլուխի տարբեր կէտերուն վրայէն, սպաննելով պահակազօրքեր: Ծիլէր Թէփէի, Արէթիէի, Հալէպէի և Վէլիպէյի մէջ յաջորդաբար ծանր ընդհարումներ տեղի ունեցան: Միւս կողմէ, Պուլկար ժողովուրդը անընդհատ պատերազմ կը պա-

հանջէր: Նախկին նախարար Կէնատիէֆ Վոյիա թերթին մէջ սկսած էր յողուածներու շարք մը որ Պուլկարիոյ հանրային կարծիքին արտայայտութիւնն էր ինքնին. «Եթէ ներկայ պարագային օգուտ չքաղենք և Թուրքիոյ դէմ չյարձակինք, քիչ ետքը Թուրքիա պիտի յարձակի մեր վրայ, կը գրէր: Եթէ Պուլկարիա յամառի այսպէս խաղաղ մնալու, պալքանեան միւս պետութիւններէն ոչ ոք պիտի համարձակի սուրը մերկացնել, և Թուրքիա ժամանակ պիտի գտնէ զօրանալու, և իր առաջին հարուածը մեզի դէմ պիտի ուղղէ: Երբեմն ափ մը հերոսներ, փայտէ թնդանօթներով ապստամբութեան դրօշ պարզեցին: Անոնց սերունդը այսօր կազմած է 400,000 հոգինոց բանակ մը որ բովանդակ աշխարհի հիացման առարկան է: Ամօթալի վեհերոտութիւն մըն է մեզի համար որ հակառակ այս ոյժին՝ չենք փութար ազատելու Մակեդոնիոյ, մեր եղբայրները»: Պուլկար յեղափոխական կազմակերպութիւնները տրամադիր կ'երեւային աւելի ծայրայեղ միջոցներու դիմելու. շատ նախարարներ սպառնական նամակներ ստացան. բովանդակ Պուլկար ժողովուրդին անունով կոչում կ'ըլլար իրենց կամ հրաժարելու և կամ պատերազմի ձեռնարկելու: Կառավարութիւնը սակայն կարծուածին չափ անտարբեր չէր. առանց արիւն թափելու Մակեդոնիան քրիստոնիայ կառավարչով և ինքնավարութեամբ օժտելու աշխատելով հանդերձ, զինուորական պատրաստութիւններն ու համախմբումները առաջ կը տանէր. որքան տենդագին ու անապարտ ալ ըլլար այդ գործողութիւնը, կ'աշխատէր սակայն անզգալի դարձնելու մասնաւորաբար Թուրքիոյ, որ վերջ ի վերջոյ սկսած էր հաւատալ թէ պատերազմը կրնայ իրօք ծագիլ մէկ օրէն միւսը, հակառակ տէրութեանց, մասնաւորաբար Անգլիոյ վրայ դրուած յոյսերուն: Պուլկար էկզարքարանն ալ, Պոլսէն աջակցութիւն մը ընծայած ըլլալու համար Սօփիայի կառավարութեան, այդ միջոցին անընդհատ Թաքիրներ կը մատուցանէր Բ. Կրան՝ Մակեդոնիոյ դէպքերուն վրայ, և կը հրատարակէր վիճակացոյցներ որոնց մէջ մանրամասնօրէն յիշատակուած էին տարուան ընթացքին տեղի ունեցած Պուլկարներու սպանութիւնները՝ Մակեդոնիոյ մէկ ծայրէն միւսը:

Պէրանայի ջարդէն ասդին Սերպիա նոյնպէս չէր հանդարտած: Նօլի Բագարի Սանճագին մէջ բնակող Սերպերը միշտ Ալպանացուոց բռնութեանց ենթակայ կը մնային. նոր շփոթութիւններ ծագեցան Սիէնիցայի մէջ, որոնց հետեւանքով սպաննուեցաւ Պէրանայի Սերպ գայմաքամը՝ Իլիա Բօբօվիչ (*). առաջ եկաւ ընդհանուր խուճապ և արհաւիրք. բազմաթիւ Սերպեր, Պէրանայի ջարդին յաճախանքէն գրաւուած, սահմանագլուխը անցնելով Սերպիա ապաստանեցան: Սերպիոյ հանրային կարծիքը բոլորովին զրգուեցաւ. մամուլը սկսաւ հրաւիրել կառավարութիւնը որ ընդհանուր զօրահանութեան ձեռնարկէ: Օգոստոս 18ին, կանխաւ ցրուած հրաւերներու միջոցաւ աւելի քան 10,000 հոգի միթինկ գումարեցին

(*) Պ. Բօբօվիչ 28 տարեկան երիտասարդ մըն էր, վկայուած Բարիզի Իրաւագետական Համալսարանէն:



Պուլկար անդառնալով գինուորներ խրատելու կը բանակ կտրեցէի շուրջը

Պէլկրատի ազգային թատրոնին շուրջը . թատրոնին պատշգամբ զարդարող դրօշակներու կարգին պարզուած էր նաև մակեդոնական հրոսախուժներու սև դրօշը՝ «Ազատութիւն կամ մահ» վերտառութեամբ . կը նախագահէր հանգստեան կոչուած զօրավար Պօթօ Յանքովիչ . կազմակերպիչներուն մէջ կը գտնուէին նախկին նախարարներ , երեսփոխաններ , նոյն իսկ պաշտօնական անձնաւորութիւններ : Բուռն ու գրգռիչ ճառեր արտասանուեցան : Արմատական կուսակցութեան ներկայացուցիչը պատերազմի հրաւէր կարդաց : Ամէնէն յուզիչ ճառը արտասանեց Մակեդոնացուց ներկայացուցիչ Յամանիէվիչ , որ Մակեդոնիոյ բնիկ տարազը կը կրէր , և որ հրոսախուժներու սև դրօշը ցոյց տալով ըսաւ . «Ձեզի կուտամ այս դրօշակը որ անով կուռիք պատերազմի մէջ , դէպի ազատութիւն կամ դէպի մահ քարելու համար» : Ի վերջոյ ընդունուեցաւ բանաձեւ մը որ բուռն կերպով կը բողոքէր Իլիա Բօրովիչի սպանութեան դէմ , օգնութեան կոչ կ'ուղղէր «ի նպաստ թրքական տիրապետութեան տակ ինկած Սերպ ժողովուրդին» , ու կը հրաւիրէր Սերպիոյ ժողովուրդը որ ամենաբուռն ու ազդու կերպով դիմէ կառավարութեան . պահանջելով որ ամենախիստ կերպով բողոքէ թուրք կառավարութեան դէմ եւ հատուցում ձեռք բերէ սպաննուողներուն համար :

Նոր ջարդերու լուրեր հետզհետէ կը հասնէին Նօվի Բազարէն : Այլանացիները Սերպեր սպաննած էին մասնաւորաբար Պիէյօրօվի և Կուսինեէի մէջ : Պէլկրատ եկած լուրերը կը ծանուցանէին թէ տասնըջորս սերպաբնակ գիւղեր՝ 700 տուններով՝ ամբողջովին այրած են , 200 Սերպեր՝ որոնց մէջ կիներ ու տղաք՝ զոհ գացած են հրդեհին ընկերացող ջարդերուն . ապստամբ Այլանացիները կիներէն մէկ քանիին ստինքները կտրեր և պոկի մանչ տղաքը անդամահատեր էին . բացի անոնցմէ որոնք Սերպիա փախած էին , ուրիշ 2000 հոգի ալ ապաստանած էին Գարատաղ : 5000 Սերպեր , վրէժխնդրութեան զգացմամբ զեղուն՝ լեռ ելած էին ու կը պայքարէին միանգամայն թէ՛ ապստամբ Այլանացիներուն և թէ՛ Օսմ . զինուորներուն հետ : Առաջիններուն դէմ գործող զօրախումբին հրամանատար Ճավիտ փաշա բանակցութեան մտած էր Սերպերուն հետ , որոնք կը պահանջէին վերջին ջարդերու հեղինակներուն պատժուիլը , զէնք կրելու արտօնութիւն , իսլամ մուհաճիրներու վտարում , Սերպ միւթէսարըֆի մը և ժանտարմաներու անուանում , ինչպէս նաև ապահարկութիւն նոյն տարուան համար : Այս լուրերը առիթ կը դառնային որ փոթորիկը , փոխանակ հանդարտելու , ա՛լ աւելի սաստկանայ ու ծաւալի : Նոր միթինկ մը գումարուեցաւ «Ազգային պաշտպանութեան հայրենասիրական Ընկերակցութեան» կողմէ . մասնակցեցան 3000 հոգի , որոնց մէջ բազմաթիւ սպաններ . միթինկը ցրուեցաւ պատերազմի ի նպաստ կատարուած բուռն ցոյցերէ վերջ : Ասոր յաջորդեցին ուրիշ միթինկներ , և ցոյցեր եղան նոյն իսկ արքայական պալատին առջև , ընդհանուր զօրահանութեան հրաւիրելով կառավարութիւնը և սպառնալով ամէն բան տակն ու վրայ ընել : Այդ ցոյցերուն վրայ , Դահլիճը տակի տալով , իշխանութեան գլուխ անցաւ արմատականներու պետ Պ . Բաչիչ , ինչ որ բաւական հանդարտեցուց ծայրա-

յեղ տարրերը : Նոր նախարարապետը մեծ յարգանք , ժողովրդականութիւն ու վստահութիւն կը վայելէր . հազիւ պաշտօնի ձեռնարկած՝ Սերպիոյ սպառազինութիւնը դարձաւ ա՛յն աստիճան ակնյայտնի , որ Օսմ . կառավարութիւնը վար դրաւ Սերպ կառավարութեան յատուկ 300 թօսօ ռազմանիւթն ու թնդանօթները որոնք Սելանիկ ժամանած էին :

Յոյները նոյնքան անհանդարտ էին , որքան Պուկարներն ու Սերպերը : Աթէնքի մէջ՝ պատերազմի ի նպաստ շարժումը նուազ անդիմադրելի չէր : Եպիրոսի մէջ՝ ապստամբ Այլանացիներուն կողմէ ծայրայեղութիւններ և մանր մուկը ջարդեր մեծ գրգռութիւն առաջ բերած էին . յունական երեւակայութիւնը դէպքերը կը խոչորցնէր տարապայման համատարութեամբ , ու դիւրագրգռ ժողովուրդը , քաջաբերուած կնքուած Դաշնակցութենէն որ համարձակութիւն կուտար Օսմ . ոյժերուն դէմ խիզախելու , բազմամրոխ գումարումներու մէջ պատերազմ կը պահանջէր : Սահմանագլուխի ընդհարումներ անպակաս էին նաև այս կողմէն : Թուրք զինուորներ Այլիլայի պահականոցին մօտեցող հելլէն զինուորներու վրայ կրակելով , անոնցմէ երկուքը սպաննած էին . կազմուած էր քննիչ յանձնաժողով մը , թէ՛ թուրք և թէ՛ հելլէն սպաներէ , որոնք ի զուր կը ճրգնէին պատասխանատուութիւնները որոշել : Այդ միջոցին Յունաստան չիտակէ չիտակ պատերազմի կը պատրաստուէր , ամրացնելով իր սահմանագլուխի դիրքերն ու պահականոցները : Բոլոր յոյն սպաները հրահանգ ստացած էին իրենց զօրաբանակին միանալու առանց յապաղման : Եանեայի Յոյները , Այլանացուց կողմէ կատարուած սպանութեանց վրէժը լուծելու համար , առեւանգեցին ու կախաղան հանեցին Եանեայի այլանացի երեւելիներէն մէկուն երիտասարդ զաւակը , էմին պէյ , որ Բարիզի Իրաւագիտական Համալսարանին մէջ կ'ուսանէր և արձակուրդի առթիւ իր ծննդավայրը դարձած էր : Սեպտեմբեր Տին Աթէնքի Ողիպեան Արամազդի տաճարին մէջ տեղի ունեցաւ հսկայ միթինկ մը որուն մասնակցեցան մօտաւորապէս 30,000 հոգի , Անատօլէն , Բուսթիլէն , Արչիպեղազոսէն , Կիպրոսէն , Կրէտէն , ու Սամոսէն : Բոլոր յունական կազմակերպութիւններն ու արհեստապետութիւնները ներկայացուցիչ զրկած էին մասնաւոր դրօշներով : Աթէնքի Համալսարանին պատմութեան ուսուցիչը՝ Սօթիրիատէս . — Մակեդոնացի մը , — ճառ մը խօսելով պատմեց թուրքիոյ յոյն ժողովուրդին կացութիւնը , խստօրէն քննադատելով թուրք կառավարութիւնը : Միթինկէն վերջ՝ հետեւեալ բանաձեւը ընդունուեցաւ .

1. Ժողովը մատնանիշ կ'ընէ Քրիստոնեաներուն համար կործանարար անիշխանական վիճակը , թուրք իշխանութեանց մեղսակցութեամբ անոնց դէմ գործուած ոճիրները և անոնց ազգային ու քաղաքական իրաւունքներուն բռնաբարումը .
2. Կը պահանջէ որ Բ . Դուռը ընդունի Սահմանադրութենէն ի վեր հոգեւոր պետերու միջոցաւ իրեն ներկայացուած խնդիրքները , այսինքն թուրքիոյ ազգութեանց գոյութեան և իրաւունքներուն ճանաչումը , այդ ազգութեանց անհատականացումը և Օսմ . Սահմանադրութեան անկեղծ ու լրիւ կիրառութիւնը՝ ապահովելով ժողովուրդին մարդու և քաղաքացիի իրաւունքները :
3. Կը պահանջէ բաւականաչափ երաշխաւորութիւններ , որոնց արդէն պէտք տեսած են Տիեզերական Պատրիարքն ու միւս ազգութեանց հոգեւոր պետերը՝ նոյնիմաստ թաքրիքներով , ինչպէս նաև հէլլէնական կառավարութեան ազդու միջամտութիւնը՝ միջազգային երաշխաւորութիւններ ձեռք բերելու համար :

Միթիւնկներ տեղի ունեցան նաև Բաթրասի, Միսօյճնկիի, Վօյօի և ուրիշ քաղաքներու մէջ. ամէն կողմ, ինչպէս եղած էր Աթէնքի միթիւնկին առթիւ, ժողովուրդը կը պահանջէր որ Յունական կառավարութիւնը ազգու միջամտութիւն մը ի գործ դնէ: Պ. Վէնիզէլոս, վերոյիշեալ միթիւնկներուն առթիւ ընտրուած հինգ պատգաճաւորներ ընդունելով յայտնեց



Երէկ կայտառ, այսօր անկար

Թէ կառավարութիւնը մասնակից է ժողովրդային զգացման և թէ պիտի գործէ անանկ եղանակով մը որ պաշտպանուին Թուրքիոյ Յոյներուն իրաւունքներն ու շահերը. յայտնեց նաև թէ ամէն միջոց ձեռք կ'առնուի, ծագելիք ո՛ր և է պատահականութեան առթիւ անպատրաստ չգտնուելու համար: Դիւանագիտական լեզուով ասիկա կը նշանակէր թէ Յունաստան պատերազմի կը պատրաստուի: Աթէնքի թերթերը յաջորդ օրը պատերազմը անխուսափելի կը հռչակէին այլևս. յարելով որ զէնքի դիմելէ ուրիշ միջոց չկայ իրենց ազգակիցներուն կեանքի դառնութիւնը ամօքելու համար:

Իսկ Գարատաղի կողմը, շէնք չնորհք պատերազմ տեղի կ'ունենար, առանց պաշտօնական յայտարարութեան: Գարատաղ ապաստանած Մալիսորներ՝ Սեւ Լերան նուիրուած ուսական հրահաններով զինուած՝ կ'անցնէին սահմանը և կանոնաւոր ճակատամարտներ կը մղէին օսմ. զօրքերուն դէմ: Այս վերջինները յաճախ սպաննուողներուն մէջ կը գտնէին նոյն իսկ պաշտօնական համազգեստով Գարատաղցի զինուորներ: Օգոստոս 26ին,

տէրութեանց դեսպանները բարեկամաբար խորհուրդ տուած էին Չէթինէի դահլիճին որ զգուշանայ խաղաղութիւնը վրդովող շարժումներէ. դահլիճը սակայն, ըստ իր սովորութեան, ամէն պատասխանատուութիւն բեռցու-



Ինքզինքս ԿԸ ՊԱՀՈՒԻՆ ՊՈՒՎԿԱՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ
Տաք հագուստ, լաւ խմիչք և աղուոր կրակ

ցած էր Թուրք կառավարութեան վրայ և կը շարունակէր զէնքի տակ կոչել 18-45 տարեկանները: Զօրակոչին լաւագոյն ապացոյցը սա էր որ Պոլսոյ մէջ հետզհետէ կը սկսէին ցանցառիլ Գարատաղցի փայագներն ու

դռնապանները, որոնք յաջորդաբար երկիր կը մեկնէին: Ամբողջ սահմանագլուխը կրակի մէջ էր. Շքօտրա կանոնաւոր պաշարման ենթարկուած էր Մալխորներէ և Գարատաղյիներէ բաղկացած բաղձաթիւխոււմբերու կողմէ: Վախ կար որ ամբողջ Մալխիա զէնքի դիմէ. և դիւրին էր գուշակել թէ Մալխորներու ընդհանուր ապստամբութիւն մը նոյն իսկ յայտնաբար իրեն աջակից պիտի ունենար միանգամայն թէ՛ Գարատաղը և թէ՛ Սերպիան:

Մինչդեռ այս զէպքերը տեղի կ'ունենային եւրոպական զիւանագիտութիւնը ի գուր կը փորձէր ելից հնար մը գտնել, առաջքը առնելու համար հրդեհի մը որ կը սպառնար ո՛չ միայն Արեւելքը գրկել. այլ նաև ծաւալիլ բովանդակ Եւրոպայի մէջ: Պրանսայի վարչապետին՝ Պ. Բուանքարէի այցելութիւնը Բէթերսպուրկ, յետոյ Կերմանիոյ վարչապետին այցելութիւնը նախ Ռուսմանիոյ, ու վերջէն՝ Պիւլխաուի մէջ՝ Աւստրիոյ արտաքերին գործոց նախարար կոմս Պէրխիթոլտի, ինչպէս նաև կարգ մը ուրիշ նախարարական այցելութիւններ որոնք կը ծանուցուէին (*), որոշ ցոյց կուտային թէ եւրոպական զիւանագիտութիւնը գործի վրայ է. ասիկա մինակը կը բաւէր աւելցնելու Պալքանեան Պետութեանց ջլագրագութիւնը, որովհետև ամէնքն ալ շատ լաւ գիտէին թէ մեծ տէրութիւնները էն առաջ իրենց ակնկալութիւնները խորտակելու համար գործի պիտի խառնուէին, և կարելի չպիտի ըլլայ օգտուիլ ներկայացած ազուր առիթէն, զոր իտալեթուրք պատերազմն ու Թուրքիոյ ներքին շփոթութիւնները բոլորովին նպաստաւոր կը դարձնէին: Կոմս Պէրխիթոլտի ապակեղորոնացման առաջարկը զոր տէրութիւնները կը վարանէին գործնական հոգակելու, տեսակ մը վտանգ էր արդէն իրենց համար, որովհետև կը ձգտէր Թուրքիան վրկել Պալքանեան Պետութիւններէն գալիք վտանգէն:

Սեպտեմբերի կիսուն մօտ, մինչդեռ Սօֆիայի, Պելկրատի և Աթէնքի մէջ պատերազմաշունչ հսկայ միթինկներ տեղի կ'ունենային, կոմս Պէրխիթոլտ Պատուիրակութեանց արտաքերին գործոց յանձնաժողովին առջև ճառ մը խօսելով պարզեց Աւստրիոյ-Հունգարիոյ արտաքերին քաղաքականութիւնը, և մասնաւորաբար Արեւելեան Տագնապին նկատմամբ Կայսրութեան ունեցած հայեացքը: Նախարարին խօսքերէն յայտնի կ'ըլլար թէ եւրոպական զիւանագիտութիւնը այդ միջոցին զբաղեցնող գլխաւոր հարցը իր նախորդ ապակեղորոնացման առաջարկն էր, և թէ վերջ ի վերջոյ անոր վրայ պիտի գոյանար ընդհանուր համաձայնութիւն մը՝ Թուրքիոյ ներկայացուելու համար: Կոմս Պէրխիթոլտ յոյս կը յայտնէր թէ այդ համաձայնութիւնը չպիտի ուշանայ և կարելի պիտի ըլլայ տագնապը անցնել առանց սրաքու լուծն չըջելու և Թուրքիոյ ամբողջութիւնը վտանգելու: Սակայն հակառակ այդ վստահութեան, կոմսը չափազանց լաւատես չէր, ու խոր հուրդ կուտար Թուրքիոյ որ կացութեան փափկութիւնը նկատի առնելով ո՛ր և է բարիկամեցողութիւն չիսնայէ միանգամայն թէ՛ Ալպանիոյ և թէ՛

(*) Գերմանիոյ վարչապետը պիտի այցելէր Իտալիա, իսկ Ռուսիոյ արտաքերին գործոց նախարար Պ. Սազօնօֆ ալ՝ Լոնտոն, Բարիզ ու Պէրլին:

Մակեդոնիոյ խառնաշփոթութեանց բաղձալի վերջ մը տալու համար: Միւս կողմէ, կը հաստատէր այն փափուկ կացութիւնը որուն ենթարկուած էին Պալքանեան Պետութեանց վարիչները՝ ժողովրդային բուռն շարժումներու պատճառաւ, բայց յոյս կը յայտնէր որ անոնք պիտի կրնան պէտք եղածին չափ պաղարիւն մնալ ու չվտանգել ընդհանուր խաղաղութիւնը: Երեք օր վերջ կոմս Պէրխիթոլտ նոր ճառ մը արտասանեց՝ ցրուելու համար այն կասկածները որոնց համեմատ իբր թէ Աւստրիա-Հունգարիոյ կառավարութիւնը կ'օգէր իրեն սեփականացնել Մակեդոնիոյ բարեւորագմանց գործին հովանաւորութիւնը: Կոմսը, նոյն ատեն կրկնեց անգամ մըն ալ թէ իր առաջարկութեան մասին համաձայնութիւնը մօտալուտ է, և թէ Երրեակ Ղինակցութիւնն ու Երրեակ Համաձայնութիւնը, Արեւելքի Տագնապը լուծելու համար ո՛չ միայն իրարու ներհակ ուղղութեան չեն հետեւիր, այլ ընդհակառակը որոշած են ձեռք ձեռքի քայլել:

Եւ սակայն ամէն բան ցոյց կուտար թէ գործը գործէն անցած է այլևս: Թուրքիոյ և Պալքանեան Պետութեանց միջև գոյութիւն ունեցող զբոստութեան պատճառները չանհետացած, նոր և աւելի վտանգաւոր վէճի պատճառներ գոյացած էին: Մուխիթար փաշայի դաշինքը, Պալքանեան Պետութեանց մէջ եղած ցոյցերէն ահարեկ, ստիպուած էր զինուորական միջոցներ ձեռք առնել իր կարգին. էն առաջ 50,000 հոգինոց նոր բանակ մը զրկած էր Մակեդոնիա. յետոյ, ճիշդ այն միջոցին ուր կոմս Պէրխիթոլտ իր առաջին ճառը կ'արտասանէր, որոշած էր ռազմափորձ կատարել Թրակիոյ նահանգին մէջ, Էտիրնէի հիւսիսային կողմը. արձակուրդի մէջ գտնուող բոլոր սպաները դրօշի տակ կանչուած էին. կէս պաշտօնական զեկոյց մը կը ծանուցանէր թէ ռազմափորձերը տեղի պիտի ունենան սեպտեմբեր 23ին, մասնակցութեամբ 50,000 զինուորներու, և պիտի տեսնուի թ որ (*): Պոլսոյ կառավարական չըջանակները յոյս կը յայտնէին թէ այս որոշումը հանդարտեցուցիչ ազդեցութիւն մը պիտի գործէ Պալքանեան Պետութեանց վրայ:

Օսմ. Կառավարութեան ձեռք առած այս միջոցները պարզ ինքնապաշտպանութեան փորձեր էին անշուշտ, ամէն կերպով օրինաւոր. բայց այդպէս չպիտի մեկնուէր իր ընթացքը. Պուլկարիա մանաւանդ չիտկէ չիտակ սպառնալիք մը պիտի նկատէր Թուրքիոյ ձեռք առած միջոցները և զանոնք պատրուակ պիտի դարձնէր իր կարգին յայտնաբար առաջ տանելու այն սպառնալիքութիւնները որոնք արդէն ձեռքի տակէ տեղի կ'ունենային ժամանակէ մը ի վեր: Պուլկար Կառավարութիւնը սկսած էր հաւաքել բոլոր կառքերն ու ձիերը, ինչպէս նաև շայափի վաճառանոցներու մէջ գտնուող բովանդակ ապրանքը: Սերպիոյ պատերազ-

(*) Եկնի Կագիրա, Քեամիլ փաշայի օւկանը, կը հաւատարմէր թէ ռազմափորձերը պիտի ունենան աւելի տարածուն հանգամանք, և անոնց պիտի մասնակցին ո՛չ միայն Էտիրնէի, այլ նաև Սելանիկի, Մանասլըրի և Քոսովայի բոլոր պահեստներու զորաբաժինները և գործօն բանակէն 12 զօրաբաժին: Ստուգութիւնն ալ ատ էր, իսկ Թանզիմար կը ծանուցանէր թէ ռազմափորձերուն պիտի մասնակցին 300,000 հոգի, Եւրոպական Թուրքիոյ մէջ գտնուող զինուորներուն գրեթէ ամբողջութիւնը:

մական նախարար զորավար Բուլթնիք ծպտուած Սօֆիա հասած էր պատերազմական պատրաստութեանց վրայ խորհրդակցելու համար, և Պուլկար Կառավարութիւնը հաւաքել տուած էր Յարօ թերթին այն թիւերը որոնց մէջ այդ գաղտնի այցելութեան մասին կը խօսուէր: Նոյն ատեն, թնդանօթներ կը փոխադրուէին դէպի սահմանագլուխ: Պուլկարիոյ պատերազմական նախարար զորավար Նիքիֆորօֆ այլևս չէր ծածկեր պատերազմի հաւանականութիւնը, և ռուս թերթի մը թղթակցին յայտարարած



Վիրաւորներ Սեւ Լեռան հիւանդանոցի մը մէջ

էր հետեւեալը. «Եւրոպա մեզ զգուշութեան կը հրաւիրէ, առանց նկատի առնելու մեր դժուարին վիճակը: Մակեդոնիոյ մէջ տիրող անխիստութիւնը կը կասեցնէ մեր ազգային անտեսական զորագացումը: Իւրաքանչիւր գարնան կ'արթննայ պատերազմի ուրուականը, որ կը կաշկանդէ ժողովուրդին բնականոն կեանքը: Սենք փնտռեցինք խաղաղ ելք մը, բայց մեր ջանքերը մինչև հիմայ ապարդիւն մնացին, անանկ որ մեզի այլևս զէնքի դիմելէն ուրիշ միջոց չի մնար: Այս պատճառաւ՝ ես հաւանական կը գտնեմ պատերազմի մը մօտաւորութիւնը, և իմ ամբողջ ոյժս կը գործադրեմ որ գայն զիմագրաւենք կատարելապէս սպառազինուած վիճակի մէջ: Կը կրկնեմ, մեր Կառավարութիւնը չի փախուքի պատերազմի. սակայն պատերազմին բռնկումը ո՛չ միայն հնարաւոր է, այլ և դժբախտաբար հաւանական, նոյն իսկ մօտիկ ապագայի մէջ»: Սեպտեմբեր 13ին՝ սահմանագլուխի ծանր ընդհարում մը տեղի ունեցաւ նորէն Վէլիի մէջ և երկուստեք մեռնողներ եղան: Երեք օր վերջ՝ Մակեդոնա-ալբանացի պատերազմական կազմակերպութեան կեդր. Գօմիթէն մեծ միթիսկ մը գումարեց Սօֆիայի մէջ. բոլորն ճառեր արտասանուեցան. ատենախօս մը ըսաւ

թէ «Պուլկարիա անպատճառ պէտք է պատերազմի ո՛չ թէ աշխարհակալութեան մտքով այլ նոյն ինքն իր սեփական անկախութիւնը փրկելու համար»: Միթիսկին նախագահն էր հանգստեան կոչուած դեր-գնդապետ Բ օթօկիրօֆ, որ կոչում ըրաւ Մակեդոնիոյ և Թրակիոյ Պուլկարներուն՝ պատրաստ ըլլալ ամէն զոհողութեան: Ծիշդ այդ օրերուն էտիրնէի մէջ մեծ իրարանցում մը առաջ եկաւ, որովհետև ոստիկանութիւնը լուր առած էր թէ Պուլկար յեղափոխականներ 12 պօմպաներ մտցուցած են քաղաք և կը պատրաստուին մահափորձերու: Դրամատուները, նամակատուներ, հիւպատոսարանները իսկոյն գաղտնի ոստիկաններու հսկողութեան ենթարկուեցան, և շրջուն պահակներուն թիւը կրկնապատկուեցաւ: Մէկ քանի օր վերջ՝ Պուլկարիա սկսաւ երկիր կանչել օտար տեղեր աշխատող մշակները և առհասարակ բոլոր Պուլկարները: Պոլսոյ մէջ, բանջարավաճառ, կաթնավաճառ կամ պարտիզպան Պուլկար գրեթէ բնաւ չէր մնացած. մեծ մասը ինքնարեւար մեկնած էին: Յեղափոխական կազմակերպութիւնները զօրաւոր հրոսախուժերը զինած էին, բոլորն ալ Մակեդոնացիներ, որոնք սահմանագլուխի գլխաւոր կէտէրուն վրայ կը սպասէին մեկնումի հրաւերին: Այս հրոսախուժերը շատ մեծ ծառայութիւն պիտի մատուցանէին պուլկար բանակին, մասնաւորաբար իբր լրտես և առաջնորդ: Ա. և Բ. կարգի պահեստիները նոյնպէս զօրակոչի կը սպասէին իրենց զօրարածիներուն միանալու համար: Պուլկար զինուորական իշխանութիւնները ահագին քանակութեամբ պարէն; մանաւանդ կենդանիի կեր կ'ամբարէին սահմանագլուխի կայաններուն մէջ: Երկրին մէկ ծայրէն միւսը առևտուրը կասած էր, որովհետև ամէն մարդ մէկ օրէն միւսը կը սպասէր զօրակոչի: Ծամբաները լեցուն էին սայլերով, որոնք զինուորական իրեղէններ կը փոխադրէին զօրահանութեան գլխաւոր կէտերուն վրայ: Իտալական լրագրի մը անգաղտնապահութիւնը կը յայտնէր թէ Պուլկարիա արդէն իսկ 120,000 հոգի ունի զէնքի տակ, կազմ ու պատրաստ:

Ընդհանուր կարծիքը այն էր որ Պուլկարիա և առ հասարակ Պալքանեան Դաշնակցութեան մաս կազմող Պետութիւնները կը սպասեն Պ. Սազօնօֆի երբեակ այցելութեանց արդիւնքին, անոր համեմատ պատերազմի սկսելու համար: Իսկ Մահմուտ Մուխթար փաշայի Դահլիճը յանձնուած էր անտարբերութեան մօտեցող լաւատեսութեան մը: Թուրք մամուլը նոյնպէս լաւատես էր, և կամ շատ շատ պատերազմի կը սպասէր գարնան, այն մտածմամբ թէ ձմրան եղանակին պատճառաւ Պուլկարիա չպիտի կրնայ զինուորական գործողութեանց ձեռնարկել. չէին հաշուէր թէ պուլկար ժողովուրդը՝ խստագոյն կլիմայի մը վարժուած՝ ձմրան պատճառաւ չպիտի կասէր, եթէ իրօք պատերազմը հնարաւոր դառնար: Նորատունկեան էֆէնտի ալ այդ սխալ համոզումը ունէ՞ր արդեօք: Ամէն պարագայի մէջ, մինչդեռ անդին՝ Պուլկարիոյ մէջ՝ զինուորական պատրաստութիւնները առաջ կը տարուէին, Պոլսոյ թերթի մը կը յայտարարէր թէ «Բնաւ պատճառ մը չունի տարակուսելու Պուլկար Դահլիճին խաղաղափրական յայտարարութեանց անկեղծութեան վրայ», և յոյս կը յայտ-


նէր որ եթէ Պուրկարիա շարունակէ այդպէս խաղաղութեան պահպանման կուսակից մնայ, միւս Պալքանեան Պետութիւններն ալ իր օրինակին պիտի հետեւին: Թերեւս դիւանագիտական խաղ մըն էր Նորատուրկեան էֆէնտիի այս յայտարարութիւնը, բայց Պոլսոյ մէջ ոչ մէկ զինուորական պատրաստութիւն կար այդ օրերուն. նոյն իսկ գործօն ծառայութեան մէջ գտնուող 1304ի զինուորներուն արձակման Իրատէն ալ ելած ըլլալով, կը գործադրուէր(*): Հաւանականը սա է որ Թուրքիա չափազանց յոյս դրած էր տէրութեանց կողմէ ի նպաստ խաղաղութեան կատարուող ձեռնարկներուն, և կը հաւատար թէ անոնք պիտի յաջողին առաջը առնել պատերազմի մը որ կրնար ընդհանուր Եւրոպայի խաղաղութիւնը վրդուել: Թերեւս կը յուսար նաև Պալքանեան Պետութիւնները ահաբեկել իր ծանուցած ռազմափորձերով, զորս սակայն չպիտի կրնար կատարել:

Կը սպառազինուէր նաև Սերպիա, գրեթէ նոյնքան յայտնարար՝ որքան Պուրկարիա: Օսմ. կառավարութիւնը բաւական կարևոր գումարներ տրամադրած էր Պէրանայի ջարդին առթիւ վնասուողներուն. Այսպնից հրամանատար Միլչիր Իպրահիմ փաշա միմիայն 2040 ոսկի յանձնած էր տեղւոյն հրկիզուած վանքին վերանորոգութեան համար: Բայց ջարդուողները կարելի չէր նորէն ողջնցնել, և Թուրք կառավարութեան բարիկամեցողութիւնը չէր կրցած մարել Սերպիոյ մէջ մարմին առած գորգոտիները: Մուխթար փաշայի դահլիճը ուզեց նոր զիջում մըն ալ ընել, և 20 վալիօն սերպիական թնդանօթներն ու ռազմամթերքը զոր վար դըրած էր Սկիւպի մէջ, ճահայ հանեց դէպի Սերպիա. արտօնեց նաև որ Սելանիկի մէջ վար գրուած ուրիշ 20 վալիօն ռազմանիւթեր ալ միւսընդուն նպատակով ձամբայ հանուին: Սակայն Իպրահիմ փաշայի մէկ հեռագրէն տեղեկանալով որ Սերպիա չի դադրեցներ իր զինուորական պատրաստութիւններն ու գրգռիչ ընթացքը, ետ առաւ տուած որոշումը, և վալիօններէն առաջինները Քուլմանօվայի և վերջիններն ալ Սկիւպի մէջ վար դըրուեցան նորէն: Մաս մըն ալ Սելանիկ կը մնար: Վար դըրուած վալիօններուն մէջ կը գտնուէին 52 դաշտային արագահարուած թնդանօթ՝ 72 միլիմէթր տրամագծով, 107 ռազմամթերքի կառք, 30,000 հարուածի համար դաշտային թնդանօթի ռումը, 4500 հարուածի համար խոչոր թնդանօթի ռումը, 52054 հարուածի համար անձուխ վառօղ և 2553 քիլօ սև վառօղ: Բոլոր այս ռազմանիւթերը կը գրաւէին 7912 սնտուկ, որոնցմէ 304ը Քուլմանօվայի մէջ կը մնար, 1982ը Սկիւպի և 2583ն ալ Սելանիկի մէջ: Սերպիա բողոքեց բուռն կերպով և սպառնացաւ որ ինք ալ վար պիտի դնէ Թուրքիոյ հաշուին իր երկրէն անցնելիք աւստրիական ու գերմանական ռազմամթերքը(**): Բ. Դուռը, առանց այդ բողոքին կա

(*) Այդ զինուորներուն կէսը, որոնց մէջ բազմաթիւ Հայեր, Պոլիս կը գտնուէին, երբ երկու շաբաթ վերջ պատերազմը պայթեցաւ. իսկոյն դրօշի տակ առնուեցան անոնք. մնացեալ կէսն ալ որ հայրենիք մեկնած էր, կէս ճամբէն ետ դարձուեցաւ. Լաւ մարզուած զինուորներ էին ամէնքն ալ:

(**) Ռուսիա ալ Բ. Դրան մօտ միջնորդեց այդ խնդրին առթիւ, և յորդորեց յանձնել գրաւուած սնտուկները, ապահովեցնելով որ Սերպիա յարձակողական նպատակներ չունի Թուրքիոյ դէմ:

րեւորութիւն ընծայելու, բացատրութիւն պահանջեց Պոլսոյ սերպիական դեսպան Պ. Նենատովիչէն՝ Սերպիոյ պատերազմական պատրաստութեանց



Համար: Պ. Բաշիչի դահլիճն ալ այդ բացատրութեան պահանջին արտաքոյ կարգի կարեւորութիւն չընծայեց, ու շարունակեց մեծաքանակ ձի


այլեր ու ցորեն գնել Ռուսիայէն: Պուլկարիոյ մէջ եղածին պէս, Սերպիոյ մէջ ալ արտակարգ ոգեւորութիւն, մանաւանդ աշխատութիւն կար ամէն կողմ: Զօրահանութեան հրաման չէր տրուած տակաւին, սակայն տենդագին պատրաստութիւնները որոնք երկիրը մէկ ծայրէն միւսը ջղայնօտ գործունէութեան մը մասնած էին, որոշ ցոյց կուտային թէ հրամանը չպիտի ուշանայ. Սերպիա, ինչպէս Պուլկարիա, անպաշտօն կերպով կը սպառազինուէր:

Յունաստան նոյնպէս: Սահմանագլուխի ընդհարումներէն զատ, որոնք իրարու կը յաջորդէին առանց բնաւ կարգադրուելու, նոր պատրուակ մը ծագած էր, Սամոսի ապստամբութիւնը և այդ առթիւ տեղի ունեցած բաւական ծանր միջադէպ մը: Թուրք զինուորներ կանոնաւոր հրացանաձգութեան առարկայ դարձուցած էին հելլենական Բուլեղի նաւը, որ ապստամբութեան ծագած միջոցին Վաթիի առջև խարսխած էր. հրացանի բռնուած էր նաև նաւապետը, որ մակոյկով իր շոգենաւը կը փութար: Բուլեղի ո՛ւնէ կասկածելի ընթացք չէր ունեցած, ոչ ալ օժանդակած էր ապստամբներուն: Այս պատճառաւ մանաւանդ Հելլէն կառավարութիւնը ամենախիստ ծանուցագիր մը տուաւ Բ. Գրան(*): Նոյն ատեն, զեկոյց տէրութեանց թէ Սամոսի կացութիւնը կրնայ ծանրագոյն դէպքերու տեղի տալ ու գրգռել Հելլէն հանրային կարծիքը, և յոյս յայտնեց որ տէրութեանց միջամտութեամբ Սամոսիք կը հասնին իրենց բաղձանքին, — Թուրք զինուորներու հեռացման: Կղզիին կացութիւնը աւելի ծանրացաւ, երբ Կրետէէն բազմաթիւ կամաւորներ այնտեղ գացին ոյժ տալու Սօֆուլիսի որ Սամոսի յեղափոխական շարժման վարիչն էր միշտ, ինչպէս էր նաև Համիտի օրով: Տէրութիւնները, կղզին գրաւելով և թուրք զինուորները հեռացնելով շուտով վերջ պիտի տային խնդրին. բայց առժամաբար՝ պատրուակը կար, և Յունաստան կ'օգտուէր անկէ, աւելի մղում տալու համար իր զինուորական նախապատրաստութեանց: Արդէն իսկ թեսալիոյ մէջ համախմբուած էին ամրաչէն զօրքերու ջոկատներ, և Պ. Վէնիզելոս կը յայտնէր որ եթէ հակառակ կառավարութեան ջերմ բաղձանքին՝ կարելի չըլլայ խաղաղութիւնը պահպանել, Յունաստան կազմ ու պատրաստ է երկարատև պատերազմի մը, և առանց վարանման պիտի փութայ առկախ հարցերը զէնքի ոյժով լուծելու:

Իբր թէ չէին բաւեր այս բոլոր հոգերը, պայթեցաւ նաև Մալիսորներու ընդհանուր ապստամբութիւնը, և պատերազմի պաշտօնական յայտարարութենէն օրերով առաջ կատարեալ ռազմադաշտի մը վերածեց Շքօտրայի նահանգին հիւսիսային մասը և Գարատաղի բովանդակ սահմանագլուխը: Շքօտրայի շրջակայ կեդրոններու բոլոր պաշտօնեաները փախան քաղաք. Մալիսորները բռնած էին գլխաւոր անցքերը, կտրած էին հեռագրաթիւերը և կէս մը պաշարած էին Շքօտրան: Քաղաքը նոյնպէս խռով էր. շարժման առաջին օրերուն՝ երկու ոստիկան զինուորներ սպաննուեցան հրապարակաւ և իրենց զէնքերը առնուեցան. ուրիշ օր մը՝

(*) Հրացանաձգութիւն տեղի ունեցած էր նաև Հելլէն հիւպատոս Պ. Սթէֆանաթոսը կողմ մակոյկի մը վրայ, առանց արդիւնքի:

Թնդանօթածիգ սպայ մը հրազէնի հարուածով մը վիրաւորուեցաւ սրունքէն, դարձեալ հրապարակաւ: Շէնքի թղթաբերը կողոպտուեցաւ Մա-



ԶՕՐԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Թուրք կիներ, խանդավառուած, զինուորական հագուստ կը գնեն իրենց տղոց

լիսերներէն: որոնք սպաննեցին նաև Էտէմ պէյ անունով երիտասարդ սպայ մը որ Եւրոպա ուսած էր: Գարատաղ՝ Մալիսիա մտցուցած էր 6000 ռուսական և իտալական հրացաններ ու 300,000 փամփուշտ. ա-

սոնցմէ զատ, Մալիսորներուն յանձնած էր 50 սնտուկ պայթուցիկ նիւթեր, որոնք պիտի գործածուէին սահմանազուլիս թրքական աշտարակները օղը հանելու, ինչպէս որ ալ եղան: Մալիսորները մէկիկ մէկիկ քանդեցին բոլոր անջատ աշտարակները. և սպաննեցին պահակները: 1200 Գարատաղցիներ, կատարելապէս սպառազինուած, սահմանը անցնելով անոնց կ'օժանդակէին: Չէթինեէի կառավարութիւնը այդ ընդհարմանց շնորհիւ լաւ մը կը մաքրէր սահմանագրուիս անցքերը, մօտալուտ պատերազմին առթիւ ազատ ու անարգել թրքական հողը արշաւելու համար: Բօսկօրիցայի գրեթէ բովանդակ արու բնակչութիւնը անցած էր սահմանը և կէս պաշարման վիճակի մէջ էին Մաթի ու Թուզի, ճիշդ Շքօտրայի պէս: Չէթինեէն անընդհատ ռազմանիւթ կը զրկուէր անոնց, ինչպէս նաև Մալիսորներուն, որոնցմէ աւելի քան 15,000 հոգի յարձակեցան Պէրանայի վրայ և ամբողջ եօթ ժամ կռուեցան օսմանեան զինուորներուն հետ: Երկուստեք բաւական մեծ եղան կորուստներ: Շքօտրայի լիճին վրայէն անցնող թրքական շոգեմակոյցի մը հրացանի բռնուեցաւ Գարատաղցիներու կողմէ, որոնք շոգեմակոյցին մէջ գտնուող զինուորներէն մէկ մասը սպաննեցին և հինգ հոգի ալ քիթը կտրեցին: Սեպտեմբեր 20ին Վիեննայէն հեռագիր մը կը ծանուցանէր թէ Նիքօլա թագաւոր Բօսկօրիցա կը կը մեկնի՝ սահմանազուլիս վրայ ձեռք առնուած զինուորական միջոցները աչքէ անցընելու համար: Յաջորդ օրը, Բ. Դրան մէջ գումարուած Նախարարաց Խորհուրդը որոշեց բողոքել Եւրոպական Տէրութեանց մօտ՝ Գարատաղի կառավարութեան կողմէ Մալիսորներու ընծայուած յայտնի օժանդակութեան համար: Նոյն օրը Չէթինիէի Դահլիճն ալ կ'որոշէր տէրութեանց ծանուցանել թէ աւելի երկար ատեն չպիտի կրնայ սպասել սահմանագրուիս ճշդման, պնդելով որ անպատճառ որոշ պայմանաժամ մը նշանակուի այդ մասին:

Միանգամայն չորս սահմանազուլիսներու վրայ բռնկած այս հրդեհները մարելու անկարող տէրութիւնները, տակաւին ելից հնար մը գտած չըլլալով, կ'աշխատէին ժամանակ չահի: Յորդորներ տուին Սեւ Լեռան, ու նոյն ատեն Աթէնքի, Սօֆիայի և Պէլկրատի դահլիճներուն յանձնարարեցին հանդարտութիւն և չափաւորութիւն, վստահեցնելով զանոնք թէ տազնապը պիտի լուծուի իրենց համար գոհացուցիչ կերպով մը: Պուլկար, Սերպ և Յոյն կառավարութիւնները, այս յանձնարարութեան վրայ պատրաստեցին համիմաստ յիշատակագիրներ, որոնցմով կը պարզէին իրենց պահանջները Եւրոպական Թուրքիոյ քրիստոնեայ բնակչութեանց մասին. այդ պահանջներուն մէջ գլխաւոր տեղը կը բռնէին Սուլթանէն անկախ, տէրութիւններէն ընտրուած և լոկ անոնց պատասխանատու քրիստոնեայ կառավարիչի մը նշանակումը, տեղական զինուորագրութիւն, ելմտական անկախութիւն, տեղական ընդհանուր ընտրովի ժողովներ, և դեռ խել մը բարենորոգումներ: Տէրութեանց դեսպանները, որոնց անպաշտօն կերպով ցոյց տրուած էր այդ յիշատակագիրը, խորհուրդ տուին Պալքանեան Պետութեանց որ առ այժմ չմատուցանեն զանոնք, որպէս զի կացութիւնը, արդէն իսկ տազնապալից, բոլորովին չկրնա-


ռտտի: Վերջապէս տակաւին յոյս կար թէ կարելի կ'ըլլայ խաղաղ լուծում մը տալ խնդրին: Ապահովարար Պալքանեան Պետութիւններէն ոչ ոք այդ յոյսը ունէր, և իրենցմէ խւաքանչիւրը տէրութեանց ընելիք կարգադրութենէն աւելի վնաս կը սպասէր քան օգուտ. սակայն ամէնքն ալ երեսանց համբերող ցոյց տուին ինքզինքնին, ձեռքի տակէ առաջ տանելու համար իրենց զինուորական պատրաստութիւնները: Սկսելիք պատերազմը արագութեան պատերազմ մը պիտի ըլլար քան ոյժի, ուրիշ կերպ ըսելով՝ արագութիւնը պիտի դառնար պատերազմին մեծագոյն ոյժը և անոր բախտը պիտի վճռէր. այս պատճառաւ անոնք կ'ուզէին պատրաստ ըլլալ առաջին նշանին:

Այդ միջոցիս Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը՝ Պ. Սազօնօֆ, Լոնտոնի մէջ Սըր Էտուար Կրէյլի հետ կը խորհրդակցէր Եւրոպական ու Ասիական Թուրքիոյ, ինչպէս նաև Պարսկաստանի գործերուն նկատմամբ: Տարակոյս չկայ որ երկու բարեկամ տէրութեանց դեսպանները կը զգային թէ դամոկլեան սուրին պէս Եւրոպայի գլխուն վրայ կախուած վտանգը գլխաւորաբար Թուրքիա կրնար անհետացնել. կարգ կանոն մտցնելով երկրին մէջ, Այս մտքով, Պոլսոյ անգլիական և Ռուսական դեսպանները գեկուցում մը ըրին Դրան. զգուշացնելով զայն առաջ գալիք կացութենէն ուրկէ գլխաւոր վնասուողը ինք պիտի ըլլար, և կարգ մը թելադրութիւններ ըրին Բումէլիի և Անատօլլի նահազներուն բարեկարգութեան մասին: Նոյնիմաստ գեկուցում մը եղած էր նաև Բեթերսպօլերկի Օսմ. դեսպան Թուրխան փաշայի: Թէ՛ այս գեկուցումները և թէ՛ անգլուստ թելադրութիւնները՝ բարենորոգմանց մասին, Պէրիսթօլտի առաջարկութիւնը հակակռող ձեռնարկներ էին անշուշտ: Երբեակ Զինակցութեան և Երբեակ Համաձայնութեան ծանուցեալ համամտութիւնը լոկ խօսք էր. անոնք այդ օրերուն դարձեալ իրենց բնական մրցակցութեան յանձնուած էին (*): Եւ Մանուտ Մուխթար փաշայի դահլիճ, որուն մէջ Բեամիլ փաշայի անգլիասէր ոգին կը տիրապետէր, այդ երկու մրցակիցներէն պիտի նախընտրէր Երբեակ Համաձայնութիւնը:

Երբ այս գեկուցումները եղան, Բ. Դուռը շատ դժուարին դիրքի մը մէջ կը գտնուէր ո՛չ միայն արսաքուստ, այլ նաև ներքուստ: Իթիհատականները հանդարտ չէի կրնար. նոր Դահլիճին կողմէ ձեռք առնուած կարգ մը վրդովիչ միջոցներ, ինչպէս օրինակի համար Համիտի աւագանիին և նշանաւոր լրտեսներուն շնորհուած ներուճն ու Երեսփ. Ժողովը ջնջելու մտադրութիւնը մատերնին փաթտած, հաւարի աղաղակ կ'արձակէին թէ Սահմանադրութիւնը վտանգի մէջ է և բռնակալութեան վերադարձը մօտալուտ: Շէյխ Ուպէյտուլլահ, յայտնի իթիհատական մը, Այս Սօֆիայի մզկիթին մէջ քարոզ տալու պատրուակով բուռն բառերով քննադատած էր դահլիճը և բանտարկուած: Բանտն էին նաև Հիւսէին Ծահիտ և Նախ-

(*) Աւելի ետքը, շնորհիւ Ֆրանսայի նախարարացեալ (վերջէն՝ Հանրապետութեան Նախագահ) Պ. Բուանքարէի ջանքերուն, այդ համամտութիւնը իրօք պիտի գոյանար, բայց ո՛չ առաջըք առնելու համար պատերազմին որ արդէն իսկ հուշակուած էր, այլ գոնէ պատերազմը Պալքաններուն մէջ սահմանափակելու համար:

կին ելմտական նախարար Մէհմէտ Ճավիտ պէյերը, Թանկի մէկ խմբագրին հետ, կառավարութեան դէմ հրատարակուած խիստ քննադատութեանց պատճառաւ: Անոնց բանտարկութենէն քիչ առաջ, կառավարութիւնը յաջողած էր ցրուել իթիհատական գումարում մը որ Դահլիճին դէմ ցոյցի մը նախաքայլը պիտի ըլլար: Միւս կողմէ, զինուորական ըմբոստութիւնները կը շարունակուէին քիչ մը ամէն կողմ: Իթիհատական և իթիլափական սպաներու պառակտումները գէշ օրինակ կ'ըլլային նաև պարզ զինուորներուն: Այսպանացուց դէմ գործող բանակը կատարեալ քայքայման մէջ էր. տեղ տեղ դերերը չըջուած էին, զինուորներ կը հրամայէին սպա-



Մուսթաֆա Փաշայի ժէօն-թիւրք վարժարանը զոր Պուլկարները զօրանոցի վերածեցին

ներուն: Կառավարութիւնը ստիպուեցաւ թնդանօթ գործածել Չանաքքայէի մէջ, ուր նոյնպէս զինուորական ծանր ըմբոստութիւն մը ծագած էր: Այսպէս՝ մինչդեռ միանգամայն չորս երկիրներ կը սպառնային միահողօշն իր վրայ յարձակիլ, Պոլիս յանձնուած էր էսպէս բիւզանդական վիճարանութեանց և ներքին կռիւներու, ճիշդ ինչպէս վեց դար առաջուան Բիւզանդիոնը՝ Պաթիլի յարձակման նախօրեակին:

Դահլիճը, անգլիական և ուսական դեսպաններուն զեկուցման վրայ, Համիտի սիրական մէթոտին դիմեց, պահանջուածէն աւելին խոստացող բարենորոգմանց ծրագիր մը մշակելու վրայ ըլլալը ծանուցանելով: Անկեղծութեամբ մը որ կրնայ զարմանալի թուիլ թուրք պետական մարդոց համար, նախարարները հաւաքաբար կը խոստովանէին իրենց վրայ բանեցուած արտաքին ճնշումը, ինչպէս նաև անգլուուս առաջարկութեանց նախապատուութեան տալերին: հաւատարիմ եղած զեկուցմանց, իրենց մշակելիք ծրագիրը լոկ Բուժէին նկատի չպիտի ունենար, այլ նաև Անատոլըն, որովհետև այդ ատենները հայկական նահանգներուն մէջ կատարեալ զուլումի վիճակ մը վերստեղծուած էր և գրեթէ ամէն օր նորանոր սպանութեանց գոյժեր կը հասնէին Պոլիս: Կառավարութիւնը, ազգային պահանջմանց իբր գոհացում՝ նոր կուսակալներ զրկած էր Վան, Մուշ և ուրիշ տեղուանք, իբր թէ ջարդերու և հարստահարութեանց հեղինակ-

ները պատժել տալու և նմանօրինակ տխուր դէպքերու կրկնութիւնը արգիլելու համար, բայց այդ կուսակալները յայտնի ոճրագործներ ազատ արձակելէ զատ ուրիշ բան չէին ըրած գրեթէ և ջարդերը վերսկսած էին մասնաւորաբար Վանայ, Բաղէշի ու Տիարպէքիլի կուսակալութեանց մէջ: Բ. Դրան բարեկարգութեան նոր ծրագիրը կը յաւակնէր հանդարտեցնել նաև Հայաստանի մէջ ծագած բուռն յուզումը, որուն արձագանգ կ'ըլլային Կեդրոնի Պատրիարքարանը, Ազգ. երեսփ. Ժողովը ու մամուլը, և որ ժողովրդային ցոյցերու տեղի կու տար:

Ահա թէ ինչ էին այդ ծրագրին նախագիծերը. —

Բուժէլի և Անատոլի բարեկարգութեան հարցին մասին եւրոպական դեսպանատուներու կողմէ քանիցս դիմումներ կատարուած էին արտաքին գործերու նախարարութեան մօտ, և նոյն իսկ վերջերս այդ առթիւ Ռուսիոյ արտաքին գործերու նախարարը ևս տեսակցութիւն մը ունեցած էր ֆէթերսպուրկի օսմանեան դեսպան թուրքսան փաշայի հետ:

Այս առիթներով փափաք յայտնուած էր որ՝

Ա. Բուժէլի մէջ բարձուին բոլոր այն պատճառները որոնք զանազան տարրերու միջև ցրտութիւն կը սերմանեն:

Բ. Ժողովուրդին կառավարութեան հետ ունեցած խնդիրներն ու գործերը վըճուուին իրաւունքի և օրէնքի սահմանին մէջ:

Գ. Պէտք եղած ձեռնարկները ըլլան անդ որոշութիւնը և ապահովութիւնը երաշխտուորելու համար, և այս առթիւ անհրաժեշտ հրահանգները տրուին գաւառական իշխանութեանց:

Դ. Այսպիսի մասին ծրագրուելիք բարենորոգումները գործադրուին երկրին միւս մասերուն մէջ ալ:

Արտաքին գործերու նախարարութիւնը այս կէտերը յատուկ թէզքերով յայտնած ըլլալով, ներքին գործոց նախարարութիւնը հետեւեալ մասնաւոր ծրագիրը պատրաստած է, զոր նախարարական խորհուրդը նկատի առաւ. —

1. Այն տեղերը ուր դատական կազմակերպութիւն չկայ՝ այդ կարգի գործերը պիտի կարգադրուին ըստ տեղական սովորութեանց, և պաշտօն պիտի տրուի դատական նախարարութեան օրինաբէր պատրաստելու այդ մասին:

2. Պաշտօնեաները պիտի ընտրուին առանց ցեղի և կրօնքի խտրութեան, օրինական պայմանները լրացնող անձերէ, նախապատուութիւն տալով տեղական լեզուի և սովորութեանց ծանօթներուն:

3. Նահանգներու կեդրոնը, ինչպէս նաև առնուազն 300.000 բնակիչ ունեցող սանձագներու կեդրոնը պիտի հիմնուին սուլթանիէ և երկրագործական վարժարաններ՝ տեղական լեզուներն ալ նշանակելով դասաւանդութեանց փրօկրամին մէջ:

4. Իվլաֆի նախարարութեան հրահանգ տալ աշխատելու կրօնական վարժարաններու զարգացման:

5. Երկրին երջանկութիւնը կախուած ըլլալով տնտեսական զարգացումէն, և աս ալ հաղորդակցութեան միջոցներէ, պարի պիտի տրուի երկաթուղիներու, խճուղիներու, գետային նաւարկութեանց և ոռոգութեան նման ձեռնարկներու, և դիւրութիւններ պիտի տրուին ձեռնարկներուն:

6. Միջոցներ ձեռք պիտի առնուին առևտրական և երկրագործական զարգացման, անտառներու և հանքերու շահագործման համար:

7. Գիւղատնտեսութեան կազմութիւն (կանիէ քիշիլարը) պիտի ըլլայ հոն ուր չկայ:

8. Բուժէլի զինուորները պիտի ծառայեն՝ բացի պատերազմի և ներքին բացառիկ դէպքի պարագաներէն՝ բուն իսկ Բուժէլի մէջ:

Պիտի ըլլայ պիտի ըլլայ պիտի ըլլայ... իսկ դրական՝ ոչինչ: Քանի՛ տարի կար որ թուրքիս կը կիրարկէր այս մէթոտը, քանի՛ տարի կար որ

կը խոստանար, քանի՜ տարի կար մանաւանդ որ իր խոստումները չէր յարգեր, կամ հուրով ու սուրով, աւերակներով և արիւնի հեղեղներով կը ջնջէր իր յանձնատուութիւնները... Ինչ կը վստահեցնէր որ Մուխթար փաշայի դահլիճը, թրքական վաղընջուց մէթոսներուն հաւատարիմ իր վարիչներով, այս անգամ տարրեր պիտի վարուէր: Ընդհակառակը, պարզ կ'երևար որ Պէրխթուտի առաջարկը ջուրը ձգելու և Երրեակ Համաձայնութեան համակրանքի ապացոյց մը ընծայած ըլլալու համար էր որ բարենորոգմանց նոր ծրագիր մըն ալ կը խոստանար բարդել տարիներու փոշին տակ թաղուած բիւրաւոր ծրագիրներուն: Իթիհատական մամուլը սակայն՝ սուրբէն օգտուելու համար՝ լրջօրէն առաւ դահլիճին խոստումը և սկսաւ ամենախիստ քննադատութեանց: Ազգային արժանապատուութեան դէմ կը նկատէր դեպքաններուն պահանջմամբ բարենորոգում կատարելը, կ'ամբաստանէր Ղազի Մուխթար-Քեամիլ փաշաներու նախարարութիւնը թէ երկրին մէջ առանձնաշնորհեալ նահանգներ ստեղծելով կը դիւրացնէ Կայսրութեան բաժանումը, և կ'ընդունի տէրութեան ներքին գործերուն մէջ եւրոպական դեպքաններուն միջամտութիւնը, ինչ որ գործքով վերջ կու տար Թուրքիոյ անկախութեան: Թանկն՝ որուն քննադատութիւնները խստագոյններն էին, այդ առթիւ կը յայտարարէր նաև թէ Թուրքիոյ համար գոյութեան ամէն իրաւունք կորսնցուցած է Պէրլինի Դաշնագիրը, որ դեպքաններուն միջոց կ'ընծայէր Թուրքիոյ առանին գործերուն խառնուելու, իրր թէ Քրիստոնեաները պաշտպանելու համար: Իրերը այս վիճակին մէջ էին, երբ Սեպտեմբեր 18ին յանկարծ պայթեցաւ քանի շարքի ի վեր սպասուած փոթորիկը:



ՉՕՐԱՎԱՐ ԻՐԱՍ ՓՍՇԱ



ԳԼՈՒԽ ԺԶ.

ԽՕՍԲԸ ԹՆԴԱՆՕԹԻՆՆ Է

1912 Սեպտեմբեր 18ի առտուն Պոլսոյ ժողովուրդը անսահման յուզմունքի մատնուեցաւ յանկարծ: Իտալեթուրք պատերազմին բերմունքով առաջ եկած կացութիւնը արդէն իսկ կործանման դուռը բերած էր երկիրը. ո՛չ գործ, ո՛չ առեւտուր, ո՛չ դրամ, ո՛չ ալ վարկ. վաճառակաշուքիւնը կասած, վստահութիւնը վերցած, շատեր սնանկացած կամ սնանկանալու վրայ, ապրուստը սուղ, խեղճութիւնը ընդհանուր. և իբր թէ այս ամէնը քիչ էին, կործանարար տուրքի յաւելումներ՝ զորս Սախտ փաշայի դահլիճը ընծայ թողած էր ժողովուրդին, և որոնց բարձման խոստումով պաշտօնի անցած էր Մուխթար փաշայի Դահլիճը: Բայց, ան ալ, իր խոստումը մէկ կողմը դրած, նոր տուրքեր աւելցնելու հնարքներ փնտուելու վրայ էր: Պետական գանձը ժողովուրդին քսակէն մեծ տար բերութիւն չունէր, և իթիհատական մամուլը գրեթէ հեշտանքով կը ծանուցանէր թէ պաշտօնեաներու ախականը անվճար պիտի մնայ: Ասիկա պայքարի ամէնէն ազդու միջոցն էր զոր կրնար երբեք գործածել՝ դահլիճը տապալելու համար ըրած յուսահատական ճիգերուն մէջ: Ուստիու հարցն էր վերջապէս, կարելի չէր կատակել անոր հետ. օրուան ամէնէն թունդ իթիլաֆականը կրնար չուտով պաղլի բոլոր Իթիլաֆներէն՝ երբ իր որկորին շահերը վտանգուէին, և յարի այն կուսակցութեան որ այդ շահերը պիտի ապահովէր: Մէկ կամ միւս կողմը այս մասին իրարու ըսելիք չունէին. Սախտ փաշայի անկու մէն վերջ՝ Իթիհատականներէն շատեր նոյն որկորի շահերուն սիրոյն դարձած էին Քեամիլ փաշայի կողմը, և անշուշտ առ էր պատճառը որ Թուրք տարրին հոգեբանութեան խորապէս թափանցած ծերունի դիւանագէտը, գործի գլուխ վերադարձած ատենները չէր վարաներ յայտարարելու թէ «Իթիհատը մեռած է և թէ չուտով զայն»


գերեզման պիտի դնէ»։ Ըսել կ'ուզէր թէ ամսականի բաշխումները իրենց ձեռքը ըլլալով, կուսակցութեանց մեծագոյն ոյժը կազմող պաշտօնեաները շուտով կառավարութեան պիտի յարին։ Այդ միեւնոյն որկորի շահերը վտանգուած ցոյց տալով, Իթինատական մամուլը կը յուսար ծանրապէս հարուածել դահլիճը. ու դիտելի է որ այդ միջոցին Պոլսոյ թերթերուն հրատարակած մէկը միւսէն վրդովիչ զրոյցներուն մէջ, որոնք անհունապէս աւելի կենսական հարցերու շուրջ կը դառնային, կառավարութիւնը մի միայն այդ ամսականներուն լուրը հերքեց։



1912 ՍԵՊՏԵՄԲԵՐ 18Ի ՕՐԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ
Ժողովուրդը կը կարդայ հասնող հեռագիրները

Ժողովուրդը այդ միջոցին յուսալից էր թէ վերջ պիտի գտնէ Ափրիկեան Տրիպոլսոյ պատերազմը. որ Թուրքիայէն զատ ոչ մէկուն կը վնասէր դրապէս։ Արդէն ժամանակէ մը ի վեր հաշտութեան բանակցութիւնները առաջ կը տարուէին. հաւանական կը նկատուէր որ շուտով գոհացուցիչ կարգադրութեան մը յանգին և վերջ տան տնտեսական տագնապին ու պատերազմին առթիւ դրուած յաւելուածական տուրքերուն։ Գալով պալքանեան տագնապին, վերջին մէկ քանի տարիներու ընթացքին բազմիցս այդ կարգի կնճռոտութիւններու վարժուած ըլլալով, գրեթէ ոչ ոք արտաքոյ կարգի կարեւորութիւն կ'ընծայէր անոր։ Հին դահլիճին թողած փորձանքն էր, և յոյսը մեծ էր ամէնուն քով թէ Անգլիոյ հովանաւորութեամբ գործի գլուխ անցած նոր դահլիճը ելից հնար մը կը գտնէ ուշ կամ կանուխ։ Արդէն Բ. Դուռը միշտ լաւատես մնացած էր և Թուրք նախարարնե-

րու կողմէ եղած յայտարարութիւններ, որոնց ամէն օր արձագանգ կ'ըլլային թերթերը, կացութիւնը ծանր ցոյց տալով հանդերձ, պատերազմի մասին ամէն կասկած կը վանէին։ Այս է պատճառը որ Պոլսոյ ժողովուրդը յան-



ԶՕՐԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՆ
Տեսարանը Պոլսոյ փողոցներուն մէջ

կարծակիի եկաւ Սեպտեմբեր 18ի առտուն, հասած հեռագիրներէն տեղեկանալով որ Պուլկարիա, Սերպիա, Գարատաղ և Յունաստան ընդհանուր զօրահանութեան ձեռնարկած են։ Առաջ եկած յուզումը սաստկացաւ։

երբ ցերեկուան հեռագիրները այլևս տարակոյս չթողուցին թէ իրօք պաշտպանողական և յարձակողական զինակցութիւն մը կնքուած է Պալքանեան երեք Պետութեանց ու Յունաստանի միջև . և թէ շուտով վերջնագիր մը պիտի տան Թուրքիոյ :

Պուլկար կառավարութիւնը , էտիրնէի շրջակայքը և սահմանադրութիւն վրայ՝ ռազմափորձի համար կատարուած Թրքական զինուորական համախմբումը պատրուակ բռնելով , հրամայած էր ընդհանուր զօրահանութիւն . արդէն դահլիճը , առանց այդ հրամանին , դժուար թէ կարենար կանգուն մնալ , որովհետև ընդդիմադիրները , մակեդոնացի տարրին միացած , «կամ պատերազմ կամ ներքին ապստամբութիւն» կը գոռային քանի որ է ի վեր , և շատ ալ տրամադիր կ'երևային գործը խօսքին միացնելու : Զօրահանութեան հրամանը ելած էր սեպտ . 17ի ցերեկին . լուրը ընդունուած էր մեծ խանդավառութեամբ . հրամանագրին օրինակները ձողերու վրայ իբր դրօշ պարզուած , կը պտտուէին քաղքին փողոցներուն մէջ : Ահագին բազմութիւն մը ոտքի վրայ էր մինչև իրիկուն , «Հուրրա՛»ներ կ'արձակէր պատերազմը տարիօղելով , կը շրջէր փողոցները՝ անընդհատ կրկնելով պուլկարական ազգային երգը : Յաջորդաբար խանդավառ ցոյցեր տեղի կ'ունենային արքայական պալատին , պատեղամական նախարարութեան , մասնաւորաբար Յունաստանի և Սերպիոյ դեսպանատանց առջև : Նոյնքան համակիր ցոյցերու առարկայ կը դառնար նաև իտալական դեսպանատունը : Բոլոր կառախումբերը յատկացուած էին զինուորներու և ռազմամթերքի փոխադրութեան , գրաւուած էին կառքերն ու ձիերը , և օտար ջուրերու մէջ գտնուող պուլկարական բոլոր նաւերուն հրահանգ զրկուած էր որպէս զի փութեան վառնա կամ Պուրկազ դառնալ :

Ֆիլիպէի մէջ՝ ուր կը կեդրոնանար շարժման մէջ դրուած զինուորներու կարեւոր մաս մը , սեպտեմբեր 17ի առտուն տակաւին ոչ մէկ նշան կար թէ ընդհանուր զօրահանութեան հրաման պիտի ելլէ . բայց իրիկունը՝ կառքերով շրջող զինուորներ քաղքին ամէն կողմը ծանուցած էին լուրը : Անմիջապէս փակուած էին բոլոր խանութները և ամէն մարդ փողոցները լեցուած , աճապարանքով պատրաստութիւն կը տեսնէր : Զինո օրական տարիքի մէջ գտնուողները ինքնաբերաբար կը ներկայանային իշխանութեանց . հրատարակուած էր պատերազմական վիճակ և զինուորներ կը հսկէին ամէն կողմ . ժողովուրդը մինչև կէս գիշեր փողոցները մնացած էր , անձնատուր ըլլալով խանդավառ ցոյցերու . ձիաւորներ փութացած էին շրջակայ գիւղերը լուր տալու , և մէկ քանի ժամ վերջ , ամէն կողմէ գիւղացիներ սկսած էին խումբ խումբ քաղաք ժամանել , երգելով , պարելով ճամբուն երկայնքը : Յաջորդ օրը՝ քաղքին բոլոր Թուրքերը ձերբակալուելով առաջնորդուած էին Յրդ վաշտին զօրանոցը , և թրքական տունները խուզարկութեան ենթարկուած էին . իրիկունն դէմ՝ պատերազմական ատեանին կողմէ կարգուած յանձնաժողով մը իր առջև բերել տուած էր ձերբակալուող Թուրքերը և մեծ քաղաքավարութեամբ անոնցմէ ներողութիւն խնդրած էր ձեռք առնուած այդ միջոցին համար . «կը ցաւ էինք որ , ըսած էր յանձնաժողովին նախագահը , հակառակ մեր հայրենապէսնք որ , ըսած էր յանձնաժողովին նախագահը , հակառակ մեր հայրենապէսնք

կիցները ըլլայնուդ , ստիպուեցանք ձեզ ձերբակալել . բայց այսպէս կը պահանջէր հայրենիքին շահը . կը խնդրենք որ ամէնքդ ալ ձեր տեղերը վերադառնաք և իբր Պուլկար քաղաքացիներ չչեղիք ձեր պարտականութիւններէն . անոնք որ պիտի անասան այս պատուէրին , անողորմ կերպով պիտի պատժուին» : Ինչ կտքը՝ բոլոր Թուրքերն ալ սկսած էին պարտիլ ազատ համարձակ : Ուրիշ ո՛րէ միջոց չէր առնուած անոնց դէմ , և զինուորական ու քաղաքային իշխանութիւնները ամէն հոգ տարած էին որ անոնք բռնութեան կամ տգեղ ցոյցերու առարկայ չդառնան : Զօրահանութեան օր մը առաջ՝ գիւղացի Պուլկար մը եօթասասուն տարեկան Թուրքի մը կռնակին տաքի հարուած մը տուած էր՝ «Փիս Թիւրք» բսելով , սակայն անմիջապէս ձերբակալուելով բանտարկուած էր : Նոյն օրը , իրիկունն դէմ , գնչու մը գանակոծութեամբ պատժուած էր՝ թրքուէի մը տգեղ բառ մը ուղղած ըլլալուն համար^(*) : Կառավարական պաշտօնեաները կը յայտարարէին զինուորներուն թէ պատերազմը կը մղուէր Թուրք կառավարութեան և ոչ թէ Թուրք ժողովուրդին դէմ : Ահագին բազմութիւն կուտակուած էր նաև Ֆիլիպէի փողոցներուն մէջ . ամէն վայրկեան՝ 20-30 վակօններ , բաղկացած կառախումբեր անվերջ զինուոր կը հասցընէին , և ասոնք իսկոյն կը փոխադրուէին սահմանադրութիւն զանազան կողմերը : Ամենախիստ հակողութիւն կը կատարուէր : Գիւղերէն հասնողները միշտ աւելի կը շատնային . կառքեր , ձիեր , մարդիկ , կիներ որ իրենց ամուսիններուն կամ զաւակներուն կ'ընկերանային՝ առաջ բերելով զարհուրելի իրարանցում մը զոր սակայն ոչ մէկ անհաճոյ դէպք կը խանգարէր : Ամէնուն դէմքը ուրախ էր , ոչ ոք կու լար . բաժանման , մահուան հեռանկարին առջև նոյն իսկ կիները կը մնային արի ու անայայլ . բոլորն ալ հարսնիքի հրաւիրեալներու երեւոյթը ունէին : Շատ կիներ կամաւոր կ'արձանագրուէին՝ Կարմիր Խաչի մէջ ծառայելու համար : Տեղական իշխանութիւնները , անհաճոյ դէպքերու տեղի չտալու մտքով , գրաւած էին բոլոր զինավաճառներու գէնքերը . զինուորներ կը պաշտպանէին թրքական հիւպատոսարանը . ամէն ճիգ կ'ըլլար որպէս զի յարձակման չենթարկուին Ֆիլիպէ գտնուող բազմաթիւ օսմ . հպատակները : Մամուլ խիստ օրէնք մը կ'արգիլէր թերթերուն ժողովուրդը գրգռող յօդուածներ :

(*) Պոլսոյ Թուրք մամուլը՝ զօրահանութեան առաջին օրերուն մէկը միւսէն ահաւոր նամակներ և յօդուածներ հրատարակեց , Պուլկարներու կողմէ բնիկ և եկեղեցի Թուրքերու դէմ գործուած կարծեցեալ բռնութեանց մասին : Իբր թէ մզկիթներ եւ կեղեցիի փոխած էին , կիներ ու աղջիկներ բռնաբարած , իսլամ կրօնքը անարգած և կրօնաւորները գանակոծութեան ենթարկած , կարգ մը թերթեր կը գրէին թէ իսլամուէիներ՝ հալածանքէ գերծ մնալու համար՝ ստիպուած էին գլխարկ դնել և դէմքերին բաց պտտել : Գրուեցաւ նոյնիսկ թէ Թրքուէի մը Հայ ձեռացած էր ազատելու համար : Այս տեսակ տեղեկութիւններ առատ էին մասնաւորաբար իթիհատական թերթերուն մէջ , և կը հրատարակուէին՝ պարզապէս հանրային կարծիքը գրգռելու և երկրորդ պատերազմի մղելու համար : Բոլոր այդ հրատարակութիւնները հերքուեցան ճշմարտապէս արժանահաւատ մարդոց ու եւրոպացի թղթակիցներու կողմէ : Պատերազմի ընթացքին սակայն , պուլկար չէթէներ իրօք գործեցին ծայրայեղութիւններ , անցեալին վրէժը լուծելու պատրուակով :

րու և զինուորական շարժմանց վերաբերող տեղեկութեանց հրատարակումը: Ուրիշ օրէնք մը պատիժներ կը սահմանէր այն խանութպաններուն համար որոնք պատերազմը առիթ բռնելով իրենց ծախած ապրանքներուն գիները պիտի բարդէին: Կառք չկար անագին քաղաքին մէջ, որ ամբողջովին զօրանոցի վերածուած էր: գրեթէ ամէն փողոցի մէջ կը կատարուէին զինավարժութեան փորձեր: Կործի վրայ էին մանաւանդ դերձակները: հակառակ անոր որ 150,000 ձեռք պատրաստ զինուորական հագուստ հասած էր Ռուսիայէն, կառավարութիւնը գնած էր շայտի և ապայի բովանդակ միներքոր, ու դերձակներ գիշեր ցերեկ հագուստ կը կարէին՝ հետզհետէ մըջլիններու պէս հասնող զինուորներուն համար: Համանման տեսարան մը պարզուած էր նաև Պուլկարիոյ բոլոր գլխաւոր քաղաքներուն, մասնաւորաբար սահմանագլուխին երկայնքը գտնուողներուն մէջ:

Նոյն պատրուակով զօրահանութեան հրաման տուած էր նաև յոյն կառավարութիւնը: Եկորիոս թագաւոր որ Քորէնակ կը գտնուէր, փութով ճամբայ ելած էր դէպի Աթէնք. ուր մեծ խանդավառութեամբ տեղի կ'ունենային զինուորական պատրաստութիւնները: Հեռագիր մը կը ծանուցանէր թէ մէկ քանի օրէն Յունական Խորհրդարանը արտակարգ նիստի պիտի հրաւիրուի, և թէ կրէտացի երեսփոխանները պիտի կրնան այլևս Խորհրդարան մտնել: Յուզումը մեծ էր նաև Կրետէի մէջ, որ մէկ քանի օրուան խնդիր մը կը նկատէր մայր հայրենիքին կցումը:

Սերպիա՝ ընդհանուր զօրահանութեան հրամանը արդարացնելու համար, իրեն յատկացուած ռազմանիւթերու թուրք կառավարութեան կողմէ վար դրուելը պատրուակ կրնար նկատել, մանաւանդ որ Բ. Գուռը կը մերժէր իր վար գրած թնդանօթներն ու ռազմանիւթերը Մարսիիա վերադարձնել: Պ. Նէնատովիչ, Պոլսոյ սերպ դեսպոսնը, այդ մասին նոր տեսակցութիւն մը ունեցած էր՝ Նորատունկեան էֆէնտիի հետ, և պահանջած էր 48 ժամուան ընթացքին գոհացում առ, խնդիրը կարգադրելով: Սպասելով ատոր, Սերպ կառավարութիւնը զբաղած էր զօրահանութեամբ, որ նոյնքան ոգեւորութեամբ, խանդով ու մասնաւանդ արագութեամբ տեղի կ'ունենար որքան պուլկարականն ու յունականը: Պէլկրատ ալ, ինչպէս նաև սերպիական ուրիշ քաղաքներ, բազմաթիւր ցոյցերու թատերավայր դարձած էին. երկիրը նոյնպէս ռաքի վրայ էր, և ամէն մարդ ինքնաբերաբար կը փութար կանխել զօրակոչի հրաւերը, մեծապէս դիւրացնելով զինուորական իշխանութեանց աշխատութիւնը և բանակներու կեդրոնացումը:

Իսկ Գարատաղ թէեւ իր Գաշնակիցներուն պէս ընդհանուր զօրահանութեան հրաման տուած էր, բայց ատիկա իրեն համար զուտ ձեւակերպութիւն մըն էր միայն, որովհետեւ քանի ատենէ ի վեր իր զօրահանութիւնը լրացուցած էր, ու կը պատերազմէր՝ առանց պատերազմի պաշտօնական յայտարարութեան: Նոյն օրն իսկ իր զինուորները՝ Կրաիօվինչայի մէջ յարձակած էին օսմ. պահակ խումբի մը վրայ և տասը թուրք զինուորներ սպաննած: Գարձեպը, Մալխօրներուն հետ ձեռք ձեռքի, մեծ

թուով կը համախմբուէին թուրքի շուրջը, զոր պաշարած էին բալուրովին:

Ահա այս վրդովիչ լուրերը կը բերէին Սեպտեմբեր 18ի ցերեկուան հեռագիրները: Լուր կար նաև թէ Ռուսիա ալ կովկասի կողմը զօրահա-



Կառապաններու հայրենասիրական ցոյցը

նութեան ձեռնարկած է, թուրք կառավարութեան վրայ զիջողութիւն պարտադրող ճնշում մը ի գործ դնելու համար: Այս բոլոր լուրերուն վրայ ծանր անկում կրեցին օսմանեան արժեթուղիները: Նոյն օրը, առտուան ժամը 10ին գուժարուած Նախարարաց Խորհուրդը արտաքոյ

կարգի նշանակութիւն ստացաւ, որովհետեւ նիստին մասնակցեցան նաև Ընդհանուր Սպայակոյտի նախագահ Հատի և Ա. Զորաբանակի հրամանատար Ապտուլլահ փաշաները: Խորհուրդը, տէրութեանց մօտ գտնուող օսմ. դեսպաններէ հասած տեղեկագիրները կարդալով, որոշեց բողոքել Պալքանեան Պետութեանց, մասնաւորաբար Պուլկարիոյ գրգռիչ ընթացքին դէմ. նոյն ատեն Բումէլլիի զինուորական հրամանատարներուն հրահանգ զրկեց որ ամէն պատահականութեան պատրաստ գտնուին, զգուշանալով սակայն նախարարական ըլլալէ: Նախարարաց Խորհուրդին ցրուելէն անմիջապէս վերջ ելաւ կայսերական Իրատէ մը որ կը հրամայէր ընդհանուր զօրահանութիւն: Նախազգուշական միջոցներ ձեռք առնելով հանդերձ, Գահիճը իր խաղաղասիրական ապացոյցը տուած ըլլալու համար, տէրութեանց պաշտօնապէս ծանոյց թէ ծրագրուած մեծ ռազմափորձերը յետաձգուած են (*): Արդէն խակ զիջում մըն էր ասիկա, բայց դժուար թէ կարենար առաջքը առնել պատերազմին, զոր ամէն մարդ այլևս անխուսափելի կը նկատէր: Թուրքիոյ ամէն կողմերէն հասած հեռագիրներ կը ծանուցանէին թէ թուրք ժողովուրդը խանդավառութեամբ կ'ընդունէր պատերազմը: Սելանիկ ու Քրքք Քիլիսէ, երկու զինուորական կեդրոններ որոնք մէկ քանի շաբաթ վերջ թշնամիներէն պիտի գրաւուէին, անդրանիկ հեռագիրները հասցուցին Պոլիս. բոլոր սպաները կը յայտնէին իրենց անհամբերութիւնը՝ դաշնակիցներուն դէմ գրոհ տալու: Տրապիզոնէն, Սամսոնէն, Գոնիայէն, Գարահիսարէն, Էնկիլիճիէն, Սինօպէն, Գասթէմունիէն և Պրուսայէն կը ծանուցանէին թէ մեծ շրջով մարդիկ կամաւոր արձանագրուելով ճամբայ կ'ելլեն դէպի Պոլիս: 40,000 հողինոց միթինկ մը գումարուեցաւ Գոսովայի մէջ, Խիւտավէնտիկեարի դամբարանին մօտ. միթինկին մասնակցողները տողանցք մը կատարեցին կառավարական պաշտօնատանց առջև, «Կեցցէ՛ պատերազմը» գոռալով: Պալքանեան Պետութեանց Սկիւպի հիւպատոսարաններուն առջև անարգաւից ցոյցեր տեղի ունեցան: 20,000 Իսլամներ ու Քրիստոնեաներ նոյնպէս միթինկ մը գումարեցին Կեսարիոյ մէջ, նախագահութեամբ վերջին Խորհրդարանին մէջ Կեսարիոյ երեսփոխանը եղող գնդապետ Ալի Կալիպ պէյի (Իթիլաֆական). Թրքութեան այդ միջնաբերդին մէջ հայրենասիրական խանդը այնքան մեծ էր որ միթինկէն վերջ կատարուած հանգանակութիւն մը մօտաւորապէս 5000 ոսկի արդիւնք տուաւ. բնակիչները հարկահաւաքներ կը փնտռէին իրենց տուրքերը յանձնելու համար. իւրաքանչիւր գիւղ որոշեց 200սական ձի ընծայել բանակին. միակ աղաղակ մը կ'ելլէր Կեսարիոյ բովանդակ բնակչութեան բերնէն. «Կեցցէ՛ պատերազմը, դէպի Սօֆիա, դէպի Սօֆիա»: Այդպէս կը պոռային նաև Պոլսոյ մէջ. որ տակաւ պատերազմական քաղքի մը երևոյթը կը ստանար: Երկաթուղի-

(*) Բ. Գուռը, Պալքանեան Պետութեանց բողոքներուն, մասնաւորաբար Անգլիոյ, Ռուսիոյ և Ֆրանսայի դեսպաններուն միջնորդութեան վրայ, արդէն անգամ մը յայտարարած էր թէ կը հրաժարի ընդհանուր եւրոպական Թուրքիոյ մէջ ըստիւրբ ռազմափորձերէն, և թէ իր կատարելիք ռազմափորձերը պիտի կեդրոնանան լոկ Թրակիոյ Նահանգին մէջ, Էտերնէի շուրջը: Հիմայ ալ ատկէ էր որ կը հրաժարէր:


ներու երթևեկը սահմանափակուած էր ճամբորդներու համար(*). Թէև արտակարգ զօրահանութիւն չկար տակաւին, բայց զինուորական առաքումներ կ'ըլլային օրն ի թուն. մամուլը պատուէր ստացած էր բանակին շարժումներուն նկատմամբ բացարձակապէս զաղտնապահ մնալու: Քաղաքական կուսակցութիւնները կ'աշխատէին մոռնալ իրենց հերուան ատելու թիւնները. «Հայրենիքը վտանգի մէջ է» աղաղակը Պոլսոյ մամուլին շրջանը կ'ընէր, ընդհանուր ձեռնտուութեան անհրաժեշտութիւնը զգացնելով: Իթիհատականները, որոնք դեռ մէկ քանի օր առաջ կը պայքարէին Կառավարութեան դէմ, կը յայտարարէին թէ դահլիճին հակառակ ըլլալով հանդերձ ոյժ պիտի տան անոր, ներկայ պատերազմին ընթացքին: Պոլսոյ կառապանները, որոնք նոյն ատենները գործադուլ հռչակած էին, յանուն հայրենասիրութեան դադրեցուցին գործադուլը: Մէկ երկու օր վերջ՝ պիտի բռնադատուէին ակամայ գործադուլի մը, որովհետև զինուորական իշխանութիւնները պիտի գրաւէին Պոլսոյ ձիերը: Սկսած էին նաև ցոյցեր մայրաքաղաքին գլխաւոր պողոտաներուն վրայ: Իրարանցումը, կարելի է նոյն խակ ըսել՝ չփոթութիւնը այնքան մեծ էր որ Կառավարութիւնը մոռցաւ նոյն խակ Սուլթանին ծննդեան տարեդարձին բուն օրը որ սեպտեմբեր 20ին կը զուգադիպէր և որ օր մը առաջ տօնուեցաւ. մինչև անգամ Կառավարութիւնը դիտողութիւն ըրաւ Պոլսոյ սերպիական, պուլկարական, յուսական և Սև Լերան դեսպանատուններուն թէ դրօշ չեն պարզած այդ առթիւ, և անոնցմէ իմացաւ թէ բուն տարեդարձը յաջորդ օրն է: Կառավարութեան հրաւերին վրայ, Սև ծով գտնուող բոլոր Օսմ. չոգենաւերը Պոլիս դարձան: Բ. Գուռը հրամայեց նաև արգիլել պուլկարական և յունական նաւերու մեկնումը. առաջինները, միշտ ճարպիկ և արթուն, այդ հրամանէն առաջ պուլկարական ջուրերը հասած էին արդէն. բայց յունական բազմաթիւ նաւեր որոնք չէին կրցած հեռանալ, արգելքի տակ առնուեցան(**): Նախարարաց խորհուրդը Կայս. Իրատէով մը արտօնուեցաւ 399,935,100 դրուչի բացառիկ վարկ մը (պատերազմական պահեստը) բարդելու պատերազմական նախարարութեան պիւտճէին: Ուրիշ Իրատէ մը Օսմ. բանակներու սպարապետ անուանեց Պատերազմական նախարար Նազըմ փաշան:

Սեպտեմբեր 19ին, Օսմ. Համալսարանի ուսանողները մեծ ցոյց մը կազմակերպեցին պատերազմին ի նպաստ: Ուսանողները նախ քացին պատերազմական պաշտօնատան առջև ուր խանդավառ ճառեր արտասանուեցան: Պատերազմական նախարարութեան խորհրդական Ֆուատ պէյ գոհունակութիւն յայտնելով ապահովուցուց ուսանողները թէ կառավարութիւնը իր պարտականութիւնը պիտի կատարէ: Համալսարանականները և անոնց միացած խուռնամբոխ ժողովուրդ մը որ հետզհետէ կը ստուարանար, դրօշներ բարձրացուցած անցան Պոլսոյ փողոցներէն և ուղղուեցան

(*) Պուլկարիա ծանուցած էր Արեւելեան երկաթուղիներու Ընկերութեան թէ ճամբորդներու երթևեկը դադրեցուցած է նոյն գիծին վրայ:

(**) Յունական Կիլիկիա շոգենաւր թէև փորձեց Գավաքէն նեղուցը անցնելով Սև ծով մտնել, բայց ամրոցներէն արձակուած Թիւրանօթներ զինքը բռնադատեցին կենալ:

Կայս. Պալատ, ուր Սուլթանը պատուհանէն երեւոյով իր գոհունակութիւնը յայտնեց: Ճամբուն վրայ՝ ցուցարարները կը պոռային անընդհատ:



Սուլթան Ահմէտի Իթիլաֆական իթիֆինը

«Անկցի Պուլկարիա, անկցի Պալքանեան Պետութիւնները, անկցի չափ նախաշարժը (պնակալէզ !!) Պուլկարները, կեցցէ՛ պատերազմը»: Ուսանողները Պէշիքթաշի մէջ հանդիպեցան Քեամիլ փաշայի և Նորատունկեան

էֆէնտիի, որոնք Պալատ կ'երթային Սուլթանին ծննդեան տարեդարձը շնորհաւորելու: Իսկոյն շրջապատեցին անոնց կառքը և սկսան գոռալ թէ պատերազմ կ'ուզեն: Ծերունի Քեամիլ փաշան մէկ քանի բառով գրաւեց անոնց սիրտը. իր խօսքերը այնքան յուսադրիչ եղան որ ուսանողները կառքն ի վեր շուլուելով ձեռքերը համբուրեցին: Այնտեղ հանդիպեցան նաև ներքին գործոց նախկին նախարար և յայտնի իթիհատական թալէադ պէյի, որ նոյնպէս խանդավառ ցոյցերու առարկայ դարձաւ. «Կեցցէ՛ Իթիհատը», կը պոռային ուսանողները. Սաիտ փաշայի անկումէն ի վեր առաջին անգամն էր որ Իթիհատի անունը համակրական ցոյցի մը առարկայ կը դառնար: Վերադարձին՝ համալսարանականները անցան Բերայէն և բուռն ու աղմկալից ցոյցեր ըրին Պալքանեան Պետութեանց դեսպանատանց առջև: Յունական և պուլկարական դեսպանատուններուն ապակիները քարկոծուեցան: Ոստիկանութիւնը ստիպուեցաւ միջամտել և հեռացուց ցուցարարները որոնք միեւնոյն աղաղակներով անցան Պոլիս և կանգ առին Իզսալի խմբագրատան առջև: Կառավարական թերթին խմբագրապետը՝ Ալի Քէմալ պէյ՝ պատշգամէն խանդավառ ճառ մը արտասանելով ըսաւ նաև հետեւեալը. «Մենք այսօր պէտք է ուրախանանք որ մեր դէմը ելլողը մէկ թշնամի չէ, երկուք չէ, այլ չորս թշնամի. 80 հոգի էինք երբոր Բումէլի մտանք, այսօր 80 միլիոն ենք և աւելի փառաւոր յաղթութիւններ կրնանք չահիլ»: Անվերջ ծափահարութիւններ ողջունեցին այս խօսքերը: Ոմանք կը պոռային. «Եթէ մեր դէմը տասը թշնամի, քսան թշնամի ունենայինք, աւելի գո՞ պիտի ըլլայինք»: — «Հայիւն» . . .», կը պատասխանէր ժողովուրդը: Համալսարանականները յետոյ պատերազմաշունչ ցոյց մը ըրին նաև Պապը Ալիի առջև ու ցրուեցան, Պուլկարիոյ մայրաքաղաքին՝ Սօֆիայի մէջ իրարու ժամադիր ըլլալով:

Մամուլին մէջ ալ նոյն իմաստով հրատարակութիւններ կ'ըլլային ամէն օր. մասնաւորաբար աչքի կը զարնէին Իթիհատական թերթերը, որոնք անպայման պատերազմի կողմն էին, թուրքիոյ դէմ անարգանք մը նկատելով Պալքանեան Պետութեանց ընդհանուր զօրահանութեան հրամանը: Իրենց ոճը աւելի գրգռիչ կը դառնար անոր համար մանաւանդ որ լուր կար թէ Դահլիճը տարակարծիք է պատերազմի հրատարակութեան նկատմամբ, և թէ նախարարներու մեծամասնութիւնը, իրեն հետ նաև Քեամիլ փաշան, հակառակ է պատերազմին: Գաղափար մը տալու համար Իթիհատականները տողորդ մտայնութեան վրայ, այստեղ կ'արտագրենք Թաւիլի սեպտեմբեր 21ի թիւին մէջ հրատարակուած նշանաւոր յօդուածի մը մէկ քանի մասերը զորս ստորագրած էր համալսարանական էնիս Ալիի պէյ՝ «Ազա կիլնիսիզ» կեղծանունով: Յօդուածը հայցում մըն էր Ճաթիհ Սուլթան Մէհմէտի, և էնիս Ալիի պէյ, ծնրադիր անոր դամբարանին առջև, կ'ըսէր. —

Պատերազմ թօքթալարն հէր թուլթամընտան դան ֆըզլըրաճազ . . .
Ուզաթտըլըմ բէնչէմին ալթընտա պահարար խիզան, խիզանլար զընտան օլաճազ . . .
Թաշ իւսթիւնտե Թաշ պըրազըրսամ, արգատա գալան օճաղըմ սէօնսիւն . . .

կիւլիսթանլարը սիւնկիւմէ գապրիսթան իտէճէյիմ . . . Թարիհէ՛ տիւմ տիւզ պեր խարապա պըրազաճաղըմ քի, իւսթիւնէ, օն ասր, պիր մէտէնիյէթ գուրամասըն . . .

Տալ իւսթիւնտէ եաբըսու, պուրճ իւսթիւնտէ պայրազ պրազըրսամ, իման Թահ- Թամըն օրթասընա գարա տամկա վուրուլսըն . . .

Նէֆէսիմտէն եանկըն, սիլահըմտան էօլիւմ, ատըմըմտան ուշուրում սաղաճաղըմ . . .

Նէր պէյազ րէնկէ պիր բէնչէ պարութ լէքէսի, հէր պարութ լէքէսիէն պիր ա- վուճ գան պուլայաճաղըմ . . .

Մէրհամէթի եաթաղանըմըն աղզընա . . . միւֆքէրէյի թիւֆէնկիմին գաբսուը- նա . . . մէտէնիյէթի աթըմըն արգա նալընա սասճաղըմ . . .

Տաղլարըն գօվուքարը, օրմանլարըն կէօլկէլէրի, խարապալարըն պուրուշուք չէհրէլէրի էպէտիյէթէ պուրալարտան կէչէն թիւրք հիքեայէսիին սէօյլէյէճէք . . .

Ահաւասիկ Թարգմանութիւնը . —

Կոխտած տեղերուս ամէն մէկ մասէն արիւն պիտի ժայթքի . . . Երկարած Թաթիս տակ գարուններ աշնան և աշունները դնտանի՛ պիտի վերած- ուին . . .

Եթէ քար քարի վրայ ձգեմ, ետիս թողած օջախս թող քանդուի . . .

Վարդաստաններ մեռելատան պիտի ընեմ սուրնովս . . . պատմութեան պիտի թողում անանկ կործանուած ու գետնի հաւասար աւերակ մը որ տասը դար չկարե- նան քաղաքակրթութիւն կանգնեցնել անոր վրայ . . .

Եթէ ճիւղերու վրայ տերեւ, ու պատնէշի վրայ դրօշ թողում, թող սև կնի՛ք գարնուի հաւատքիս տախտակին վրայ . . .

Շունչէս հուր պիտի սիւռեմ, զէնքէս՝ մահ, իսկ քայլափոխէս՝ անդունդ . . .

Ամէն ճերմակ գոյն բուռ մը վառօղի արատով պիտի խարանեմ, և ամէն վառօ- դի արատ՝ ափ մը արիւնով պիտի թաթաւեմ . . .

Գթութիւնը պիտի կախեմ եաթաղանիս սայրին, իմաստութիւնը հրազենիս փամ- փուշտին, քաղաքակրթութիւնն ալ նժոյգիս ետեւի պայտին . . .

Լեռներու փապարները, անտառներու հովանին և աւերակներու կոշկոճ գուղ- ձերը պիտի խօսին յաւիտեանութեան՝ «այդ տեղերէն անցնող թուրքին պատմութիւնը» . . .

Երբ համալսարանականները այս մտայնութիւնը ունէին, ի՛նչ կրը- նային ըլլալ հասարակ, ռամիկ ու մոլեռանդ ժողովուրդին անու- ցած զգացումները: Թերեւս այդ կարգի հանրային արտայայտութեանց թողած յոռի տպաւորութիւնը մեղմելու համար էր որ Նորատուն- կեան էֆէնտի պատերազմին սկզբնաւորութեան օրերուն փութաց յայ- տարարել օտար թղթակցի մը. «Այս պատերազմը շատ կատաղի պիտի ըլլայ, բայց մեր կողմէ ամէն բան պիտի ընենք որպէս զի վայրագ չդառ- նայ. պիտի կռուինք քաղաքակրթ ժողովուրդներու պէս, և եթէ թշնամի երկիր մտնենք, օտար տուն մը գտնուող հիւրերու վարմուն- քը պիտի ունենանք. Եւրոպա կրնայ ապահով ըլլալ որ ջարդ տեղի չպի- տի ունենայ թշնամի երկրի մէջ (*)»:

Սեպտեմբեր 21ը ճշմարտապէս պատմական օր մը եղաւ Պոլսոյ հա- մար: Մէկ երկու օր առաջ ծանուցուած էին հսկայ միթիւնկներ զոր Իթի-

(*) Պատերազմական նախարարը նազըմ փաշա, թշնամութիւնները սկսած միջոցին բանակին օրակարգ մը ուղղելով ծանոյց թէ թշնամի երկրին մէջ մտնելէ վերջ զին- ուորական օրէնքներուն հակառակ գտնուողները հրացանի պիտի բռնուին: Սուլթանն ալ, էբր վերին հրամանատար բանակին, նոյն յանձնարարութիւնը ըրաւ օրակար- գով մը:

լաֆի և Իթիհատի կուսակցութիւնները պիտի զուժարէին Սուլթան Ահ- մէտի մզկիթին ընդարձակ հրապարակին մէջ: Մօտաւորապէս 30,000 ժո- ղովուրդ առտուն կանուխ լեցուած էր մզկիթին շուրջը. մէկ քանի ժամ վերջ անոնց թիւը կրկնապատկուած էր. ցերեկին՝ աւելի քան 100,000 հոգի էին որոնք իրենց թոքերուն բովանդակ զօրութեամբ «Օսմ. Հայրենիքը անարգուած» կը հռչակէին ու պատերազմ կը պահան- ջէին: Լեցուած էր մանաւանդ Սուլթան Ահմէտի հրապարակը, մզկիթին առջևէն մինչև կեդրոնական բանտին դուռը. բազմաթիւ էին նաև կիները: Ամէն կողմ կը ծածանէին զանազան հաստատութեանց կողմէ ղրկուած դրօշներ, պատերազմաչունչ վերտառութիւններով: Ժողո- վուրդ ելած էր նաև մզկիթին տանիքներուն վրայ: Ֆուստ փաշայի



Սուլթան Ահմէտի Իթիհատական միթիւնկը

հակիրճ բացման ճառէն վերջ որով կը յայտարարէր թէ «Պատերազմ կը պահանջեն Եւրոպայի ցոյց տալու համար որ Օսմանցիները գիտեն պաշտ- պանել իրենց պատիւը», խօսք առաւ Սապանի խմբագրապետ Տիրան էֆ. Քէլէկեան, և պատերազմին փառարանութիւնը ըրաւ, յայտնելով որ անով միայն կարելի պիտի ըլլայ Պալքաններու մէջ հանդարտութիւն ստեղծել. յիշեց Նամըզ Քէմալ պէյի խօսքը թէ «Դանուրը ձեռքէ ելե- լուն պէս Հայրենիքը ձեռքէ կ'ելլէ», և յայտարարեց որ «Օսմ. սահմա- նազուլիսը պէտք է Դանուրը ըլլայ»: Այդ միջոցին իր քով բերին ութ տարեկան թուրք տղայ մը, զինուորական համազգեստով և պզտիկ հրա- ցանով մը: «Հայրենակիցներ, ըսաւ Քէլէկեան էֆէնտի, ահաւասիկ օսմանցի զինուորին մարմնացումը. ես անոր մէջ կը տեսնեմ ամբողջ բա- նակին հոգին, և ինչնայն այն խոր յարգանքին զոր կը տածեմ բանակին նկատմամբ, կը համբուրեմ զայն»: Յետոյ անգամ մըն ալ պատերազմի կոչ ուղղեց, յարելով. «Բումէլիի մէջ նահատակուող մեր նախահայրերուն հոգիները վրէժի կը կանչեն մեզ»: Իրմէ վերջ՝ յաջորդաբար խօսեցան Կիւմիւլճիկէյի Իսմայիլ Հազգը պէյ որ յայտնեց թէ «Օսմանցիները կամ 30 միլիոն գերեզմաններ պիտի ձգեն և կամ Պալքանեան Պետութեանց զուլիւր ճգմելով ինքզինքնին ցոյց պիտի տան Եւրոպայի»: Յետոյ Տէր-

վիշ Հիմա պէյ , տակաւին երէկ վարիչներէն մէկը ալպանական ապստամբութեան , Ալպանացւոց օժանդակութիւնը խոստացաւ տէրութեան , ըսելով . «Կրօնքը եկեղեցիին թողով , իսլամ ու քրիստոնեայ բոլորս ալ պէտք է միանանք» : Ալի Քէմալ պէյ որ իրեն յաջորդեց , կրկնեց նախորդ օրուան իր խօսքը . «Թշնամին մէկ չէ , այլ չորս . մենք կը պարձենանք ասոր համար , որովհետեւ հազարներու դէմ չէ , միլիոններու դէմ պատերազմ մղելու վարժուած ենք : Տասնչորս տարի առաջ հէլլէնական պատերազմին մէջ ինչպէս որ թշնամիին գլուխը ջախջախեցինք , հիմակ ալ այնպէս պիտի ընենք» : Տոքթ . Րիզա Նուր պէյ , անկէ ետքը խօսք առնելով , հրաւիրեց 75ն մինչեւ 70 տարեկան պատրաստ ըլլալ պատերազմի և քալել մինչեւ Սօֆիա , Պէլլրատ , Աթէնք ու Չէթինեէ . «Եթէ հարկ ըլլայ , յարեց , սակնագը շերիփը հանելով բոլոր Իսլամները կրօնական պատերազմի պիտի կանչենք» : Խօսեցան նախ ուրիշ մէկ քանի հոգիներ որոնցմէ Իզսամի երիտասարդ լամբագիրներէն մէկը՝ Շէֆիգ էսատ պէյ՝ քի՛ն անուանեց պալքանեան ժողովուրդները , ու նաև Ֆէրիթնանտ Չարը , աւելցնելով որ «Օսմ . չորս զօրաբանակներէն իւրաքանչիւրը Սօֆիա , Պէլլրատ , Աթէնք և Չէթինեէ երթալով այդ ֆեօլիեֆ սոյուները Տեֆ պիտի ընէ» : Հիւսէին Քեամի պէյ ալ կարգաց Պուլկարները անարգող ոտանաւոր մը , որուն մէկ տողը՝

Տեսայ պռչկարակակ գինուռններ
 ձակասնուն վրայ «վախկոս» գրուած եր . . .

Ժողովուրդը յաջորդաբար երեք անգամ արտասանել տուաւ : Բոլոր այս ճառերը կ'ընդմիջուէին պատերազմաշունչ կանչելով , յաճախ նաև Դաշնակիցներուն հասցէին ուղղուած անարգալից կամ արհամարհական բառերով ու հայհոյութիւններով : Ճառերէն վերջ ծափահարութիւններով ընդունուեցաւ հետեւեալ բանաձևը .—

Սուլթան Ահմէտի հրապարակին մէջ միթիակ գումարող հազարաւոր Օսմանցիները Պալքանեան փոքրիկ պետութեանց դէմ միաբերան պատերազմ կը պահանջեն և կորոշեն իրենց այս պահանջումը հեռագրով հաղորդել բոլոր նահանգներուն . նաև՝ Միւշէր Ֆուատ փաշայի նախագահութեամբ պատուիրակութիւն մը ղրկել Վեհ . Սուլթանին :

Այս բանաձևին համաձայն թափօր կազմեցին աւելի քան 30,000 հոգի , որուն առջեւէն կ'երթալին սուսերամերկ Արաբներ , իրենց բնիկ լեզուով հայցումներ և ազօթքներ արտասանելով : Չանազան կողմերէ ճամբայ ելած ցուցարարներու զրօշակիր խումբեր անոնց միացան , անանկ որ երբ թափօրը հասաւ կամուրջ , բազմութիւնը դարձած էր այնքան խիտ որ երթեկեկութիւնը դադրեցաւ : Կամուրջին վրայ , Տէրվիշ Հիմալ պէյ նոր ճառ մը արտասանելով , ըսաւ . «Այս պատերազմը որ կը մղուի Պալքանեան Պետութեանց դէմ , կրօնական պատերազմ չէ , զուտ հայրենիքի և հայրենասիրութեան պատերազմ է . մեր երկրին բնակչութիւնը խառն է . իսլամ , քրիստոնեայ՝ մէկ դրօշի տակ կ'ապրինք , մէկ դրօշով կը պանծանք , և Մահիկը ամէնուս համար հաւասարապէս նուիրական է : Ազօթատեղիները միայն թող մեզ իրարմէ բաժնեն . իսլամը թող իր մզկիթը

երթայ , քրիստոնեան ալ իր եկեղեցին . անկէ դուրս՝ զգացումով , սրտով , անձնուիրութեամբ մէկ ենք և մէկ պիտի մնանք իբր միևնոյն հայրենիքին զաւակը , միևնոյն հողին տէրը և միևնոյն երկրին պաշտպանը(*)» : Ղալաթիոյ մէջ՝ թափօրը համակրական ցոյցի առարկայ դարձուց անգլ . հիւպատոսարանը , անցաւ Բերա , և Թէփէ Պաշրի խալական դեսպանատան առջև կանգ առաւ եռհասներ արձակելով ու ապակիները կտրելով : Ոստիկանութիւնը դժուարաւ յաջողեցաւ հեռացնել այդ անաւօր բազմութիւնը , որ աւելի վերջ՝ համակրական ցոյց մը ըրաւ անգլիական դեսպանատան առջև . քիչ մը աւելի վեր՝ եռհասները վերսկսան հէլլէն դեսպանատան առջև , զոր ոստիկաններ կը պաշտպանէին . «Գահի՛ օշաուս Եռուսեփուսուս . եռուսեփուսա՛ր պաշ աշաղը» , կը պոռային , հայհոյելով , թքնելով , նախատելով : Շատեր՝ քարեր դրած էին իրենց գրպանը , որոնցմով կտրտեցին տպակիները : Աւելի անդին , պուլկարական դեսպանատան առջև , ամբոխին կատաղութիւնը հասաւ իր ծայրագոյն աստիճանին : Ապակիները նոյնպէս քարկոծուեցան , և երբ քարերը հատան , ցուցարարներ մօտակայ պողովածառներէ ընկոյզ գնելով անոնցմով շարունակեցին կտրել ապակիները : Ընդհանուր հայհոյներու մէջ ցուցարար մը գետնի վրայ պարզեց պուլկարական դրօշ մը որ անմիջապէս կոխտուեցաւ ամբոխին կողմէ . վայկեան մը վերջ՝ անգոյն ու անճանաչ քուրջ մը դարձած էր : Թափօրին մէկ ուրիշ մասը , ճիշտ այդ միջոցին , համանման ցոյցեր կը կատարէր Միսք փողօցին մէջ , Սերպիոյ և Գարատաղի դեսպանատանց առջև : Համակրական ցոյցերու առարկայ դարձաւ նաև ուսմանական դեսպանատունը . ցուցարար մը , — որ ապահովաբար մոռցած էր Իլէյնայի պաշատունը , որու միջոցին Ռուսներու օժանդակեցին , — դրուատեց Ռուսանիան , յայտարարելով որ գաղանի դաշնագիր մը ստորագրած է թուրքիոյ հետ : Թափօրը յետոյ խոնուեցաւ Նորատունկեան էֆէնտի բնակարանին առջև , որ պուլկարական դեսպանատան մօտը կը գտնուի . նոյն կարգին վրայ : Նախարարը ստիպուեցաւ պատշգամը ելլել . Տէրվիշ Հիմալ պէյ , ի դիմաց ցուցարարներուն , յայտնեց թէ «Այստեղ իսլամ և Հիմալ պէյ , ի դիմաց ցուցարարներուն , յայտնեց թէ «Ամէն բան օրէնքի Գրիստոնեայ հաւասարապէս պատերազմ կ'ուզեն» : — «Ամէն բան օրէնքի և կանոնի համաձայն պիտի կատարուի և ձեր պահանջները նկատի պիտի առնուին» , պատասխանեց Նորատունկեան էֆէնտի : Այս զիւանագիտական պատասխանը սակայն գոհ չթողւց ցուցարարները : «Պիզ քօնֆէ-

(*) Յաջորդ օրը , քրիստոնեայ , մասնաւորաբար հայ մամուլը երախտագիտութեամբ արձանագրեց այս խօսքերը : Մեզի համար մանաւանդ , վախ կար որ մուկաւանդութեան պոռթկումը մը կրնայ ջարդերու յանգիլ Հայաստանի մէջ , ուր արդէն կայրութիւնը շատ վարդապոյն չէր : Վերջէն՝ Ֆիւթօֆ Տոքթ Րիզա թէվֆիգ պէյ , իսլամներուն մէջ առաջ եկած կրօնամուղ դաւցումներէն վողովուած , իզսամի մէջ հրատարակուած յօդուածով մը կոչումը ըրաւ յարգելու բնիկ քրիստոնեաները , մանաւանդ Օսմ . հպատակ Սերպերը , Պուլկարներն ու Յոյները : «Օսմանցիները , կ'ըսէր , վեհանքն են . պէտք չէ մոռնան թէ Ժամանակաւ իրենց հայրենի օճախէն հեռացողները իրենց տունն ու տեղը Աստուծոյ , բայց տան գործերն ու կառավարութիւնը կը յանձնեն քրիստոնեայ դժբախտներու , ասիկա չմոռնանք . խառնակիչները Աստուած անիծէ» :

րանսարզ հարպ խթերից», կը պոռային^(*): «Չաւակներս, յարեց նախա-
րարը, ապահով եղէք որ Աստուած ձեզի հետ է ու մենք պիտի յաջո-
ղինք մեր բոլոր ձեռնարկներուն մէջ»: Երգերով ու նուագներով թափօրը ուղ-
ղուեցաւ դէպի Երլարզի պալատը ուր կը կարծէին գտնել Սուլթանը Ամէն մարդ
միաբերան ու եղանակաւոր կերպով կը պոռար. «Հա՛րպ... հա՛րպ... հա՛րպ...»:



Ս Ո Ւ Լ Թ Ա Ն Ա Հ Մ Է Տ Ի Մ Է Ձ
Իթիլաֆական բանախօսներու շուրջը

Շատերու ձայնը մարած էր արդէն, և սակայն կը ձգնէին պոռալ. այլևս
չէր հասկցուեր թէ ի՞նչ կ'ըսեն: Օխլամուրի դառիվերին ստորտը, մէկ
քանի հողի առաջարկեցին Պուլկարիոյ մայրաքաղաքին գրաւման նախա-

(*) Լուր կար այդ օրերուն թէ տէրութիւնները դեսպանախորհուրդով մը լուծուած
պիտի տան Մակեդոնիոյ հարցին:

փորձը ընել, և սկսան արշաւել «Սօֆիայա տօրու... Սօֆիայա տօրու...»
(դէպի Սօֆիա...) աղաղակելով. 60,000 ցուցարարներ իրենց հետեւեցան,
և այդ խելացնոր արշաւով հասան Երլարզ: Սուլթանը սակայն հոն չէր:
Ցուցարարները իջան Տօլմապահէ և Կայա. Պալատին առջև խռնուելով
սկսան խանդավառ աղաղակներ արձակել ի պատիւ վեհապետին: Սուլթա-
նը շուտով երևցաւ, և մտիկ ըրաւ ճառեր ու ոտանաւորներ. իր յուզումը
այնքան մեծ էր որ աչուրները լեցուեցան երբ գոհունակութիւնը յայտնե-
լէ վերջ կ'ըսէր. «Ինչպիսի մեր բոլոր գործերուն մէջ պիտի յաջողինք»:
Թափօրը, պալատէն մեկնելէ վերջ բաժնուեցաւ զանազան մասերու. խումբ
մը ցուցարարներ քարափին վրայ ծափահարեցին Ռուսական Տալիա շո-
գենաւը. ուրիշներ անցան Բերա, վերակրկնեցին ցերեկուան ցոյցերը դես-
պանատուններուն առջև, նոր սպակներ կոտրեցին, մութը կոխելուն
մօտ հասան Բ. Դրան առջև, և անկէ ցրուեցան, առանց երբեք «Հա՛րպ...
հա՛րպ...» աղաղակելէ դադրելու:

Նուազ շնորհալից չեղաւ նաև Իթիլաֆի կազմակերպած միթինկը, նոյն
օրը, ցերեկէն ետք, նախագահութեամբ նախկին նախարար Թալէաթ պէյի:
Այս անգամ ցուցարարները խմբուած էին Սուլթան Ահմէտի անսահման
հրապարակին վրայ: 30,000 հողի բաղմութեան մը մէջ տեղ տեղ ցրց-
ուած աւելի քան 1000 դրօշակներ բոլորովին ակնապարար երևոյթ մը
կու տային հաւաքման: Իթիլաֆի կազմակերպած միթինկին մէջ գլխաւո-
րարար աչքի կը դարնէին փաթտոցաւորները. իսկ այստեղ՝ մեծամասնու-
թիւնը կը բաղկանար երիտասարդներէ և ուսանողներէ: Յաջորդաբար
խօսեցան Թալէաթ պէյ, Հասան Ֆէհմի էֆէնտի, Ճէմալէտտին Արիֆ պէյ,
Յակոբ էֆ. Պոյաճեան, Նէսիմ Մազլիա էֆէնտի և ուրիշներ: Միշտ նոյն
ուղեմաշունչ ճառերն էին, և դարձեալ «Սօֆիա քաղերու» նոյն վստահու-
թիւնը կը յայտնուէր: Ծերակուտական Պեսարիա էֆէնտի յայտարարեց.
«Ես իրբև բուժելիցի և իրբև քրիստոնեայ, բացարձակապէս կը մերժեմ
Պալքանեան Պետութեանց Բումէլիի Կրիստոնեաները պաշտպանելու յա-
ւակնութիւնը»: Տօքթ. Փաշայեան էֆ. խօսք առաւ յանուն Դաշնակցու-
թեան, և ըսաւ. «Հ. Յ. Դաշնակցութիւնը առ հասարակ դէմ է պատե-
րազմին որ ժողովուրդը թշուառութեան և կարօտութեան կ'ենթարկէ.
սակայն չի կրնար իր համամտութիւնը չյայտնել պայքարի մը որ նպատակ
ունի պաշտպանել հայրենիքը դուրսէն՝ եկող յարձակումներու դէմ»: Ի
վերջոյ՝ Էօմէր Նաճի պէյ, — պերճախօս ինչպէս միշտ, — արտասանեց հայ-
րենասիրական կարճ ճառ մը, ոգեկոչելով հողին այն ցեղին որ յաղթա-
նակը միայն ճանչցեր է, որ վեհութեան և փառքի մարմնացումը եղեր է
դարերէ ի վեր, և հրաւիրեց ներկայ ժողովուրդը այդ ոգիով թեւաւորուիլ
ու «երթալ թքնել երեսը այն մէկ քանի ճղճիմ աղգերուն որոնք կու գան
անպատուել 700 տարուան զոյութիւնը Թուրք ցեղին»: Յետոյ ցոյց տուաւ
բաղմութեան մէջ ծածանող դրօշները և ցանկութիւն յայտնեց որ անոնք
«նոյնքան փառքով ծածանին նաև Սօֆիայի, Աթէնքի, Պէլկրատի և Չէ-
թինեէի վրայ»: Նաճի պէյ խօսքը աւարտած էր, բայց խանդավառուած
ամբոխը կը պոռար. «Մի՛ իջներ, շարունակէ՛, շարունակէ՛»: Այս ան-

գամ՝ Նաճի պէյ հրաւիրեց ժողովուրդը որ այդպէս բազմութեամբ երթան Փաթիհի դամբարանը և ուխտ ընեն իր վրէժը լուծելու: Ծափերուն վերջը չէր գար: Թալեաթ պէյ դժուարաւ կրցաւ լուծիւն գոյացնել և կարգաց հետեւեալ բանաձևը, զոր ցուցարարները նայնպէս ծափերով ու «Հայնայօօ հայնայօօ» աղաղակելով ընդունեցին. —



«Հա՛րպ . . . հա՛րպ . . . հա՛րպ իսթէրիզ . . .»

Այսօր Սուլթան Ահմէտի հրապարակին վրայ հաւաքուած ամէն ցեղի և կուսակցութեան պատկանող ժողովուրդը, լսելէ ետք զսնազան տոննախօսներ՝ որոնք ցոյց տուին ազգին և կառավարութեան բռնելիք ընթացքը՝ պատերազմի սպառնալիք ընող Պալքանեան Պետութեանց հանդէպ, կուտայ հետեւեալ որոշումները.

1. Արտաքին վտանգին դէմ բոլոր Օսմանցիները միացած են.
 2. Ամէն Օսմանցի՝ ո՛ր կուսակցութեան և ո՛ր ցեղին ալ պատկանի՝ կողմնակից է կառավարութեան սր կը պաշտպանէ հայրենիքին շահերը ընդդէմ պատերազմի վտանգին.
 3. Պարտաւոր է ամէն կերպ զոհողութիւն ընել՝ երկրին ամբողջութիւնը, փառքն ու պատիւը պահպանելու համար:
- Գործադիր մարմինը պաշտօն ունի այս որոշումները հաղորդելու վարչապետութեան և բովանդակ մամուլին:

Թափօրը, որոշուածին համեմատ ուղղուեցաւ դէպի Փաթիհի դամբարանը, հրապարակէն մեկնելէ առաջ խանդավառ ծախահարութեանց առարկայ դարձնելով Հիւսէին Ռահիմ պէյը. որ Կեղրոնախան Բանախին պատուհանէն երեւցած էր, և որ «Կեցցէ՛ Հայրենիքը» կը պոռար, թաշկինակը շարժելով: Էօմէր Նաճի պէյ կը տարուէր ուսամբարձ: Թափօրին առջեւէն և ետեւէն կը քալէին նուագախումբեր, աչքի կը զարնէին նաև ջառուզ զւրնայով պարող քիւրա բեռնակիրներու խումբ մը և զանազան ցեղերէ, Քիւրտերէ, Արաբներէ, Չէրքէզներէ ու Լազերէ բաղկացած զինեալ մարտիկ որոնք թափօրը կ'առաջնորդէին սուրեր, եսթաղաններ, խո-

չոր դաշտայններ ճօճելով և անաղղեցիկ աղաղակներ արձակելով: Փաթիհի Դամբարանին այցելելէ վերջ, թափօրը զոր չորս կողմէն եկած մարտիկ ու հետաքրքիրներ ստուարացուցած էին, ուղղուեցաւ Կայս. Պալատ, անընդհատ «Հարպ իսթէրիզ . . . Հա՛րպ . . . Հա՛րպ . . . Հա՛րպ . . .» աղաղակելով: Սուլթանը դարձեալ սիրայիր կերպով մը և յուսադրիչ խօսքե-



Իթիհատական թափօրը Պոլսոյ փողոցներուն մէջ

րով ընդունեց ցուցարարները, որոնք վերադարձին, Բերայի մէջ, բռունցցոյցերու առարկայ դարձուցին Դաշնակից Պետութեանց դեպպանատունները, կոտրելով ողջ մնացած վերջին ապակիները: Մաս մը ցուցարարներ ուղեցին քարկոծել նաև իտալական դեպպանատունը, բայց զինուորներու խումբ մը հրացանի բռններով ցրուեց զանոնք: Ուրիշ մաս մը փութաց համախռնուելու ուսական դեպպանատան առջեւ, որուն մէջ իբր պահակ կեցող չորս նաւային զինուորներ սուլինը անցուցին իրենց հրացաններուն. ոստիկաններ սակայն չուտով վրայ հասան և ցրուեցին բազմութիւնը, առաջը առնելով ծանր միջադէպի մը:

Անկէ վերջ, ցոյցերը այլևս դարձան քրոնիկ, և Պոլսոյ գրեթէ բոլոր փողոցներուն մէջ կարելի էր տեսնել շատ մը դրօշակիր խումբեր. որոնք

յանկերգի կարգ անցած «Հարսի իսթերիգ... հարս... հարս... հարս...» ք կը կրկնէին և կամ իրենց ամբողջ ոյժով «Սօֆիայա Տօդրու... Սօֆիայա Տօդրու...» կը պոռային: Յոյնին, Սերային կամ Գարատաղցիին արտակարգ կարեւորութիւն տուող չկար. կատաղութիւնը մասնաւորապէս Պուլկարներուն դէմ էր: Յոյցեր կատարեցին նաև Պոլիս գտնուող Ալպանացիներ, թէև իրենց ոյժին գիտակից մարդոց չափաւոր ու պատկառազու լրջութեամբ:

Յոյցերուն հետ կ'աւելնար նաև ժողովրդային խանդավառութիւնը: Կեդրոնի հրամանատարութեան կողմէ կամաւորներու արձանագրութեան համար բացուած տետրակի մը էջերը արագութեամբ կը լեցուէին: Պրուսայի, Սամսոնի, Ատա-Բազարի, Տիւզճէի, Գարասուի, Սրվազի և ուրիշ քաղաքներու Ձէրքէսներ պատրաստակամութիւն յայտնած էին կամաւոր արձանագրուելու, իրենց ձիերն ու կազմածները իրենք հայթայթելու պայմանաւ: Բեռնակիրներու արհեստագետութիւնը կը խոստանար ճրիարար կատարել հրամայուած փոխադրութիւնները, նոյն իսկ զէնք առնել ու կռուիլ: Համանման շարժում մը կը տեսնուէր նաև Պոլսոյ Քիւրտներուն մէջ, որոնք նոյնպէս կը փափաքէին սահմանազուլ մեկնիլ, ինչ որ մեծ հրճուանքով կը դիտուէր Պոլսոյ Քրիստոնեաներուն կողմէ...: Կամաւոր գրուեցան բազմաթիւ Հայեր ալ (*), ինչպէս կը գրրուէին նաև Պուլկարիոյ մէջ: Կայս. իշխաններէն Ձիաէտտին և Ապտիւլ Հալիմ էֆէնտիները նոյնպէս կամաւոր կ'արձանագրուէին՝ օրինակ ընծայելու համար թուրք երիտասարդութեան: Պատերազմ պահանջող հեռագիրներ կը հասնէին Կայսրութեան գրեթէ ամէն կողմերէն, ինչպէս նաև նուէրներ: Հեռագիրներ կը ծանուցանէին թէ Հնդկաստանի Իսլամները հանգանակութեան ձեռնարկած են, պատերազմի ծախքերուն օժանդակելու համար:

Հակառակ այս բոլոր ցոյցերուն, Գահլիճը կը յայտարարէր թէ կարելի պիտի ըլլայ պատերազմին առաջը առնել: Նորատունկեան էֆէնտի ալ շատ լաւատես խօսքեր ըրած էր Թանի Պոլսոյ թղթակցին, աւելցնելով որ ատոնք ո՛չ միայն «նախարարի դիւանագիտական կարծիքն են, այլ և իր անձնական կարծիքը, իր ներքին համոզումը»: Հակառակ անոր որ ընդհանուր զօրահանութեան Իրատէ ելած էր, Սուրիոյ, Միջագետքի և Սրեկեան գաւառներու մէջ զօրակոչ չէր ելած. սահմանափակուած զօրահանութեան մասին ալ տէրութեանց ուղղուած էր շրջաբերական մը, որուն մէջ գրեթէ ցաւ կը յայտնուէր ձեռք առնուած միջոցին համար, յարելով որ Պալքանեան Պետութեանց ընդհանուր զօրահանութիւնը թուրքիան ատոր բռնադատած էր: Բ. Դուռը, իր խաղաղասիրութեան նոր ապացոյցներ ալ տուաւ՝ այդ լաւատեսութիւնը արդարացնելու հա-

(*) Կամաւոր արձանագրուելու համար զինուորական իշխանութեանց դիմեց նաև Հայ-Կաթոլիկ վարդապետ մը, ի յարգանս իր կրօնական հանգամանքին, յանձնարարուեցաւ իրեն մասնակցիլ Կարմիր Մահիկի աշխատութեանց: Վարդապետին անունն էր Լ. Յովսէփ Սիբահեան:

մար: Քօչանայի Չարդին կազմակերպիչներէն մէկը մահուան, ուրիշ մը ցմահ տաժանակիր աշխատութեան դատապարտուեցան. իսկ միւս ձերբակալուողներն ալ զանազան պատիժներու առարկայ դարձան: Միւս կողմէ, Վաթիի առջև Բուլկի շոգենաւին կրած հրացանաձգութեան համար պատժուեցաւ ցաւ յայտնուեցաւ Հէլլէն Կառավարութեան, և աւելի ետքը Սամսը բոլորովին պարպուեցաւ թուրք զինուորներէ: Եթէ չըլլար Գաշնակիցներու զօրահանութիւնը, Դուռը պիտի արձակէր գրաւուած հէլլէն նաւերը և պիտի արտօնէր սերպիական ռազմամթերքներու յանձնումը(*):

Այս մանր մուկը զիջումները սակայն ո՛ր և է հանդարտեցուցիչ ազդեցութիւն չըրին Պալքաններու մէջ. չորս Գաշնակիցները տեղագրին ածապարանքով առաջ կը տանէին իրենց զօրահանութիւնը: Պոլսոյ մէջ տեղի ունեցած ցոյցերուն արձագանքը մեծ զայրոյթ առաջ բերած էր պալքանեան ժողովուրդներուն մէջ. մասնաւորաբար դեսպանատուններուն դէմ եղած յարձակումները շատ խիստ մեկնութեանց առարկայ կը դառնային: Աթէնքի, Պէլկրատի և Սօֆիայի մէջ համալսարանական ուսանողները շրջադաշտի միթիսկներ գումարեցին, բայց տակաւ ցոյցերու շրջանը փակուեցաւ, և ամէն մարդ՝ կառավարութենէն մինչև յետին անհատը՝ լրջօրէն զբաղած էր զօրահանութեամբ:

Շատ սրտագրաւ անցքեր տեղի կ'ունենային: Աթէնքի մէջ՝ գահաժառանգ Կոստանդին Իշխանը սպարապետի երդումը ըրած էր Պ. Վէնլզէլոսի և Սինոզիններկայութեան: Հանգստեան կոչուած զօրավար Քուսուէտուրօ՝ գահաժառանգին դիմելով խնդրած էր կրկին գործօն բանակը մտնել: Կոստանդին Իշխանը սակայն, արքայական հրամանագրի մը հակառակ չվարուելու համար, մերժած էր խնդիրքը. ատոր վրայ՝ զօրավարը սպառնացած էր անձնասպան ըլլալ՝ եթէ արգելք չվերնար. ու գահաժառանգը ստիպուած էր տեղի տալ. շնորհաւորելով զօրավարին հայրենասիրութիւնը: Այս վեհանձնութիւնը բոլորովին աւելցուցած էր Կոստանդին Իշխանին ժողովրդականութիւնը: Աթէնքի իտալական դեսպան Քարլօթի Մարքիզը համբուրած էր մարդ մը որ ընդհանուր զօրահանութեան լուրը տուած էր իրեն: Կրէտէի մէջ՝ օր օրի աւելի կը մեծնար խանդավառութիւնը: Կամաւոր խումբեր կը կազմուէին ամէն օր, կը զինուէին իրենց ծախքով, և հանդիպած առաջին շոգենաւին մէջ նետուելով կ'անցնէին Յունաստան: Կրէտէ գտնուող օտար հիւպատոսները այդ մասին դիտողութիւն ըրած էին կղզիին կառավարութեան, յայտնելով որ Յունաստանի պարտութեան պարագային Կրէտէ ալ կրնայ անոր բախտին ենթարկուիլ. կրէտական կառավարութիւնը պատասխանած էր թէ ինչ որ ալ ըլլայ Յունաստանի բախտը, սիրով պիտի բաժնեն զայն: Կղզիին բոլոր գըլլայ Յունաստանի բախտը, սիրով պիտի բաժնեն զայն: Կղզիին բոլոր գըլլայ Յունաստանի բախտը, սիրով պիտի բաժնեն զայն: Կղզիին բոլոր գըլլայ Յունաստանի բախտը, սիրով պիտի բաժնեն զայն: Կղզիին բոլոր գըլլայ Յունաստանի բախտը, սիրով պիտի բաժնեն զայն: Կղզիին բոլոր գըլլայ Յունաստանի բախտը, սիրով պիտի բաժնեն զայն:

(*) Փոխադարձաբար Սերպ կառավարութիւնն ալ վար դրած էր Գերմանիայէն զրկուած և թուրքիոյ յատկացուած բաւական քանակութեամբ ռազմամթերք որոնք Սերպիայէն կ'անցնէին. զբաւուած իրեղէններուն մէջ կը գտնուէին նաև մէկ քանի ռաւառնակներ:

ցին՝ Պ. Վէնիզելոսի մեծագիր պատկերները: Յունաստանի կցումը որ այլևս ապահով կ'երևար անոնց, իրաւամբ հէլլէն նախարարապետին գործն էր: Իսկ Աթէնք գտնուող Կրէտացի երեսփոխանները յայտարարած էին Պ. Վէնիզելոսի թէ կացութեան փափկութիւնը նկատի առնելով՝ իր հրահանգներուն համեմատ պիտի շարժին(*): Ամերիկա գտնուող Հէլլէնները հեռագիր հեռագրի վրայ կը հասցնէին Աթէնք թէ խմբովին ճամբայ կ'ելլեն դէպի հայրենիք. ամէնքն ալ զինուորական մարզանք տեսած էին և իրենց հետ կը բերէին զէնք ու հանգանակութիւններէ գոյացած դրամ: Ժողովուրդին խանդավառութիւնը աւելի մեծցած էր՝ լսելով որ Կառավարութիւնը գներ է Արժանթինի Կառավարութեան հաշուին Անգլիոյ մէջ շինուած չորս թորփիլանաւեր: Եւրոպա գտնուող Յոյն ուսանողները, իրենց Սերպ, Պուլկար և Սև Լեոնցի ընկերներուն հետ փութով կը դառնային հայրենիք: Բարձր դասու պատկանող բազմաթիւ տիկիներ կամաւոր կը գրուէին, Կարմիր Սաչի կազմակերպութեան մէջ ծառայելու համար: Արքայական իշխանները խնդրած էին նախարարապետէն որ զիրենք բանակին մէջ ծառայելէ արգելող հրամանը բարձուի, որպէսզի կարենան պատերազմի դաշտը մեկնիլ, և Պ. Վէնիզելոս խոստացած էր Սորհրդարանին կողմէ ընդունիլ տալ այդ իմաստով օրինագիծ մը: Համանման իրողութիւններ տեղի կ'ունենային նաև Պուլկարիոյ, Սերպիոյ և Գարատաղի մէջ: Պուլկար երեսփոխաններէն շատերը, հակառակ անոր որ զինուորագրութենէ ազատ են, դրօշի տակ մտած էին: Զարգացած երիտասարդութիւնը մանաւանդ որ լաւագոյն կերպով մը կ'ըմբռնէր Թուրքիոյ դէմ մղուելիք պատերազմին նշանակութիւնը, ամէնէն աւելի խանդավառութիւն ցոյց կուտար: «Նրեանուն տարի է այս օրուան կընայէինք՝ կը յայտարարէին շատեր. մեր սերունդը նոր չէ որ այս պատերազմին կը պատրաստուի. գիւղին նախակրթարանէն այս օրուան յառած էին մեր աչքերը, և դարձեալ այս օրուան կը նայէինք քաղաքը՝ երկրորդական վարժարանին գրասեղաններուն վրայէն. Ներուպա անցանք և աչքերնիս միշտ մեր ետին, միշտ նոյն կէտին վրայ գամուած մնաց. եթէ մենք մեռնինք, վաղը մեր կիներն ու մեր քոյրերը պիտի վերցնեն մեր ձեռքէն իյնող հրացանը և Թուրքին դէմ պիտի խոյանան»: Բոլոր պահեստիները մէկ ոստումով փութացած էին պատասխանել զօրակոչին. շատեր որոնք իրենց տարիքին կամ տկարութեան բերմամբ յոյս չունէին թէ կ'ընդունուին զինուորական իշխանութեանց կողմէ, հազարուամէկ վարպետութիւններու կը դիմէին, անպատճառ դրօշի տակ առնուելու համար: Բոլոր դաշտերը պարպուած էին, այլևս ոչ կիլ, ոչ աղայ կը տեսնուէր անոնց մէջ: հողագործներն ու հովիւները, պաշտօնեաներն ու գործաւորները, իրենց գործիքները թողած ու զէնքի փարած էին: Չկար ճամբայ մը որ ծածկուած չըլար զինուորական կարաւաններով և կամ կենդանիներու հօտերով զորս փութով կը հաւաքէին ամէն կողմէ: Բարիզի դեսպան Պ. Սթան-

(*) Թուրքիոյ հետ արտաքուստ լաւ յարաբերութիւններ մշակած ատենը, Պ. Վէնիզելոս զինուորական ոյժով արգելած էր անոնց մուտքը Հէլլէն Խորհրդարանէն ներս:

չիօֆ, Պուլկարիոյ ամէնէն յայտնի դիւանագէտներէն մէկը, կը փութար երկիր՝ դրօշի տակ մտնելու համար: Նոյն նպատակով Բէթերպուրկէն կը մեկնէր տեղւոյն պուլկարական դեսպանը՝ զօրավար Բարրիքօֆ: Մակեդոնական յեղափոխական կազմակերպութիւնները 20,000 մարդուած հրոսակներ կը դնէին կառավարութեան տրամադրութեան տակ(*): Գարատաղի ու Սերպիոյ մէջ նոյն տեսարանը. 1876ի պատերազմին մասնակցած բոլոր Գարատաղցի ծերունիները կազմած էին մասնաւոր խումբ մը, որուն շատ փրակիր ընդունելութիւն բրած էր Նիքօլա Թագաւոր, ինք ալ 1876ի լա-



Կրէտացի երեսփոխան մը եր ընկ տարազով .

ւազոյն ուղղմիկներէն մէկը: Սերպիոյ մէջ, բազմաթիւ ծերունիներ աւտակալին զինուորագրութեան տարիքը չմտած պատանիներ խնդրագիր կուտային դրօշի տակ մտնելու համար: Սերպիոյ Ժողով իշխանը որ գահաժառանգութեան իրաւունքէն հրաժարած էր և արքունիքէն հեռու՝ օտար երկիր կ'ապրէր, վերադարձած էր հօրը մօտ, պատերազմին մասնակցելու մտքով: Կիներ հրապարակաւ զինուորական մարզանք կը կատարէին,

(*) Ասոնց կարգին պէտք է յիշել նաև Սասնոյ հերոս Անդրանիկը՝ իր հազարի մօտ կամուռներով:

իրենց մեծագոյն մասը, որոնք մէջ մասնաւորապէս յիշատակելի պիտի մնայ օրիորդ Սօֆիա Իվանովիչ, վերջէն մասնակցեցան մղուած կռիւնե-
րուն: Շատ Սերպեր իրենց հարստութիւնը կառավարութեան կը նուիրէին՝
պատերազմի ծախքերուն նպաստելու համար: Թեթեւ յանցանքներով
բանտարկուած բոլոր Սերպերը կ'արձակուէին բանտէն օրպէսզի իրենց
զինուորական պարտականութիւնը կատարեն:


Խորհրդարանական արտասովոր նիստեր, թէ՛ Պէլկրատի, թէ՛ Սօֆիայի
մէջ, բոլորովին շեշտեցին պատերազմի ի նպաստ գոյացած շարժումը:
Սեպտեմբեր 22ին բացուեցաւ պուրկարական Սօպրանիէն. այդ օրուն կը
զուգադիպէր նաև Պուլկարիոյ անկախութեան տարեդարձը. հակառակ
օդին անձրեւոտ ըլլալուն, անհամար բազմութիւն խոնուած էր խորհրդա-
րանական շէնքին առջև, ծախահարելու համար Յէրտինանտ Ձարն ու
երեսփոխանները. մասնաւոր հետաքրքրութեան առարկայ էին Սօպրանիէ-
ին Թուրք երեսփոխանները որոնք ամբողջովին ներկայ գտնուեցան՝ ֆէ-
սով: Ձարը՝ բուն ծախահարութեանց մէջ կարդաց Գահաճառը զոր վեր-
ջացուց հետեւեալ խօսքերով. «Համոզուած ըլլալով որ դուք Պուլկար
պետութեան շահերը նկատի ունենալով, ըստ այնմ պիտի կատարէք ձեր
պարտականութիւնը, աստուածային օրհնութիւն կը հայցեմ ձեր աշխա-
տութեանց վրայ և բացուած կը հռչակեմ ազգային 15րդ ժողովին ար-
տասովոր նստաշրջանը»: Կառավարութիւնը Սօպրանիէին ներկայացուց
կարգ մը օրինագիծեր որոնք աւելի քան ութսուն միլիոնի յաւելուածա-
կան վարկեր կը խնդրէին բանակին ծախքերուն համար. ուրիշ օրինագիծ
մը կը խնդրէր որ ելմտական նախարարը արտօնուի պետական պաշտօնա-
տարներու և աշխատաւորներու տարեթոշակէն զեղչեր ընելու և զինուո-
րագրութենէ զերծ մնալու փոխարէն առնուած գումարին քանակութիւնը
բարձրացնելու: Յետոյ՝ Սօֆիայի Մէտրապոլիտը գոհարանական աղօթք
մը կատարելով նիստը փակուեցաւ: Յաջորդ օրը Սօպրանիէն ծափերով
որոշեց եղբայրական ողջոյնի հեռագիրներ ուղղել Պէլկրատի և Աթէնքի
Խորհրդարաններուն ու Գարատաղի կառավարութեան: Յետոյ, առանց
վիճարանութեան վաւերացուց արքայական հրամանագիրը որով պաշար-
ման վիճակ կը հրատարակուէր բովանդակ Պուլկարիոյ մէջ: Նախարարա-
պետ Պ. Կէչօֆ ճառ մը արտասանելով յայտնեց թէ Պուլկարիա իր համ-
բերութիւնը սպառելէն վերջ միայն ձեռնարկեց զօրահանութեան, որուն
պատասխանատու նկատեց Թուրք կառավարութիւնը. յետոյ շնորհակա-
լութիւն յայտնեց ընդդիմադիր տարրերուն ու բոլոր քաղաքական կաղ-
մակերպութեանց որոնք կառավարութեան ոյժ կուտային այդ տագնապի
օրերուն: Խորհրդարանական բոլոր խմբակցութեանց պետերը կրկնեցին
թէ ամէն կերպով պիտի շարունակեն աջակցիլ կառավարութեան: Բուն
ծափերով ու խանդավառ ազադակներով վաւերացուեցաւ բանակը շարժ-
ման մէջ դնող արքայական հրամանագիրը, որուն դէմ խօսեցան միայն
ընկերվարականները: Առանց վիճարանութեան ընդունուեցան նաև կա-
ռավարութեան ներկայացուցած բոլոր օրինագիծերը: Սեպտեմբեր 24ին,
վերջին նիստի մը մէջ, երեսփոխանները մեծ խնդութեամբ քուէարկեցին

գահաճառին պատասխանը՝ ուր ըսուած էր նաև թէ «Երբ խնդիրը
կը կայանայ Պուլկարիոյ գերագոյն շահերուն պաշտպանութեան և անոր
արժանապատուութեան մասին, ամբողջ Պուլկար ազգը և իր ներկայա-
ցուցիչները, գահին շուրջը բոլորուած, պատրաստ են անխուսափելի բոլոր
գոհողութիւնները ընելու հայրենիքին համար»: Յետոյ, Պ. Կէչօֆ նստա-
շրջանը փակուած հռչակեց: Բազմաթիւ երեսփոխաններ սկսան հայրե-
նասիրական տաղեր երգել. ամէնքն ալ իրենց ամսականները նուիրեցին
պատերազմական ծախքերուն ինչպէս նաև սաւառնակներու գնման համար:

Սեպտեմբեր 22ին բացուեցաւ նաև սերպիական Սքուրչինային ար-
տասովոր նստաշրջանը՝ միևնոյն ռզեւորութեան մէջ: Բէթար Թագաւոր
կ'ըսէր իր գահաճառով. «Մեզի անմիջապէս մօտաւոր երկիրներու մէջ ծա-
գած անսովոր դրութեան պատճառաւ տեղի կ'ունենայ Սքուրչինային այս
արտասովոր նստաշրջանին բացումը: Որքան ալ կը հետաքրքրուէինք
Թուրքիա ընակող մեր ազգակիցներուն անտանելի կացութեամբ, դարձ-
եալ միշտ կը դիմադրէինք ընդհանուր հանրային կարծիքին որ կը պա-
հանջէր մեզմէ միջոցներ ձեռք առնել՝ մեր ազգակիցներուն կեանքի
տանելի պայմաններ և խաղաղ զարգացման միջոցներ տալու համար:
Բայց անա յանկարծ զարմացմամբ լսեցինք որ Թուրքիա զօրահանութեան
ձեռնարկած է մեր սահմաններուն մօտ: Մեծ տէրութիւնները, — ասիկա
կը հաստատեմ գոհունակութեամբ և խորին երախտագիտութեամբ, —
բարեկամական խորհուրդներ տուին Թուրքիոյ, բայց ի դուր: Թրքական
զօրահանութեան պէտք էր որ պատասխանէինք Սերպ բանակը շարժման
մէջ դնելով: Մեր կացութիւնը շատ որոշ ու պայծառ է. մենք պարտա-
ւոր ենք միջոցներ ձեռք առնել մեր ապահովութիւնը պաշտպանելու հա-
մար, և Պալքանեան միւս քրիստոնեայ Պետութեանց հետ համախորհուրդ,
պէտք է ընենք ամէն ինչ որ կրնանք՝ Պալքաններու մէջ խաղաղութեան
ճշմարիտ, դրական ու տեւական պայմաններ ստեղծելու համար»: Թա-
գաւորին ճառը ընդմիջուեցաւ «Կեցցէ՛ արքան» «Կեցցէ՛ Պալքանեան
Քրիստոնեայ Դաշնակցութիւնը» ազադակներով: Եւ ինչ խանդավառութեամբ
ընդունուեցան նաև կառավարութեան խնդրած անհրաժեշտ վարկերն ու
գահաճառին պատասխանը. միայն ընկերվարականները առարկութիւններ
ըրին: Սեպտեմբեր 24ին փակուեցաւ նաև Սքուրչինային արտասովոր նս-
տաշրջանը:

Մինչդեռ մէկ կողմէ Պալքանեան Պետութեանց մէջ պատերազմի հա-
ւանականութիւնը կը մեծնար, և զօրահանութիւնը հեռզհետէ աւելի ըս-
պառնայից կը դառնար, Պոլսոյ մէջ ալ տակաւ մարմին կ'առնէր խաղա-
ղութեան ի նպաստ հոսանք մը: Չօրահանութիւնը շատ թուլութեամբ ա-
ռաջ կը տարուէր տակաւին. յայտնի էր որ Օսմ. բանակին անպատրաս-
տութեան խորապէս համոզուած դահլիճը ամէն գնով կ'աշխատէր խաղա-
ղութիւնը պահպանելու. վտանգը միայն եւրոպական սահմաններէն չէր.
ասիական սահմանները նոյնպէս սպառնալիքի տակ էին, և Քեամիլ փաշա
կը յայտարարէր թէ պատերազմը կայսրութեան կործանման պիտի յանգի
անխուսափելի կերպով, եթէ երբեք զէնքերու բախտը չժպտի Օսմ. բա-

նակին, ինչ որ շատ ալ հաւանական կ'երեւար: Կառավարական մա-
մուռն ալ տակաւ խաղաղութեան կողմը կը հակէր. Իգճաւ, Սապահ և
ուրիշ թերթեր յոյս կը յայտնէին թէ տէրութիւնները, խաղաղութեան
պահպանման համար հարկ եղած ճնշումը պիտի բանեցնեն Պալքանեան



Կրէտացիք ծափերով կը պատգմեն Պ. Վէնկզէլոսի պատկերը

Պետութեանց վրայ, ի հարկին պաշարման ենթարկելով Յունաստանի ծո-
վեզերքները, ինչպէս եղած էր եօթանասնական թուականներուն: Ընդ-
հակառակը, Իթիհատական թերթերը կը շարունակէին ժողովուրդը պա-
տերազմի գրգռել, ամէն օր քստմնասարսուռ մանրամասնութիւններ հիւ-

սելով Պալքանեան Պետութեանց մէջ գտնուող Թուրքերու դէմ ի գործ
դրուած բռնութեանց մասին: Եւրոպական կը գրէին թէ Սերպերը Իսլամ կի-
ներու ծիծերը կտրեր են: Միւս կողմէ, հեշտանքով կ'արձանագրէին Նա-
զըմ փաշայի վերագրուած խօսք մը որ չստուգուեցաւ, թէ և չհերքուե-
ցաւ ալ. իբր թէ փաշան յանձնարարած է եղեր Թրակիա մեկնող սպանե-
ներուն որ իրենց հետ հանդիսական համազգեստներ առնեն՝ Սօֆիայի մէջ
կատարուելիք զօրանցքին փայլը աւելցնելու համար: Ընդհանուր պատե-
րազմաշունչ արտայայտութեանց տակ ծածկուած կը մնային ուրեմն երկու
որոշ հոսանք, մէկը՝ որուն գլուխը կանգնած էին Իթիհատականները՝ ան-
պայման դէմ էր ամէն զիջումի և ամէն բարենորոգման ու կուսակից
պատերազմի. միւսը՝ որուն կարծեկից կը թուէին դահլիճին մեծամասնու-
թիւնն ու Քեամիլ փաշա, ինչպէս նաև Իթիլաֆը՝ սկսած էր դեղեւելի իր
ուզմական զեղման մէջ և տազնապը խաղաղութեամբ անցընելու միջոց
կը խորհէր, հակառակ անոր որ միանգամայն չորս սահմանազուխներուն
վրայ մանր մուր ընդհարումներ տեղի կ'ունենային: Յաղթանակը պահ
մը. — բայց շատ կարճատե պահ մը, հազիւ երկու օր, — խաղաղասէր-
ներուն պիտի մնար, յուսադրելով գործի, առևտուրի տէր և վաճառական
տարրը, որ արդէն իսկ ծանրապէս հարուածուած, ծագելիք պատերազմէն
կործանուած զատ ուրիշ ոչինչ կրնար սպասել(*): Պոսոյ նրապարակը անա-
գին համեմատութեամբ առուտուր կ'ընէր Բումէլիի հետ. շատեր խոշոր
պահանջներ ունէին Բումէլիցի վաճառականներէ. պատերազմը կրկնակի
կորուստ պիտի պատճառէր իրենց:

Խաղաղասէրներու վախ սուտը գլխաւոր կէտը տէրութեանց անհա-
մաձայնութիւնն էր: Փրանսայի նախարարապետ Պ. Բուանքարէ գեր-
մարդկային ճիգեր կ'ընէր անոնց ընդդիմադարտ շահերը հաւասար գիծի
մը վրայ բերելու, և բոլոր տէրութիւնները մէկանց համախմբելու համար Պ.
Սազօնօֆի գործակցութեամբ պատրաստուած ծրագրի մը շուրջը, որ պա-
տերազմին աւաջքը առնելու միակ գործնական եղանակը կ'երեւար
այդ շփոթութեան օրերուն: Պ. Բուանքարէ կ'առաջարկէր մէկ կողմէ
ճնշում բանեցնել Պալքանեան Պետութեանց վրայ՝ և ստիպել որ խաղա-
ղութիւնը չվրդովեն, ու միւս կողմէ բռնանալ Թուրքիոյ վրայ՝ որպէսզի
գործադրէ անհրաժեշտ բարենորոգումները որոնց իրաբանացման իրենք,
տէրութիւնները պիտի հսկէին: Սուաջիները ապահովցնելու և համոզելու
համար՝ տէրութիւնները պիտի ըսէին. «Այլևս բարեկարգութիւնները
Թուրքիայէն չէ որ պիտի սպասէք, այլ մեզմէ. մենք կ'երաշխաւորենք
անոնց գործադրութիւնը»: Իսլամ Թուրքիոյ՝ փրկութիւն մը կ'առաջար-
կէին անոր, և անշուշտ դիւրաւ պիտի կրնային խօսք հասկցնել: Արդէն
տէրութեանց միջամտութիւնը օրինական հիմ մը ունէր, Պէրլինի Իաշնա-
գրին շնորհ յօդուածը, որ իրենց իրաւունք կուտար այդ պահանջը դնե-

(*) Այդ միջոցին շատ լուռ ճամբու մէջ էին նաև Իտալիա-Թուրք հաշտութեան բա-
նակցութիւնները, և յոյս կար որ Ուշի մէջ կատարուած բանակցութիւնները խաղա-
ղութեան կը յանգին:

լու : որքան ատեն որ միահամուռ կերպով կատարէին իրենց ճնշումը, թուրքիա չէր կրնար անկէ խուսափիլ :

Ահա թէ ի՞նչ կը տրամադրէր աւելի քան երեսուն տարիէ ի վեր մուսուլման տրուած այդ յօդուածը . —

Յօդուած 23.—Բ. Դուռը յանձն կ'առնէ ամբողջովին գործադրել 1868ին կրեւտէի համար պատրաստած հիմնական կանոնադրութիւնը՝ արդար դատուած բարեփոխումներ մտցնելով անոր մէջ : Բուռն իր նահանգներուն համար ալ, որոնց մասնաւոր վարչութեան եղանակը չէ ճշդուած ներկայ Դաշնագրով, տեղական պէտքերու համաձայն նմանօրինակ կանոնադրութիւններ պիտի շինուին, դուրս ձգելով միայն կրեւտէի շնորհուած ապահովութիւնը : Բ. Դուռը իւրաքանչիւր նահանգի մէջ յիշեալ նոր կանոնադրութեան մանրամասնութիւնները խմբագրելու համար յանձնաժողովներ պիտի կազմէ, որոնց անդամներուն մէջ լայն տեղ պիտի ունենան տեղական տարբերը : Այդ աշխատութեանց արդիւնքով շինուելիք կազմակերպութեան ծրագիրներ պիտի ներկայացուին Բ. Դրան քննութեան . Բ. Դուռը անոնց գործադրութեան հրամանագիրը տալէ առաջ՝ Բուռն իր եւրոպական Յանձնաժողովին կարծիքը պիտի հարցնէ :

Ինչպէս կը տեսնուի՝ ասիկա վարչային ապակեդրոնացում էր՝ եւրոպական յանձնաժողովի մը քօնթրօլին տակ, իրաւունք մը կը հաստատէր թուրքիոյ եւրոպական նահանգներուն համար, անխուսափելի պարտաւորութեան մը կ'ենթարկէր թուրք կառավարութիւնը և պարտականութիւն մը կը դնէր Եւրոպայի վրայ : Եթէ տառապէս գործադրուէր՝ անոր շնորհիւ պիտի հաստատուէր կատարեալ հաւասարութիւն, ներքին վարչական ազատութիւն և թուրք պաշտօնատարներու հեղինակութեան, — չարիքի բուն աղբիւրին, — նուազում, ինչ որ իրօք բարօրութեան շրջան մը պիտի բանար յիշեալ նահանգներուն համար : Չգործադրուեցաւ երբեք, որովհետեւ թուրք կառավարութիւնը, հաւատարիմ իր վաղընջուց մէթոտին, աւելի խոստմնաւատ ծրագիր մը ներկայացուց ինքնաբերաբար, միանգամայն թէ՛ Բուռն իր և թէ՛ Անատօլի համար . ինչո՞ւ մինակ Բուռն չէին նպաստաւորուէր . Անատօլին յանցանքը ի՞նչ էր . — «Պիրի Եկր պիրի պագար, գրյաւեք օնսան գօքար» . քանի որ բարեկարգութիւններ պիտի ըլլային, լաւագոյն էր որ բովանդակ կայսրութեան վրայ հաւասարապէս տարածուէր անոնց բարիքը :


Արեւելեան Բուռն իր եւրոպական Յանձնաժողովը 1880 օգոստոս 23ին վաւերացուց այդ ծրագիրը, որ ծանօթ է «Վիլայէթներու Օրէնք» անունով : Առաջին գլուխը կը խօսի «ընակչութեանց ընդհանուր իրաւունքներուն» վրայ և մասնաւորաբար կը տրամադրէ թէ (Յօդ. 2) «իւրաքանչիւր նահանգի մէջ ընակչները հաւասար են օրէնքի առջեւ . միեւնոյն իրաւունքները ու միեւնոյն պարտականութիւնները ունին, առանց ցեղի կամ կրօնքի խտրութեան» : Յետոյ՝ օրէնքը կ'երաշխաւորէ անհատական ազատութիւնը և այդ ազատութիւնը կը լրացնէ արեւմտեան Սահմանադրութիւններէ քաղուած հետեւեալ տրամադրութեամբ . «Իւրաքանչիւր քաղաքացիի բնակարանը անբռնաբարելի է . առանց օրէնքի տուրք չի գանձուիր . կրթութիւնն ու մամուլը ազատ են» : Բ. և Գ. Գլուխները կը սահմանեն վալիներու իրաւունքը և իւրաքանչիւր նահանգի կեդրոնական կազմակերպութիւնը : Վալիները պաշտօնի կը կոչուին հինգ տարուան համար, պետն են գործադիր իշխանութեան և իրենց օժանդակ ունին Վար-

չական խորհուրդ մը (Մէճլիսի Իրատէ) որուն կ'անդամակցին բացի կուսակալէն, փոխ-կուսակալը, տէրթուրտարը, դատական տեսուչը, կրթական տեսուչը, երկրագործական ու առեւտրական տեսուչը, միւլթիին, ոչ-խալամ հասարակութեանց հոգեւոր պետերը, և Ընդհանուր ժողովին կողմէ իր անդամներուն մէջէն ընտրուած եօթը անդամներ : Օրէնքները, հրամանագիրները, և ինչ կը հրատարակուին նաև տեղին գլխաւոր լեզուներով : Եթէ վալին Իսլամ է, փոխ-կուսակալը Քրիստոնեայ կ'ըլլայ ու փոխադարձաբար : Չէրքէս գաղթականներ չեն հաստատուիր այդ նահանգներուն մէջ : Ընդհանուր նահանգային ժողովները՝ զորս օրէնքը կը հաստատէ, կատարեալ գաւառային խորհրդարաններու բնոյթը ունին . ժողովները կը կազմուին չորս տարուան շրջանով, ժողովուրդէն ընտրուած և թոշակաւոր անդամներով . կուսակալը ընդհանուր անդամներու մէկ քաւորդին չափ անդամներ միայն կրնայ ընտրել, մեծ սեփականատէրերէ, վաճառականներէ, գիտութեան և կրթութեան մարդոցմէ . ժողովները ամէն տարի հոկտեմբերին կը գումարուին և կ'ուճենան առ առաւելն երկու ամսուան նստաշրջան . վիճարանութիւնները հրապարակային կ'ըլլան . ժողովները գրեթէ սովորական երեսփոխանական ժողովներու յատուկ ամէն իրաւասութիւն ունին, և իրենք կը քուէարկեն նահանգներու ելմտացոյցը ու կը սահմանեն օրէնքներ զորս Բ. Դուռը կը վաւերացնէ : Իւրաքանչիւր հասարակութիւն կ'ուճենայ իր անջատ վարչական ժողովը, ընտրով անդամներով . գիւղերուն և քաղաքներու գլխաւոր թաղերուն մէջ ալ ինթիյար Մէճլիսիներ : Ընտրող է 21 տարեկան և տուրք վճարող կամ կալուածի և կամ վաճառատան տէր ամէն քաղաքացի : Դատական կրթական ու կրօնային կազմակերպութիւնները նոյնպէս կ'ենթարկուին այդ գեղեցիկ հաւասարութեան սկզբունքին : Միեւնոյն հիման վրայ կը ձեւուի սանձագներու, քաղաներու, նահիէներու վարչութիւնն ալ : Օրէնքը կը տրամադրէ նաև որ ի հարկին եւրոպացի սպաներու յանձնուի ժանտարմաներու հրամանատարութիւնը (*) :

Այս աստիճան գեղեցիկ հաւասարական ոգուով, և ազատամտութեամբ պատրաստուած օրէնքի մը քով ի՞նչ կ'արժէր Պէրլինի Դաշնագրին 23րդ յօդուածը . տէրութիւնները մէկ կ'ուզէին, Բ. Դուռը տասը և աւելի կուտար : Պատճառը պարզ էր . եթէ գործադրուէր Պէրլինի Դաշնագրին 23րդ յօդուածը, եւրոպական միջամտութիւն տեղի պիտի ունենար բարեկարգութեան գործին մէջ . մինչդեռ Վիլայէթներու Օրէնքով Բ. Դուռը թէեւ անհամեմատ աւելի կը շնորհէր, բայց վերջապէս գործադրութիւնը կը վերապահէր իրեն, ինք իր տան մէջ տէր կը մնար, եւրոպական միջամտութեան վտանգը կը հեռացնէր : Արեւելեան Բուռն իր եւրոպական Յանձնաժողովը, որուն վաւերացման ներկայացուած էր այդ օրէնքը, չէր կրցած իր զարմանքը զսպել Դրան վեհանձնութեան մասին, և իր տեղեկագիրը կնքած էր հետեւեալ դիտողութեամբ . «Լաւ օրէնքներ

(*) Նոյնքան խոստմնաւատ է նաև 1880ի Վիլայէթներու Օրէնքին այն մասը որ կը պատկանի Անատօլի նահանգներուն :

միշտ գոյութիւն ունեցած են Թուրքիոյ մէջ, բայց սովորաբար անոնց գործադրութիւնը անբաւական եղած է: Կնքելով այս տեղեկագիրը, ստորագրեալները իրենց գործը կը յանձնարարեն տէրութեանց պաշտպանութեան»: Այս լաւ օրէնքն ալ սակայն միւսներուն չափ տխուր բախտի մը պիտի արժանանար. ո՛չ միայն հոգ չէ թէ «անբաւական կերպով մը» չպիտի գործադրուէր, այլ նոյն իսկ բնաւ գործադրութեան չպիտի դրուէր: Արդիւնք մը չպիտի ծնէր նաև «տէրութեանց պաշտպանութեան» զոր յանձ-



Պ. ԷՍԲՈՒԻԹԻ ՃԱՌԸ

«Երբեք միջազգային հորիզոնը այս աստիճան վտանգաւոր կերպով մթաղանծ չէր...»

նաժողովը կը հրաւիրէր օրէնքին վրայ. այդ մասին Բ. Դուռը ապահով էր արդէն օրէնքը պատրաստած միջոցին. դիւրին էր անոնց աչքին մէջ մէկ շահու հեռանկար խաղցնել և անոնց ընծայելիք պաշտպանութիւնը դարձրնել ապարդիւն. չէ՛ որ անոնց բարենորոգման պահանջները աւելի իրենց սեփական շահերը ապահովելու քան դժբախտ ժողովուրդները բարօրութեան պայմաններով օժտելու համար կ'ըլլային:

Երբ Պ. Բուանքարէ չարչարագին ու տաժանալից աշխատութիւններէ ետք յաջողեցաւ վերջապէս համամտութիւն գոյացնել տէրութեանց միջև, և ընդունիլ տալ իր առաջարկը՝ որուն համաձայն թէ՛ խաղաղութեան ինպատակ ճնշում պիտի ըլլար Պալքանեան Պետութեանց մօտ և թէ մանաւանդ տէրութիւնները, Պէրլինի դաշնագրին շնորհ յօդուածին հիման վրայ, Թուրքիան պիտի բռնադատէին գործադրել բարենորոգումներ՝ ուղղակի իրենց հսկողութեան ու քօնթրոյին տակ, Բ. Դուռը ինքզինքը նորէն գտաւ 1880ի վտանգին, եւրոպական միջամտութեան հանդէպ: Տէ-

րութեանց մտադրութիւնը շատ լուրջ էր այս անգամ, որովհետև իրենց գործը լոկ եւրոպական Թուրքիոյ սառապող ժողովուրդներուն հետ չէր, այլ անաւոր սպառազինութեանց յանձնուած և զահալէժ կերպով պատերազմի դիմող Պալքանեան Պետութեանց հետ. կէս միջոցներ այլևս չէին կրնար գոհացնել զանոնք, պէտք էին իրական, երաշխաւորուած բարենորոգումներ, ենթադրելով որ այդքանով ուզէին բաւականանալ: Բ. Դուռը ճիշտ 1880ի միջոցին դիմեց՝ այդ վտանգէն խուսափելու համար, սեպտեմբեր 23ին՝ տէրութեանց Պոլսոյ դեսպաններուն ծանուցանելով թէ անմիջապէս գործադրութեան պիտի դնէ Վիլայէթներու Օրէնքը, ժամանակին պահանջած անհրաժեշտ բարեփոխութիւններով: Նոյն օրը, առտուն, Պոլսոյ մէջ իմացուած էր Պ. Բուանքարէի ձեռնարկին յաջողութիւնը և ամէն մարդ լաւատես դարձած էր, յուսարով որ իրարու հետ համաձայն տէրութիւնները պիտի կրնան ի հարկին բռնադատել Պալքանեան Պետութիւնները հանդարտ կենալու: Օսմ. հեռագրական Գործակալութիւնը կը ծանուցանէր. «Մեր տեղեկութիւնները և արտասահմանէն մեզի հասած հեռագիրները Թուրքեպալքանեան վէճի ուէ վտանգ չէզոքացուած ցոյց կուտան»: Թերթերու մէջ՝ յուսադրիչ խորագիրներ կ'երեւային ամենախոշոր տաւերով, — «Իէպի խաղաղութիւն», «Պատերազմի վտանգը անհետացած», և այլն(*): Իրիկուան կողմ՝ այս յոյսերը բոլորովին ամրապնդուեցան, երբ յայտնուեցաւ Դրան հաստատ մտադրութիւնը 1880ի Վիլայէթներու Օրէնքը գործադրելու մասին, երբ մանաւանդ Օսմ. Գործակալութիւնը պաշտօնապէս հաստատեց իրողութիւնը: Նոյն իսկ այդ մտադրութեան աւելի լուրջ ընդմիջ մը տալու համար Բ. Դուռը կը յայտարարէր թէ ինք տէրութեանց դիմումը չէզոքացնելու համար չէ որ կ'որոշէ գործադրել 1880ի օրէնքը, այլ արդէն իսկ աւելի քան քսան օրէ ի վեր անոր վրայ կ'աշխատէր: Թերթեր կ'արձանագրէին տէրութեանց դեսպաններուն կողմէ Պապը Ալիի նրբանցքներուն մէջ արտասանուած խօսք մը՝ «La guerre est écartée», — «Պատերազմին առաջքը առնուած է», ինչ որ աստիճան մը աւելի կը յուսադրէր խաղաղութեան բարեկամները: Իէմքերը նորէն սկսան ժպտիլ, և պատերազմին մղձաւանջէն ազատած Պոլիսը ոչ իսկ կարեւորութիւն ընծայեց Անգլիոյ նախարարապետ Պ. Էսքուիթի ճառին որ կը յամառէր յուսեալ մնալ ընդհանուր լաւատեսութեան մէջ: «Երկար ատեն կայ որ, կ'ըսէր Պ. Էսքուիթ, միջազգային հորիզոնը այսքան սպառնալից կերպով չէր մթաղանծ»: ու կը յարէր թէ խաղաղութեան պահպանումը այլևս իրենցմէ կախուած չէ. իրենք միայն կարելին կրնան ընել: Այս խորատես ճառը անցաւ աննշմար, և սակայն երեք օր վերջ պատերազմը իրօք պիտի յայտարարուէր: Ահա այսպէս Պոլիս խաղաղութեան յոյսերու յանձնած էր ինքզինքը, երբ Դրան յայտարարութեան յաջորդ օրը Սեպտեմբեր 23ի իրիկունը, յանկարծ պայթեցաւ հա-

(*) Իթիհատական մամուլը ամենաբուռն կերպով արտայայտուած էր Պերլինի Կաշնագրին շնորհ յօդուածին, ինչպէս նաև Դրան կողմէ խոստացուած Վիլայէթներու Օրէնքին դէմ, մինչդեռ միւս բոլոր թերթերը ուրախութեամբ արձագանգ եղած էին Կաշնագրին որոշման:

մալսարանական ուսանողներու ցոյցը, — աւելի ճիշդը՝ համալսարանական ուսանողներու անունով ու գործակցութեամբ Իթիհատի կողմէ կատարուած ցոյցը, — որ ամէն բան տակն ու վրայ պիտի ընէր:

Օսմ. Համալսարանին մէջ տեղի ունեցած գումարումէ մը վերջ, որուն մասնակցած էին գրեթէ մի միայն Իթիհատական ուսանողները, կազմուած էր թափօր մը որ նախ հազիւ 100 - 150 հոգիէ կը բաղկանար, և որ ճամբուն ընթացքին, ստուարացած էր բազմաթիւ հետաքրքիրներով, ինչպէս նաև Իթիհատականներով: Թափօրին առջևէն կը բարձրանար միակ դրօշ մը, Օսմ. Համալսարանին դրօշը, և ցոյցին մասնակցողները ճամբուն ընթացքին կը հրաւիրէին ժողովուրդը որ իրենց ընկերանայ պատերազմ պահանջելու, հայրենիքին պատիւը փրկելու համար: Երբ Թափօրը Պապը Ալի հասաւ, արդէն իսկ 1000ի մօտ ժողովուրդ կար, ցուցարարներէն զատ: Մէկ երկու ժամ վերջ, այդ թիւը պիտի տասնապատուէր ամէն ազգէ բաղկացած հետաքրքիրներով: Բ. Դրան պահպանութեան յատկացուած ոստիկանները ի դուր փորձեցին վանդակապատին դուռը պաշտպանել, ցուցարարները մտան ներս և Եպարքոսական պաշտօնատան սանդուխները գրաւելով սկսան պահանջել որ Դահլիճը դայ ժողովուրդը ապահովցնէ պատերազմի յայտարարութեան մասին: Իսկոյն գոցուեցան պաշտօնատան ներքին դուռերը, ինչ որ կատղեցուց ցուցարարները: Մէկ քանի ուսանողներ, ինչպէս նաև Իթիհատական ճառախօսներ, Համալսարանին դրօշը սանդուխներուն վրայ բարձրացնել տալէ վերջ, սկսան ամենազրգուիչ ճառեր արտասանել. բոլոր խօսողներն ալ մեծ տպաւորութիւն կը գործէին, որովհետև ժողովուրդին քով բուն դայրոյթ կար արդէն Պալքանեան Պետութեանց դէմ. անոնց կողմէ Օսմ. Կայսրութեան ասպարէզ կարգացուիլը ինքնին անարգանք մըն էր զոր ոչ մէկ լաւ Թուրք կ'ուզէր տանիլ. Թուրք ժողովուրդը, իր անցեալ յաղթանակներուն յիշատակով զեղուն, իրօք կուսակից էր պատերազմի: «Դեռ երէկ մեր սեղանէն կշտացող այդ շուներուն (Պալքանեան Պետութեանց) ականջէն քաշելու է», կը գոռար ժողովուրդէն մէկը: Ուրիշներ՝ Թուրք մամուլին մէջ արձանագրուած բռնաճնտնութեանց լուրերուն ակնարկելով կը պոռային թէ «Պալքանեան շուները Իսլամութիւնը ոտնակոխ կ'ընեն», «Իսլամ կիներն ու աղջիկները կը բռնաբարեն», «Մզկիթներ եկեղեցիի կը վերածեն» և «Կ'անարգեն վեց դարերու յաղթանակներով շքուած Կայսրութիւն մը, որ սակայն կրնայ շան ոջիւններու (Պալքանեան Պետութեանց) այդ կոյտը կրունկի միակ հարուածով մը ճգմել»: Կային նաև պարզամիտները, որոնք կը հարցնէին թէ արդեօք Սերպիայէն ճամբայ չկա՞յ Իտալիա անցնելու, և Տրիպոլիտոյ մէջ շարունակուող պատերազմին հաշուեյարդարութիւնը Հոռոմի մէջ ընելու համար...»


Ճառախօսներուն բուն կատաղութիւնը սակայն Պէրլինի Դաշնագրին 23րդ յօդուածին դէմ էր: «Դահր օշուն եիրմի իւյիւննի մասսե» կը պոռային ամէն կողմէ. իսկ բեմին վրայէն, իրարու ետևէ խօսք առնողներ կը բացատրէին ժողովուրդին թէ այդ յօդուածին ընդունելութիւնը վերջ կու տար Թուրքիոյ ներքին անկախութեան, թէ ատով այլևս

Բուսէլի չէր մնար Կայսրութեան ձեռքը, և թէ ատիկա մեծագոյն նախատինքն էր զոր Թուրքիա ու Թուրքերը կրնային կրել երբեք: «Մեռա՞ւ այս դիւցազն ազգը, իր զաւակները ո՞ր օրուան կը սպասեն արդեօք... մենք ահա պատրաստ ենք մեր արիւնին յետին կաթիլը թափելու, հայրենիքին մատ մը հողի անգամ բաժանումը չթողատրելու համար»: Բոլորը, բոլորը, այդպէս զինուորագրուելու, «անարգ շուներուն» դէմ քաշելու և զանոնք ճգմելու պատրաստակամ ըլլալ կը յայտարարէին:

Ամբոխը որ դուրսը և Բ. Դրան բակին մէջ խռնուած էր, համակրութեամբ կ'ողջունէր այս հայրենասիրական պոռթկումը: Եւ սակայն, Դահլիճը միշտ կը յամառէր չերևալ, Յուցարարները պահ մը դադրեցուցին ճառերը և իրենց բովանդակ ճիգը սկսան թափել՝ Եպարքոսը դուրս բերել տալու համար: Ժամ մը անցած էր արդէն, բայց միշտ ապարդիւն: Մշտապէս և յամառօրէն կրկնուող հրաւերներու վրայ, Ահմէտ Մուխթար փաշա լուր դրկեց թէ ներսը կարևոր խորհրդակցութիւններով զբաղած են, և թէ կ'աշխատին ազգին բաղձանքներուն համաձայն լուծում մը տալ ինդրին. կը վստահեցնէր նոյն ատեն ժողովուրդը թէ Դահլիճը պիտի կատարէ իր հայրենասիրական պարտականութիւնը ու կը հրաւիրէր զայն որ ցրուի և սպասէ ապահով: Այս պատասխանը սակայն բոլորովին գրգռեց ցուցարարները. «Երբ առջի օր Կայս. Պալատ գացինք, պոռացին, Սուլթանը իսկոյն փութաց մեզի երևալ. Մուխթար փաշան Սուլթանէն բարձր է որ չի հաճիր դէմքը ցոյց տալ»: Եետոյ յատնեցին թէ մինչև որ նախարարապետը չգայ և զիրենք չապահովցնէ թէ շօրտեսածը չպիտի ընդունուի, պիտի մնան այդտեղ, տեղի չպիտի տան նոյն իսկ բռնութեան առջև: Ամէնէն կատաղիները կը գոռային. «Աւելի լաւ է որ ամէնքս ալ մեռնինք այստեղ, քան Կայսրութեան ձակտին նետուած այդ անարգանքը տանինք»: Վերջապէս նախարար մը դուրս ելաւ՝ ի դիմաց դահլիճին և ուզեց խօսիլ. սակայն ցուցարարները հայհուհներով խափանեցին անոր ձայնը. «Մուխթար փաշան. Մուխթար փաշան, ուրիշ մարդ չենք ուզեր», կը կրկնէին: Քիչ առ քիչ կը յայտնուէր ցոյցին բուն ընդլիճը. ապահովաբար դահլիճը տապալելու փորձ մըն էր եղածը, ինչ որ իշխանութեան գլուխը պիտի վերադարձնէր Իթիհատը, որ անպայման պատերազմի կողմն էր: Պապը Ալիի չուրջը հետզհետէ խտացող ժողովուրդը, որքան ալ մեծագոյն մասամբ չէզոք ու անտարբեր մարդոցմէ կը բաղկանար, կրկին մեծ ոյժ մըն էր ցուցարարներուն համար. լոկ անոր ներկայութիւնը՝ ժողովրդային հսկայ շարժման մը երևոյթը կու տար բուն մը համալսարանականներու կողմէ սարքուած այդ ցոյցին:

Մինչդեռ բազմութիւնը այդպէս կը խլրտէր ու ճառերը կը վերսկըսէին, այս անգամ դահլիճին դէմ, յանկարծ փողի մը ձայնը հնչեց պողոտային բարձունքէն: Նազըմ փաշա որ Բ. Դուռ կը գնալուէր, վտանգը նախազգարով հեռաձայնով զինուոր ուղարկած էր պատերազմական նախարարութեան պաշտօնատունէն: Յուցարարները «Կեցցէ՛ բանակը» աղախարարութեան պաշտօնատունէն: Յուցարարները «Կեցցէ՛ բանակը» աղախարարութեան պաշտօնատունէն: Զիաւոր սպայ զակներով և բուն ծափերով ընդունեցին զինուորները: Զիաւոր սպայ մը որ ջոկատին կը հրամայէր, վայրկենաբար շրջապատուեցաւ,


վար առնուեցաւ ձիէն, ուսամբարձ բերուեցաւ ներս, եպարքոսական դիւանին սանդուխներուն վրայ: Յուցարարները դիւրաւ շահեցան դայն: «Հայրենիքին ծաղիկներն ենք մենք, կայսրութեան վաղուան յոյսն ենք



Համալսարանական ուսանողներու ցոյցը

մենք, և ամէնքս ալ ուրիշ բան չենք պահանջեր, այլ միայն սրբել այս արատը երկրին ճակատէն», կը պոռային համալսարանականները, աւելցնելով թէ թշնամիին, այդ բոլոր «անարգ շուններուն դէմ խնայուած զինուոր»

ները իրենց դէմ կը զրկեն»: Ապան որ զիրենք ցրուելու եկած էր, իր կարգին հայրենասիրական պատերազմաշունչ ճառ մը արտասանեց ու դարձեալ ուսամբարձ վերադարձուեցաւ իր զինուորներուն մօտ, որոնք վանդակապառն դուրս փողոցը կը սպասէին, և որոնք իջան պողոտան ի վար, ու վանդակապատին կողմնակի դռնէն անցան Պապը Ալիի կոնակը,



Թուրք և Դարստաղեան բանակներու դիրքը պատերազմի յայտարարութեան միջոցին

ժողովուրդը ազատ ձգելով որ ուզածը ընէ ասդին: Հարկ եղաւ նոր զինուոր ուղել պատերազմական նախարարութեան: Ապան որ այս անգամ Պապը Ալի փութացող ջոկատին կը հրամայէր, իր պարտականութիւնը խղճմտօրէն կատարեց, ատանց կարեւորութիւն ընձայելու ցուցարարներու ո՛չ գոռում դոչումին, ոչ ալ ծափերուն: Իր հրամանին վրայ, զինուորները անմիջապէս ճեղքեցին բաղձութիւնը, խոյացան դէպի եպարքոսական պաշտօնատան դուռը, և սնկէ ցո ցարարները վանեցին: Մէկ քանի համալսարանականներ ուղեցին ընդդիմանալ՝ գոնէ դրօշը այնտեղ պահելու համար, բայց սպան կէս միջոցներու մարդը չէր, զինուորներէն

մէկ մասին հրամայեց ապակիները կոտրելով մտնել ներս՝ նախարարները պաշտպանելու, մինչդեռ միւս մասը մովզէրները կը լեցնէր՝ ամէն պատահականութեան դէմ պատրաստ գտնուելու համար: Քիչ ետքը հասան նաև ուրիշ շօկատներ, որոնք զիրք բռնեցին Պապը Ալիի բակին մէջ: Այն ատեն միայն՝ այլևս կարգ կանոնը պահպանելու ապահով Մուխթար փաշան, նախ իր զաւակը՝ ծովային նախարար Մահմուտ Մուխթար փաշան զրկեց, յետոյ ինք անձամբ երեւցաւ ցուցարարներուն, որոնք կը շարունակէին պոռայ. «Անկցի՛ 23րդ յօդուածը... կեցցէ՛ պատերազմը...»: Հայր եւ որդի երկու նախարարները փոխն ի փոխ խօսեցան ժողովուրդը համոզելու համար թէ փրկութիւնը անպատճառ պատերազմին մէջ չէ: Ծովային նախարարը՝ ինչպէս նախարարապետը՝ զինուորական փառաւոր անցեալի տէր մարդիկ էին. առաջինը հէլլենական պատերազմին մէջ իսկ երկրորդը ուսական պատերազմին մէջ հերոսաբար կռուած էին. այդ տեսակ անցեալ մը ունեցող մարդիկ կրնա՞յին սոսկապ պատերազմէն: Այս հարցումը ուղղեցին ցուցարարներուն, որոնք չկրցան տարակոյսի ենթարկել իրենց զինուորական արժանիքը: Բայց ահա երիտասարդ մը, Էնիս Ալիի պէյ, այն որ «Ագա Կիւնսիւզ» կեղծանունով վերոյիշեալ յօդուածը հրատարակած էր Թանիկի մէջ, ի դիմաց Համայսարանի իր ընկերներուն խօսք առնելով, «Փաշա, ըսաւ, դուն երէկուան «Ղազի»ն ես. այս բոլոր երիտասարդները որոնք հայրենիքին ծաղիկն են, վաղուան «Ղազի»ները ըլլալ կ'ուզեն. ասոնք ամէնքն ալ պատրաստ են իրենց կեանքը զոհելու. երբ հայրենիքը այս տեսակ պաշտպաններ ունի, ինչպէ՞ս ընդունիլ 23րդ յօդուածը, որ ազգին կուշտին մխուած դաշոյնի հարուած մըն է ինքնին(*)»: — «Իսհր օշտու, գահր օշտու 23նի մասսե...», կը պոռային միւսները:

Այն՝ ատեն Ահմէտ Մուխթար փաշա նոյն այդ յօդուածին և առհասարակ բարեկարգութեանց պատմականը ըրաւ հակիրճ բայց մէթոտիկ կերպով մը. յիշեց ուսական վերջին պատերազմը՝ որու միջոցին նախ յաղթական էր Օսմ. Կայսրութիւնը. «Պարտքերնիս կատարեցինք», յարեց համեստօրէն, չուզելով յայտնել թէ Օսմ. բանակը այդ անդրանիկ վաղանցուկ յաջողութիւնը մասնաւորաբար իրեն կը պարտէր. յետոյ նկարագրեց նաև ձախորդութեան օրերը, երբ Օսմ. բանակները ընկճուեցան իրենցմէ շատ աւելի զօրեղ ոյժերու տակ և թշնամին հասաւ Պոլսոյ դուռը. տէրութիւնը բռնադատելով ստորագրելու Սան Սթէֆանոի Դաշնագիրը, «պիր մէնսկպուր շէ», ինչպէս կը կոչէր զայն: Ծերունի նախարարապետը անցաւ Պէրլինի Դաշնագրին, և շատ նուրբ ու անփփա սրամտութեամբ յայտնեց թէ ինչպէ՞ս ծնաւ 23րդ յօդուածը: «Մեզի համոզեցին թէ, ըսաւ, իսկական հաւասարութիւն չկայ երկրին մէջ. և թէ ատիկա պատճառ կ'ըլլայ որ քրիստոնէայ տարրերը կարգ մը նեղութեանց են-

(*) Երբ շաբաթ մը վերջ կառավարութիւնը որոշեց դրօշի տակ կոչել համայսարանական ուսանողները, հազիւ 10-20 հոգի միայն ներկայացան. այդ օրուան իրատուութիւնը պատրաստ են իրենց արիւնին վերջին կաթիլը թափելու, շուտով մոռուած էր:

թարկուին. կ'երեւայ թէ մեր պետական մարդոց ըմբռնած հաւասարութիւնը և տէրութեանց հասկցած հաւասարութիւնը բոլորովին տարբեր բաներ էին, որովհետեւ ճիշտ այդ միջոցին ուր տէրութիւնները ամէնէն աւելի կը պնդէին թէ հաւասարութիւն չկայ, մեր պետական մարդիկն ալ ամէնէն աւելի կը պոռային թէ երկրին մէջ հաւասարութիւնը կատարեալ է: Զօրաւոր՝ տէրութիւններն էին. և անոնց խօսքը առաջ քալեց. արդիւնքը եղաւ 23րդ յօդուածը, որուն հիման վրայ պատրաստուեցաւ 1880ի Նահանգային Օրէնքը: Վերջէն սակայն, տէրութեան բարւոք վարչութեան ընդունուած եղանակները կարելի չեղաւ հաշտեցնել այդ օրէնքին հետ. տեսնուեցաւ որ օգուտէ աւելի վնաս առաջ պիտի գայ, և թողուեցաւ անգործադրելի»: Ասիկա շիտկէ շիտակ բսել էր որ քօսան կամ երեսուն տարի առաջ «տէրութեան բարւոք վարչութեան ընդունուած եղանակներուն անհամապատասխան» այդ օրէնքը՝ քսան կամ երեսուն տարի ետք նոյնքան անհամապատասխան պիտի երեւայ երբ գործադրութեան դրուի, և թէ վաղը միւս օր նորէն մէկ կողմ պիտի նետուի: Բայց փոշան շրջապատող տաք զուլնները չկրցան այս նրբութիւնը հասկնալ. ինքզինքնին «հայրենիքին ծաղիկները» անուանող այդ համայսարանական երիտասարդներուն կարգին գտնուեցան նոյն իսկ մէկ քանի հոգի որոնք չվարանեցան աղաղակելու. «Անկցի՛ հաւասարութիւնը... մենք հաւասարութիւն չենք ուզեր...»: Հօրմէն ետք, վերջին անգամ մըն ալ խօսք առաւ Մահմուտ Մուխթար փաշա, վստահեցուց ժողովուրդը որ եթէ Կայսրութեան պատիւը վտանգուած ըլլայ, բնաւ չպիտի վարանին պատերազմ յայտարարելու, և թէ ինք էն առաջ պիտի մեկնի կռուի դաշտը, հրաժարելով իր նախարարի պաշտօնէն (*): — «Մինչեւ այն ատեն, յարեց, թողէք որ հանդարտ գլխով մեր գործին նայինք, մի՛ պահանջէք որ յայտնենք մեր ընելիքը. մենք սահմանադրական դահլիճ մըն ենք, լոկ երեսփոխանական Ժողովին պատասխանատու. վաղը միւս օր՝ երբ ընտրութիւնները կատարուին և Սորհրդարանը գումարուի, այնտեղ կուտանք մեր գործերուն հաշիւը»:

Տակաւ առ տակաւ ցուցարարներուն մէջ վհատութեան մօտեցող թուլութիւն մը առաջ եկած էր. կային տակաւին անհաշտեք որոնք չէին ուզիւր կլիկ երկու Մուխթար փաշաներուն պլորած դեղահատերը, բայց յայտնի էր որ Պապը Ալիի բակին մէջ համախորուած զինուորական ոյժը ջլատած էր իրենց խանդը: Միւս կողմէ՝ Դահլիճին համակիրներ ալ փութացած էին խմբուիլ նախարարապետին շուրջը, և արդէն իսկ մէկ քանի կծու բառեր փոխանակուած էին երկու կողմերուն միջեւ: Համայսարանական-իթիհատական հատուածը քայքայուեցաւ, և Մուխթար փաշայի ներս քաշուիլը վերջ տուաւ ցոյցին: Գուցարարները, Համայսարանին դրօշը առջեւնին ձգած, սկսան մեկնիլ Պապը Ալիէն, «կեցցէ՛ պատերազմը», «Անկցի՛ 23րդ յօդուածը», «Միջամտութիւն չենք ուզեր», աղա-

(*) Մահմուտ Մուխթար փաշա իր խոստման հաւատարիմ մնաց. հազիւ թշնամութիւնները սկսած, փութաց կռուի դաշտը, ուրկէ քիչ ետքը Պոլս պիտի բերուէր Թանրապէս վերաւորուած:

ճիկ տէրութեանց պահանջման առջև, ինչ որ ժողովուրդը պիտի հանէր իրեն դէմ. իսկ եթէ չուզէր ճիկ, այդ պարագային Պալքանեան Դաշնակիցները պիտի ելլէին իրեն դէմ և պատերազմը նորէն անխուսափելի պիտի դառնար: Ըստ բախտի կը խաղցնէր մէկ կողմէ տէրութիւնները, միւս կողմէ ալ ժողովուրդը, առանց տակաւին ելլց հնար մը գտած ըլլալու: Ինք չէր որ կը վարէր դէպքերը. դէպքերն էին որ զինքը պիտի վարէին: Իր յոյսը դրած էր այն դիմումին վրայ՝ զոր աւստրիական և ռուսական կառավարութիւնները, Պ. Բուանքարէի ծրագրին համեմատ և ի դիմաց բոլոր տէրութեանց, պիտի կատարէին միանգամայն թէ՛ Սօֆիայի, թէ՛ Պէլիրատի, թէ՛ Աթէնքի և թէ՛ Չէթինեկի դաշլիճներուն մօտ, խաղաղութիւնը անվթար պահելու համար: Անգամ մը որ Պալքանեան Պետութիւնները զսպուէին, Բ. Դուռը հարկաւ միջոց մը պիտի գտնէր տէրութեանց պահանջը թուրք ժողովրդային արամադրութեան հետ հաշտեցնելու և վտանգը հեռացնելու համար:

Սակայն նորէն դէպքերը զինքը վարեցին: Համալսարանական ուսանողներու ցոյցին յաջորդ օրը, Սեպտեմբեր 25ին, Գարատաղ պաշտօնապէս պատերազմ յայտարարեց թուրքիոյ դէմ: Պալքանեան Դաշնակիցները՝ տէրութիւնները կատարուած իրողութեան մը հանդէպ դնելու և անոնց կատարելիք զի՛ումը ապարդիւն դարձնելու համար, Գարատաղը կը մղէին բանալու պատերազմի շրջանը. նոյն ատեն՝ տենդագին, գրեթէ հեռասպառ վտանգութեամբ մը կը լրացնէին իրենց զինուորական համախմբութիւնն ու պատրաստութիւնները: Այլևս յիմարութիւն էր խաղաղութեան վրայ խորհիլը: Պատերազմի յայտարարութիւնը Դրան ծանոյց Գարատաղի գործակատար Պ. Բլամէնաց, ցերեկուան մօտ երթալով Բ. Դուռ, ուր նախարարները նիստ գումարած էին. Պ. Բլամէնաց ուղեց տեսնել արտաքին գործոց նախարար Նորատունկեան էֆէնտին, որ անմիջապէս զինքը ընդունեց իր պաշտօնատան մէջ: Կարճ խօսակցութենէ մը վերջ՝ Գարատաղի գործակատարը Նորատունկեան էֆէնտիի յանձնեց պատերազմի յայտարարութիւնը պարունակող հետեւեալ ծանուցագիրը. —

«Վսեմ. Տէր,

«Կը ցուեմ որ Գարատաղի արքայական կառավարութիւնը ի զուր սպառած է բոլոր բարեկամական միջոցները՝ հաշտարար կերպով լուծելու համար այն բազմաթիւ թիւրխմացութիւններն ու վէճերը որոնք անվերջ կերպով կը ծագին Օսմանեան կառավարութեան հետ:

«Համոճայն Օգոստ. Վեհապետիս՝ Ն. Վ. Նիքօլա Ա.ի արտօնութեան, պատիւ ունիմ հաղորդելու Ձերդ Վեհմութեան թէ այսօրուընէ սկսեալ Գարատաղի արքայական կառավարութիւնը ամէն յարաբերութիւն կը խզէ Օսմ. կառավարութեան հետ, Գարատաղեաց զինուց բախտին ձգելով ճանաչողութիւնը որքան իրենց իրաւունքներուն, այնքան նաև Օսմ. տիրապետութեան տակ գտնուող իրենց եղբայրներուն իրաւունքներուն, որոնք դարերէ ի վեր անտեսուած են:

«Կը մեկնիմ Պոլսէն:

«Արքայական կառավարութիւնը Չէթինեկի Օսմ. ներկայացուցչին պիտի տայ իր անցագիրները:

«8 Հոկտ. /25 Սեպտ. 1912

ԲԱՍՏԵՆԱՅ»

Նորատունկեան էֆէնտիի համար նորութիւն մը չէր այս ծանուցագիրը, որուն նկատմամբ նախորդ գիշերն իսկ տեղեկութիւն ստացած էր Չէթինեկի Օսմ. ներկայացուցիչ Մուխթար պէյէն: Իր սուլորական պաղարիւնութեամբ՝ արտաքին գործոց նախարարը ընդունեց Պ. Բլամէնացի ծանուցագիրը, յայտարարելով որ Օսմ. կառավարութիւնը միշտ բարեացակամ եղած է իր դրացիներուն հանդէպ, բայց քանի որ հիմայ Գարատաղ կը փորձէ թշնամական ընթացք մը բռնել թուրքիոյ դէմ և նոյն իսկ պատերազմ կը հռչակէ, Բ. Դուռը կ'ընդունի այս հրաւերը և հայրենիքին պատիւն ու Օսմ. ազգին նուիրական իրաւունքները բարձր պահելու համար կը ձեռնարկէ հարկ եղած միջոցներուն: Պ. Բլամէնաց նոյնքան պաղարիւնութեամբ ականջ տուաւ այս պատասխանին և պահանջեց իր անցագիրները որոնք արդէն պատրաստ էին: Գարատաղի գործակատարին մեկնելէն անմիջապէս վերջ նորատունկեան էֆէնտի փութաց ժողովի և իր պաշտօնակիցներուն յանձնեց ծանուցագիրը: Նախարարաց Սորհօրդը՝ պատերազմական նախարարին բացատրութիւնները և Օսմ. բանակին կազմակերպութեան մասին տրուած հաւաստիքները լսելէ վերջ, որոշեց պատերազմը: Ներքին գործոց նախարարը իսկոյն բոլոր կուսակալներուն հեռագրեց պատերազմին հռչակումը և Գարատաղի ծանուցագրին պատճէնը, որպէս զի Օսմ. ժողովուրդին հաղորդուի: Արտաքին գործոց նախարարն ալ Օսմ. դեսպաններուն շրջաբերական-հեռագրով մը ծանուց թէ Օսմ. կառավարութիւնը, հակառակ զինքը սողորդ խաղաղասիրական դիտաւորութիւններուն, իր նուիրական իրաւունքները պաշտպանելու համար ստիպուած է պատերազմի, ամէն պատասխանատուութիւն թողով նախարարակին: Ուրիշ հեռագիր մը, ուղղուած Չէթինեկի Օսմ. գործադատարին, կը հրամայէր չուտով մեկնիլ Գարատաղի մայրաքաղաքէն, պաշտօնական թուղթերը յանձնելով տեղւոյն գերմանական ներկայացուցչին:

Քիչ ետքը գումարուեցաւ զինուորական խորհուրդ, նախագահութեամբ պատերազմական նախարար Նազըմ փաշայի, զինուորական անհրաժեշտ կազմակերպիչներով զբաղելու համար: Սորհօրդին կը մասնակցէր նաև Մահուտ Շէվքէթ փաշա: Լուր եկած էր Պոլիս թէ Գարատաղցիք և Մալխօրները Շքօտրայի լիճին մէջ գրաւեր են քաղաք տարուող մէկ քանի մակոյկ ռազմավթերք, սպաննելով մակոյկին մէջ զբոսող զինուորները: Ուրիշ հեռագիրներ կը յայտնէին աւելի կամ նուազ կարեւոր ընդհարումներ: Իսկ անմեղավերջին տեղեկութիւններ կը ծանուցանէին պատերազմական անդրանիկ գործողութիւնը, Պէրանայի պաշարումը Գարատաղեաց կողմէ: Պատերազմական նախարարութիւնը անմիջապէս հրամայեց Շքօտրայի ընդհ. հրամանատարին որ անցնի Սև Լերան սահմանը և քալէ Չէթինեկի վրայ: Մինչև այն ատեն՝ Պ. Բլամէնաց Գարատաղցի ատաղձագործի մը միջոցաւ վար առնել տուած էր գործակատարական շէնքին զինանշանը, և թուրքիա գտնուող Գարատաղեաց պաշտպանութիւնն ու պաշտօնական թուղթերը Ռուսիոյ դեսպանատան յանձնելէ վերջ մեկնած էր Պոլսէն: Գրեթէ նոյն միջոցին կառավարութիւնը կը հրամայէր Բերայի Միւթէսարըթութեան անմիջապէս պատրաստել Պոլիս գտնուող

Գարատաղցիներու ցուցակը, որպէս զի վտարուին Օսմ. հողէն: Իրիկուան կողմ՝ հեռագիրը կը հաղորդէր Անգլիոյ արտաքին գործոց նախարար Սըր Էտուար Կրէյի մէկ ճառը, որ այլևս պատերազմը անխուսափելի կը նկատէր Թուրքիոյ և ընդհանուր Պալքանեան Զինակցութեան միջև, յայտնելով որ տէրութիւնները մէկ բան միայն կրնան ընել ատկէ ետքը, — այն է պատերազմը սահմանափակել Պալքանեան մէջ:

«Հեղե՛ շիֆիւր...», կը գրէր յաջորդ առտու Թանին... Խօսքը թընդանօթինն էր այլևս: Իթիհատական օտկանը կ'աւաղէր միայն որ Գարատաղ տակաւին շատ պզտիկ պատառ մըն է Թուրքիոյ կրտին համար...



Ն Ա Ջ Ր Մ Փ Ա Շ Ա
Հանգուցեալ Սպարապետ Օսմ. բանակին



ԳԼՈՒԽ ԺԷ.

ԹՈՒՐԿԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՈՅԺԸ

Սեպտեմբեր 25ի ցերեկին՝ Գարատաղի պատերազմի յայտարարութեան լուրը մեծ իրարանցում առաջ բերաւ Պոլսոյ մէջ: Տակաւին մինչեւ այն առտուն շատեր լաւատես էին. բայց նոյն իսկ անոնք որոնք պատերազմը անխուսափելի կը նկատէին լնաւ չէին յուսար որ չորս դաշնակիցներէն նախայարձակը կ'ըլլայ փոքրիկ Գարատաղը. պահ մը անանկ կարծուեցաւ թէ Պ. Բլամէնաց միայն մէկ քանի ժամ կանխած է Պալքանեան իր պաշտօնակիցները և թէ օրը իրիկուն չեղած՝ Պուլիարական, Սերպիական և Յունական զեապաններն սլ իրեն պիտի հետեւին: Նոյն իսկ մէկ քանի փութկոտ թերթեր կը ծանուցանէին թէ բոլոր զինակիցները միահաղոյն պատերազմ յայտարարած են Թուրքիոյ դէմ: Ժողովուրդը, այս վրդովիչ լուրերուն վրայ, շուտով փողոց թափած էր: Հետաքրքիրները մինչև Բերա ելած էին և ժամերէ ի վեր Պուլիարական, Յունական ու Սերպիական զեապանատուններուն առջև կեցած՝ զինանշաններու վար առնուելուն կը սպասէին: Բայց ամէնէն աւելի խիտ բաղմութիւն խոնուած էր Պապը Ալիի պողոտային երկայնքը, թերթերու խմբադրատանց առջեւ, որոնց դրան մօտ զեապուած սև տախտակներու վրայ կաւիճով արձանադրուած էին պատերազմի յայտարարութեան վերաբերող անցքերը: Կառավարական թերթ մը՝ Ալիմսառ՝ արդէն իսկ 1200 Գարատաղցիներ մեռուցած էր... սև տախտակին վրայ, ծանուցանելով փառաւոր յաղթութիւն մը, որ դարձեալ նոյն տախտակէն զատ ուրիշ սևէ տեղ դոյութիւն չէր ունեցած(*): Մէկ քանի իրավիներ որոնք հրատարակուած էին,

(*) Ամբողջ պատերազմին տեւողութեան ընթացքին Թուրք մամուլը, իրեն հետ Քաշեւով նաև Պոլսոյ տարբեր լեզուներով թերթերը, միշտ այդպէս երեւակայական յաղթանակներ արձանագրելէ չդադրեցաւ. Պուլիարները Պոլսոյ դուռներուն առջեւ


հակառակ չորս հինգ տող, և այն ալ ամէնուն ծանօթ պատերազմի յայտարարութեան լուրը միայն պարունակելուն, վայրկենաբար ձեռքէ ձեռք խլուեցան 20 վարա գնով: Կարգալ չգիտցող ծերունի թուրքեր կը կեցնէին իրալի տնեցողները, կը խնդրէին որ կարգան, և թուրք ցեղին երբեմնի յաղթանակները մտաբերելով ուրախութեամբ ու թեթևեցած կ'ընդունէին պատերազմի յայտարարութեան լուրը: Հակառակ պաշարման վիճակին, ահագին բազմութիւն կար մասնաւորաբար Պապը Ալիի շուրջը. ամէն մարդ լուր կը խնդրէր, և գրեթէ ամէնուն բերանը Պուլկարիոյ անունը կար. ան էր բուն թշնամին. լրջագոյն ու զօրեղագոյն հակառակորդը, և մարդիկ անհամբեր էին գիտնալու թէ ինչ ընթացք բռնած է Գաբատալի կողմէ պատերազմ յայտարարուելէն առդին: Պապը Ալին ձիաւոր զինուորներու ջոկատի մը հսկա լուծեան յանձնուած էր համալսարանականներու վերջին ցոյցէն ի վեր. սակայն ժողովուրդը ո՛րքէ թշնամական տրամադրութիւն չունէր. ընդհակառակը, պատերազմի յայտարարութիւնը եզած լինցած ըլլալով, սրտանց հեան էր դահլիճին և շատ ալ տրամադիր ամէն կերպով ոյժ տալու անոր: Աւէն անգամ որ ներսէն լուր կուգար ձեռք առնուած պատերազմական միջոցներու մասին, անվերջ ծափեր կը թնդային չորս կողմէն. ցոյց չկար, ոչ ալ թափօր, բայց ամէն փողոց խճողուած էր ժողովրդական հաւաքումներով. սպաները, որոնք շատ ուրախ կ'երեւային, հազիւ տեղ մը յայտնուած՝ խակոյն կը շրջապատուէին, և ամէն մարդ տեղեկութիւն կը հարցնէր անոնց՝ պատերազմին հաւանական արդիւնքին վրայ: Տարակոյս չկայ որ տրուած բոլոր պատասխաններն ալ ապահովիչ էին. վստահութիւնը չափազանց մեծ էր Օսմ. բանակին սպաներուն մէջ. աւելի պտոյտի՝ քան պատերազմի երթալու երեւոյթը ունէին(*):

Յաջորդ օրը՝ Պոլիս ճշմարիտ պատերազմական քաղաքի մը երեւոյթը ստացաւ բոլորովին: Յայտնի կ'ելեւար որ Դահլիճը այլեւս ամէն յոյս կարած էր տէրութիւններէն ու խաղաղութենէն և ինք ալ տենդագին թափով մը յանձնուած էր զինուորական պատրաստութիւններու: Կը բաւէր տեսնել փողոցներու մէջ վժլատացող զինուորական եռուղեղը՝ այդ մասին ամէն տարակոյս վանելու համար: Ի՞նչոք զինուորական կայանները կերպարանաւորուած էին մէկ օրէն միւսը: Թաքսիմի Մարզարաին հանդարտիկ հրապարակը, աւելի ճեմելավայր քան ռազմական համալսարան

էին և տակաւին թուրքական յաղթանակներուն վերջը չէր եկած: Ի պտտիւ թանկին կ'արժէ յիշատակել որ Իթիհատական օսկոնը քանիցս բողոքեց մամուլին այդ կամուրջ կուրուութեան դէմ: Ոմանք ըսին թէ ոչ այնքան ճշմարտասնորութեան, որքան կառավարութիւնը պարտութեան լուրերով դժուարութեան մատնելու համար էր ըրածը: Ինչ որ ալ ըլլայ նպատակը, սա ստոյգ է որ թանկն միշտ բացառութիւն կազմեց թուրք մամուլին մէջ:

(*) Մաքրիգիւղի մէջ՝ մէկ քանի երիտասարդ սպաներ ծիծաղներով ընդունած էին Գերման սպայի մը այն յայտարարութիւնը թէ Պուլկար բանակը աշխարհի լաւագոյն բանակին՝ Բրուսիական բանակին համարժէք է և թէ թուրքերը պէտք է այն համոզմամբ ճամբայ ելլեն որ բուն իսկ Բրուսիական բանակին դէմ կուուելու կերթան:

թեան կեդրոն, իր բովանդակ տարածութեամբ ծածկուած էր թնդանօթներով, կառքերով, ձիերով, մեծ մասամբ գրաւուած Պոլսոյ կառապաններէն և ախոռներէն, ու նաեւ վրաններով, խոտի անհատնում դէզերով, սալակներով ու պատերազմական ամէն տեսակ իրերով: Նոյն տեսարանը



Պոլիսի ժողովրդական հաւաքումները Պապը Ալիի շուրջը

նաեւ Պոլիս՝ Սպարապետութեան Դրան ընդարձակ հրապարակին մէջ, Սուլթան Պայազիտի հրապարակը և ուրիշ տեղուանք: Սիրքէճի, երկաթուղի կայարանին յանգող բոլոր փողոցներէն անցուղարձը գրեթէ անկարելի էր: Հարիւրաւոր փոխադրակառքեր և զինուորական մէկ քանի բռնաբարձ օթօմապիլները որոնք Մահմուտ Շէվքէթ փաշայի օրով գըն-

ուած էին, անընդհատ կ'երթնէէին՝ պարէն և զանազան պատե-
րազմական իրեղէններ փոխադրելով: Թուրք տարրին սովորական զան-
դազուծիւնը մտարեկերով, այս հեւասպառ փութկոտութիւնը ճշմարտա-
պէս հէքեաթոնակ, անհաւատալի բան մը կ'երեւար: Փոխադրականքերը
հազիւ կանգ առած, վայրկենապէս կը պարպուէին, և անմիջապէս վերջ
ուրիշ մը կը յաջորդէր անոր, յետոյ ուրիշ մը, և այսպէս անվերջ, մին-
չեւ իրիկուն, ու նաեւ դիշերը:

Ամէն գլխաւոր փոզոցի մէջ անպատճառ կարելի էր տեսնել մաքուր
հագուած, նոր կոշիկներով ու կազմածներով զինուորներ՝ որոնք պատե-
րազմական նախարարութեան պաշտօնատունէն և ուրիշ զինուորական
կայաններէ կ'իջնէին Սիրքէճի՝ երկսթուղի կայարանը: Անցորդներու եր-
թեւեկը դադրած էր և կառախուձերը բացարձակ կերպով յատկացուած էին
մի միայն զինուորական փոխադրութեանց: Ուրիշ ուշագրաւ տեսարան
մը՝ նոյն փոզոցներուն մէջ՝ շոգենաւերով, ցամաքէն, փոխադրութեան
բոլոր միջոցներով հետզհետէ մըջիւններու պէս Պոլիս թափող զինուոր-
ցուներն էին, ամէնքն ալ խեղճ ու կրակ գեղջկական սարազներով, ա-
ռանց կոշիկի, առանց գլխանոցի, հացի խոշոր պարկեր կռնակին: Խեղ-
ճերը գուշակեր էին կարծես թէ քիչ կտքը՝ Պուկարներէն անհամեմատ
աւելի անողորմ թշնամի մը, անօթութեան դէմ պիտի ստիպուին կռուիլ,
և կրցածուն չափ հաց առած էին իրենց հետ: Նկուն, գրեթէ ողորմուկ
երեւոյթով այս գեղջուկները, որ մը վերջ բոլորովին անձանաչելի կը
դառնային զինուորական համազգեստին տակ, կը ստանային ամենաառ-
նական երևոյթ մը, ոյժի և ինքնավստահութեան կենդանի պատկերնե-
րու կը վերածուէին, անսպասան վստահութիւն գոյացնելով պատե-
րազմին արդիւնքին նկատմամբ. կարելի չէր երեւակայել թէ այդ աս-
տիճան արի տարրերէ բաղկացած բանակ մը կրնայ երբեք պարտուիլ: Գոռ
ծափեր կը թնդային անոնց անցած ատենները. և ծափերուն կ'ընկերա-
նային անսահման կերպով աւելի գոռ աղաղակներ՝ երբ իւրաքանչիւր
զուամարտակի կանոնաւոր շարքերուն մէջէն յանկարծ կը յայտնուէր կար-
միր կաշիէ պահպանակի մէջ առնուած, կամ իր ոսկեթել եղբրաղարդով
ձայքերը հովին պարզած դրօշը: Կային դրօշներ՝ որոնք անցեալին մէջ
յազթութեան առաջնորդած էին իրենց հետեւող զինուորները, ինչպէս
ցոյց կուտային ձողերուն կատարը կախուած պատուանշաններ: Խանդա-
վառութիւնը մեծ էր նաև Թրքուհիներուն քով. կառքերու մէջէն կէս
մէջքով դուրս կախուած, իրենց մանրիկ ձեռքերը կը շարչրկէին անընդ-
հատ ծափերով, և կամ իրենց մետաքսեայ անուշահոտ թաշկինակները,
— ասեղնագործութեան պղտիկ գլուխ-գործոցներ. — կը ճօճէին՝ «Եաչայրն,
շանընըզ արքարն» (Ապրիք, փառքերնիդ աւելնայ) պուստով:

Պոսոյ բոլոր կէտերուն վրայ՝ զօրքն ու ժողովուրդը նոյնացած էին
իրարու հետ: Զինուորական մեծ կայքերու, գլխաւոր զօրանոցներու ընդ-
հանուր թոհ ու բոհին մէջ անոնք իրար կը սրտապնդէին, ոմանք նաև
իրարու խնդակցութիւն կը յայտնէին: Շատ զինուորներ, Պոսեցիները
մանաւանդ, իրենց ազգականներէն չըջապատուած՝ կ'ողջազուրուէին ա-

նոնց հետ: Ինչերը տխուր էին. զինուորական ցոյց քան պատերազմ ընե-
լու տխուր ու վնասակար հաւատքը հետզհետէ աւելի կը տարածուէր ա-
նոնց մէջ: Զօրանոցներու առջև, Թուրք կիներու առնթեր, բազմաթիւ
էին նաև քրիստոնեայ կիները, որոնք իրենց զինուոր զաւակներուն վաշ-
տին մեկնելուն կը սպասէին, վերջին նայուածք մը, ամէն զեղում, ա-
մէն զգացում իր մէջ պարփակող, յոյժ բայց անսահման կերպով խօսուն
գերագոյն նայուածքը փոխանակելու համար: Ասոնց մէջ՝ լացողները շատ
էին. ոմանք իրենց մէկ հատիկ զաւակը կը դրիէին, ոմանք նշանած մը,
աժուսին մը. նոյն ցախ քոյրերն էին ամէն ազգէ կիներն ալ անխտիր,
գրեթէ իրարու վշտով կը մխիթարէին ինքզինքնին. տառապող սիլտը
չուտով կը սրտապնդուի, երբ իրեն պէս տառապող ուրիշ սրտերու ցա-
ւազին զարիւր կը զգայ իր մօտ: Ա. ելի տխուր էին այն կիները, որոնց
զաւակը կամ սիրելին առած տարած էին յայտնի չէ թէ ուր. չէին գի-
տեր թէ ո՞ր գացած է, ո՞ր կողմ, ո՞ր զօրանոցը կը գտնուի. և ի վեր
կը հարցնէին հանդիպողին, հետք մը գտնելու. այդ հետքին ետեւէն սու-
րալու, վերջին անգամ մըն ալ իրենց զուակը տեսնելու համար:

Եղբրայանին քով նաև զուարճալին, — ձիերու ու խարազանի
որսը, յանձնուած ընդհանրապէս տգէտ զինուորներու, որոնք նոյն իսկ
զինուորական իշխանութեանց կողմէ տրուած արտօնադիրները չէին ուղի
ձանչնալ, կարողալ չզխոնալնուն: Կառքին մէջ յոճախորդ ըլլար կամ ոչ՝
իրենց համար նոյնն էր. կառքը կը ձգէին փոզոցին մէջտեղը. ձիերն ու
կազմածները տանելով: Եւրոպական զեպանատան մը զինուորական կը-
ցորդը որ Թարապիայէն Բերա կուգար կնոջը հետ, նոյն բախտին ենթար-
կուած էր, այր ու կին ստիպուած էին երեք քառորդ ժամուան ճամբայ
հետիտան կտրել, Բերա հասնելու համար: «Գրաւուած ձիու տէրերուն
ձեռքը կուտային տարտամ թուղթ մը որուն շնորհիւ, տարտամ թուա-
կանի մը մէջ, տարտամ գումար մը պիտի կարենար ստանալ^(*)»: Գրաւ-
ուած էին նաև թրամուկի ձիերը. ինչ որ աստիճան մը աւելի մեծցուցած
էր երթեւեկի դժուարութիւնները: Զիւռ այս պակասը զգալի եղաւ մա-
նաւանդ եւրոպական թերթերու թղթակիցներուն, որոնք, պատերազմի
դաշար մեկնելու համար կենդանիի պէտք ունէին: Իլլիւստրաւիօնի թըղ-
թակից Պ. Ժօսեթ Ռէյմօն, լսած ըլլալով որ Յոյն մը ձի մը պահած է և
տրամադիր է դայն ծախելու. շիտակ անոր կը դիմէ ձին գնելու:
Յոյնը, հազար ու մէկ վարանումներէ վերջ, խանութի մը ներքնամասը
կ'առաջնորդէ զայն. այնտեղ՝ ուրիշ երկու հոգի րրիշ մը առնելով զգու-
շութեամբ կը բանան հողի տակ ծածկուած կախարիշ մը որ գեանափորի
մը մուտքն էր: Յոյնը գրեթէ թաղած էր իր ձին, ինչպէս իր նախահայ-
րերը իրենց գանձը կը թաղէին:

Ամբողջ երկու շաբաթ Պոլիս այս զինուորական տեսարանները պարզեց
անընդհատ: Զօրահանութիւնն ու զինուորական առաքույնները շարունակ-
ուեցան անթերի կանոնապահութեամբ մը որ գրեթէ անօրինակ բան էր

(*) Au chevet de la Turquie, par Stéphane Lauzanne.

Թուրք բանակին տարեգրութեանց մէջ : Ամէն օր 15,000 զինուոր Ասիայէն Եւրոպա կ'անցնէին . ոմանք երկաթուղիով կու գային մինչև Հայտար փաշա^(*), կը լեցուէին մալուաներու մէջ, կ'անցնէին Պոլիս, և առանց դադար առնելու՝ հազուելով ու իրենց կազմածները ընդունելով կը մտնէին Սիրքէճի կայարանը, անմիջապէս մեկնելու համար դէպի Թրակիոյ մէջ գործող Արեւելեան բանակը : Ուրիշներ կանգ կ'առնէին Նիկովիոյ, և անկէ շոգենաւորով կ'ելլէին շիտակ Սան Սթէֆանօ, ուր ահագին բանակ մը ամէն օր կը կազմուէր ու կը մեկնէր երկաթուղիով, տեղի տալու համար ուրիշ բանակի մը որ նոյնպէս պիտի մեկնէր օր մը ետքը : Պոլսէն անցնող իւրաքանչիւր զինուոր ստաբէն մինչև գլուխը նոր հագուած էր, կը կրէր խալի համազգեստ և մոխրագոյն վերարկու, ինչպէս նաև շայաֆէ տաք ֆեֆիէ մը . ունէր փոկէ պայուսակ մը, փամփուշտի զրպանակներ և կտակէ նոր պայուսակ մը, որուն մէջ սակայն ուտելիքի քանակութիւնը շատ վտիտ էր : Ինչպէս դիտել կուտայ Մաքհնի թղթակիցը, թուրք զինուորին համար անսովոր այս նոր հագուածն ու կազմածները ամբարուած էին շորհիւ Իթինատի արիւսակութեան շրջանի պատերազմական նախարարին, Մահմուտ Շէվքէթ փաշայի : Հաղիւ պաշտօնի կոչուած, փաշան աւրող ամիս մը փակուած մնացած էր իր պաշտօնատան աշխատութեան խուցին մէջ . հոն կ'ուտէր, հոն կը պառկէր ու կը շրջէր . ի դուր զինքը Նախարարաց Սորհրոյ նիստերուն կը հրաւիրէին : — «Այնտեղ չափազանց կը խօսին և ան ալ բոլորովին աննշան բաներու վրայ», — կ'ըսէր՝ իր մերժումը արդարացնելու համար : Կարելի չէր ըլլար նաև զինքը Սորհրոյարան բերել : — «Երբ դրամի պէտք ունենամ, այն ատեն միայն պիտի երթամ հոն» — կ'առարկէր : Իրօք խնդրեց այդ դրամը, նոյն իսկ շատ դրամ խնդրեց : — «Ի՞նչ պիտի ընէ այսքան դրամը», կը հարցնէին չարամիտներ : Մահմուտ Շէվքէթ փաշա ուսերը կը ցնցէր անտարբերութեամբ ու կը պատասխանէր . — «Սր մը պիտի հասկնան թէ ի՞նչ կ'ընեմ դրամը» : Իրաւունք ունէր, զօրահանութեան օրերուն հասկըցուեցաւ թէ ի՞նչ կ'ընէր իր խնդրած խոշոր վարկերը, որոնք երկրին հասոյթներուն մեծագոյն մասը կը կլանէին : Բայց վերջապէս դուրին բան չէր աւելի քան 250,000 հոգիի համար հազուստ ու կազմած ամբարել : Էն առաջ մեկնող զինուորներուն ոչինչ պակասած էր . քիչ առ քիչ՝ զինուորական շտեմարանները սկսած էին պարպուել, և ահա տակաւ երևան ելան Համիտեան օրերու զինուորներուն կապոյտ շայաֆէ ողորմուկ համազգեստներն ու վրանոցները . օր պիտի դար ուր անոնք ալ պիտի պակսէին :

Բայց աղէկ հազուած ըլլային թէ գէշ, զինուորները բնաւ չէին տըրտընջար . «զրօտական պտոյտ»ը զոր պիտի ընէին դէպի Սօֆիա և այլուր, չափազանց հրապուրիչ էր ինքնին՝ ամէն զրկանք իրր հեշտանք ընդունիլ տալու համար պատերազմի այդ նախօրեակին մէջ, ուր իրենցմէ ոչ ոք


(*) Անատոլի երկաթուղիի գիծերուն վրայ ալ դադարած էր ճամբորդներուն երթելու և կառախուղերը յատկացուած էին միայն զինուորական փոխադրութեանց :

մտքէն կ'անցընէր թէ պատմութեան արձանագրած ամէնէն ահաւոր աղէտներէն մէկուն զոհերը պիտի դառնան քիչ ետքը : Անոնք ինքզինքնին կ'ուտէին Սան Սթէֆանօի բանակետղին մէջ, անհամբեր վայրկեան մը առաջ մեկնելու պատերազմի դաշտը : Մաքհնի թղթակիցը որ մասնաւոր թոյլտուութեամբ գացած էր Սան Սթէֆանօ, հետեւեալ կերպով կը նկարագրէ այնտեղ պարզուած տեսարանը . —

«Երբ հասայ բանակետղը որ կայարանին կիցը կը գտնուէ, տեսայ զինուորներ որոնք կամ սպայի մը շուրջը խմբուած տեսական ծանօթութիւններ կը ստանային պատերազմի մասին, կամ իրենց կաշեսարքը կը շտկէին : Կորովի և ամրակուռ մարդիկ էին, վերէն վար նոր հագուստներով, ճիշդ անոնց պէս զորս տեսած էի Պոլիս՝ Սիրքէճի մէջ : Մօտեցայ անոնցմէ մէկուն և սկսայ զինքը հարցափորձել . — «Ո՞ր կէ կու գաս» : — «Էնկիրիէն» : — «Քանի՞ օրէն հոս եկար» : — «Եօթ օրէն» : — «Շատ զինուոր մնացի՞ն այնտեղ» : — «Մ'ի, այո՛, հազարներով և հազարներով» : Ու զինուորը ձեռքի շարժումով մը անջրպետին անսահմանութիւնը ցոյց կուտայ : — «Ի՞նչ օրական կը ստանաս» : — «Երեք դրուշ» : — «Կանոնաւորապէս կը վճարե՞ն» : — «Շատ կանոնաւոր կերպով, հիմայ ստացայ նորէն» : — «Ե՞րբ կը յուսաս Էսիրնէ վերադառնալ» : — «Երկու ամիսէն, պտոյտ մը ընելու համար միայն եկած ենք այս կողմերը» : — «Անդին մնացած բաներ չկա՞ն զորս կարօտցած ըլլաս» : — «Նուագածունները միայն կարօտցած եմ, բայց շուտով հոս կուգան, անոնց պէտք պիտի ունենանք՝ Պուլկար աղջիկները պարել տալու համար» : Այդ միջոցին խոշոր շարժում մը տեղի ունեցաւ : Մեկնելու պատրաստ կառախուղ մը սկսաւ սուլել . իսկոյն անոր մօտեցայ, կառախուղը ունէր վաճառքի յատուկ տասնըհինգ վակօններ . որոնցմէ չորսը կամ հինգը բաց էին ու միւսները գոց : Իւրաքանչիւր վակօնի վրայ՝ ֆրանսերէն և թուրքերէն միւսները գոց : Իւրաքանչիւր վակօնի վրայ՝ ֆրանսերէն և թուրքերէն գրուած էր «35 մարդ» . բայց իրապէս անոնցմէ ամէն մէկուն մէջ 60 կամ 70 մարդ կար : Ամէնքն ալ լեցած էին ճաթեղու աստիճան, անակ որ վերջէն մտնողներուն սրունքները դուրսը կը մնային, և ստիպուած էին եզերքին վրայ ինքզինքնին հաւասարակշռութեան մէջ պահել : Հաւառակ ատոր սակայն, մարդիկը տեղաւորուեցան կրցածուն պէս, և երբ անոնցմէ վերջինը վակօն մտաւ, կառախուղը ճամբայ ելաւ : Այն ատեն՝ դէպի երկինք բարձրացան կրկին աղաղակներ՝ մեկնողներուն ու մնացողներուն, կառախուղին վրայիններուն և բանակետղը գտնուողներուն կողմէ : Ու քանի՞ կ'երթար այնքան համատարած կը դառնար այդ աղմուկը՝ ճիշդ այն շաչիւնին պէս զոր ծովը կը հանէ փիլին վրայ : Ատոր նման ո՞ճիշդ այն շաչիւնին պէս զոր ծովը կը հանէ փիլին վրայ : Արձակուրդի չինչ լսած էի . և ատիկա ուրախութեան աղաղակ մըն էր : Արձակուրդի համար մեկնող դպրոցականը, կամ ծառայութեան շրջանը լրացնելէ վերջ արձակուող զինուորը աւելի պայծառ և աւելի անկեղծ ուրախութեան աղաղակ մը չպիտի կրնային արձակել : Յետոյ, մինչդեռ վերջին վակօնին կարմիր լապտերը կ'անհետանար հեռուն, ամբողջ բանակետղը կրօնական լուութեան մը մէջ ինկաւ» :

Եւ շոգենաւուն ու երկաթուղին ամէն օր նոր մարդակոյտեր կը զրկէին


‘այնտեղ’ մեկնողներուն տեղը լեցնելու համար: Բերայի կողմը, գիշերուան ընթացքին բազմիցս յանկարծակի կը լսուէր այն գոռ, կէս եղերական, կէս զուարթագին կանչը որ Սան Սթեֆանոի մէջ այնքան խոր տպաւորութիւն



Սան Սթեֆանոյի շուկայի տեսարանը

մը գործած էր Մարիսի թղթակցին վրայ: Նոր Պոլիս ժամանած և զորանոցները առաջնորդուող զինուորներն էին որոնք բարբարիկ ազդակներով կը սպառնային թշնամիի մը զոր զժրատարար շատ գէշ կը ճանչնային: Ապշեցուցիչ բան էր սովորաբար թշուառ կեանքի մը լծկանները եղող,

և տուն, տեղ, միջեկներ, արտ ու ցանք երեսի վրայ թողած այդ մարդոց արտայայտած խանդավառութիւնը պատերազմի մը համար, որուն մէջ յաղթական ըլլային թէ պարտուէին, առաջին վնասուողները միշտ իրենք



Սան Սթեֆանոյի համալսարանի քարտեզը, որտեղ տեսնուի Սան Սթեֆանոյի քաղաքը, Սան Սթեֆանոյի քաղաքը, Սան Սթեֆանոյի քաղաքը, Սան Սթեֆանոյի քաղաքը

պիտի ըլլային, քանի որ իրենց ցանքը, իրենց հունձքը, իրենց գոյութեան միջոցները կը փճանային անդին: Ինչի՞ վերագրել այդ խանդավառութիւնը. — առհաւուրեան, հայրենասիրութեան թէ կրօնական զեղծան:

Թուրք հողին այս ընդհանրական զգացմանց երեքին ալ վառարանն է ինքնին :

Ինչ ոյժ կը ներկայացնէր Թուրքիա՝ պատերազմի սկզբնաւորութեան օրերուն : Ժէօն-Թուրքերը , իշխանութեան գլուխ անցնելուն պէս , իրենց հոգածութեան գլխաւոր , գրեթէ միակ առարկան դարձուցած էին բանակը : Ամէն բան կը ղոճէին անոր համար , նոյնիսկ հանրային կրթութիւնը , որ սակայն վերականգնութեան աւելի ապահով և հիմնական միջոց մըն էր : Համիտի օրով քայքայուած , ուղորմուկ բանակը վերակազմելու այդ գործը ղիւրին չէր անշուշտ , բայց վերջապէս կարելի ոչինչ կը խնայէին ատոր համար , աջակցութեամբ Պօն տէր կօյց փաշայի հրամանին տակ գործող գերման մարդիչներու : Բանակին մէջ կար մանաւանդ կարգապահութեան պակաս , և գերման մարդիչները յաճախ ստիպուած էին տարապայման խստութեամբ վարուիլ զինուորներուն հետ , զանոնք կարգի կանոնի բերելու համար : Նոյնիսկ իրենց մէկը սպաննուեցաւ ալպանացի զինուորէ մը , որուն իր թաթին ծանրութիւնը զգացուցած էր մարզանքի միջոցին : Բանակին վերակազմութեան համար կազմուեցաւ շատ լաւ ծրագիր մը , որ հետեւեալ վիճակին կը վերածէր Կայսրութեան զինուորական զօրութիւնը . —

Ընդհանուր զինուորական կազմը բաժնուած է երկու մասի , որոնցմէ առաջինը միայն կը ծառայէ գործօն բանակին մէջ :

Գործօն բանակը (Նիզամ) ունի երկու մաս :

Ա . մասը կը բաղկանայ 21—23 տարեկաններէ :

Բ . մասը՝ 16—28 տարեկաններէ , որոնք կը կը կազմեն գործօն բանակի պահեստը (Իհիթյաթ) :

Բուն պահեստի բանակը (Բեճիֆ) կը կազմեն գործօն բանակի Ա . մասին մարդիկը՝ 30—38 տարեկան և Բ . մասին մարդիկը՝ 21—38 տարեկան : Բ . մասին մարդիկը 6—9 տարի կը ծառայեն գործօն բանակի մէջ , իսկ ընդհանուր ըէտիֆները պէտք է ամէն տարի մէկ ամիս մարզանք կատարեն (*) :

Զինուորական ընդհանուր կազմին մէջ է նաև երկրապահ բանակը (Մուսրահֆըր), որուն մաս կը կազմեն 39—40 տարեկան բոլոր ըէտիֆները :

Օսմ . բանակին հետեւակազօրքը կը բաղկանայ՝

Ա . Գործօն բանակի 130 Նիզամիէ զօրագունդերէ . իւրաքանչիւր զօրագունդ կազմուած է երեք վաշտերէ . իւրաքանչիւր վաշտ՝ չորս զօրախումբերէ : Վաշտերէն երրորդը յաճախ լրացուցիչ վաշտ մըն է :

Բ . Ինը որսորդ (Նշամնը) զօրագունդերէ , որոնցմէ իւրաքանչիւրը կազմուած է երկու վաշտերէ և լրացուցիչ վաշտէ մը :

Գ . Քսաներկու սահմանապահ զօրախումբերէ . եօթը՝ պուլկարական

(*) Օրէնքին այս տրամադրութիւնը սակայն չի յարգուիր , և ծառայութեան ժամանակահատիցները ընդհանրապէս որոշուածէն չափազանց աւելի կենդանաւորուին :

սահմանազխուեն վրայ , հինգը սերպիականին , երկուքը աւստրիականին , երեքը Սև Լերան , հինգն ալ յունականին վրայ :

Դ . Գնդաձիւրներու (mitrailleuse) եօթը զօրախումբերէ , որոնցմէ իւրաքանչիւրը երկուքական գնդաձիւրով երկու հատուած ունի :

Հեծելազօրքը կը բաղկանայ՝

Ա . Նիզամիէ 35 զօրագունդէ , իւրաքանչիւրը 5 հեծելախումբով :

Բ . Բէտիֆներու 12 լրացուցիչ զօրագունդէ , իւրաքանչիւրը 4 հեծելախումբով :

Հրետազօրքը կը բաղկանայ՝

Ա . Կիսհեծեալ 30 հրետաձիգ զօրագունդէ (*). իւրաքանչիւր զօրագունդ կը բաղկանայ 2 դասակէ . իւրաքանչիւր դասակ ունի 3 հրետաշարք :

Բ . Երկու ութակարճակ զօրագունդերէ , իւրաքանչիւրը վեց հրետաշարքով :

Գ . Վեց հեծեալ զօրագունդէ , իւրաքանչիւրը երեք հրետաշարքով :

Դ . Ինը լեռնային հրետաձիգ զօրախումբէ , իւրաքանչիւրը երեք հրետաշարքով :

Ե . Ընթ ամրոցներու հրետաձիգ զօրագունդերէ , իւրաքանչիւրը չորս վաշտով :

Ամրաշէն (génie) զօրքերը կը բաղկանան՝

Չորս վաշտէ , որոնցմէ իւրաքանչիւրը կազմուած է ճամբայ ու խրամ շինողներու երեք , և ականափորներու մէկ զօրախումբէ , ինչպէս նաև հեռաբական գործողութեանց և երկաթուղիներու սպասարկութեան յատկացուած զօրախումբերէ :

Ամրոցներու յատկացուած զինուորները կը բաղկանան՝

Ա . Ճամբայ և խրամ շինողներու երեք վաշտէ :

Բ . Ականափոր մէկ վաշտէ :

Այս ընդհանուր զինուորական ոյժին կցուած են բանակին պիտոյքներուն հսկողութեան ու բաժանման յատկացուած եօթ վաշտեր , իւրաքանչիւրը երեք զօրախումբով :

Զինուորական մեծ միութիւնները կը կազմեն 14 Նիզամիէ զօրաքանակ , որոնցմէ իւրաքանչիւրը ունի .

Ա . Հետեւակազօրաց երեք զօրաբաժին (**):

Բ . Նշանձիւրներու զօրագունդ մը , երեք վաշտով :

Գ . Հեծելազօրաց խումբ մը (2-3 վաշտով) :

(*) Կիսհեծեալ հրետաձիգ զօրագունդերու (artillerie montée) մէջ միայն թընդանօթներու առաջնորդները ձիու վրայ են . թընդանօթաձիգները կ'երթան հետիտան . իսկ հեծեալ հրետաձիգ զօրագունդերու (artillerie à cheval) մէջ թէ առաջնորդները և թէ՛ թընդանօթաձիգները ձիու վրայ են :

(**) Իւրաքանչիւր զօրաբաժին կը բաղկանայ՝ երեք զօրագունդ հետեւակազօրքէ (ամէն մէկը երեք վաշտով) , մէկ վաշտ որսորդ զինուորներէ (ընդամենը 10 վաշտ հետեւակազօրք) . նաև , 2-3 դասակ ունեցող հրետաձիգ զօրագունդէ մը , հեծելախումբէ մը , բեռնատար և առողջապահական խումբերէ :

Դ. Մէկ զօրաբանակի հերետախումբը՝ երեք լեռնային հրետաշարք ունեցող երկու դասակով և ութսակաձիգ դասակով մը .

Դ. Ամրաչէն վաշտ մը և կամուրջներու ու հեռագրական աշխատութեանց յատուկ զօրախումբեր :

Ե. Բեռնատար վաշտ մը :

Զ. Հիւանդապահներու , վիրաւորներու փոխադրութեան և դաշտային հիւանդարաններու սպասարկութեան յատուկ զօրախումբ մը (*) :

Ասոնցմէ զատ՝ 53 զօրաբաժին ընտրիներ , մեծ մասամբ հետեւակազօրաց կը գործակցին նոյն իսկ խաղաղութեան ժամանակ : Ընտրիներու իւրաքանչիւր զօրաբաժին կը բաղկանայ հետեւակազօրաց երեք զօրագունդէ (ամէն մէկը երեք վաշտ) , հեծելախումբով և հրետախումբով :

Ընդհանուր ցամաքային զօրութեանց հրամանատարութիւնը հիմնովին վերակազմուեցաւ 1911ին : Օսմ . զինուորական ոյժերը բաժնուեցան չորս գլխաւոր Օրսոններու (բանակներու) , հետեւեալ կերպով .

Ա. Օրսոն .— Կեդրոնավայր՝ Կ.Պոլիս : Տարածութեան շրջանակ՝ Թրակիան և փոքր Ասիան , սկսեալ Սեւ Ծովէն մինչև Կ. Պոլիս-Պուլկոբուրու երկաթուղին հարաւակողմը : Ա. Օրսոն կը բաղկանար Նիզամիէ Ա. Բ. Գ. և Դ. չորս զօրաբանակներէն (Ա. Կ. Պոլիս , Բ. Ռօտոսթօ , Գ. Քրք-Քիլիսէ , Դ. Էտիրնէ) : Նաեւ՝ ընտրիներու 14 զօրաբաժինէ , որոնցմէ 8ը Ա. դասէն (Նիզամիէ գործօն զօրաբանակի ծառայութիւնը լրացուցած պահեստիներէ) և 6ը Բ. դասէն (Նիզամիէ գործօն բանակի ծառայութիւնը մասամբ միայն կատարած պահեստիներէ) :

Բ. Օրսոն .— Կեդրոնավայր՝ Սելանիկ : Տարածութեան շրջանակ՝ Սելանիկ , Մանասթրը , Այտըն , մինչև Սուրիա : Բ. Օրսոն կը բաղկանար Նիզամիէ Ե. Զ. Է. և Ը. զօրաբանակներէն , (Ե. Սելանիկ , Զ. Մանասթրը , Է. Սկիւպ , Ը. Դամասկոս) . Նիզամիէ երեք անկախ զօրաբաժիններէ (22րդ Քօչանայի մէջ , 23րդ Եանեայի և 24րդ Եփօտայի մէջ) , և ընտրիներու 28 զօրաբաժինէ , որոնցմէ 13ը (Ա. դաս) Սելանիկի , 8ը (Բ. դաս) Այտընի և 7ը (Ա. դաս) Դամասկոսի մէջ :

Գ. Օրսոն (Հայաստան) .— Կեդրոնավայր՝ Երզնկա : Կը բաղկանար Թ. Ժ. և ԺԱ. Նիզամիէ զօրաբանակներէն (Թ. Էրզրում , Ժ. Երզնկա , ԺԱ. Վան) , և 8 զօրաբաժին ընտրիներէ , ամէնքն ալ Ա. դասէն :


Դ. Օրսոն (Միջագետք-Պաղեստին) .— Կեդրոնավայր՝ Պաղեստին : Կը բաղկանար Նիզամիէ ԺԲ. և ԺԳ. զօրաբանակներէն (ԺԲ. Մուսուլ , ԺԳ. Պաղեստին) և Պաղեստին մնացող ընտրիներու չորս զօրաբաժինէ , ամէնքն ալ Ա. դասէն :

Իսկ ԺԴ. զօրաբանակը որ Եէմէն (Արաբիա) կը մնար , իրեն կեդրոնավայր ունենալով Սանաան , անկախ էր այս կազմակերպութենէն :

Նոյնպէս անկախ էին 42րդ զօրաբաժինը (Տրիպոլիս) և 43րդ զօրաբաժինը՝ Հիճազի շրջանակին մէջ , կեդրոնավայր ունենալով Մէքքէն :

(*) Պէտք չէ իրարու հետ շփոթել զօրաբանակ , զօրաբաժին , զօրացումը , զօրատնային խումբ բառերը , զորս այստեղ կ'արձանագրենք իրենց կարեւորութեան կարգով , և որոնց տարբերութիւնները դիւրին է հասկնալ վերի մանրամասնութիւններէն :

Իւրաքանչիւր Օրսոնի գլուխը կը գտնուէր ընդհանուր հրամանատար մը , իր հրամանին տակ ունենալով զօրաբանակներու հրամանատարները ինչպէս նաեւ ընտրիներու և թնթանօթաձիգներու հրամանատարները : Հողային տարածութիւնը զոր կը գրաւէր Օրսոն , բաժնուած էր շրջա-



Կեդրոնական անձնագարի գտնուածքը

նակներու (զօրաբաժիններու համեմատ) և հողամասերու (վաշտերուն համեմատ) : Ընդհանուր հրամանատարը՝ ընտրիներու հրամանատարներուն միջոցաւ կը վարէր այդ զանազան բաժանումները : Զօրաբանակներու հրամանատարները կը հրամայէին զօրաբանակին գրաւած տարածութեան մէջ ,

իրենց հրամանին տակ ունենալով զօրաբաժնի հրամանատարները, զօրաբանակի հրետախումբին հրամանատարը, բժշկապետ մը և անասնաբույժներու պետը:

Քրիստոնեայ զինուորները՝ այս ընդհանուր կազմակերպութեան մէջ 23% համեմատութիւն մը միայն ունէին, իրենց ծննդավայրէն դուրս ծառայելու պայմանաւ (*):

Այս տեղեկութիւնները՝ զորս վը քաղնք եւրոպական տէրութեանց բանակներուն 1912 տարուան վիճակը ներկայացնող լաւագոյն աշխատութեան (**), իրենց ամբողջութեան մէջ կը ներկայացնեն զինուորական հսկայ ոյժ մը, կարող մղելու, նոյն իսկ յաղթականօրէն, երկարատեւ պատերազմ մը, համազօր ոյժերու հետ: Եւ սակայն, երբ պատերազմը սկսած էր անխուսափելի երեւալ, Թուրքիս տակաւին չէր լրացուցած այդ զինուորական կազմակերպութիւնը. քիչ մըն ալ աս էր որ պատճառ դարձաւ Պալքանեան պետութեանց միութեան և պատերազմին փութացման: Լաւագոյն էր Թուրքիոյ հետ չափուիլ երբ տակաւին չէր զօրացած: Նոյն բանը տեղի ունեցած էր նաև Մահմուտ Բ. ի օրով. Թուրքիա դարձեալ սկսած էր կազմակերպել իր զինուորական զօրութիւնը. բայց որովհետեւ զօրաւոր Թուրքիա մը Ռուսիոյ գործին չէր գար, իսկոյն ծագած էր ռուսական պատերազմ մը որ նորէն փճացուցած էր վերակազմուելու վրայ եղող օսմ. զինուորական ոյժը:

Թուրք բանակին վերակազմութիւնը սկսած էր 1909ին, գերմանացի մարաջախտ Ֆոն տէր Կօլց փաշայի վերին հսկողութեան տակ, իր դրութեան համեմատ և գլխաւորաբար Գերմանիոյ մէջ ուսած սպաներու միջոցաւ, և 1910ի ռազմափորձերը բաւական զնահատելի արդիւնք ստեղծ էին: Սակայն 1912ին դեռ անագին գործ կար ընելիք: Բանակը զուրկ էր բաւարար պիտոյքէ ու կազմածներէ, ձիերու թիւը և փոխադրութեան միջոցները անբաւական. մատակարարութեան ճիւղերը, — բանակին ջիւղերը, — ընդհանրապէս անգոյ կամ անկազմակերպ: Յետոյ, ներքին ապստամբութեանց պատճառաւ սարքուած զինուորական արշաւախումբերը շատ յամեցուցած էին վերակազմութեան գործը: Ընդհանուր զօրահանութեան մը պարագային, զինուորական համախմբումն ալ չէր կրնար արագ կերպով կատարուիլ. ճամբաներ չկային երկրին մէջ, ոչ ալ բաւարար երկաթուղի՝ շուտափոյթ փոխադրութիւն մը հնարաւոր դարձնելու համար: Իտալեթուրք պատերազմին պատճառաւ՝ ծովն ալ բռնուած էր իտալական զրահաւորներէն, նաւային ամէն փոխադրութիւն անկարելիութեան մատնելով: Ասոնցմէ զատ, բաղդատմամբ թշնամիներուն, Թուրք բանակը նուազ մարզանք տեսած էր, և յոգնած տարրերը շատ առատ էին իր թուական քանակութեան մէջ: Միւս կողմէ, — բացի Հայերէն և Հրեաներէն, — կարելի չէր չափազանց յոյս դնել Քրիստոնեայ զինուորներու վրայ: Ո՛չ Յոյնը, ո՛չ Պոլկարը, ո՛չ Սերպը, չպիտի կրնային իրենց մէջ գտնել այն բարիկամե-

(*) Դաշնակիցներու բանակին նկատմամբ տեղեկութիւններ պետի տանք Էւրաքանչիւրին պատերազմները նկարագրած ատեննիս:


(**) Les armées des principales puissances au printemps de 1912. Paris, Chapelot.

ցողութիւնը որ զիրենք ընդունակ պիտի դարձնէր Թուրք զինուորին հաւասար խանդով կռուելու ո՛չ միայն քրիստոնեայ, այլ նաև իրենց արենակից, իրենց ցեղակից թշնամիներու դէմ:

Այս նիւթական անբաւականութեան հետ պէտք է յիշել նաև բարոյական անբաւականութիւնը. — քաղաքականութեան մուտքը բանակին մէջ, սպաներու անհամաձայնութիւններն ու անսիրելիութիւնը, փոխադարձ ատելութիւններ և որոշ հոսանքի հետեւող հատուածներու գոյացում, որոնք ամէնքը մէկ քանդած էին բանակին բարոյական միութիւնը, և խաթարած էին անոր հոգին: Բաղդատմամբ դաշնակիցներուն՝ Օսմ. բանակը բարոյապէս մանաւանդ ստորադաս կը մնար. չուներ այն ներոյժ զօրութիւնը որ գլխաւոր յատկութիւնը կը կազմէր թշնամի բանակներուն. անոնց մէջ ամէն մարդ գիտէր թէ ինչո՛ւ կը պատերազմի, գիտէր մանաւանդ թէ ինչո՛ւ ստիպուած է անպատճառ յաղթելու. ինչ որ զինքը ատակ կը դարձնէր նոյնիսկ ամէնէն անհնարին զոհողութեանց ու գերմարդկային ճիգերու: Իտալալը՝ որ անբաժան կը մնար այդ պատերազմէն, նոր բան չէր իրենց համար. անոր նայելով, ընդմիջտ անոր յառած մնալով հանգած էր իրենց տատերուն և իրենց հայրերուն աչուքներուն լոյսը. անոր նայելով մեծցած էին նաև իրենք. ազգային իտէալն էր անիկա, նոյնացած ցեղին գոյութեան խնդրին հետ. անոնք ազգային գոյութեան կռիւն է որ կը մղէին, և ա՛տ էր պատճառը որ մէկ մարդ կը դառնար համարժէք տասը մարդու: Իրենց մէջ գտնուեցան բարձրաստիճան սպաներ՝ որոնք ինքզինքնին սպաննեցին նոյնիսկ աննշան ձախողուածներու համար, որովհետեւ կը վախնային թէ ազգային գոյութիւնը վտանգեցին այդ ձախողանքով, և այլևս չէին ուզեր ապրիլ, այն վստահութեամբ թէ ազգը երբեք չպիտի ներէ իրենց: Բանակը՝ անոնց մէջ՝ ամուր, անգործելի զանգուած մըն էր, կարող դիմադրելու ամէնէն անաւոր բաղխումներուն:

Մինչդեռ Թուրք բանակը, Սահմանադրութեան յաջորդող ցեղային գիտակցութեան և ատկէ յառաջացած անսիրելիութեանց, նոյնիսկ ատելութեանց պատճառաւ, բաժան բաժան բեկորներէ բաղկացած և աւելի կամ նուազ դիւրարեկ կապերով զօդուած անջիղ միութիւն մըն էր, որ չուտով կրնար խորտակուիլ: Դժբախտութիւն մըն է Թուրքիոյ համար որ իր վարիչները չկրցան երբեք ընդհանուր հայրենիք մը ստեղծել Կայսրութեան մաս կազմող հաւասարապէս բոլոր տարրերուն համար ալ անխտիր, և զանոնք միեւնոյն խանդով, միեւնոյն կորովով և անձնուիրութեամբ համախմբել այդ հայրենիքին պաշտպանութեան, պաշպանման ու բարգաւաճման գործին շուրջը: Երբ պատերազմը ծագեցաւ, չկար այդ միութիւնը, չէր կրնար ալ ըլլալ. շատեր, նոյն իսկ այն տարրերէն որոնք լաւագոյն անձնուիրութեամբ պիտի կռուէին, դասալիք եղան, որովհետեւ հայրենիքի գաղափարը չէր յանկուցաներ զիրենք. բուն հայրենիքը բարձրութիւնն է, նոյն իսկ բարօրութեան յոյսը. ոչ մէկը կար իրենց համար, ոչ ալ միւսը: Կայսրութեան համար անգնահատելի կորուստ մըն էր տակաւին Ալպանացի տարրին, — Եւրոպական Թուրքիոյ այդ բնական ու զարհուրելի պաշտպաններուն, — թշնամական չէզոքութիւնը:

Երբ այս դանազան պատճառները քով քովի բերենք, այլևս ուրիշ բանի պէտք չի մնար հասկնալու համար թէ Ահմէտ Մուխթար-Քեամիլի փաշաներու դահլիճը ինչո՞ւ այնքան կը խրաչէր պատերազմէն, ու կը ջանար խաղաղութեամբ կարգադրել տարգնապը: Երկու ձերուհի պաշտօնա-



Պատճառներն ինչպիսիք են թուրքերը

կալները, ինչպէս նաեւ իրենց գործակիցները, շատ լաւ գիտէին նաեւ թէ պատերազմ մը, նոյն իսկ յաղթական, միտ բան չպիտի բերէր իրենց՝ բաղդատմամբ իր արժեքը զո՞նողութիւններուն. եթէ նոյն իսկ դաշնակիցներու բովանդակ երկիրը զբաւէին, Եւրոպա չպիտի թոյլատրէր որ

անկէ մաս մը իրենց պահեն. մինչդեռ միւսները, եթէ յաղթական ելլէին, տէր պիտի մնային իրենց աշխարհակալած երկիրներուն: Պատերազմը, թուրքիոյ համար, լոկ փառքի, անձնասիրութեան, արժանապատուութեան հարց էր, բայց նոյն իսկ ասոր վրայ ապահով չէր դահլիճը, լաւ գիտնալով որ նիւթական և բարոյական գերակշռութիւնը իր կողմը չէ: Զինուորական համախմբման մէջ՝ միւսները միշտ առաւելութիւն պիտի ունենային. իրենց տարածութիւնը պզտիկ էր, երկաթուղիները առատ էին. շուտով կրնային երկրին մէկ ծայրէն միւս ծայրը տեղափոխել խոշոր բանակներ. իսկ թուրքիոս, անսահման կերպով մեծ տարածութիւններու վրայէն պիտի տեղափոխէր իր զինուորները, առանց դաշնակիցներուն չափ փոխադրութեան միջոցներ ունենալու. յետոյ, ստիպուած էր իր զօրութիւնը համախմբել միանգամայն երեք ճակատի վրայ, արեւելեան կողմը Պուլկարներու դէմ, արեւմուտքի կողմը Սերպերուն, Պուլկարներուն և Գարատաղցիներուն դէմ, ու վերջապէս թեսալիոյ և Եպիրոսի մէջ՝ Յոյներուն դէմ: Աւելի ըլլալով՝ Կայսրութեան միւս սահմանները պահպանելու հոգը, մանաւանդ ռուսական արշաւանքի մը վախը կար իրեն համար: Պատերազմի այս դժուարին կացութեան մէջ, ապահովաբար իմաստութեան գործ չէր:

Սակայն երբ այլևս պատերազմը անխուսափելի դարձաւ, Սամ. կառավարութիւնը սկսաւ ոզլ ի բոլին աշխատիլ կարելի եղած մեծագոյն ոյժը հանելու համար թշնամի բանակներուն դէմ: Նկարագրեցինք արդէն թէ թուրքիոյ համար անօրինակ արագութեամբ մը կատարեց զօրահանութիւնը, և դէպի գլխաւոր բանակները ճամբայ հանեց ինչ որ կարելի էր. սակայն երբ պատերազմը ծագեցաւ, զինուորներու համախմբութիւնը ռազմական կէտերու վրայ՝ չէր լրացած, ինչ որ անշուշտ մեծապէս նպաստեց դաշնակիցներու յաջողութեանց արագութեան:

Ահա թէ ինչ էր թուրքիոյ ոյժը Բուսէլիի մէջ, անդրանիկ բաղխումներուն ատենը (*). --

Մեծ ընդհանուր բանակետը կը մնար Պոլիս, սպարապետ ունենալով պատերազմական նախարար Նազըմ փաշան. սպայակոյտի պետերն էին Հատի փաշա և զնդապետ Բէրդէլ պէյ:

Ա. Բանակ (Արեւելեան), Թրակիոյ մէջ. — Կազմուած էր Ա. Օրտուէն, Ա. Բ. Գ. և Դ. զօրաբանակներով: Հրամանատար՝ Ապտուլլահ փաշա: Գործողութեան չրջանակ՝ Տիմոթիքա - Բըրք Բիլիսէ գիծը:

Բ. Բանակ (Արեւմտեան), Մակեդոնիոյ մէջ. — Հրամանատար՝ Ալի Րիզա փաշա (Սելանիկ): Այս բանակը բաժնուած էր երեք անկախ խումբերու:

Ա. Խումբ. — Երեք զօրաբանակ, իւրաքանչիւրը ըէտիֆներու զօ-

(*) Յուշակը կը քաղենք Օսմ. ծառայութեան մէջ գտնուող գերման հազարապետի մը՝ Ֆոն Զօխլուէսթէրի «Au feu avec les Turcs, Journal d'opérations», գրքէն: Հողաւորապետ Ֆոն Զօխլուէսթէր կ'անդամակցէր Մահմուտ Մուխթար փաշայի սպայակոյտին և մինչեւ վերջը հետեւեղաւ Թրակիոյ կռիւններուն:

բարաժիններով, Սկիւպ - Շթիպ գիծին վրայ, Սերպո - Պուկար սահմանագլխուն դէմ:

Բ. Խուճը. — Գործոն բանակի մէկ և բէտիֆներու երկու զորաբաժին: Այս խուճը որուն կեդրոնավայրն էր Շքօտրան, սահմանուած էր Գարաթաղցոց դէմ գործելու:

Գ. Խուճը. — Երկու զորաբանակ, իւրաքանչիւրը գործոն բանակի երկու և պահեստներու մէկ զորաբաժինով: Այս երկու զորաբանակներն ալ պիտի գործէին Յոյներուն դէմ, առաջինը Եպիրոս՝ Եանկայի շրջանակին և երկրորդն ալ Թէսալիա՝ Գօչանայի շրջանակին մէջ (*):

Հետեւեալազօրքը կը գործածէր երկու տեսակ հրացան, Մալղէրը և ձեւափոխուած Մարթինը (**), երկու տեսակին ալ փամփուշտները նոյնն էին, սրղպատէ սրածայր փամփուշտներ, ինչ որ կը դիւրացնէր տարբեր տեսակ հրացան կրող բանակներու ռազմանիւթին մատակարարութիւնը: Հեծելազօրքը կը գործածէր գերմանական ֆուրայիկը (կարճ, Մալղէրի դրութեամբ): Հեծելազօրքի մէկ զորագունդ միայն նիղակ կը կրէր:

Այս երկու բանակներն ալ լրացուած չէին, երբ ստիպուեցան թըշնամիին դէմ ճակատիլ: Թուրք կառավարութիւնը կը յուսար 400,000 հօգի հանել Բուճէլիի մէջ, բայց իր ծրագիրը մնաց թուղթի վրայ: Իրականութեան մէջ՝ թերևս աւելի մեծ թուով մարդ զրկեց, բայց ամէն զրկուած մարդ, լոկ համազգեստ կրելուն համար, պատերազմիկ տարր մը չէ. մարդը իր կազմածներով, իր ռազմանիւթի և ուտեստի մթերքով կը դառնայ իրական զինուոր, և Օսմ. բանակին մէջ շատեր գուրկ մնացին այդ մթերքէն, — յաճախ նաև պատառ մը հացէ, նոյն իսկ խառէ, արմատներէ, թուղթէ, զորս հեշտանքով պիտի ծամէին. փնտուեցին ու չգտան...:

Եօթը զորաբանակները որոնք Բուճէլիի մէջ պիտի գործէին, ունէին հետեւեալ դաշտային թնդանօթները. — Ա. զորաբանակ 30 հրետաշարք (batterie), Բ. զորաբանակ 48, Գ. զորաբանակ 48, Դ. զորաբանակ 30, Ե. զորաբանակ (մօտաւորապէս) 20, Զ. զորաբանակ (մօտաւորապէս) 20, Է. զորաբանակ (մօտաւորապէս) 24: Իւրաքանչիւր հրետաշարք կը բաղկանար վեց կամ չորս թնդանօթէ: Սահմանադրութեան հոչակումէն ետք միայն, Ժէօն-Թիւրքերուն միջոցաւ, զինուորական մթերանոցներէն դուրս հանուեցան 1903ին և 1905ին գնուած արագահարուած թնդանօթները, և բաժնուեցան զորաբանակներուն: Անկէ ետք՝ Թուրքիա գնեց Քրուքի արագահարուած 93 հրետաշարք, իւրաքանչիւրը վեց թնդանօթով, ամէն մէկ թնդանօթի մթերքն էր 500 ուճը: Յանձնարարուած էին նաև ուրիշ 23 հրետաշարք Քրուք, չորսական թնդանօթով, և 9 հրետաշարք Քրէօ-

(*) Պատերազմական գործողութեանց ընթացքին պիտի տանք աւելի մանրամասն տեղեկութիւններ՝ իւրաքանչիւր գործողութեան մասնակցող ոյժերուն նկատմամբ: Թուրքիոյ, ինչպէս Յունաստանի ու Պուլկարիոյ ծովային ոյժերն ալ պիտի ներկայացընենք նաև այն գործողութիւնները պատմած ատեննիս: (***) Բէտիֆներու գրեթէ մեծամասնութիւնը որ պարզ Մարթինով մարդուած էր, անծանօթ էր միանգամայն այս երկու տեսակ հրացաններու գործածութեան:

զօ (*), ամէնքն ալ արագահարուած, բայց դեռ չէին յանձնուած: Բանակին թնդանօթաձիգ գունդերը կիսհեծեալ էին մեծագոյն մասամբ. հեծեալ թնդանօթաձիգները շատ աննշան թիւ մը կը կազմէին, այն ալ միայն Ա. Բ. և Գ. զորաբանակներուն մէջ, և Քրուքի հին դրութեամբ թնդանօթներով:



Թուրք պահեստներու մարզանքը

Իսկ լեռնային թնդանօթները բաժնուած էին հետեւեալ կերպով. — Ա. զորաբանակ 6 հրետաշարք, Բ. զորաբանակ 7, Գ. զորաբանակ 15, Դ. զորաբանակ 6, Ե. զորաբանակ 3, Զ. զորաբանակ մէկ կամ երկու, Է. զորաբանակ մէկ կամ երկու: Ամէն մէկը վեցական թնդանօթ ունեցող:

(*) Ներկայ պատերազմը ապացուցուց Քրէօ թնդանօթներու առաւելութիւնը Քրուքի թնդանօթներուն վրայ: Դաշնակիցներէն Պուլկարիա, Սերպիա և Յունաստան իրենց յաջողութենէն մաս մը բան ալ կը պարտին իրենց գործածած Քրէօ թնդանօթներուն:

այս հրետաշարքերէն 26ը արագահարուած Գրուբներ էին: Վերոյիշեալ եօթ զօրարանակները ունէին նաև դաշտային տասնըմէկ ումբակարծակ (obusier) հրետաշարք, մեծ մասամբ Գրուբի 15 ս/մ թնդանօթներով, երեք հրետաշարք 10, 9 ս/մ թնդանօթներով և 120 գնդածիր, (10 Հոչքիս և 50 Մաքսիմ): Թնդանօթներու մասին ալ գերազանցութիւնը Թուրքերուն կողմը չէր ուրեմն:

Ահա այս բանակը վարելու կը կոչուէր սպարապետ և պատերազմական նախարար Նազըմ փաշա, իբր փոխանորդ Վեհ. Սուլթանին՝ զոր Սահմանադրութիւնը բանակին գերագոյն պետ կը հռչակէ: Նազըմ փաշա՝ զոր Ֆօն տէր Կօլց Մարաշխատը չէր վարաներ Թուրք բանակին լաւագոյն զօրավարը հռչակելու, և որ Լիւլէ Պուրկադի պարտութենէն վերջ Արևելեան բանակին ընդհ. հրամանատարութիւնը ստանձնելով Չաթալճայի առջև կասեցուց Պուրկար բանակը, Կայսրութեան ամէնէն պարկեշտ ու համակրելի պաշտօնատարներէն մէկն էր: Ընամ էր Պոլիս, չէր քէս ծագումէ և իր զինուորական ուսումը կատարելագործած էր Բարիդի Սէն-Սիր վարժարանին մէջ: Ֆրանսա անցուցած ժամանակամիջոցին՝ ընտելացած էր արևմտեան ազատասոհ գաղափարներու, որոնց ջերմագին պաշտպան մը դարձած էր Պոլիս: Այդքանը կը բաւէր իր վրայ հրաւիրելու Համիտի կասկածները: Ինք արդէն չէր ծածկեր Համիտի օրով երկրին մէջ ծաւալած անամօթ, անբարոյ ու ոճրագործ վարչական մէթոսին դէմ զգացած բուռն դայրոյթը: Սահմանադրութեան հռչակումէն հինգ ու կէս տարի առաջ, զինքը զիշերանց ձերբակալած էին Մեծ Կղզիէն և Երլտրդի մէջ գումարուած պատերազմական ատեանի մը կողմէ աստիճանազրկութեան ու բերդարգելութեան դատապարտել տալով, զրկած էին Երզնկա: Համիտ յարքունիս զրաւած էր անոր բովանդակ ինչքը: Հետու իր ընտանիքէն, հեռու իր զաւակներէն, զրկուած ամէն բարեկամութենէ, շարունակ լրտեսուած, շարունակ հսկողութեան տակ, համբերութեամբ կը տանէր այնտեղ իր աքսորականի դժոխային կեանքը: Սկիզբները, ամէն յարաբերութենէ զրկուած, — չէր կրնար անցնիլ Երզնկայի բերդին զնտաններէն մէկուն սահմանը. վերջէն սակայն, բարկութեան նոպայի մը մէջ, խիստ ու համարձակ հեռագիր մը զրկած էր իր Դահիճին, — Համիտին, — հարցուցած էր անոր թէ դեռ չէ՞ յագեցած իր վրէժխնդրութեան մէջ, թէ պիտի շարունակէ՞ տանջել սալ զինքը: Այնքան տպաւորիչ ու անարկու շեշտ մը կար հպարտ սրտէ մը բղխած այդ դառնագին, գրեթէ արհամարհական հեռագրին մէջ, որ Համիտ, — յաճախ ունեցած է այս տեսակ տկարութեան վայրկեաններ, — խոյն հրամայած էր որ մեղմնն փաշային վրայ կատարուած հսկողութիւնը: Այլևս կրնար ուզածին պէս շրջիլ քաղաքին մէջ, թէեւ առանց անկէ հեռանալ փորձելու: Սկսած էին թոյլատրել որ գիրք ու թերթ ձեռք բերէ, ու կը կարդար, կը կարդար սնվերջ, երազելով իր սիրականները որոնք իրմէ հեռու կը տուայտէին իրեն պէս, երազելով մանաւանդ տխուր դրութիւնը իր դժբախտ հայրենիքին, զոր կը պաշտէր բոլոր հոգուովը, և որ ապահով կարծանման կը դիմէր՝ բորենիի սրտով և

ախորժակով ալ տոգորուն գագանի մը խօլական բռնակալութեան տակ(*)


Եւ սակայն վայելք մը վերապահուած էր իրեն այդ տխուր կեանքին մէջ, — մէկ հատիկ հեշտանքը որ քիչ չատ պիտի պայծառացնէր իր աքսորականի մթին ու տխրամած հորիզոնը: Իր աղգակիցները, գրեթէ բոլոր Խալամները, երես դարձուցած էին իրմէ: «Միմի» մըն էր, և իրեն չհանդիպելու համար, իրմով չվտանգուելու համար, բոլորն ալ կը զգուշանային անցնելէ այն տեղերէն որոնց մէջ կը չըջագայէր յաճախ: Խալամին սովորական հոգեբանութիւնն է արդէն, — խնդոյն ձեռք չի մեկներ, ընդհակառակը, կ'աշխատի կից մըն ալ ինք տալու: Բայց ահա, կարծես իր աղգակիցներուն լքումը մոռցնել տալու համար, տարակրօն ու տարացեղ աղբի մը զաւակները եկեր իր շուրջը խմբուեր էին, կ'աշխատէին իր կեանքին դառնութիւնը ամօքել: Երզնկայի Հայերն էին ասոնք: Իրենք ալ ջախջախուած, իրենք ալ աքսորական իրենց հայրենիքին մէջ, իրենք ալ անընդհատ հսկողութեան ու բռնութեան առարկայ, տառապանքի եզբայր մը գտած էին փաշային մէջ, և խոյն անոր շուրջը խմբուեր էին: Երբ երկուք են միեւնոյն զուլումին ենթակայ. զուլումը աւելի տանելի կը դառնայ անշուշտ, միայնակ տառապիլն է դժուար, և տառապողին համար ինչ աւելի մխիթարական քան իրեն պէս նոյն կոտտանքով չարչարուողի մը հետ եղբայրանալը, զայն միշտ իր քով ունենալը:

Փաշան սակայն այնքան սէր յարուցած էր իրենց մէջ, սկսած էր այնքան պաշտուիլ իր նկարագրին աղնութեամբ և վեհ հոգեւորը, որ Երզնկացիք այդ գերագոյն մխիթարութենէն սիրով պիտի հրաժարէին: Հոգ չէր, թող մինակ տառապէին, — ճակատագիր, — բայց փաշան փրկուէր: Եւ ահա փախուստի ծրարիր մը պատրաստուած էր երկար ու համբերատար աշխատութեամբ: Ոստիկանութիւնը սկսած էր կասկածիլ, հետապնդուած էին մէկ քանի Հայեր, բայց ծրագիրը մնացած էր գաղտնի: Փախուստը պիտի կատարուէր Տրապիզոնի ճամբով: Փաշան մտերիմ մը ունէր այնտեղ, հաղարապետ Սալֆէթ պէյը (**). Հայեր գացեր բանակցեր էին անոր հետ, ու վերադարձեր էին Երզնկա, իրենց հետ բերելով երկու Լազեր զորս Սալֆէթ պէյ ընտրած էր՝ իրր առաջնորդ: Եւ ա՛հ, 1908 յուլիսէն մէկուկէս ամիս առաջ, հինգ հոգինոց փոքրիկ խումբ մը գիշերանց կը թողուր Երզնկան, Տրապիզոնի ճամբան ձեռք առնելու համար: Սակիլի հրոսախումբի մը կը նմանէին քան հանդարտիկ ճամբորդներու. սովորական բանուկ ուղին չէր հրապուրեր զիրենք, գլխաւորաբար կողմնակի և անկոխ ճամբաները կը նախընտրէին: Ու զողունի արշաւ մըն է որ կը կատարուէր գիշերուան ընթացքին, փորձանաւոր արահետներուն երկայնքը: Խուճրին մէջ ամէնէն աւելի աչքի կը դարնէր Նազըմ փաշան, իր յաղթ հասակով. քաղաքային տարազը զոր

(*) Հայերու դէմ կատարուած տխուր հալածանքը մանաւանդ զինքը չափազանց կը տխրեցնէր, ու կը կրկնէր յաճախ թէ «կացութիւնը այսպէս չի կրնար շարունակուիլ... Իրօք Համիտ պիտի տապալէս քիչ վերջը»

(**) Այս Սալֆէթ պէյը Պոլսոյ զինուորական կառավարել էր Նազըմ փաշային նախադարձութեան օրով:

կը կրէր, չէր կրնար ծածկել զինուորականը որ կար իր մէջ: Միւս չորս հոգիէն երկուքը առաջնորդ Լազերն էին, երրորդը՝ Երզնկա Պաքսորուած թուրք երիտասարդ սպայ մը, յիննապետ Ասաթ պէյ, եզբորորդի Մա-



Փուրք զինուոր նորու փոխադրու թեան մէկ տեսարանը


րաջախտ Ֆուատ փաշայի, նոյնպէս աքսորուած, և չորրորդն ալ հայ երիտասարդ մը, Սուրէն Սարաֆեան, որ փախուստին պատրաստութիւնները կատարած էր, և որ փաշայէն չղատուեցաւ մինչեւ անոր եղբրական մահը: Եթ ոք և եթ զիչեր հետիոտն կտրած էին Երզնկա-Տրապիզոն ճամ-

բան: Իրենց նպատակակէտին չորս ժամ մնացած, ընդ առաջ եկած էր Սավֆէթ պէյ՝ վտանհի մարդոցմով, և Փաշան ու իր հետեւորդները յաջողած էին ողջամբ Տրապիզոն մանել, ուր սակայն ծանր փորձանք մը կը սպասէր իրենց:

Մինչդեռ իրենք դէպի Տրապիզոն կը դիմէին, անդին՝ Երզնկա՝ կառավարութիւնը իրար անցած էր, ու նաև ապշած որ այնքան լրտեսներով շրջապատուած ըլլալով հանդերձ, Նազըմ փաշա յաջողեր էր փախչի: Բնական է առաջին կասկածները ծանրացած էին Հայոց վրայ, որոնք փաշային միակ մտերիմներն էին, ձերբակալուած էին անոնցմէ շատերը, հարցաքննութեան առարկայ դարձած կամ հսկողութեան ենթարկուած էին ուրիշներ: Ոչ ոք սակայն զիտցածը յայտնած էր ու փաշան կը մնար անզրտանելի: Լուր արուած էր նաև Դ. զօրաբանակին հրամանատար Զէքի փաշայի, որ իսկոյն աւելի քան 800 ձիաւոր ցրուած էր ամէն կողմ, թէև անօգուտ, որովհետեւ յայտնի չէր թէ փաշան ո՞ր ճակով փախած է: Յետոյ, յուսահատ, գոհացած էին լսող կասկածելի տեղերը հեռագիր դարնելով և խիստ հսկողութիւն ու հետախուզութիւն պատուիրելով: Հեռագիր հասած էր նաև Տրապիզոն, և խումբ մը սպառազէն Լազեր չորս կողմ ինկած էին փախստականները գտնելու և ձեռք անցընելու համար խոշոր վարձատրութիւնը որ խոստացուած էր Նազըմ փաշան բռնողին: Անոնք փախստականներուն հետքը գտած էին ճիշտ այն բողբոջին ուր փաշան և իր երկու հաւատարիմ ընկերները Սավֆէթ պէյի կողմէ նախապէս պատրաստուած մակոյղ մանելու վրայ էին, դէպի ռուսական ափերը ածապարելու համար: Ինչ ընել: Փախստականները անդէն չէին, և փաշային հրամանն էր որ թէ՛ ճամբու ընթացքին և թէ՛ ուրիշ ո՞ր և է առանց եթէ ձեռք անցուելու վախ ծագէր, պէտք էին դիմադրել մինչեւ իրենց ատրճանակներուն վերջը թեր զնդակը: Ինք և իր ընկերները մտադրած էին ողջ ձերբակալուիլ, և խրաքանչիւրը իր վերջին գնդակը ինքզինքին սխալ վերադասէր: Ընդ ալ այդ ահաւոր հրամանը գործադրելու պահը հասած էր: Զիրենք հալածող Լազերու ատրճանակները արդէն իսկ իրենց վրայ ուղղուած էին. պէտք էին դիմադրել, ազատիլ կամ մեռնիլ: Բարեբախտաբար սակայն, Սավֆէթ պէյի միջամտութիւնը արաջքը կ'առնէ ընդհարման: Հալածողները կը հեռացնին, փախստականները կը յաջողին մակոյղ ցատկել և անցնիլ ռուսական հող, Սօխում, և այնտեղ կեղծ անցազիրներ ցոյց տալով ժամանել Պաթում, ուր միջոց մը թուրքի մը պանդոկը կենայէ վերջ: Ղարձակ Հայ համակիրներու միջոցաւ կը փոխադրուին ապահով տեղ մը, և կը հիւրընկալուին մեր ազգակիցներուն կողմէ:

Փաշային վերադարձը՝ Պոլիս, անակնկալ մը պիտի ըլլար իրեն, ինչպէս նաև Պոլսոյ համար: Պաթումէն՝ Մէսսածըրի շոգենաւ մը նստած էր Մարսիլիա երթալու համար: Երբ շոգենաւը Պոլիս կը հասնէր, Սահմանադրութիւնը մէկ երկու օրէ ի վեր հռչակուած էր արդէն և Համիտ սանձուած: Բարեկամներ լսելով որ Նազըմ փաշա շոգենաւին մէջն է, իսկոյն կը փութան իր մօտ և զինքը կը համոզեն դուրս ելլելու: Հայ Սահմանադրական

Ակունքին կողմէ՝ թուրք նահատակներու համար սարքուած հողեհանգըստ-
եան պաշտօնին օրն էր որ Պոլսոյ ժողովուրդը մօտէն տեսաւ զինքը, Բե-
րա՝ Թաքսիմի Թաղապետական Պարտէզին մէջ, ուր եկած էր ողջագու-
րելու այն միւս մեծ աքսորականը, Մարաշախտ Փուատ փաշան, որ իր մը-



Օսմանեան հրացանաձիգ հեծելազորք

տերիւն եղած է միշտ, և որուն եղբորորդին միասին փախցուցած էր
Երզնկայէն:

Իթիհատն ու այս ուղիղ զինուորականը գրեթէ երբեք հաշտ չեղան
իրարու հետ: Նազըմ փաշա ինքզինքը երջանիկ կը նկատէր որ իր աղա-

տունը աքսորէն՝ Իթիհատականներուն չի պարտիր: Քօմիթէն ալ իր կար-
գին միշտ կասկածոտ մնաց անոր նկատմամբ, առանց երբեք կարենալ
յայտնելու թէ ինչի՞ կը յինուր իր կասկածը: Անսիրելութիւն կար նաեւ



Մեկնում պուլկար զինուորներու դէպի սահմանագլուխ

Նազըմ փաշայի և Մահմուտ Շէվքէթ փաշայի միջեւ. իրարու հակոտնեայ
տիպարներ էին. Նազըմ՝ անուշ, կակուղ բնավորութեան տէր էր, և իր
կորույն ալ խնդրական ու վիճելի. իսկ Մահմուտ Շէվքէթ փաշա խիստ
էր, օժտուած էր անընկճելի կորովով մը, միշտ պատրաստ ծառանալու:

եթէ չըլլար անմեկնելի անսիրելութիւնը որ զիրենք կը բաժնէր, այս երկու հակոտնեայ անձնաւորութիւնները կրնային իրար լրացնել և շատ թանկագին ոյժ մը դառնալ: Նազըմ փաշա՝ էսիրենէի զօրաբանակին հրամանատար անուանուեցաւ Սահմանադրութենէն ետք: Մարտ 31ի յետաշրջական շարժման միջոցին ալ ստանձնեց Ա. Զօրաբանակի (Պոլսոյ) հրամանատարութիւնը, և իր հեղինակութեան շնորհիւ յաջողեցաւ հանդարտեցնել ապստամբած զինուորները. նոյն ատեն միջոցներ ձեռք առաւ զիւրացնելու համար ազատարար բանակին Պոլիս մուտքը, և Համիտը ետ կեցուց զիմադրելու յիմարութենէն, ինչ որ մեծ արիւնահեղութեան պատճառ կրնար դառնալ: Վարչապետ Թէվֆիգ փաշա այդ միջոցին Նազըմ փաշայի յանձնեց պատերազմական նախարարի պաշտօնը, բայց քիչ ետքը Գահրիճին հետ ան ալ քաշուեցաւ, պահելով միայն Զինուորական Խորհուրդի անգամակցութիւնը: Իթիհատը զինքը Պաղտատ զրկեց իրր կուսակալ, և Նազըմ փաշա՝ Միտհատ փաշայի օրերը յիշեցնող պաշտօնավարութեամբ մը նշանակելի դարձաւ այնտեղ: Սակայն զինքը հանգիստ չձգեցին. կ'ուզէին ամէն գնով քանդել իր ժողովրդականութիւնը, և ատոր համար ոչինչ խնայեցին: Հագգը փաշա Պոլիս կանչեց զայն, և Նազըմ փաշա հպատակեցաւ, ցոյց տալու համար իր կարգապահ ոգին, և բաւականացաւ բեղքի հեռագրով մը: Պաղտատ գտնուող 125 սպաներ հաւաքական հեռագրով մը պահանջեցին որ փաշան անպատճառ մտայ իրենց մօտ. նոյն նպատակով միթինկներ գումարուեցան Միջագետքի ամէն կողմերը և բազմաթիւ հեռագիրներ ուղղուեցան Պոլիս: Նազըմ փաշա չուզեց իր ստացած հրամանին հակառակիլ և Պոլիս դարձաւ Հնդկաստանի ճամբով, խուսափելով Հալէպի ճամբէն՝ զոր Արաբ ցեղերը որոշած էին կտրել իր մեկնումը արգիլելու, զինքը հակառակ ամէն բանի վար դնելու համար: Պոլիս դարձին՝ ապրեցաւ քաշուած, երբ 1912 յունիսին սկսած զինուորական ապստամբութիւնը զինքը յուլիսի սկիզբը բարձրացուց պատերազմական նախարարութեան պաշտօնին: Նազըմ փաշա սկիզբները ինք ալ դէմ էր պատերազմին, որովհետեւ գիտէր բանակին անպատրաստութիւնը. բայց երբ պատերազմը անխուսափելի դարձաւ, ամենայն հայրենասիրութեամբ ու խղճմտութեամբ կատարեց իր զինուորականի պարտքը: Ըսինք արդէն թէ վերջին պատերազմին ամէնէն միթիարական զրուագներէն մէկը՝ Զաթալճայի երեքօրեայ ճակատամարտը որ Պուլկար բանակին յաղթական արշաւը կասեցնելով Պոլիսը վրկեց, Թուրք բանակը իրեն կը պարտի:

Նազըմ փաշա շատ ուղիղ և ողորմած մարդ մըն էր, բերնէն կը զըրկէր՝ չունեցողին տալու համար. դրամն ալ չէր սիրեր, և իր անշահախնդրութեան լաւագոյն փաստը սա է որ սեփական բնակարան մը անգամ չունէր, մինչդեռ Թուրքիոյ պետական անձնաւորութիւնները այնքան զօնաբեր և և ֆեռլի կառուցած են մայրաքաղաքին ամէնէն օդատուն և գեղեցիկաչեաց դիրքերուն վրայ: Երբ Իթիհատը տապալեցաւ ու Երեսի. Ժողովը լուծուեցաւ, վախ կար որ բռնապետութեան վերադարձ մը կը փորձուի Քեամիլ փաշայի կողմէ, որ արդէն համակեր մը

չէ սահմանադրական դրութեան. բայց լոկ Նազըմ փաշայի ներկայութիւնը դահլիճին մէջ, բաւեց այդ մասին ամէն կասկած վանելու: Ազատութեան գրաւականն էր ինքնին(*): Մաթհնի խմբագրապետը, Պ. Սթէֆան Լօզան՝ հետեւեալ սրամիտ պատկերը գծած է անոր մասին, իր գեղեցիկ աշխատութեան մէջ(**). —

«Նազըմ փաշա առաջին տպաւորութեամբ շատ յանկուցիչ չերեւար. մեծղի, զիրուկ, ծանր, քիչ խօսող մարդ մըն է, և իր բովանդակ պերճախօսութիւնը կը կազմեն մոնչիւններու շարքեր: Եւ սակայն ողջամիտ ու արժանիքի տէր մարդ մըն է նոյն ատեն: Իր գլխաւոր թերութիւնն է ամէն բան քիչ մը ուշ ընել. ուշ կ'արթննայ, և ուշ կու տայ իր հրամանները: Ուշ պիտի երթար նաև պատերազմի դաշտը. և ուշ պիտի խմբագրէր տեղեկագիրներ, որոնց մէջ, միշտ շատ ուշ, կը ծանուցանէր թէ Թրքական զօրքերը կը դիմադրեն Պուլկարական յարձակմանց. որովհետեւ երբ Պոլիս կը հասնէին այդ տեղեկագիրները, որոնք ներքնապէս ճիշտ էին, Թուրք զինուորները արդէն իսկ տեղի տուած էին...»

«Իրեն ներկայացած օրս ինձի ծանոյց թէ Արևմտեան բանակը, այն որ Սերպերուն դէմ կը գործէր, յաղթանակ մը տարած է Քուլմանօվօի մէջ՝ խորտակելով սերպիական չորս զօրաբաժիններ: Ծիշդ էր ասիկա, բայց չորս օր առաջուան իրողութիւնն էր. անկէ ասդին՝ Սերպերը՝ Պուլկարական թարմ ոյժերով զօրացած, վրէժը լուծած էին և Քուլմանօվօ կը մտնէին ճիշդ այն միջոցին ուր Նազըմ փաշա կը ծանուցանէր թէ ետ մղուած են:

«Զինուորական տեսակէտով՝ Պրանսական դրութեան հետեւող մըն է, և Պրանսական բանակին կարծիքը մեծ նշանակութիւն ունի իր աչքին:

«— Ըսէ՛ք Պրանսական բանակի իմ ընկերներուս, անոնց որ զիս ճանչցած են և անոնց ալ որ չեն ճանչցած, թէ մեզ չզրկեն իրենց համակրութենէն. արժանի ենք ատոր:

«Այսպէս խօսեցաւ և չժամկեց թէ ինք աւելի կը նախընտրէ յարձակողական պատերազմը. «միակ լաւագոյն թափիք» . բայց աւելցուց թէ պատերազմի դաշտին վրայ ամէնէն անհրաժեշտ բանը քաջութիւնն է:

«— Շուտով պիտի տեսնէք թէ, յարեց, այս տեսակէտով արժանի ենք մեր նախնիքներուն:

«Աւաղ... Գրքը-Քիլիսէն այդ մասին դժնդակ յայտնութիւն մը պիտի ըլլար ամէն մարդու համար: Մէկ անգամ մը՝ Նազըմ փաշա շատ կանուխ խօսած էր...»:

Ինչ որ ալ ըլլան սակայն իր թերութիւնները, ամենապատուական մարդն էր որ գոյութիւն ունէր Թուրք պետական անձնաւորութեանց մէջ, և իր սպանութիւնը ճշմարիտ աղէտ մը եղաւ Թուրքիոյ համար: Միակ մանրագէտ մը կը բաւէ երեւան հանելու իր ազնիւ ու մեծ հոգին և խո-

(*) Իրեն շնորհիւ ազատ արձակուեցան Իթիհատական պետերը, զորս Քեամիլ փաշա բանտարկած էր իր Զաթալճա գտնուած միջոցին. առանց ատոր՝ Իթիհատի պետական հարուածը տեղի չպիտի ունենար, և ինք ալ չպիտի սպանուէր:

(**) Au chevet de la Turquie.

նարհիլ տալու իր յիշատակին առջև: Դէպքը պատմած է Նորատուհեան էֆէնտի, նոյն ինքն Պ. Սթէֆան Լօղանի, Նիսի մէջ՝ ուր քաշուած էր իր հրաժարելէն վերջ.—

«Այն օրը ուր զինադադարի կնքման համար Նազըմ փաշայի ընկերացայ դէպի Չաթալճա՝ զօրավար Սալօֆի և Պ. Տանէֆի հետ տեսակցելու, սառուցիկ ցուրտ մը կ'ընէր: Ամէն մարդ իր լաւագոյն մուշտակը հագած էր. մինակ Նազըմ փաշա առանց վերարկուի կուգար:

« — Փաշա՛, խենթ էք որ վերարկու չէք առներ, ըսի:

« Գոհացաւ միայն ինծի ցոյց տալով մեր դժբախտ զինուորները որոնք ճամբուն վրայ կարգով կեցած էին, ու ըսաւ.

« — Իսկ ասո՞նք, նայեցէ՛ք, վերարկու ունին... և սակայն խենթ չեն... »:

Ամբողջ Նազըմ փաշան այս խօսքին մէջն է:




Նորագիրներու մարզանքը Պոլսոյ փողոցներուն մէջ



ԳԼՈՒԽ ԺԸ.

Վ Ե Ր Ջ Ի Ն Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ծ Ը




Կայսրութեան զինուորական անպատրաստութեան և դահլիճին արդար անհանգստութեանց մասին գաղափար չունեցող երկիրը կը շարունակէր պատերազմի ինպատտ ցոյցերը: Ելլա «երկիր» կ'ըսենք, պէտք է հասկընալ մասնաւորաբար թուրք տարրը, թերևս միակ խանդավառը այդ փոթորկի օրերուն մէջ: Գարատաղի կողմէ եղած պատերազմի յայտարարութիւնը բոլորովին գրգռած էր իր անձնասիրութիւնը, և պատերազմական անդրանիկ աննշան գործողութիւնները, որոնք անյաջողութիւններ ըլլալով հանդերձ՝ թուրք մամուլին մէջ փառաւոր յաղթանակներու կը վերածուէին, զինքը օր օրի աւելի անհամբեր ու ջգագրգիւ կը դարձնէին «մեծ հարուածը տալու», կոխտեղու, ճղմելու, փճացնելու թշնամին բուն իսկ իր ոստանին մէջ, ո՛չ միայն «Գարատաղ կոչուող այդ արհամարհելի մեղուկը», այլ նաև միւսները, Պուկարիան, Սերպիան, Յունաստանը, ուրիշներ ալ՝ եթէ ուզէին թուրքին բունցքին համը առնել... Անցնող իւրաքանչիւր օր նպաստի կարևոր գումար մը և կամաւորներու յանձնառութեան ստուար ցանկեր կը բերէր Պոլիս, բոլոր այն գաւառներէն որոնց մէջ հո՞ծ է թուրք ընակչութիւնը:

Արտասահմանէն, թուրք գաղութներէ, իսլամ երկիրներէ նոյնպէս նպաստ կը հասնէր: Լահօր, Կալկաթա և Տէլիհի հնդկական քաղաքներուն մէջ միթիւնկներ գումարուած էին, բողոքելու համար կարգ մը տէրութեանց կողմէ թուրքիոյ մասին բռնուած թշնամական ընթացքին դէմ: Նոյն քաղաքներէն Սուլթանին հասած հեռագիրներ կը յայտնէին թէ բովանդակ իսլամական աշխարհը համերաշխ է իսլիֆային հետ ու կը յանձնարարէին տեղի չտալ: Հնդկաստանի Իսլամները դիմում ըրին նաև Անգլիոյ, ինդրե-

լով որ Թուրքիան մինակ չթողու այդ տաղնապին մէջ, և պահէ Օսմ. Կայսրութեան հողային ամբողջութիւնը:

Թրքուհիները նոյնպէս գործի վրայ էին: Տաղանդաւոր Թուրք գրա-



Գոհարանական աղօթք Սօֆիայի մէջ, պուլկարական դիմուց յանդուրեան համար

գիտունի մը էմինէ Սէմիէ հանրմ, Թանհնի մէջ կը հրատարակէր «Հայրենասէր Օսմանցի կիներու» ուղղուած յուղիչ կոչ մը, որուն մէջ կ'ըսէր նաև.

«Ինչո՞ւ սահմանազուլիս չփութանք, ճիւղապէի նման բան մը անցընելով մեր կռնակը, և մեր գլուխն ալ ծածկելով մեր մամերուն պէս:

«Օ՛ն ուրեմն, քոյրեր, դէպի սահմանազուլիս, որպէս զի թոյլ չտանք որ վայրենիները կոխկռտեն մեր նահատակներուն յարգելի դիակները, և մեր որբերը մեր տենդագին գիրկին մէջ առած՝ տաքցնելով լուեցնենք անոնց աւաչը: Օգտուի՛նք մեր հաւատքին շնորհած զօրութենէն և մեր երակները աղգասիրական զգացումով մը եռացնող Նուրէն:

«Օ՛ն, քոյրեր, դէպի սահմանազուլիս, ցոյց տալու համար պուլկար կիներուն թէ մենք իրենց կարծածին պէս անպէտ կեանքի մը դատապարտուած կիներ չենք: Ահա ինձի պէս տկար մը սահմանազուլիս վազողներուն մէջ իբր առաջինը առաջ կը նետուի:

«Օ՛ն, յառաջ, Օսմանցի հայրենասէր կիներ, . . . »

Գարատաղի պատերազմի յայտարարութեան նախօրեակին՝ Թուրքիոյ և դաշնակիցներուն յարաբերութիւնները սա վիճակին մէջն էին. — Սօֆիայի, Պէլկրատի, Ախթիսի և Չէթինեէի դահլիճները կ'ըսէին. «Մենք հողային ընդարձակման չենք տենչար, մենք աշխարհակալութեան նպատակ չունինք. կը փախաքինք միայն որ Թուրքիոյ մէջ լուրջ և իրական բարենորոգումներ մտցուին: Երկար տարիներէ ի վեր կը խնդրէինք որ մեր Պուլկար, Սերպ և Յոյն եղբայրները այլևս չհարչարուին, չհարստանարուին: Մեծ տէրութիւնները բազմիցս մեզի խոստացան թէ անոնց վիճակը պիտի բարելաւի, բայց չկրցան բան մը ընել»: Թուրքիա կը պատասխանէր. «Տասնընից օրէ ի վեր նախարարաց խորհուրդը զբաղած է պատրաստելու ամենալայն առումով բարենորոգմանց ծրագիր մը որ վերջ պիտի տայ այդ կացութեան»: Դաշնակիցները սակայն կը յարէին թերեհաւատութեամբ. «Ատոնք լոկ խոստումներ են, այլևս չենք կրնար անոնցմով գոհանալ: Մենք պատերազմ չենք ուզեր, մենք կ'ուզենք բացարձակ կերպով ապահովուիլ թէ ասկէ ետք Եւրոպական Թուրքիան պիտի կառավարուի արևմտեան քաղաքակրթութեան սկզբունքներուն համաձայն: Մենք կը խնդրենք տէրութիւններէն որ ասիկա երաշխաւորեն, կատարելով անհրաժեշտ դիմումները որոնց շնորհիւ պիտի կրնանք մեր պահանջածը ձեռք բերել»:

Այդ հիման վրայ համաձայնած էին տէրութիւնները, և դարձեալ այդ հիման վրայ էր որ Ռուս և աւստրիական կառավարութիւնները, ի դիմաց միւս տէրութեանց, սեպտեմբեր 25ին միանգամայն թէ՛ Սօֆիայի, թէ՛ Ախթիսի, թէ՛ Պէլկրատի և թէ՛ Չէթինեէի դահլիճներուն տուին հետեւեալ Ծանուցագիրը. —

Ռուսական և աւստրո-հունգարական կառավարութիւնները կը յայտարարեն Պուլկարեան Պետութեանց.

1. Թէ տէրութիւնները կը պարտաւեն ամէն միջոց որ կրնայ խաղաղութեան խղում առաջ բերել.

2. Թէ հիմնուելով Պէրլինի Դաշնագրին 23րդ յօդուածին վրայ, տէրութիւնները, Ժողովուրդներու շահուն համար, ձեռք պիտի առնեն Թուրքիոյ վարչութեան մէջ բարենորոգութեանց իրագործումը, նկատելով որ բարենորոգումները ոչ մէկ վնաս պիտի հասցնեն Սուլթանին վեհապետութեան և Օսմ. Կայսրութեան հողային ամբողջութեան: Այս յայտարարութիւնը տէրութեանց կը վերապահէ բարենորոգման մասին յառաջիկային հաւաքաբար ուսումնասիրութիւն մը կատարելու ազատութիւնը.


3. Թէ երբ հակառակ ամէն բանի պատերազմը ծագի Պալքանեան երկիրներու և Օսմ. կայսրութեան միջև, տէրութիւնները պատերազմէն ետք ո՛ր և է փոփոխութիւն պիտի չընդունին եւրոպական թուրքիոյ հողային սրարու-հոռոյն մէջ (*):

Տէրութիւնները հաւաքաբար Պոլսոյ մէջ դիմումներ պիտի կատարեն, այս միևնոյն յայտարարութեան հիման վրայ:

Այս⁵ Մանուցագիրը, որով Եւրոպա կը ստանձնէր բարենորոգմանց գործադրութեան երաշխաւորութիւնը, բարենորոգմանց մասին անորոշ ըլլալով հանդերձ, դաշնակիցներուն պահանջուժը գոհացնելու բնոյթէն զուրկ չէր անշուշտ. բայց ենթադրելով նոյն իսկ թէ դաշնակիցները իրօք անկեղծօրէն տրամադիր էին գոհանալու այդ տեսակ երաշխաւորութեամբ մը, — ինչ որ բնաւ հաւանական չէ, — պէտք էր ընդունիլ որ Մանուցագիրը քիչ մը ուշ կը հասնէր: Արդէն տէրութիւնները շատ խելացի բան չէին ըրած դարձեալ աւստրիական ու ռուսական կառավարութեանց յանձնելով զիրենք ներկայացնելու պաշտօնը: Գիտենք արդէն թէ աւստրելուս գործակցութիւնը Մակեդոնիոյ բարեկարգութեանց մասին շատ արտուր արդիւնք մը տուած էր, և այդ երկու տէրութեանց համախուժմբ ձեռնարկները, ինչ որ ալ ըլլային, դժուար թէ կարենային վստահութիւն արթնցնել Պալքանեան Պետութեանց ու ժողովուրդներուն մէջ: Մինչև ան ատեն՝ Գաշնակիցներուն ընդհանուր զօրանալութիւնը աւարտած էր ամենամեծ մասամբ, բանակները համախառնելու վրայ էին, իրենց զիւղերն ու քաղաքները պարպուած էին, առեւտուր և ամէն տեսակ աշխատութիւններ կասած էին, ու իւրաքանչիւր Պալքանեան Պետութիւն իր ոյժերէն վեր ծախքերու ենթարկուած էր: Անոնք այլեւս չէին կրնար ետ դառնալ, մանաւանդ որ նահանջը իրենց համար այլապէս ահաւոր փորձանքի մը, ներքին ապստամբութեան նախանշանը պիտի ըլլար: — «Ազադազութիւնը պիտի պահպանեմ մինչև ան ատեն ուր պիտի կրնամ խաղաղասէր մնալ՝ առանց դանակի հարուած մը ընդունելու», կ'ըսէր Ֆէրաինանտ Զար, և ապառնալով իրաւունք ունէր: Երբ Սօփիայի ռուսական և աւստրիական զեսպանները, Պ. տը Նէքիլուտով ու կոմս Թարնովսքի Պուլկար կառավարութեան ներկայացուցին սեպտեմբեր 8ի վերոյիշեալ ծանուցագիրը, նախարարապետ Պ. Կէչօֆ գոհացաւ ժխտական պատասխանելով. «Աւազ, արդէն իսկ զօրքը չարժման մէջ դրուած է»: Այդ միևնոյն խօսքով է որ 1877ին՝ իշխան Կորչաքօֆ ընդունած էր Անգլիական զեսպան լորտ Լօֆթիլսի համաձայնութեան առաջարկը, խաղաղութեամբ կարգադրելու համար ռուսութեան վէճը: Պ. Կէչօֆ սակայն անմիջապէս մերժման պատասխան մը չտուաւ. բանակներուն համախառնմբ լրացած չըլլալով, պէտք ունէր ժամանակ շահելու: Յաջորդօրը, իր նախագահութեամբ գումարուած նախարարական խորհուրդը կը

(*) Տէրութեանց ընթացիկ անկեղծութիւնը գնահատելու համար կ'արժէ այստեղ յիշել որ պատերազմէն վերջ ո՛չ միայն ոչինչ ըրին եւրոպական թուրքիոյ հողային ամբողջութիւնը պահպանելու համար, այլ նոյնիսկ ամէն կարելի ճիւղ թափեցին որ թուրքիա դաշնակիցներուն թողու նոյն իսկ պատերազմին արդիւնքով անոնց ձեռքը չընկած հողամասեր, քաղաքներ ու կղզիներ:

յայտարարէր թէ՛ «դժբախտաբար ծանուցագիրը չի բովանդակել անհրաժեշտ լուսաբանութիւնները՝ թուրքիոյ առաջարկուելիք բարենորոգմանց մասին, որոնց կը սպասէր»: Բայց կը յայտնէր նոյն ատեն թէ որչափ



Պ Ե Մ Ա Ն Ա Ն Ս Ի Թ Ե Ա Ն Ո Ր Ե Ր Ս Ի Է
Վ Ե 5. Առեւթանին սցըը Պատերազմական նախարարութեան

մը տալէ առաջ՝ Մանուցագիրն նկատմամբ պիտի բանակցի Պէլլուտի և Աթէնքի դահլիճներուն հետ, որոնք արդէն համանման տրամադրութեամբ ընդունած էին միևնոյն Մանուցագիրը: Իսկ Գարատալ՝ Մանուցագիրը

յանձնուելէն առաջ պատերազմ յայտարարած ըլլալով, բաւականացաւ զիստել տալով թէ շատ ուշ է արդէն, և թէ երկուքուկէս ամիսէ ի վեր Բ. Դրան մօտ կատարած իր զիմուհները ապարդիւն մնացած ըլլալով, ստիպուած էր զէնքի զիմելու:

Պոլիս նոյնպէս թերեհաւատութեամբ լսեց ուսու և աւստրիական կառավարութեանց կողմէ Պալքանեան Պետութեանց մօտ կատարուած դիմումներն լուրը. խաղաղութեան հաւտացողները շատ քիչ էին այլևս. զինուորական պատրաստութիւնները որոնք ոգի ի բոլին առաջ կը տարուէին հետզհետէ աւելի տենդոտ աճապարանքով մը, կը բաւէին այդ մասին ամէն տարակոյս վանելու: Տէրութեանց կողմէ Բ. Դրան տրուելիք համիմաստ ծանուցագիրը, — որ յիշատակուած էր Պալքանեան Պետութեանց տրուածին մէջ, — բնական է չպիտի կրնար ոչինչ փոխել կացութենէն: Պատերազմասէր տարրը, իրեն զլուխ ունենալով Իթիհատը, այդ ծանուցագրին դէմ կը ծառանար տակաւին չտրուած, առարկելով թէ տէրութիւնները այս խնդրին միջամտելու իրաւունք չունին, և թէ լոկ Թուրքիոյ կը պատկանի Պալքանեան Պետութեանց անարգանքը իր սեփական ձեռքով մաքրելու իրաւունքը: Իսկ ժողովուրդը վայրկեանէ վայրկեան կը սպասէր որ պաշտակիցները հաւաքական վերջնազիր մը տան Թուրքիոյ: Հետաքրքրութիւնը մեծ էր մասնաւորապէս պուլկարական, յունական և սերպիական դեսպանատուներու շուրջը. յունական դեսպանատուներ ամէն օր խճողուած էր Պոլսէն մեկնելու համար անցագիր առնելու փութացող հէլլէնապատկներու անհատում բաղմութեամբ: Սակայն երեք դեսպաններն ալ չէին դադարէր ապահովիչ լուրեր տալէ իրենց կառավարութեանց բռնելիք ընթացքին նկատմամբ. պուլկարական դեսպանը, կատարեալ պաղարիւնութեամբ դեսպանատան կոտորած ապակիները անցընել կուտար, և ատիկա կը հոչակէր ապացոյց խաղաղութեան պահպանման. երեք դեսպաններն ալ պարզապէս Թուրքիան կը քնացնէին, իրենց կառավարութեանց ժամանակ ձգելու համար որ բանակներու համախմբումը լրացնեն: Իսկ Թուրք կառավարութիւնը, որ Դաշնակիցներէն շատ աւելի ժամանակի պէտք ունէր Օսմ. բանակներուն համախմբման համար, արտաքուստ այդ խաղը կլլել կը ձեւացնէր, յայտարարելով որ իրօք ամէն յոյս չէ կորած տակաւին:

Տէրութեանց Մանուցագիրը Բ. Դրան յանձնուեցաւ Սեպտեմբեր 27ի իրիկունը, աւստրիական դեսպանատան Ա. Թարգմանին միջոցաւ: Մանուցագիրը խմբագրուած էր հետևեալ կերպով. —

Ստորև ստորագրող՝ Աւստրիական, Անգլիական, Ֆրանսական, Ռուսական և Գերմանական դեսպանները (*), իրենց կառավարութեան հրահանգին վրայ, պոշտօն ստանձնած են հաղորդելու Բ. Դրան թէ Օսմ. կառավարութեան կողմէ հրապարակու եղած յայտարարութեանց համաձայն, Եւրոպական Թուրքիոյ նահանգներուն մէջ Բ. Դրան կողմէ կատարուելիք բարենորոգումներու մասին եղած խոստումները իբր «մուրհակ» կը նկատեն, և բնական կը համարին որ Բ. Դրանը 1880ի Վիլայէթներու

(*) Իտալիա չէր մասնակցած այս ծանուցագրին, Թուրքիոյ հետ պատերազմի մէջ ըլլալով: Իտալական կառավարութիւնը սակայն համամտութիւն յայտնած էր այդ օրերուն տէրութեանց կողմէ կատարուած բոլոր ձեռնարկներուն նկատմամբ:

Օրէնքին համաձայն, յիշեալ նահանգներու վարչութեան մէջ պէտք եղած բարենորոգումներուն գործադրութիւնը պիտի ապահովէ իրենց գործակցութեամբ, ժողովուրդին շահերուն համաձայն եղանակով մը:


Կը յայտարարեն նաև թէ այս բարենորոգումները Օսմ. կայսրութեան հողային ամբողջութեան ո և է վնաս չպիտի պատճառեն:

10 Հոկտ. 1912 (Ստորգ.) ՓԱԼԼԱՎԻՉԻՆԻ, ձԵՐԸԼՏ ԼՈՈՒԹԸՐ, ՊՕՄԲԱՌ, ԳԻՐՍ, ՎԱՆԿԸՆԱՅՄ

Այս Մանուցագիրը անշուշտ անընդունելի էր Թուրքիոյ, քանիոր կատարուելիք բարենորոգմանց մասին տիրութեանց գործակցութիւնը խնդիր կ'ընէր: Հաւանութիւն յայտնելով ատոր՝ դաշինձը պարզապէս իթիհատական իլլրտումի մը տեղի պիտի տար: Թաւիկն չէր դադարէր ժողովուրդը գրգռելէ ի նպաստ պատերազմի և ընդդէմ աւէն օտար միջամտութեան: — «Ի՞նչ պիտի ապահովցնէ թէ, կը գրէր. այսօր իրենց շղջնցնել ուղած 23րդ յօդուածին վաղը ճարգ յօդուածը չպիտի յաջորդէ, և միջամտութեան միեւնոյն իրաւունքը չպիտի յայտնուի նաև Արևելեան Անատոլիոյ նկատմամբ: Հետեւաբար երբ Եւրոպայի միջամտութեան և Եւրոպայի կողմէ մեր ներքին գործերը հակակշորի ենթարկելու մասին կը խօսինք, պէտք է խորհրդ ո՛չ միայն Րուսիոյի այլև Արևելեան Անատոլիոյ մասին, որովհետև Րուսիոյին սպասող վախճանէն կարելի չպիտի ըլլայ փրկել նաև Անատոլը»: Իսկ կառավարական մամուլը բարենորոգումները գործադրելու կողմն էր, և մասնաւորաբար Թաւիկի դէմ կը պայքարէր Իթիլաֆականներու յայտնի պետերէն Լուիֆի Ֆլքրի պէյ, Թեհմիկաթի մէջ, հոչակելով թէ «Եւրոպան ցարդ բարենորոգումներու անունով Թուրքիայէն պահանջած չէ այն տեսակ բան մը զոր Օսմ. Սահմանադրութիւնը չհատագտվէր»: Գալով կառավարութեան, ինք ալ կը ձգձգէր Տէրութեանց Մանուցագրին տրուելիք պատասխանը, և այդ օրերուն մասնաւորաբար զբաղած էր խտալեթուրք հաշտութեան խնդրով: Բանակցութիւնները որոնք կը կատարուէին Ուշիի մէջ, յանկարծ խզուած էին իտալական պահանջմանց պատճառաւ: Հռոմի Դաշինձը ատոր վրայ սպառնացած էր ընդարձակել պատերազմական գործողութեանց չրջանակը, և Միտիլլին ու Սամոսը զբաւելէ ու զինուորական կայան դարձնելէ վերջ՝ արգիլել Իզմիրի ճամբով կատարուելիք ամէն զինուորական փոխադրութիւն, նոյն իսկ զօրք ցամաք հանել Անատոլիոյ ծովեզերքը: Նոյն ատեն՝ իտալական Ա. նաւաբաժինը՝ ծովակալ Վիւլայի հրամանատարութեամբ ճամբայ կ'ելլէր դէպի Արշիպեղագոս: Բ. Դրան համար անշուշտ շատ լուրջ խնդիր մըն էր ասիկա. Պալքանեան Պետութեանց հետ պատերազմի՝ իրեն դէմ ունենալով նաև Իտալիան. շիտկէ շիտակ աղէտի մը զիմել էր. եթէ իրօք տակաւին յոյս ունենար թէ պիտի կրնայ Պալքանեան կնճիռը խաղաղութեամբ հարթել, անշուշտ պիտի զիմադրէր (*). բայց բացարձակապէս անյոյս էր այլևս: Դաշնակիցները իրենց համախմբութիւնը աւարտելու մօտ էին: Սօֆիայի կառավարութիւնը հրահանգ տուած էր օտար թղթակիցներուն որ պատ-

(*) Իտալիա երեք օր միջոց տուած էր Թուրքիոյ՝ իր սպառնալիքը գործադրելու առաջ. երեք օր վերջ՝ Ահմէտ Մուխթար փաշայի Դահլիճը ստիպուեցաւ ստորագրել հաշտութեան դաշնագիրը: Ափրիկեան Տրիպոլիս ոչ ևս էր...

բանտուին բանակին հետեւում: Յուսահատ մանաւանդ եւրոպական տէ-
րութիւններն էին, որոնք ատկէ վերջ ըլլալիք գիւնազիտական բոլոր
ձեռնարկները պարզ ձեւակերպութիւններ կը հռչակէին, չէին ծածկեր թէ



Գարատաղի Զորայի Մարթինիկի բանակի Ե. Բարթոլոմէոսի ֆոտ

այլևս ոչինչ կրնայ արգիլել պատերազմը, և կ'աշխատէին միայն թշնամու-
թիւնները սահմանափակել լոկ թուրքիոյ ու Դաշնակիցներուն միջև:
Սեպտեմբեր 28ին՝ Պատերազմական Նախարարութիւնը հրատարա-

կութեան յանձնեց վեհ. Սուլթանին հետեւեալ յայտարարութիւնը, ուղ-
ղուած բոլոր զինուորական իշխանութեանց. յայտարարութեան ոճը ինք-
նին կը զգացնէր թէ խաղաղութիւնը բանդագուշանք մըն է այլևս. —

Աւերոյց աշխարհ գիտե թուրքիոյ խաղաղասիրութիւնը: Օսմանցիք կը
յարգեն բոլոր ժողովուրդներուն իրաւունքները և փոխադարձաբար կ'ուզեն
որ ական ժողովուրդներ ալ յարգեն Օսմ. իրաւունքները: Օսմանցիք բնաւ
յոռի դիտում չունին ու և կ'ստաւարութեան դէմ և յարակաւութեանը տո-
գորուած չեն: Իրաւունք ունին պահանջելու որ միւս կ'ստաւարութիւններն
ալ անկեղծութեան հակառակ չշարժին: Օսմանցիք չեն փախա՛իր խոռվել ու
և և գեղի երջանկութիւնը, յառաջիկայութիւնը, և կ'ուզեն որ ուրիշներ ալ
այսպէս շարժին իրենց հանդէպ:

Հակառակ այն մեծ դժուարութեանց որոնց ենթարկուած է մեր երկի-
րը, շատ կարելոյն և ստիճանաբար ի գործ կը դնենք մեր երկրին պէտք
ունեցած բարեկորգումները: Կ'աշխատենք մեր ժողովուրդին երջանկութեանը
համար: Սակայն մեր փոքր դրացիները որ այժմ սկսած են մեր երկրին ու կը
տեսնեն թէ մեր յառաջիկայութիւնները քոյլ չպիտի սան իրագործել իրենց ա-
պօրեան ծրագիրը, կ'ուզեն արգիլել մեր բարեկորգումներն ու յառաջիկայու-
թիւնը և օգուտ փողել մեր դժուարութիւններէն, ու կը համաձայնին մեր
սահմանակից և սահակներուն վրայ յարձակելու համար:

Պուլխարիոյ, Սերպիոյ, Սեր Լեւան և Յունաստանի, այսինքն 600 տա-
րիկ ի վեր Օսմանցիներուն ֆաշագործութեանց թատերադրումը ալ երկրներուն
երազուստները կը մոռնան թէ Օսմանցիք ո՛րքան սուղ կը ծախեն իրենց
կեանքը, թէ մեկ տարի ի վեր հերոսաբար կը կռուին ի Տրիպոլիս, ու զօրք
կը դրկեն մեր սահմանագրութիւնները, հարկադրելով գլե՛ղ՝ շարժման մեջ դնել
մեր բանակը, պահապան ազգին պատուոյն:

Հետեւաբար, կը հրամայենք շարժման մեջ դնել զինուորական երկրորդ
ֆնկչութեան (Բ. Օրտու) շրջանակին բոլոր Բեքիֆներն ու Մուսաիֆըզնե-
րը, իսկ երրորդ ֆնկչութեան շրջանակին (Գ. Օրտու) Բեքիֆներն ու Մուս-
թաիֆըզները մասամբ: Այսօր ձեր վրայ կ'իջնայ պարսկականութիւնը՝ պաշ-
պանելու ձեր հայրենիքը, որուն համար ձեր ևս ինչիք քաջեցին իրենց բան-
կազին արիւնը:

Ձեր պարսկականութիւնն է չքոյրու որ թշնամիին սուղ և ոտակոյի ըլլայ
այս և ուրիշական հողը, որուն իւրաքանչիւր բութաշափը թրծուած է ձեր ևս ի-
նչիներուն մասունքներով, և արգիլել որ յարձակում չգործուի Օսմ. ժա-
նանգ հողին վրայ: Մեր թշնամիները կը համախառնին մեր սահմանագր-
ութիւններուն վրայ և կ'ուզեն ձեր ժառանգութիւնը խլել ձեր ձեռքէն. կ'ու-
զեն ֆակդել երջանկութիւնը ձեր զաւակներուն ու բոններուն: Ինչպէս ձեր
ևս ինչիք, դուք ալ պէտք է ֆաշութեանը պաշտպանեք հայրենիքը, պէտք է վա-
զեք դէպի սահմանագրութիւն, ձեր սուրով կ'սրելու համար այն ձեռքը որ կ'եր-
կունայ ձեր հայրենիքին դէմ:

Պէտք է Տրիպոլիս մեջ կռուող ձեր եղբայրներուն և նաև ցոյց տաք որ
արժանաւոր եղբայրներն էք անոնց: Ու ես վստահ եմ թէ ևս յաղթանակ-
ներ պիտի աւելցնեք ձեր ևս ինչեաց յաղթանակներուն վրայ:

Աստուած պարզեւե միշտ ձեզ յաղթանակ և ուրախացեալ Օստանցիները
ձեր յաղթութիւններով:

ՄԷՆԷՄՄԷՏ ՐԷՇԱՍ

Այդ միջոցին՝ Դաշնակիցներու զինուորական համախմբութիւնը լրացած էր բոլորովին: Պուլկարիոյ մէջ՝ Ֆէրտինանտ Չար ստանձնած էր



ՉՕՐԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՐԱՆԵՆԵՐ
Սերպ տղաք կը խրախուսեն զինուորները

բանակին ընդհանուր հրամանատարութիւնը, իրեն փոխանորդ և սպարապետ կարգելով Պուլկարիոյ ամէնէն ժողովրդական զինուորականներէն մէկը՝ զօրավար Սալօֆը, ինչ որ մեծ խանդավառութեամբ ողջունուած էր բանակին կողմէ: Չէթէները, որոնց թիւը 20,000ը անցած էր, խուճր խուճր սկսած էին խուժել սահմանադուրս. տեղ տեղ՝ ծանր ընդհա-

րուհներ կ'ունենային թուրք պահակներու հետ: Ամէնէն համոզիչ փաստը թէ պատերազմը բացարձակապէս անխուսափելի է այլևս և թէ Դաշնակիցները չեն կատակեր, Սերպ զինուորներու մուտքն էր Պուլկարիա՝ Պուլկար բանակին գործակցելու համար: — «Բաղձաթիւ կառախուճեր Պուլկարիա կը մտցնեն Սերպ զօրագունդեր որոնք վերահաս պատերազմին մէջ պիտի օժանդակեն պուլկարական ոյժերուն, կր գրէր Թանի թղթակիցը, Պ. Ռընէ Բիւօ: Անոնցմէ մէկուն ժամանման ականատես եղայ: Հակառակ ժամանակին ուշ ըլլալուն, բազմահարիւր Պուլկարներ խռնուած էին կայարանին մէջ, Սերպ եղբայրներուն յատկացուած, ծաղիկներով, սիկարէթներով, ծխախոտով, հացի նկանակներով: Իրերու ինչ հետաքրքրական վերադարձ: Քսանըթ տարի առաջ, գրեթէ օրը օրին, 1905 նոյեմբեր 14ին՝ Սերպ բանակը Պուլկարիա կը մտնէր և իր աջ թևը Պուլկարները կը ջախջախէր Պանսքիտօլի մէջ. վրդովուճը կը տարածուէր Սօֆիայի արուարձաններուն մէջ, Մարդիկ խմբովին կը դիմէին դէպի Ֆիլիպէի ճամբան, ուրկէ կը սպասէին փրկութիւնը. այնտեղէն պիտի գային Արեւելեան Բուժէլի զօրագունդերը: Անձկութիւնը մեծ էր. յաջորդ օրը՝ Սերպերը կրնային Սօֆիա խուժել: Երիտասարդ պատերազմական նախարար մը, հազարապետ Նիքիֆօրօֆ որ դեռ երեսուն տարեկան չկար, ամէնուն քաջութեան գրգիռ և լաւ. պիտի դիմադրէին ու պիտի յաղթէին (դիմադրեցին ու յաղթեցին): Այսօր, անունի զարմանալի զուգադիպութեամբ մը, զօրավար Նիքիֆօրօֆ մըն է որ Սօֆիայի կայարանին մէջ, պատերազմական նախարարի հանգամանքով կ'ընդունի Սերպ բարեկամ զօրագունդերը (*): Պատճառ չկար ուրեմն աւելի երկար ժամանակ անցընելու, ինչ որ լոկ թուրքիոյ նպաստաւոր պիտի ըլլար, անոր միջոց ընծայելով իր տակաւին թերի զինուորական համախմբումը լրացնելու: Երիթութիւնը որուն մատնուած էր Սերպա, բոլորովին համարձակ դարձուցած էր պալքանեան դաշնակիցները: Պուլկարիոյ վարչապետ Պ. Կէչօֆ կը յայտարարէր Մարքեի թղթակցին. «Ներկայ պատերազմը որու միջոցին Յոյն, Պուլկար, Սերպ, Կաթոլիկ Ալպանացի և Օրթոտօքս Գարատաղցիներ ձեռք ձեռքի պիտի կռուին, համապաւականներու գրգռութեանց արդիւնքը չէ. խաչակրութիւն մըն է թրքական անտանելի բռնապետութեան դէմ, որ կը նահապէտ ու կը շահագործէ Պալքանեան Թերակղզիին բոլոր Քրիստոնեաները: Սերպա ինչ իրաւունքով պատերազմէն վերջ դաշնակիցներէն պիտի կորզէ իրենց յաղթութեան պտուղը և այդ կերպով մեղսակիցը պիտի դառնայ թուրքիոյ (**): Առաջին անգամ Պ. Կէչօֆի այս խօսքերուն մէջ խնդիր եղաւ խաչակրութիւն բառը, որ աւելի ետքը՝ Ֆէրտինանտ Չարին մէկ յայտարարութեամբ՝ օրուան խնդիր պիտի դառնար, և քննադատութեան ու բողոքի առատ նիւթ պիտի հայթայթէր թուրք մամուլին: Պ. Կէչօֆի այս խօսքերը յայտնի ժխտումն էին

(*) De Sofia à Tchataldja. Par René Puaux. Correspondant de guerre du Temps.
Պ. Բիւօ այս հատորին մէջ հաւաքած է իր թղթակցութիւնները:
(**) Կականարկէ տէրութեանց անունով տրուած սեպտեմբեր 25ի աւստրելուս Ծանուցագրին:

նաև դաշնակիցներու այն հաւաստումներուն թէ իրենք աշխարհակալական ըղձանքներ չունին և հողային ընդարձակման չեն տենչար :

Սեպտեմբեր 30ին վերջապէս դաշնակիցները առին վճռական քայլը : Նոյն օրը , Պ . Կէշօֆ Սօֆիայի Օսմ . գործակատար Մուգպիլ պէյի յանձ-



ԶՕՐԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

«Քալ սէլամի թ նազը ետրիմ . . .»

նեց հետեւեալ Ծանուցագիրը , որ նոյն ատեն հաղորդուեցաւ նաեւ ուղ- սական և աւստրիական դեսպաններուն .—

Ստորագրեալս , վարչապէս եւ նախարար արտաքին գործոց ու Կրօնից , պատիւ ունի խնդրելու Թուրքիոյ գործակատարէն որ բարեհաճի Օսմ . Կայս . կառավարութեան հաղորդել հետեւեալ Ծանուցագիրը , ինչպէս նաեւ անոր յարակից Ծանօթութիւնը .

Հակառակ այն դիմումին զոր հինգ Մեծ Տերութիւնները , Աւստրո-Հուն- գար և Ռուս կառավարութեանց միջոցաւ , կատարած են Պալսանեան Պե- տրքեանց մօտ , դիմում որով կը խոստանան ձեռք առնել Եւրոպական Թուր- քիոյ վարչական բարեկարգմանց իրականացումը , Պուլխարիոյ , Յունաստանի եւ Սերպիոյ կառավարութիւնները ինքզինքնին պատրաստ կը զգան ուղղակի




Զինուոր հուսարները Պալսու վարչապետին մէջ

դիմելու Ն . Կ . Վ . Սուրբանիկ կառավարութեան , անոր յայտարարելու հա- վար թէ մի միայն արմատական , անկեղծօրէն եւ շուքեամբ գործադրուած բարեկարգումներ կրնան իրապէս բարեկարգել Կայսրութեան նահանգներուն ֆրիստեւայ ժողովուրդներուն դժբախտ վիճակը , երաշխաւորել բարեկարգու- քիւնն ու անդորրութիւնը Եւրոպական Թուրքիոյ մէջ , ապահովել անբախտ

խաղաղութիւն մը Օսմ. Կայսրութեան եւ Պաշտանեան Պետութեանց միջեւ, որոնց հանդէպ Բ. Դուռը յանախ բռնած է կամայական ու զրգոյիչ ընթացք մը գոր ոչինչ կ'արդարացնէ:

Պուշխարիոյ, Յունաստանի եւ Սերպիոյ կառավարութիւնները, ցաւելով հանդերձ որ Դարասադի կառավարութիւնը, ծագած դիպտումն բերուով,



Թուրք պահեստիներու տիպարներ

չի կրնար մասնակցիչ այս դիմումին, կը հրաւիրեն Բ. Դուռը որ անմիջապէս, Մեծ Տերութեանց եւ Պաշտանեան Պետութեանց հետ միաբանութեամբ՝ ձեռնարկէ Եւրոպական Թուրքիոյ մէջ մտնելու եւ հաստատելու Պերլինի Դաշնագրին 23րդ յօդուածով նախատեսուած բարեկարգումները, զանոնք հիմնելով ազգութիւններու սկզբունքին վրայ, — նահանգներու վարչական ինքնօրինութիւն, Պելճիզացի կամ Զուլիզերիացի ընդհանուր կառավարիչներ, զաւառային ընտրովի նորհրդարան, ուսիկան-գիւնուորութիւն, ազատ դաստիարակութիւն,

րակութիւն, երկրապահ բանակ, — անոնց գործադրութիւնը վստահելով վերին խորհուրդի մը, բաղիսցած հաւասար բռնով Բրիտանական եւ Իսպանական, ընդ հսկողութեամբ Մեծ Տերութեանց եւ Պաշտանեան չորս Պետութեանց Պոլսոյ դեսպաններուն:

Պուշխարիոյ, Յունաստանի եւ Սերպիոյ կառավարութիւնները կը յուսան որ Թուրքիա պիտի կրնայ յայտարարել թէ կ'ընդունի այս պահանջումը, յանձնառու պիտի ըլլայ վեց ամսուան պայմանաժամի մէջ գործադրութեան դիմելու ներկայ Ծանուցագրին եւ անոր յարակից բացատրական Ծանօթութեան մէջ յիշատակուած բարեկարգումները, եւ պիտի ուզէ՝ իր ապացոյց իր հաճութեան՝ եւ անկէ իր բանակին զօրաշարժի հրահանագիրը:

Ստորագրողը այս առիթով օրհնելով, կը մնայ, եւ այլն:

30 Սեպտ. 1912 (Շ. Տ.) Կէ. 703


Ահաւաստիչ 30 Սեպտ. 1912 (Շ. Տ.) Ծանուցագրին կցուած ծանօթութիւնը. —

1. Հաստատուի Կայսրութեան ազգութեանց ցեղային ինքնօրինութեան, իր բոլոր հետեւութիւններով:
2. Օսմանեան Խորհրդարանին մէջ՝ իւրաքանչիւր ազգի համեմատական ներկայացուցչութիւն:
3. Բրիտանացիներու ընդունելութիւնը՝ քրիստոնէաբնակ նահանգներու բոլոր հանրային պաշտօններուն մէջ:
4. Բրիտանացի հասարակութեանց ամէն կարգի վարժարաններուն ճանաչումը՝ Օսմ. վարժարաններու հաւասար աստիճանով:
5. Բ. Դուռը պէտք է յանձնառու ըլլայ թէ չպիտի փոխէ Օսմ. Կայսրութեան նահանգներուն ազգաբանական նկարագիրը, իսկաւ բնակչութիւն փոխադրելով անոնց մէջ:
6. Զինուորական ծառայութեան համար Բրիտանացիներու տեղական զինուորագրութիւն՝ քրիստոնէայ քատրօններով, մինչեւ ազգաքատրօններու կողմնութիւնը՝ զինուորագրութեան դադարում:
7. — Վերակազմութիւն Եւրոպական Թուրքիոյ վիլայէթներու ոստիկանութեան, Զուլիզերիացի եւ Պելճիզացի կազմակերպիչներու դրական հրահանատարութեան տակ:
8. Բրիտանացի բնակիչ ալ ունեցող վիլայէթներու մէջ անուանումը Մեծ Տէրութիւններէն ընդունուած Զուլիզերիացի կամ Պելճիզացի վալիներու, անոնց աջակից տալով ընտրական շրջանակներու կողմէ ընտրուած ընդհանուր ժողովներ:
9. Հաստատութիւն՝ Մեծ-Եւրոպոսին մօտ՝ բարձրագոյն խորհուրդի մը, քրիստոնէայ եւ իսկաւ հաւասար թուով անդամներով, վերոյիշեալ բարենորոգմանց գործադրութեան հսկելու համար:

Մեծ Տէրութեանց եւ Պաշտանեան Պետութեանց դեսպանները պաշտօն պիտի ունենան այդ խորհուրդին գործունէութեան եւ աշխատութեանց հետեւելու:

Համանման Ծանուցագիրներ յանձնուեցան Սերպ կառավարութեան կողմէ Պելլարատի Օսմ. դեսպան Ալի Ֆուատ պէյի, ինչպէս նաև ռուսական եւ աւստրիական դեսպաններուն, ու Յոյն կառավարութեան կողմէ՝ Աթէնքի Օսմ. պեսպան Մուխթար պէյի, ինչպէս նաև ռուսական եւ աւստրիական դեսպաններուն: Ալի Ֆուատ պէյ, ինչպէս Մուզալի պէյ, վերապահութեամբ ընդունած էին այդ Ծանուցագիրները, որոնք, դիւանա-

գիտական սովորութեանց համաձայն, պէտք էին Բ. Դրան արուիլ Պալ-
քանեան Պետութեան Պոլսոյ դեսպաններուն միջոցաւ: Միայն Աթէնքի
Օսմ. դեսպանն էր որ ընդունելէն երեք ժամ վերջը ետ դարձուց Մանու-



Օսմ. բանակին հեռագրական կազմակերպութեան համար գործող շարժական գոլիաները

ցազիրը, յայանելով որ չի կրնար ընդունիլ: Յունաստանի արտաքին գոր-
ծոց նախարար Պ. Բորովլաս սակայն պնդեց թէ անգամ մը ընդունուած
Մանուցազիր մը այլևս կարելի չէ մերժել, և պաշտօնագիրը վերադար-
ձուց Օսմ. դեսպանատուն: Նոր մերժման մը վրայ, Պ. Բորովլաս, դարձ-

եալ ոտնակոխ ընելով դիւանագիտական սովորութիւնները, ուղղակի Բ.
Դուռ՝ արտաքին գործոց նախարարին հեռագրեց որպէս զի հրահանգ տայ
Աթէնքի դեսպանին՝ Մանուցազիրը ընդունելու: Նորատունկեան էֆէնտի
փութաց պատասխանել որ եթէ Յունաստանի Մանուցազիրը նոյնն է, ինչ
որ էին Պուլկարիոյ և Սերպիոյ Մանուցազիրները, պէտք չկայ յանձնելու:
Իսկ եթէ տարբեր բնոյթ մը կը կրէ, այդ պարագային կրնայ իրեն հասցնել
Պոլսոյ հէլլէն ներկայացուցիչ Պ. Կրիսարիսի միջոցաւ:

Ընդհանուր դիւանագիտական աշխարհը և մամուլաբար Պոլիս,
տեսակ մը վարձարձամբ տեղեկացան Գաշնակիցներուն Մանուցազիրին: Ա-
պանսարար հաշտարար ոգուով խմբագրուած և խաղաղութեան ձգտող
պաշտօնագիր մը չէր, բայց վերջապէս կը սպասուէր որ Պուլկարիս և իր
զինակիցները Թուրքիոյ յանձնեն ոչ թէ Մանուցազիր մը, — որ կրնար
դուռ բանալ նորանոր լանկացութեանց և ձգձգութեան, — այլ վերջնա-
գիր մը, 24 կամ առ առաւելին 48 ժամ պայմանաժամով: Ասոր կը սպաս-
ուէր մանաւանդ Պոլսոյ մէջ, ուր Բ. Դրան չըջանալիսն անգամ թէ կը
կարծէին թէ վայրկեանէ վայրկեան պատերազմի յայտարարութեան բնոյթ
ունեցող վերջնագիր մը պիտի տրուի, ճիշտ Գարատաղի կողմէ եղածին
պէս: Այս համոզումը այն աստիճան արմատացած էր որ երբ հեռագրա-
կան Գործակալութիւնները վերոյիշեալ Մանուցազիրին յանձնուած ըլլալուն
յուրը հաղորդեցին, Պոլսոյ բովանդակ մամուլը, առանց ու ե է բացառու-
թեան, ծանուցազիր բառը թարգմանեց վերջնագիր, կարծելով որ հեռագ-
րական գործակալութիւնները սխալում մը ըրած են:

Յաջորդ օրը, 1 հոկտեմբեր, արտաքին գործոց նախարարութեան մաս-
նաւոր դիւանին պետ Էտէմ պէյ, աւստրիական դեսպանատունը երթա-
լով՝ դեսպան Փալլավիչիին Մարքիզին յանձնեց հետեւեալ Մանուցազիրը
որ պատասխանն էր Տէրութեանց դեսպաններուն կողմէ սեպտեմբեր 27ին
Դրան տրուած Մանուցազիրին. —

Ստրասպուր, արտաքին գործոց նախարար Ն. Կ. Վեհափառութիւն Սուր-
բանին, ի պատասխան Նոցին Վեհափառութիւնի Աւստրո շունկարիոյ, Անգլիոյ,
Ֆրանսայի, Ռուսիոյ և Գերմանիոյ դեսպաններուն միջոցաւ իրենց պատ-
կանեալ կառավարութեանց կողմէ մատուցած հոկտ. 10 քուակիր գեղուցազ-
րին, պատիւ ունի յիշեցնելու իրենց, ինչպէս Նոցին Վեհափառութիւնի կրկան ան-
ձամբ հաստատեց, թէ Կայս. կառավարութիւնը արդէ իսկ զգացած է պէտ-
ք այն բարեկործանաց, որոնց կը կարօտի Եւրոպական Թուրքիոյ նահանգ-
ներուն վարչութիւնը: Կայս. կառավարութիւնը այն աստիճան համոզուած է
այդ բարեկործանաց անհրաժեշտութեան մասին որ կ'ուզէ զանոնք գործադ-
րել առանց ու ե է օտար միջամտութեան, վստահ ըլլալով որ այդ պայման-
ներուն մէջ անոնց գործադրութիւնը պիտի նպաստէ երկրին բարգաւաճման
և սնտեսական զարգացման, և նոյն ատեն, Օսմ. Սահմանադրութեան ազա-
տական ոգոյն համաձայն, պիտի սպասուի համերայնութիւնն ու ներդաշ-
նակութիւնը այն այլազեղ սարրերուն միջեւ, որոնցմէ կազմուած է Կայսրու-
թեան այդ մասին ժողովուրդը:

Կարժէ այս առթիւ դիտել սալ որ, եթէ միևնույն այսօր այդ նահանգնե-

րուն ներքին կացութիւնը բարունգեալու համար եղած զանազան փորձերը իրենցմէ սպասուած ամբողջ արդիւնքը չեն տուած, այս յայտարարեալ գիտաւոր շարժանիքներէն մէկը անպիճանքի կերպով այն խոտովուած ու անապահով վի-



Թնդած թիւերով փորձարարութիւնը Պոլսոյ փողոցներէն

ճակն է, որուն պատճառ կ'ըղան առեւն ճեւակ եղեռնափորձեր, բոխած խոտովութեան վառարաններէ, որոնց բուն նպատակը ու է կասկած չի վերցնէր: Այսու հանդերձ Կայս. կառավարութիւնը կը զննահասէ բարեկամական նպատակը այն Զեկուցագրին զոր մեծ տրուութիւնները յարուար դասած են սալ իրեն ներկայ պարագաներուն հետեւանկով: Կայս. կառավարութիւնը սրտանց

կ'աջակցի այն ջանքերուն, զորս Մեծ Տերութիւնները ի գործ կը դնեն հետաքննելու համար բարեկամի մը վստահութիւնը, որուն հետեւանկները ճակատագրապէս մեծ աղէկներու դուռ պիտի բանային, աղէկներ. զորս առեւն ճեւակ հաշարար միջոցներով արգիլելը, պարտականութիւն մըն է ֆաղափարք աշխարհին համար:

Կայս. կառավարութիւնը համոզուած է որ այս ճեւակներով առաջին ֆալը ինք առած է, դիւրացնելու համար այն մարդասիրական պարտաւորութիւնը, զոր Մեծ Տերութիւնները ստանձնած են այս զարհուրելի ինկոնիստիկայ, որուն լուծման կ'աշխատեն:

Կայս. կառավարութիւնը չուզէր առարկել թէ Պերլինի Դաշնագրին կարգ մը տրամադրութիւնները գործադրուած են այն ճեւակ եղանակով մը որ չի պատշաճիր իրենց ոչ տառիկ ոչ ալ ոգոյնի, եւ թէ օստանեան շահերը, շատ պարագաներու մէջ ծանրապէս վնասուած են այդ պատճառաւ. Կայս. կառավարութիւնը չուզէր նաեւ մասնաւորաբար լինել թէ այդ Դաշնագրին 2-րդ յօդուածը միւս յօդուածներէն աւելի ոյժ ու արժեք ունի՞ այս օրուան համար: Այսու հանդերձ Կայս. կառավարութիւնը կը յայտարարէ թէ ինքնաբերաբար որոշած է, համաձայն Օսմ. Սահմանադրութեան, յառաջիկայ երեսուցանիստ սկզբնաւորութեան օրն իսկ Օսմ. կոնստիտուցիոն է կայսերական վաւերացուած ենթարկել 1880ի օրինագիծը, իր պատճառով շրտաբար:


Մեծ տրուութիւնները կրնան վստահ ըլլալ թէ Կայս. իշխանութիւնները խղճմտօրէն պիտի գործադրեն այդ օրէնքը, անկողնապէս որ հոշակոյնի:

Կերականցապէս անարդար պիտի ըլլար՝ տարբեր բեմի մը յասուկ աւելի կամ նուազ սխալեմտիքի նախկին զանգառութեանց եւ խուսափումներու վրայ հիմնուելով, հետեւեալ թէ այս օրուան սահմանադրական կառավարութիւնը չուզէր կամ չի կրնար անցեալին շեղումները վերջնականապէս բօքափել: Եղբայն անարդար պիտի ըլլար այս մասին կարգ մը կասկածներէ օգտուելով փնտրել ուրիշ միջոցներ եւ թողուլ այն միջոցները որոնք միայն համաձայն են ո՛չ թէ լոկ երկրին, այլ նաեւ ժողովուրդներու բուն շահերուն:

Կ. Պոլիս, 1/14 հոկտեմբեր ԳԱՔՐԻԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿՆԵՐ

Այս Ծանուցագիրը ո՛չ այնքան գործընթացն ունեցող վէճին հաշտարար լուծում մը տալու, որքան լոկ Օսմ. կառավարութեան սրժանատկատուութիւնը փրկելու կը ձգտէր ամէն բանէ առաջ: Պալքանեան Պետութիւնները մէկ կողմէն, Տէրութիւնները միւս կողմէն, աւելի կամ նուազ փափկութեամբ հասկցուցած էին Բ. Դրան թէ ծագած տագնապը բերանացի կամ գրաւոր խոստումներով անցնելիք բաներէն չէ, և թէ այս անգամ անհրաժեշտ են աւելի դրական հաւաստիքներ բարեօրոգիանց գործադրութեան մասին: Բ. Դուռը՝ եթէ իր բովանդակ գոյութեամբ խոստում կարէր, չպիտի կրնար այդ տեսակ ապահովութիւն մը ներշնչել: Ի զուր Նորաստանեան էֆէնտի կը խոստովանէր իբր թէ «տարբեր բեմի մը յասուկ աւելի կամ նուազ սխալեմտիք» զանցառութիւններն ու խուսափումները, ի զուր կը ջանար համոզելու թէ իր ներկայացու-

ցած կառավարութիւնը «անցեալին շեղումները վերջնականապէս պիտի թօթափէ»։ հակառակ կողմը կրնար առարկել թէ անցեալին բոլոր զանցառութիւնները, բոլոր խուսափումները, ճիշդ այդ տեսակ խուսափումներու հետեւած էին, և թէ առաջին անգամը չէր որ Բ. Գուռը այդպէս «անցեալին շեղումները թօթափել» կը խոստանար՝ տազնապը անցընելէ վերջ միեւնոյն շեղումներուն անձնատուր ըլլալու համար։ Ինչ ապահովութիւն կար թէ վաղն ալ նոյն բանը չպիտի ըլլայ։ Նորատունկիան էֆէնտիի սնդումը թէ «Սամ. Կայս. կառավարութիւնը կ'ուզէ բարենորոգումները գործադրել առանց ս' և է օտար իջն մտութեան», բնական է չէր կրնար կնճիռը լս ձեւ։ շարաթիւերէ ի վեր կրկնուող անօգուտ խօս.



Պուլկար զօրաբաժնիներու դրօշներուն բաշխումը

քերու պաշտօնական արձանագրութիւնն էր ըրածը, հանդիւ աւոր ձեւի մը տակ։ Մինչդեռ տէրութիւնները կը պահանջէին որ իրենց հսկողութեան տակ կատարուի այդ խուսափումներուն գործադրութիւնը, որպէսզի կարենան ապահով ըլլալ ու մանաւանդ ապահովցնել դէպի պատերազմ գահավիժող Պալքանեան Պետութիւնները։ Նկատի առնելով ժողովրդային տրամադրութիւնը և այն խախտող դիրքը՝ որուն վրայ դահլիճը կը ճրգնէր ինքզինքը կանգուն պահել, նկատի առնելով մանաւանդ արթուն հսկող Իթիհատին յարուցանելիք փոթորիկը՝ զիջման պարագային, կարելի չպիտի ըլլար ընդունիլ Կայսրութեան արժանապատուութեան հետ անհաշտ այդ պահանջումը, որ արդէն լոկ ձեւակերպութեան համար միայն կ'ըլլար, քանի որ տէրութիւններն ալ, Թուրքիա ալ շատ լաւ գիտէին թէ



Զորահանութեան օրերուն. — Տեսարանը Գոլտյ փողոցներուն մէջ

պահանջման ընդունուիլը Թուրքիոյ կողմէ, այլևս չի կրնար առաջ քա-
նել պատերազմին: Ասոր համար անշուշտ նորատունկեան էֆէնտի իր Մա-
նուցագրին մէջ տագնապը լուծելու բնոյթ ունեցող ոչինչ զրամ էր, և աշ-
խատած էր լոկ Օսմ. Կայսրութեան արժանապատուութիւնը փրկելու.
դահլիճը թերեւս իրօք զիջում ընէր՝ եթէ խաղաղութեան մասին յոյս ու-
նենար. քանի որ պատերազմը պիտի ծագէր հակառակ ամէն բա-
նի, իր կողմէ ըլլալիքն՝ և է զիջում թէ՛ օգուտ մը չպիտի ունենար և
թէ աւելորդ նուաստութիւն մը պիտի ըլլար Կայսրութեան համար:

Բ. Դուռը այս տրամադրութեան մէջ էր՝ երբ Պոլիս հասաւ Դաշնա-
կիցներու սեպտեմբեր 30ի Մանուցագիրը: Բառին բուն իմաստով վերջ-



Ընթերցում պատերազմի յայտարարութեան Կայս. Իրատէին

նագիր մը չէր՝ ինչպէս ամէն մարդ կը սպասէր որ տրուի, և առաջին տը-
պաւորութեամբ՝ առաւելապէս հաշտարար, փոխադարձ բանակցութեանց
ու համաձայնութեանց դուռ բացող պաշտօնագիր մը երեւցաւ. բայց
երբ միտքերը վերստացան իրենց պաղարիւնութիւնը, այն ատեն միայն
զգացուեցաւ թէ այդ Մանուցագիրը կը միտէր ծանրագոյն հարուած մը
տալ Օսմ. Կայսրութեան արժանապատուութեան: Մուխթար փաշայի
դահլիճը բարենորոգմանց գործադրութեան մէջ տէրութեանց միջամտու-
թեան սկզբունքն իսկ կը մերժեր, ստիպուած էր մերժել, յեղափոխու-
թեան մը տեղի չտալու և ապահով անկումէ մը խուսափելու համար. բայց
անա Պալքանեան Պետութիւնները ոչ միայն Տէրութեանց միջամտութիւ-
նը կը պահանջէին, այլ իրենք ալ կ'ուզէին մասնակցիլ բարենորոգմանց
գործադրութեան. միւս կողմէ, բարենորոգմանց մանրամասնութիւնները
զորս կը թուէին իրենց Մանուցագրին և անոր յարակից բացատրական
Մանօթութեան մէջ, գործքով Եւրոպական Թուրքիան կը խլէին Օսմ.
Կայսրութեանէն, կը դարձնէին ինքնավար՝ ամենալայն առումով, և անոր
կառավարիչ կը կարգէին Եւրոպացի մը որ Թուրքիայէն զատ ամէն մար-
դու պատասխանատու պիտի ըլլար: Այս ամէնուն գործադրութիւնը ապա-
հովելու կոչուած միջոցը զոր ցոյց կուտային՝ նուազ վիրաւորիչ չէր. Պալ-
քանեան Պետութիւնները կը պահանջէին Մեծ Եւրոպային գործակից

դարձած տեսնել — աւելի ճիշդը՝ Մեծ-Եպարքոսին վրայ հսկող, խնամակալ կարգել — Բարձրագոյն Խորհուրդ մը, Իսլամ և Քրիստոնեայ հաւասար անդամներով, և այդ Խորհուրդին աշխատութիւնները ենթարկել թէ՛ Մեծ Տէրութեանց և թէ՛ իրենց, Պալքանեան Պետութեանց հրահրութեան: Հակառակ իր քաղաքավարական ձեւին, նուազ անարգալից չէր նաեւ Օսմ. բանակին զօրաշարժի հրամանը ետ առնելու և Մանուցազրին մէջ յիշուած բարենորոգումները վեց ամսուան ընթացքին գործադրելու հրաւերը որով Դաշնակիցները կը կնքէին իրենց Մանուցազիրը:

Փրկելու համար Կայսրութեան արժանապատուութիւնը, դահլիճը՝ արտասովոր նիստէ մը ետք՝ հոկտեմբեր 2ին խզեց իր յարաբերութիւնները միանգամայն թէ՛ Պուլկարիոյ, թէ՛ Սերպիոյ և թէ՛ Յունաստանի հետ: Կէս-պաշտօնական ղեկոյց մը կ'ըսէր թէ. «Պալքանեան պետութեանց նախատալից Մանուցազրէն վերջ, այլեւս կարելի չէր անոնց հետ պաշտօնական յարաբերութիւն մշակել. հետեւաբար, որոշուեցաւ հրաման զրկել Սօֆիայի ու Պէլլրատի Օսմ. ղեսպաններուն որ անմիջապէս ձամբայ ելլեն դէպի Պոլիս»: Դեսպանները այդ մասին ո՛ր և է տեղեկութիւն չպիտի տային Պուլկար ու Սերպ կառավարութեանց, և անցազիր ալ չպիտի առնէին. իրենց հետ պիտի մէկնէին նաեւ ղեսպանատանց պաշտօնեաները(*): Դահլիճը, նոյն ատեն Եւրոպա գտնուող Օսմ. ղեսպաններուն զրկեց հետեւեալ ծանուցադիրը, որպէսզի Մեծ Տէրութեանց հաղորդեն. —

Մեծ Տէրութիւնները անշուշտ ծանօթացան Պուլկարիոյ և Սերպիոյ կողմէ(**) Եւրոպական Թուրքիոյ մեր նահանգներուն նկատմամբ զրկուած և մեր բանակին ցրուումը պահանջող Մանուցազրին:

Այդ Մանուցազիրը մեր կողմէ պատասխանի արժանի չըլլալով, հրաւիրեցինք Սօֆիայի և Պէլլրատի մեր ներկայացուցիչները՝ որ դադարեցնեն ամէն յարաբերութիւն տեղական իշխանութեանց հետ և դառնան Պոլիս:

Այնպէս կը մտածենք թէ խաղաղութեան պահպանման համար մեր թափած ջանքերը պիտի գնահատուին Մեծ Տէրութեանց կողմէ, որոնց հանդէպ ակնածանքի թերութեան մէջ գտնուեցան այս փոքր Պետութիւնները, մէկդի ընելով անոնց միջնորդութիւնը, և ինքզինքնուն թոյլ տալով դառնալու մեզի դէմ, առանց նկատի առնելու Եւրոպայի դոյութիւնը:


Ինչպէս կը տեսնուի՝ Բ. Դուռը կը գոհանար յարաբերութիւնները խզելով, և կը զգուշանար պատասխանելէ Պալքանեան Պետութեանց Մանուցազրին, զայն անարժան նկատելով այս տեսակ պատուի մը: 1854ին՝

(*) Ահաւասիկ Պալքանեան Պետութեանց Օսմ. ղեսպաններուն ուղղուած հեռագրին պատճէնը. — Օսմ. Կայս. Կառավարութիւնը նկատելով որ պուլկարական (կամ յունական, կամ սերպիական) Մանուցազիրը պատասխանի արժանի չէ, նկատելով նաև որ Պուլկարիա, Յունաստան և Սերպիա Մեծ Տէրութեանց հանդէպ ակնածանքի թերութեան մէջ գտնուած են, անոնց միջնորդութիւնը մէկդի ընելով, կը հրամայեմ ձեզի խզել ամէն յարաբերութիւն այն կառավարութեան հետ որուն մօտ ղեսպան կարգուած էք:

ԴԱՔՐԻԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ »
(**) Յունաստանի անունը չկար այստեղ, որովհետև Աթէնքի Օսմ. ղեսպանին մերժման պատճառաւ չէսէն Կառավարութիւնը չկրցաւ Բ. Դրան հասցնել Մանուցազիրը: Վերջէն՝ Բ. Դուռը յարաբերութիւնները խզեց նաև Յունաստանի հետ:

Խրիմի պատերազմին առթիւ՝ Ռուսիա ալ այդ եղանակը ընտրած էր, Դաշնակիցներուն կողմէ իրեն տրուած Մանուցազրին պատասխանելը իր արժանապատուութեան հետ անհաշտ հուշակելով: Թուրքիա, գրեթէ նոյն կացութեան մէջ, միևնոյն միջոցը կը կիրարկէր՝ իր ղեսպաններուն ուղղուած

ՎԵՏ. Սուլթանը Օսմանեան ղեկուց յարաբերութեան համար աղօթելէ վերջ, կը մեկնի մզկիթէս



վերոյիշեալ Մանուցազրով: Դեսպանները պիտի յայտարարէին միանգամայն թէ Թուրքիա իր պատիւը անվթար պահելու համար միայն ստիպուեցաւ յարաբերութիւնները խզել և թէ, պատերազմ ծագելու պարագային, բովանդակ պատասխանատուութիւնը կը ծանրանայ Պուլկարիոյ և

անոր դաշնակիցներուն վրայ: Սուլթանը, որուն հաղորդուեցան Նախարարաց Խորհուրդին այս որոշումները, իսկոյն Իրատէով մը հրամայեց որ ամէն միջոց ձեռք առնուի տէրութեան պատուին պաշտպանութեան համար(*):

Յարաբերութեանց խղումը անշուշտ պատերազմի յայտարարութիւն չէր, և Բ. Դուռը տակաւին կը դժկամակէր այդ յայտարարութիւնը ընելու: Գիտենք այն պատճառները որոնք զինքը կը բռնադատէին պատերազմէն զգուշանալու, գիտենք նաև այն միւս պատճառները որոնք նոյնպէս զինքը կը բռնադատէին անպատճառ պատերազմելու: Այս անիկ կացութենէն ելլելու յոյս չունէր թէ և, բայց այդ միջոցին՝ Պ. Բուանքարէ, — միակ մարդը որ Եւրոպայի մէջ անկեղծօրէն ճիգ կը թափէր խողազութեան պահպանման համար, — դարձեալ յաջողած էր համաձայնութիւն գոյացնել տէրութեանց ընդդիմամարտ նկատումներուն միջև, և որոշուած էր զերագոյն զիտում մը կատարել Պալքանեան Պետութեանց մօտ, դանոնք ետ կեցնելու համար պատերազմէ: Աւստրիա՝ զիմում պիտի ընէր Սերպիոյ մօտ, Ռուսիա Պուլկարիոյ մօտ, Աւստրիա և Ռուսիա Գարատաղի մօտ, Անգլիա և Ֆրանսա Յունաստանի մօտ, իւրաքանչիւր տէրութիւն՝ իր ստանձնած գործը գլուխ հանելու համար, պիտի վայելէր միւս բոլոր տէրութեանց աջակցութիւնը: Բ. Դուռը որոշեց սպասել այդ զիմումներուն արդիւնքին, ինչպէս կը յայտնէ հոկտեմբեր Յին, յարաբերութեանց խզման յաջորդ օրը հրատարակուած կէս-պաշտօնական զեկոյց մը, որ տէրութեանց վերոյիշեալ զիմումներուն լուրը տալով կը յարէր. — «Բ. Դուռը, Օսմ. Կայսրութեան պատիւը ամբողջապէս պաշտպանելով հանդերձ, նախամեծար կը համարի Սօփիայի և միւս դաշնակիցներու դահլիճներուն փափաքը ի դերև հանելը: Քաղաքական սչխարնը Օսմ. Կառավարութեան կողմէ երէկ արուած որոշումը (յարաբերութեանց խղումը) կը դատէ այս տեսակէտէն, և կասկած չկայ թէ մասնաւոր կերպով կը գնահատէ զայն»: Եթէ երբեք իրօք կարելի դառնար խաղաղութեան պահպանումը ո՞ր և է սակարկութեամբ կամ համաձայնութեամբ, Բ. Դուռը պիտի կրնար ինքզինքը արդարացնել թուրք հանրային կարծիքին առջև, առարկելով թէ տէրութեանց ճնշման, բռնադատման տակ միայն հաւանած է պատերազմէ ետ կենալու. վերջապէս թուրք հանրային կարծիքը չպիտի ելլէր իրմէ պահանջելու որ բովանդակ Եւրոպայի ասպարէզ կարգայ: Այս ճարպիկ խաղը սակայն չպիտի յաջողէր, որովհետև Տէրութեանց զիմումը Պալքանեան Պետութեանց մօտ՝ մնաց ապարդիւն, ճիշդ ինչպէս ապարդիւն մնացած էր պալքանեան կնճիռը Գեոպանխորհուրդով մը լուծելու մասին դարձեալ Պ. Բուանքարէի կողմէ եղած առաջարկ մը, որ տէրութեանց կողմէ չէր ընդունած:

Յաջորդ օրն իսկ, Բ. Դուռը վերջնականապէս յոյսը կտրած էր տէրութիւններէն, և որոշած ինք իր ձեռքով մաքրելու իր պատուին դէմ եղած անարգանքը: Հոկտեմբեր 4ի առտուն՝ արտաքին գործոց նախարար-

(*) Տեսնել աւելի վարը, նազըմ փաշայի կողմէ բանակին ուղղուած յայտարարութիւնը:

րութեան մասնաւոր դիւանին պետ էտնէմ պէյ պուլկարական դեսպանատունը երթալով՝ ի զիմաց Բ. Դրան հետեւեալ զեկոյցը յանձնեց դեսպան Պ. Սարաֆօֆի, —



Պաշտպանութեան խողազութեան խղումը Սօփիայի մէջ

Պուլկարական դեսպանատուն.
Պուլկարական ոյժերու ընդհանուր ղօրաշարժն ու համախմբումը Օսմ. Սահմանադրութիւնի վրայ, սահմանին ամբողջ երկայնքը ամրութիւններու և ռազմական դիրքերու դէմ գործուող ամենօրեայ յարձակումները, թուրքիոյ ներքին գործերուն մէջ եղած մեջամտութիւնները և Պուլկար կառավարութեան նոյնքան անընդունելի որքան:

անըմբռնելի պահանջումները անհնար դարձուցած են խաղաղութեան պահպանումը թուրքի և Պուլկարի միջև, խաղաղութիւն՝ զոր կայս. կառավարութիւնը կը փափաքէր միշտ պահպանել :

Հետեւաբար, Պուլկարի արքայական դեսպանատան պետին և իր պաշտօնէութեան կը հաղորդուի թէ պետք է առեն իրենց անցադիրները, և կարելի եղածին չափ շուտով մեկնին Օսմանեան հողէն :

Էտնէմ պէյ յետոյ գնաց Սերպիական դեսպանատունը և համիմաստ զեկոյց մը յանձնեց դեսպան Պ. Նէնատովիչի : Նոյն գիշերը՝ Օսմ. բանակները հրաման ստացան յարձակողականի սկսելու Սերպ և Պուլկար սահմանագլուխներուն վրայ : Բանի օրէ ի վեր արդէն երկու սահմանագլուխներուն երկայնքն ալ շատ ծանր ընդհարումներ կ'ըլլային ոչ միայն թուրք և Սերպ կամ թուրք և Պուլկար Ձէթէներու, այլ նաև կանոնաւոր զինուորներու միջև . անպաշտօն պատերազմ մը գոյութիւն ունէր ուրեմն, երբ Բ. Դուռը պատերազմի պաշտօնական յայտարարութիւնը ըրաւ : Նորատունկեան էֆէնտի անմիջապէս շրջաբերական - հեռագրով մը արտասահմանի օսմ. դեսպաններուն ծանոյց պատերազմի յայտարարութիւնը . ներքին գործոց նախարար Ալի Տանիշ պէյ ալ ծանոյց դաւառային իշխանութեանց, նահանգներու ժողովուրդներուն հայրենասիրութեան կոչ ընելով : Իսկ պատերազմական նախարար և սպարապետ Նազրմ Փաշա հետեւեալ յայտարարութիւնը ուղղեց Օսմանեան բանակին . -

Համաձայն ծովային եւ ցամախային զինուորներու վերին հրամանատար Կենսափառ Սուրբանէկ սաքաձ կայսերական մեկ Իրաշիս, խօսքս կ'ուղղեմ ձեզի, այսինքն օսմանեան քաղաքի բանակին :

Սպաներ եւ զինուորներ,

Դարեւե ի վեր մեր հայրենիք այսօր կարեւոր վայրկեան ապրած չէր : Մեր դրացի կառավարութիւնները, որոնց հետ խաղաղութեամբ եւ նոյն իսկ բարեկամաբար ապրելէ զատ ուրիշ բան չէիմ ուզեր, արդարութեան առեւ օրեմ առեւ իրաւունք ունակոյ ընելով, ու խաղաղութեան պահպանման համար մեր քափած ջանքերը ի դեռեւ հանելու համար, կը յանդիման մեզի ասպարեզ կարդալ, առանց կարեւորութիւն տալու եւրոպական Մեծ Տերութեանց յորդորներուն եւ բարեացակամութեան : Աւրոյց ազգը անոնց այս յանդուգն ընթացքը կատարեալ զգուսնով եւ արհամարհանով ընդունեց եւ ձեզի յանձնեց այդ նախասիւնը ընելու յանդուգնները ապսակելու գործը :

Սպաներ եւ զինուորներ, ձեզի կ'իյնայ այս նախասիւնին վրեժը յուձեղ, մեր պետութեան պահուն ու նուիրական իրաւունքները պաշտպանել եւ ամբողջ շիւղերի առջեւ ապացուցանել որ յաղթական Օսմանցիներու ձեռքերը չեն խաբարուած, թէ անոնք ամբողջովին պահպանած են իրենց նախնիներուն փառապանծ աւանդութիւնները, առեւ ժամանակ ցոյց տուած քաղաքներ և հայրենիքի սիրոյն անոնց ըրած անսահման անձնագոհութիւնները : Ձեր նախնիներէն բռն մը քաղաք ժամանակով Անաստուէն Բոււնի անցնելով այդ մեծ երկիրը գրաւեցին : Անոնց փառապանծ որդիներն ալ միևնուայսօր ձեզի ունեցած բոլոր պատերազմներուն մէջ հերոսաբար շարժելով ամբողջ աշխարհի հիացումնին առարկայ եղան, եւ ասով օրինակներ տուին

ձեզի : Ձեզի համար հայրենասիրական պարսկանութիւն մըն է Ասուձոյ օգնութեամբ խիստ դաս մը տալ ձեր բնակիչներուն որոնք զինուորական առաքիւնութիւններու տեսակետով ձեզի վար կը մնան : Երկիրը ձեր վրայ դրած է իր յոյսը :

Սակայն թեւ ալ նպասակը գոր պիտի պաշտպանէք ձեր կեանքը վստահ եւրոպայի, որքան ալ իրական եւ արդար ըլլայ, մի մոռնաք որ Ասուձոյ օգնութեամբ ձեր ցոյց տալիս յաղթական քաղաքներէն զատ, ուրիշ օրինակ մըն ալ ցոյց պիտի տաք : Այդ ալ մարդկութեան հանդէպ ձեր ցոյց տալիս կարգապահական ոգին պիտի ըլլայ, եւ ձեր հրամանատարներուն հանդէպ՝ քաղաքական հնազանդութիւնը : Առանց պատճառի եւ անգործեմ արիւն պիտի չի քափել : Անմեղներուն, սխարներուն, կիներուն եւ տղոց, ինչպէս նաև զերկներուն հանդէպ բռնութիւններ ի գործ դնելու չի : Անոնց ժողովուրդին կեանքն ու ինչքը եւ առեւ օրեմ իրեն համար նուիրական եղող կրօնական հաստատութիւնները պիտի պաշտպանել : Պիտի գրաւ այն կարգ մը բռնութիւններուն վրայ, որոնք իրենց հրամայողներուն հնազանդելու համար է միայն որ ձեզի դէմ կը պատերազմին, թեւ ներկայիս կ'անիծեն պատերազմը, եւ որոնք արտակը փախափին բարեկամութեան ձեռք կարկանդակ ձեզի : Պիտի ցոյց տաք քաղաքակիրթ աշխարհին, որ այնքան ինչ կը ճանչնայ ձեզ, թէ Օսմանցիները առեւ օրեմ յաղափարեմ ազգերու ասիականի վրայ կը գտնուին եւ թէ կը հաւատան որ քաղաքական արդարադատութեան սկզբունքներն ու մարդասիրական գաղափարները վերջ ի վերջոյ պիտի յաղթանակեն :

Հայրենիքի արի պաշտպաններ, ընդհանուր վստահին առջեւ առեւ ժամանակե արեւի միացած ուժերով եւ պարսկանութեան զիսակցութեամբ յառաջացէք : Մա՛նչ, յառա՛ջ : Ինչպէք որ Բարսեպի Ասուձոյ օգնութիւնն ու ամբողջ ազգին հոգին ձեզի հետ են : Ձեր ետեւը կան ձեր քաղաքները վարձատրող, ձեր պիտի հոգացող, ձեր վերջերք դարձանող եւ ձեր ընտանիքներուն օգնելու համար առեւ օրեմ անձնագոհութեան պատրաստ, հաւատարիմ ու գրաւող արեւ : Մա՛նչ, յառա՛ջ : Ձեր յաղթանակներով եւ ձեր անեղանակութեան պարսկանութեան գործարարութեամբ ձեր ընտանիքները, ազգականները եւ բոլոր հայրենակիցները երջանիկ եւ երախտապարս ըրէք. եւ բոլոր Ասուձոյ քաղաքներն ալ առեւ օրեմ :

Պատերազմական նախարար և կայսերական բանակի վերին հրամանատարի փոխանորդ Ա. Ֆէրիթ ՆԱԶԸՄ

Պատերազմի յայտարարութիւնը մեծ խանդավառութիւն առաջ բերաւ Պոլսոյ մէջ : Յոյսերը արգիլուած էին, բայց մայրաքաղաքին բանուկ փողոցներուն մէջ, գլխաւորաբար Բ. Դրան և Սպարապետութեան շէնքին շրջակաները, հո՞ծ բազմութիւն մը կը վժար, անյաբուրեմ կարդալով երեւակայական և միշտ յաղթական կարգ մը կոչումներու լուրեր, զորս մէկ քանի թուրք լրագիրներ կը յերկրէին վաշտկեանը վայրկեանին, թերթքելու համար : Պատերազմի յայտարարութեան կայս. Իրատէն որ կարգաւորուած էր թնդանօթի հարուածներէ ետք, այլևս խաղաղութեան հա-

ւատացող չէր թողած: Չինուորական առաքուհիները բոլորովին տենդագին թափ մը ստացած էին. աճէն կողմէ կաճաւորներու թափօրներ կը դիմէին Սպարապետութեան դուռը, մասնաւոր դրօշներով, զինուորական երաժշտախումբ մը առջևնին: Կայս. Պայատան ներքինիներէն տասնըչորս հոգի որոնք նոյնպէս կամաւոր գրուած էին, խանդավառ ծափերու առարկայ դարձան իրենց անցած փողոցներէն: Խուճերով կամաւորներ կը հասնէին նաեւ մօտակայ դաւառներէն, իրենց հետ բերելով նուէրներ և Օսմ. բանակին սահմանուած ձիեր: Ոչ ոք կը տարակուսէր պատերազմի ելքին



Պուլկար բանակին մէկ բօքը (քահանան)

վրայ օ զինուոր, ժողովուրդ, սպայ, պաշտօնատար՝ մօտալուտ ջախջախիչ յաղթութեան մը յոյսով լեցուած էին: Նոյն բանը նաեւ դաւառներուն մէջ, ինչպէս կը տեղեկացնէին օրը օրին հասած հեռագիրներ:

Պուլկարական և Սերպիական դեսպանները, Բ. Դրան պատերազմի յայտարարութեան և Պոլսէն մեկնելու համար իրենց եղած հրաւերին պատասխանեցին յաջորդ օրը, հոկտեմբեր 5ին, հետեւեալ պաշտօնագրով որ նոյնպէս պատերազմի յայտարարութիւն մըն էր. —

Բ. Դուռը չպատասխանեց այն համանուն Ծանուցագրին զոր Պուլկար, Հէլէն և Սերպ կառավարութիւնները պատիւը ունեցան իրեն յանձնելու սեպտեմբեր 30ին: Միւս կողմէ, կացութիւնը, — որ արդէն շատ ծանրացած էր, որովհետեւ Բ. Դուռը, ոտնակոխ ընելով մարդկային իրաւունքները, գրաւած էր Սերպիական ռազմաթերթը և արգելքի տակ առած էր յունական նաւերը, — բոլորովին սպառնալից դարձաւ երբ միջազգային սկզբունքներու բռնաբարմամբ, Թուրք զինուորները Պուլկար և



Զորահանութեան օրերուն. — Տեսարանը Ապարապետութեան Դրան առջեւ.

Պալատեան Պատերազմ. — Յաւելութեան Թիւ 7. — Տպագր. Օ. Արզուման

Սերպուսանապահ կայքերու դէմ յարձակումներ գործեցին և Բ. Դուռն ալ խզեց իր դիւանագիտական յարաբերութիւնները:


Զետեւաբար ն. Վեհափառութիւն Սերպիոյ (կամ Պուլկարիոյ) Թագաւորին կառավարութիւնը, խորապէս ցաւելով հանդերձ, ինքզինքը պարտաւոր կը զգայ զէնքի ոյժին դիմելու, Օսմ. կառավարութեան թողով Սերպիոյ (կամ Պուլկարիոյ) և Օսմ. կայսրութեան յարաբերութեանց խզումէն առաջ գալիք ամէն պատասխանատուութիւն:

Պատիւ ունիմ ծանուցանելու կայս. կառավարութեան թէ այս վայրկեանէն սկսեալ Սերպիա (կամ Պուլկարիա) ինքզինքը պատերազմի մէջ կը նկատէ Թուրքիոյ հետ, և թէ իմ պաշտօնս աւարտած նկատելով, պիտի մեկնիմ Պուսէն կարելի եղածին չափ կարճ ժամանակուան մէջ:

Սերպիա (կամ Պուլկարիա) բնակող օսմ. հպատակները եթէ ուզին՝ ազատ են մեկնելու, իսկ եթէ կը նախընտրեն մընալ, կրնան ապահով ըլլալ թէ օրէնքներու պաշտպանութենէն չպիտի զրկուին բնաւ:

Նոյն օրը, Պուլկարական և Սերպիական կառավարութիւնները իրենց ներկայացուցիչներուն միջոցաւ Տէրութեանց մատուցին հետեւեալ զեկոյցը. —

Թուրքիոյ մէջ տիրող անիշխանութիւնը որ պատճառ եղած է մեր սահմաններուն մերձակայ ազգաբնակչութեանց կեանքը անտանելի դարձնելու, վերջին ժամանակներս աստիճան մը աւելի սաստկացաւ: Տէրութիւնները ձեռնարկեցին Պէրլինի Դաշնագրութեան 23րդ յօդուածով նախատեսուած բարեկարգութիւնները ներմուծելու: Եւրոպայի հաւաքական կամեցողութեան ի պատասխան Բ. Դուռը քանիցս իր կողմէ փորձուած միջոցին դիմեց, յայտարարելով թէ ինչպէս եւրոպական նահանգներուն, նոյապէս ալ ասիականներուն մէջ պիտի գործադրէ բարենորոգումները, առանց արտաքին միջամտութեան մը պէտք տեսնելու: Օսմ. կառավարութեան լուրջ բարենորոգումներ գործադրելու խոստումները աշխարհի արհամարհանքին արժանացած են: Իրերու ընթացքը եկաւ բոլորովին համոզելու թէ ինչ աստիճան հիմնաւոր են անոնք: Ուստի պուլկարական, հէլլենական, գարատաղեան և սերպիական կառավարութիւնները, չը կարենալով հանդուրժել Թուրքիոյ մէջ գտնուող իրենց արենակիցներուն չարչարան-



Փողկուրը փողոցներուն մէջ կը ծափահարէ կառավարութեան որոշումը

մտութեան մը պէտք տեսնելու: Օսմ. կառավարութեան լուրջ բարենորոգումներ գործադրելու խոստումները աշխարհի արհամարհանքին արժանացած են: Իրերու ընթացքը եկաւ բոլորովին համոզելու թէ ինչ աստիճան հիմնաւոր են անոնք: Ուստի պուլկարական, հէլլենական, գարատաղեան և սերպիական կառավարութիւնները, չը կարենալով հանդուրժել Թուրքիոյ մէջ գտնուող իրենց արենակիցներուն չարչարան-


քին, և սպառազին սննոց կացութեան տհեղ վտանգները նկատի ունենալով՝ որոշեցին հիմնական հակակշիռ մը պահանջել, իրականացնելու համար այն բարենորոգու մեքերը, որոնք պիտի կրնան բարելուել թուրքիարնակ Բրիտանականներու կենցաղը։ Այս վերջին փորձը համապատասխան չէր թուրքիոյ արտադրութեան, որով առանց լուրջ պատճառի, իր դորքը շորժման մէջ դրուելու, ընդդէմ Պաշտանեան Պետութեանց, և խզեց դիւանագիտական յարաբերութիւնները։ Պաշտանեան, Սերպիա և Յունաստան ուլցուել սիրտ ստիպուեցան իրենց կորգին գորաշարժի ձեռնասկիւտու։ Սերպ (կամ Պաշտան) կառավարութիւնը կը հաւատայ որ արդար է այլեւս զէնքի ոյժին գիտելը։ Այս վայրկեանէն սկսեալ Սերպիա (կամ Պաշտան) պատերազմի վիճակի մէջ գըտնուելուն, ըստ 1907ի միջազգային օրէնքներու պարտադրութեան, թուրքիոյ ուղղեց պատերազմի հստակման զիկոյցը։ Սերպ (կամ Պաշտան) կառավարութիւնը համոզուած է թէ պատերազմի յայտարարութեամբ հետապնդուած նպատակը համապատասխան է բոլոր քաղաքակիրթ ուղղութեան շահերուն։ Նախնայնորէն օտար բնակչութեանց շահերը պիտի պաշտպանուին, ազատական սկզբունքով։ Սերպիոյ (կամ Պաշտան) արքայական կառավարութիւնը կը վստահի բարեկամ ազգութեանց համակրանքին և կոչ կ'ուղղէ օտար կառավարութեանց չէզոք մնալ հանդէպ այն ծանր պարտականութեան զոր Սերպիոյ (կամ Պաշտան) կառավարութիւնը ստանձնած է։

Թուրքիոյ և Բաշնակիցներուն միջև կոչու թիւեր պարզ էր այլևս. — կեանքի ու մահուան կտիւ. և փոխադարձաբար առիթը մազերէն կը բըռնէին յայտարարելու համար թէ երեսակայելիք ամէնէն անողորմ կոխնէրէն մէկը պիտի ըլլայ ատիկա։ Այլ մօտ կէտ կար տակաւին, և այն ալ թուրքիոյ կողմէ Յունաստանի նկատմամբ ցոյց արուած անմեղքի «բարեացակամութիւն»ն էր։ Բաշնակիցներէն ամէնէն աւելի պատերազմի պատճառ տուողը Յունաստանն էր, սակայն թուրքիա լոկ Պաշտանական ու Սերպիական դեսպաններուն ճամբայ տուած էր, և իր պատերազմի յայտարարութեան մէջն ալ չէր յիշատակեր Յունաստանը. միայն դիւանագիտական յարաբերութիւնները զազրեցուցած էր անոր հետ։ Բացատրելէ առաջ Բ. Իրան այս զարմանալի ընթացքը, հետեւինք նախ Աթէնքի իրադարձութեանց։

Յունաստան ընդհանուր զօրահանութեան ձեռնարկած էր Սեպտեմբեր 18ին։ Եէորիոս թագաւոր որ Գօրէնակ կը գտնուէր, փախած ճամբայ ելել։ Սեպտեմբեր 20ին՝ հասու վիեննա և տեսակցեցաւ ո՛չ միայն Աւստրիոյ արտաքին գործոց նախարարին, այլ նաև Ֆրանսական, ռուսական և իտալական դեսպաններուն հետ։ Տեսակցութեան առարկան՝ Արեւելքի տագնապն էր, որ մասնաւորաբար Յունաստանի համար պիտի կնճռուէր մէկ քանի օր վերջ, հելլենական նաւերուն թուրքիոյ կողմէ արգելքի տակ անուելուն պատճառաւ։ Եէորիոս թագաւոր վիեննայէն անցաւ Յունաստան և Աթէնք հասու Սեպտեմբեր 26ի իրիկունը, ընդունուելով անազին բազմութեան մը և պաշտօնական անձնաւորութեանց կողմէ։ Բոլոր նախարարները, Սինոդը ամբողջովին, դեսպանական մարմինը և արքայական ընտանիքը ընդ առաջ գացած էին։ Ժողովուրդը կը գոչէր. «Կեցցէ՛ Յունաստանի թագաւորը, կեցցէ՛ պատերազմը»։ Թանդալու ցոյցերն ու աղաղակները շարունակուեցան մինչև պալատ։ Այնտեղ թագաւորը ստիպուեցաւ պաշտպանէն երեսոյ ժողովուրդին և հետեւեալ ճառը արտասանեց. — «Սրտանց շնորհակալութիւն կը յայտնեմ իմ սիրելի ժողովուրդիս նեց. — «Սրտանց շնորհակալութեան և իմ անձիս նկատմամբ ցոյց տուած

սիրոյ այս նոր ապացոյցին համար։ Համոզուած եմ որ՝ հելլեն ժողովուրդը, որուն հայրենասիրութիւնը զնահանելու շատ առիթներ ունեցած եմ իմ գահակալութեանս չըջանին, միշտ պիտի կատարէ իր պարտականութիւնը։ Առնական ու հանդարտ ընթացքը զոր ցոյց կու տայ, հելլեն ազնուական ժողովուրդին չվայել մեկ հասակ ընթացքն է ինքնին, մանաւանդ ներկայ

Կրկնապի երեսակայելիքը կը դիմեն հելլեն իոր շողաբան



չափազանց ծանրակշիռ պարագաներուն մէջ։ Կատարեալ վստահութիւն ունիմ կառավարութեան վրայ, որ արդէն իսկ բազմիցս ապացուցած է իր հայրենասիրական հողատարութիւնը։ Ամենակարողն Աստուած պահպանէ և օրնէ իմ սիրական հայրենիք»։ Ժողովուրդը ծափերով կնքեց այս խօսքերը և պալատէն ելլելով հետեւեցաւ նախարարապետին, մինչև անոր

տունը, ուր Պ. Վէնիդէյուս հետեւեալ ճառը խօսեցաւ. — «Ձեր առնական ու հանդարտ ընթացքին նկատմամբ թագաւորին կողմէ եղած գովեստէն վերջ ինծի ոչինչ կը մնայ ըսելիք: Այն յոյսով եմ միշտ թէ խաղաղութիւնը պիտի պահպանուի, քանի որ մենք և մեր լարեկամ Դաշնակիցները ո՛ր և է երկրակալական միտում չունինք...»: Ժողովուրդը ընդհատեց նախարարապետին խօսքը, և ամէն կողմէ սկսան ժայթքիլ աղաղակներ՝ պատերազմի ի նպաստ: Պ. Վէնիդէյուս յոռի թիւն հրամայեց, և հետեւեալ կերպով վերջացուց իր ճառը. — «Մեր պահանջումները կը պատշաճին նաև դրացի Կայսրութեան (Թուրքիոյ) շահերուն, և հիմնական ու անհրաժեշտ պայմանն են խաղաղ դրացնութեան մը՝ Պալքանեան Պետութեանց և իր միջև: Բայց եթէ յուսախար ըլլանք, հէլլէն ժողովուրդը կրնայ վստահիլ իր բանակին ու նաւատորմին վրայ, որոնք, եթէ պարագաները պահանջեն, ի վիճակի են պաշտպանելու ազգային շահերը: Այս պատճառաւ՝ կը հրաւիրեմ ձեզ որ դուչէք ինձի հետ. «Կեցցէ՛ բանակը... Կեցցէ՛ նաւատորմը... Կեցցէ՛ ազգը»: Ժողովուրդը կրկնել չտուաւ այս հրաւերը:

Երկու օր՝ վերջ. Սեպտեմբեր 28ին, գահաժառանգ Կոստանդին իշխան՝ իր զաւկին՝ Նէորիոս իշխանին և սպայակոյտին հետ մեկնեցաւ, Թեսալիոյ բանակին վերին հրամանատարութիւնը ստանձնելու: Անգին բազմութիւն խոնուած էր կայարանին ճամբուն վրայ. ինչպէս նաև շրջակաները: Տուներու պատահաններէն և սաշտգամներէն բուռ բուռ ծաղիկներ կը թափէին իշխանին վրայ, որ կայարան կ'երթար ուղեկցութեամբ իր հօրը՝ Նէորիոս թագաւորին բոլոր արքայական իշխաններուն և իշխանուհիներուն, նախարարներուն, օտար զինուորական կցորդներու և զինուորական ու քաղաքային պաշտօնատարներու: Վահաժառանգը փոխադրող շոգեկառքը դրօշազարդուած էր: Նէորիոս թագաւոր, բաժանման պահուն երկարօրէն կուրծքին վրայ սեղմեց իր զաւակը: Եւ անա ընդհանուր ծափեր սկսան թնդալ ամէն կողմէ. «Ձի՛թօ օ Տիատօխօս» (Կեցցէ՛ գահաժառանգը) կը պօռային հազարաւոր մարդիկ, անկարագրելի խանդավառութեան մը մէջ:

Հոկտեմբեր 1ին՝ Հէլլէն Սորհրդարանը իր նստաշրջանը բացաւ մեծ խանդավառութեամբ: Սրտան կացութեան անհրաժեշտ դարձուցած բոլոր բացառիկ միջոցներն ու վարկերը քուարկուեցան միաձայնութեամբ. զանազան կուսակցութեանց պետերը կոչուած ըրին իրենց հետեւորդներուն որ խմբուին կառավարութեան շուրջը և ոյժ տան անոր: Բուէարկուեցան նաև մէկ քանի զինուորական կարգադրութիւններ, ինչպէս նաև արքայական իշխանները բանակին մէջ գործօ՛ւ ծառայութեան կոչող հրամանագիրը և պատերազմական վիճակի յայտարարութիւնը (*):

(*) Ժողովը հաստատեց նաև մօտաքօիօմ, պատերազմին տեւողութեան հիման վրայ. նոյնը ըրած էին նաև Պուլկարիա և Սերպիա իսկ Թուրքիա, որուն առևտուրի մարդիկը ամէնէն աւելի պէտք ունէին մօտաքօիօմի, եւրոպական դրամատուներու շնչման տակ չկրցաւ այդ դիւրութիւնը ընծայել իր ժողովուրդին, և իբր թէ սահկա չէր բաւեր, 0/25ի յաւելում մը ըրաւ տուրքերուն վրայ, պատերազմական հարկ աւելնով, և աւելի խստացուց տուրքերու գանձումը, նոյն ատեն կալուածական տուրք

կառավարութիւնը բացառիկ վարկ պահանջեց պատերազմի համար: Բուռն ծափեր ողջունեցին ծովային նախարարին այն յայտարարութիւնը որով նաւատորմին կաուելու և ծովուն վրայ գերակշռութիւնը պահելու կարող լլլալու կը յայտնէր: Բայց օրուան ամէնէն նշանաւոր իրողութիւնը Կրէտացի երեսփոխաններու մուտքն էր հէլլէնական Սորհրդարանը: Եր-



ՉՕՐԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՍՐԵՐՈՒՆ
Տեսարանը Սերքէճիի կայարանին մէջ

կար ատեն կար որ Կրէտացիք 40 երեսփոխան ընտրած էին Հէլլէնական Սորհրդարանին համար, բայց ժէճն-Թիւրք կառավարութիւնը յայտարարած ըլլալով թէ անոնց մուտքը Սորհրդարան՝ պատերազմի պատճառ պիտի նկատէ, չէին կրցած իրենց նպատակին հասնիլ: Պաշտպան տէրութիւնները նոյն իսկ հակառակած էին անոնց Կրէտէէն մեկնելուն, և մէկ քանին որոնք կը փորձէին փախչելով անցնիլ Սթէնք, ձերբակալուած ու Կրէտէ վերադարձուած էին: Աթէնք հասնողներն ալ, կամ արդէն իսկ Աթէնք գտնուող երը հանդիպած էին Պ. Վէնիդէյուսի մերժման: Հէլլէն կառավարութիւնը մինչև անգամ զինուորական ոյժ գործածած էր անոնց Սորհրդարան մուտքը արգիլելու համար, որովհետև Պալքանեան Դաշնակցութեան երկունքի օրերն էին և Պ. Վէնիդէյուս կ'ուշխատէր ամէն հնարաւոր միջոցներով քնացնել Թուրքիան ինքզինքը հաշտ պահելով անոր հետ: Բայց այլևս այդ նկատումները անհետացած


քերն ու քեմիքիւն կ'աւելցնէր կամահաճ գնահատութիւններու վրայ հիմնուելով, ինչ որ 0/50ի կը բարձրացնէր պատերազմական հարկի անունով տուրքերուն վրայ եւ ղաժ յաւելումը 0/10 ալ Պէլէտիյէի տուրքը աւելցուեցաւ:

էին և Կրէտացի երեսփոխանները մտած էին Սորհրդարան ծափերու և «կեց-
ցէ»ներու մէջ: Պ. Վէնիդէլուս բարի գայուստ մաղթեց անոնց, անկա-
րագրելի ոգեւորութիւն մը յարուցանելով. ամբողջ ժողովը ոտքի ելած
կը ծափահարէր առանց դադար առնելու. քոյր կղզիին կցման ձեւա-
կերպութիւնն էր որ կ'ըլլար այդ նշանակելի ընդունելութեամբ: Պահ մը
վերջ, խանդավառութիւնը աւելի մեծցաւ երբ Պ. Վէնիդէլուս յայտա-
րարեց թէ Հէլլէն Կառավարութիւնը կ'ընդունի կրէտական Ազգ. Ժո-
ղովին որոշումը՝ կղզին միացնելու Յունաստանի, ու վճռապէս կը յայ-
տարարէ թէ Յունաստան և Կրէտէ այլևս մէկ Սորհրդարան պիտի
ունենան: Յետոյ ըսաւ թէ Յունաստան, հակառակ իր խաղաղասիրու-
թեան, զօրաւոր է բարոյապէս ու նիւթապէս, ու նաև դաշնակից Պե-
տութեանց օժանդակութեամբ, ինչ որ զինքը ի վիճակի կը դարձնէ
յաղթականորէն դիմադրելու ամէն վտանգի: Ի վերջոյ՝ նրաւիրեց Կրէտացի
երեսփոխանները սր Կրէտէ դատնան և այնտեղ երեսփոխանական նոր
ընտրութիւն կատարեն՝ հէլլէն Սահմանադրութեան համաձայն: Պ. Վէ-
նիդէլուս յայտարարեց նաև թէ միջազգային կնճառութեանց տեղի չտա-
լու համար պիտի յարգէ մեծ տէրութեանց որոշումները Կրէտէի մասին:
1897էն ասդին՝ Յունաստան իրաւունք ունէր 1. Իր թագաւորին
միջոցաւ ընտրելու Կրէտէի գործադիր իշխանութեան պետը, հէլլէն մը
ըլլալու պայմանաւ. 2. Կրէտէի ոստիկան և քաղաքապահ ղինուորները իր
սպաներուն հրամանատարութեան ենթարկելու. 3. Հէլլէն պաշտօնեայ և
դատաւոր զրկելու Կրէտէ՝ արդարութեան և պետական գործերու տըն-
տեսութեան համար: Իսկ Թուրքիա՝ լսկ Սուլթանի ծովածոցին մուտքին
վրայ գտնուող կղզեակի մը՝ մէջ Սամ. դրօշ մը պահելու իրաւունքը ու-
նէր: Վաղուց Յունաստան կ'ուզէր իր իրաւունքնեուն աւելցնել նաև
Կրէտացի երեսփոխաններուն Հէլլէն Սորհրդարանին մասնակցութիւնը:
Տէրութիւնները յանձնարարած էին համբերել, մինչև առիթը գար: Հի-
մայ այդ առիթը եկած էր և Պ. Վէնիդէլուս անկէ կ'օգտուէր: Շատ չան-
ցած՝ կղզին վերջնականապէս Յունաստանի կցելու առիթն ալ պիտի ներ-
կայանար:

Երեսփ. Ժողովին նիստէն վերջ, Հէլլէն Կառավարութիւնը Կրէ-
տական կառավարութեան հաղորդեց Պ. Վէնիդէլուսի ճառը, յանձնա-
րարելով որ առժամաբար շարունակէ կառավարել կղզին, ձեռնարկելով
երեսփոխանական ընտրութեանց, և հոգ տանելով կղզիին բնիկ Իս-
լամներուն պաշտպանութեան:

Այս իրողութիւնը ծանուցանող հեռագրին հասնելէն օր մը առաջ
հէլլէնական դեսպան Պ. Կրիրարիս՝ դեսպանատան Ա. թարգման Պ.
Նաուսի միջոցաւ 24 ժամուան պայմանաժամ տուած էր Բ. Դրան՝
գրաւուած յունական նաւերու վրայ դրուած արգելքը վերցնելու համար:
Յունաստանի այս պահանջման ոյժ կուտային նաև Անգլիա, Ֆրանսա,
Ռուսիա և Գերմանիա: Բ. Դրուը սակայն՝ հարկ չտեսաւ Յունաստանի
վերջնագրին պատասխանելու, որովհետև Դաշնակիցներու կողմէ տրուած
Սեպտեմբեր 30ի Շանուցագրին վրայ, որուն զուգադիպած էր նաև Կրէ-

տացի երեսփոխաններու Հէլլէն Սորհրդարան մանկուն հարցը, իր դիւա-
նագիտական յարաբերութիւնները խզած էր Յունաստանի հետ ալ: Նո-
րատունկեան էֆէնտի այդ առարկու թիւնը ըրաւ Պոլսոյ հէլլէն դեսպա-



Փոքր Ասիոյ ընտրութիւններու անցքը նոր կառուցելու


նատան թարգմանին, երբ անիկա վերջնագրին լրանալը ծանոյց իրեն:
Միայն վերոյիշեալ տէրութեանց և անուղղակի կերպով ալ Յունաստանի
գոնացում մը տուած ըլլալու համար, հաւանեցաւ որ օտար ապրանք
կրող հէլլէնական նաւերը կարենան անցնիլ նեղուցներէն, որոշեց նաև ար-

ձակել գրաւուած հէլլէնական նաւերէն անոնք որ օտար ապրանք կը կրէին:

Իրերը այս վիճակին մէջն էին, երբ Բ. Դուռը ստիպուեցաւ պատե-
րազմ հրատարակելու Պուլկարիոյ և Սերպիոյ դէմ, առանց նկատի առնելու
Յունաստանի մը գոյութիւնը՝ երբ զինակից այդ երկու պետութեանց:
Կրէտացի երեսփոխաններու մուտքը Հէլլէն Սորհրդարանէն ներս՝ մինակը
պատճառ մըն էր պատերազմի, քանի որ կ'ընկերանար այն տեսակ պաշ-
տօնական յայտարարութեանց, որոնք կ'զլլին Յունաստանի կցումը կը
հոչակէին: Թուրքիա սակայն պատերազմ չյայտարարեց ատոր համար,
գոնացաւ միայն ծանուցանելով թէ Կրէտէի վերաբերող գործերը պաշտ
պան տէրութեանց իրաւասութեան ենթակայ ըլլալով, անոնց պիտի բողո-
քէ Աթէնքի դահլիճին բռնած ընթացքին դէմ: Պղտատնական բողոք,
որուն տրուին իսկ անյայտ մնաց այդ օրերու թո՛ւ ու բո՛ւն մէջ: Շատ
մեկնութիւններ եղան Թուրքիոյ կողմէ Յունաստանի նկատմամբ ցոյց
արուած այս «բարեացակամութեան» նկատմամբ: Նորատու նկեան էֆէնտի
յայտարարութիւնը թէ Յունաստանի Մանուցագիրը Թուրքիոյ հասած
չըլլալով չէր կրնար անոր դէմ ալ պատերազմ հրատարակել, ապահովա-
բար դիւանագիտական պատասխան մըն էր, և շատ հեռու ճշտարտութե-
նէն: Եթէ Թուրքիա Յունաստանի Մանուցագիրը չէր ընդունած, Կրէտացի
երեսփոխաններու հարցը չէր բաւեր պատերազմ յայտարարելու համար:
Իրականութիւնը սա է որ Թուրքիա այդ օրերուն գերագոյն ճիգ մը ըրաւ
Յունաստանը անջատելու Պալքանեան Դաշնակցութենէն: Մանօթ ըլլալով
Յոյն ժողովուրդին նկարագիրը, մանաւանդ Պուլկարներուն նկատմամբ
ունեցած անշիջանելի ասելութիւնը, իրեն զիւրին երեսցաւ ո՛ր և է հաշուե-
յարդարութեամբ Յունաստանը խել անոնցմէ: Պաշտօնական չըջանակնե-
րը որոնք բնաւ չէին յուսար թէ Յունաստան կրնայ դաշնակցիլ Պուլկա-
րիոյ հետ, և որոնց համար անակնկալ մը եղած էր Յունաստանի
գործակցութիւնը Պալքանեան Պետութեանց հետ, մասամբ այն հա-
մոզումը ունէին թէ Յունաստան պայմանաւոր յանձնառութեամբ մը
միայն կապուած է միւսներուն հետ, և անպատճառ ստիպուած չէ
զինուորական աջակցութիւն ընծայելու անոնց: Անոնք որ այս հա-
մոզմամբ լեցուած էին, անշուշտ իրաւունք ունէին տակաւին յու-
սալու: Ատով կը բացատրուի Բ. Դրան «բարեացակամութիւն» Յու-
նաստանի նկատմամբ, նոյն իսկ Կրէտէի մասին անոր բռնած վիրաւորիչ
ընթացքէն վերջ: Ատով կը բացատրուին նաեւ այն բոլոր զիջումները՝
զորս Բ. Դուռը ըրաւ այդ օրերուն, յատկապէս Յունաստանի համար:
Կրաւուած նաւերու մէկ մասին արձապուծը սիրաշահութեան քայլ մըն
էր ինքնին (*), Դա՛լիճը Յունական կառավարութենէն ներողութիւն
խնդրեց նաեւ Պոլսոյ Յոյն դեսպանատան դէմ եղած յարձակմանց համար:
Յետոյ, նոր զիջում մը ըրաւ, փութացնելով խտալեթուրք պատերազմին
առթիւ հակապետական ընթացքի մէջ գտնուող կղզեցի Օսմ. հպատակ

(*) Կրաւուած էին 33 նաւեր, որոնցմէ 14ը միայն օտար ապրանք կը կրէին:

Յոյներու մասին խոստացած ընդհանուր ներուճը: Երբ տակաւին Յու-
նաստանի հետ պատերազմ չկար, նախարարաց Խորհուրդը հրատարակու-



Խտալեթուրք հաշտութեան յայտարարութեանը Տրեպոլոյ մէջ

թեան յանձնեց հետեւեալ որոշմանակիրը, որ այդ ներուճը կը նուիրա-
գործէր: —

Ներման արժանացած են իտալիոյ զինուորներուն կողմէ գրաւուած և Թուր-
քիոյ վերագարձուելիք կղզիներու բնակիչներէն անոնք որ թշնամութեանց մասնակ-

ցեցան կամ թշնա Բուժեանց ընթացքին պատասխանատուութիւն հրաւիրող վիճակի մէջ գտնուեցան:

Հետեւեալաբար, դատական իշխանութեանց կողմէ չպիտի հետապնդուի և չպիտի պատժուի, առանց դատակարգի և դիրքի խտրութեան, ոչ մէկ անձ՝ թշնամութեանց միջոցին իր ունեցած քաղաքական կամ ղինուորական ու է ընթացքին, կամ իր յայտնած ու է է գաղափարին հետեւանքով:

Ներկայ ընդհանուր ներուժը ու է է ազդեցութիւն չպիտի ունենայ սովորական յանցանքներու համար:

Այս առթիւ պիտի հրատարակուի առժամեայ օրէնք մը: Ասկէ դատ, պիտի գործադրուին վարչական և դատական բարենորոգումներ՝ առանց ցեղի և կրօնքի խտրութեան՝ յիշեալ կողմերու բնակչութեանց երջանկութեան ու անդորրութեան, իրաւունքի ու արդարութեան հաւասարապէս կիրառման համար:

Նոյն կողմերուն մէջ պաշտօնի պիտի կոչուին այն տեսակ պաշտօնեաներ ու դատաւորներ՝ որոնք տեղեակ են տեղական լեզուին ու սովորութեանց, և կը լրացնեն պահանջուած յատկութիւնները:

Յունաստանի անջատումը Պալքանեան Դաշնակցութենէն, պզտիկ նըպաստ չէր թուրքիոյ համար: Իտալական կառավարութեան սպառնալիքին վրայ Բ. Դուռը փութացած էր հաշտութեան դաշնագիրը ստորագրել՝ Իտալիոյ ձգելով թուրքիոյ փոխարինման ստացուածքները, որոնց մէջ՝ Օսմ. յեղափոխութեան յայտնի դէմքերէն մէկը, էնվէր պէյ, բուռ մը ղինուորներով անընկճելի կը մնար քանի ամսէ ի վեր: Այս հաշտութեամբ թուրքիա կ'ազատէր իտալական վտանգէն, ու կը շահէր մաս մը յոգնած ղինուորներ, զորս Իտալիա փութով նաւ լեցնելով Պալիս կը գրկէր: Բայց նորէն ծովին չէր տիրանար, և չէր կրնար իր ասիական ղինուորները Իզմիրի ու Տարսանէլի ճամբով հասցնել Սելանիկ, արևմտեան բունակը գօրացնելու և կամ դայն պարէնաւորելու համար, որովհետև իտալական զրահաւորներուն կը յաջորդէին յունականները. թուրք նաւատորմը, որակով ու քանակով տկար, երբեք չպիտի կրնար ծովը մաքրել անոնցմէ: Պարզ կ'երեւայ թէ ինչ պիտի ըլլար իր ձեռք բերկիք առաւելութիւնը, եթէ Յունաստան չէր մնար պատերազմին մէջ և ծովը ազատ թողուր թուրք մարտանաւերուն ու փոխադրանաւերուն առջև:

Տարակոյս չկայ որ մանր մուր ղիջուներ չէին կրնար այդ գործը հնարաւոր դարձնել. պէտք էր աւելի յանկուցիչ պատառ մը, և շատ հաւանականաբար Բ. Դուռը այդ օրերուն տրամադիր էր կրէտէն վերջնականապէս Յունաստանի ձգելու. գոնէ ատոր աշխատող տէրութիւններ գտնուեցան: Այս կերպ կարգադրութիւն մը շատ ուշ կը հասնէր սակայն. տարի մը առաջ՝ թերեւս թուրքեւէլէն ղինակցութեան մը նախաքայլը դառնար այդ իմաստուն ղիջումը. բայց Պալքանեան Դաշնակցութեան կազմութենէն ասդին, Յունաստան նոյնքան և աւելի զրաւիչ երկրամասի մը յառած էր աչքերը, Եպիրոսին, որուն կը տենչար արդէն իր ազատագրութենէն ի վեր. ու տակաւին կար Մակեդոնիոյ հէլլենացած մասը: Եւ Պալքանեան Դաշնակցութիւնը այս ամէնուն տիրացումը հնարաւոր կը

դարձնէր: Այդ կերպով՝ Յունաստան պիտի կրնար իր երկաթուղիները միացնել եւրոպական գիծին և ազատի կղզիացած վիճակէ մը որ մեծապէս կը յամեցնէր իր բարգաւաճումը: Կրէտէն խոստանալ ատոնց փոխարէն, ապահովաբար շահաւէտ առաջարկ մը չէր. մանաւանդ որ ծովու վրայ գերակշռութիւնը իր կողմը ըլլալով, Յունաստան թուրքիոյ մասնաւոր բարեացակամութեան չէր կարօտեր կրէտէն գրաւելու համար:

Ահա թէ ինչո՞ւ Բ. Դրան սիրաշահութեան ջանքերը մնացին անպատու և Յունաստան փութաց միանալ իր ղինակիցներուն: Պոլսոյ հէլլենական ղեսպան Պ. Կրիրարիս, Պուլկարիոյ և Սերպիոյ ղեսպաններուն կողմէ արուածին համանման պատերազմի յայտարարութիւն մը յանձնեց Բ. Դրան, հոկտեմբեր 5ի միեւնոյն օրը: Նոյն իրիկունը՝ երեք ղեսպանները մեկնեցան Պոլսէն, ղեսպանատան պաշտօնեաներուն հետ: Պուլկարիս իր հպատակներուն պաշտպանութիւնը յանձնեց Ռուսիոյ, Սերպիա՝ Կերմանիոյ և Յունաստան ալ Ֆրանսայի:

Այսպէս ուրեմն խօսքը մնաց հուրին ու սուրին: Ծարաթներէ ի վեր բովանդակ աշխարհի վրդովման պատճառ դարձող պաշտօնագրելու մարտը տեղի տուաւ թնդանօթին առջև: Զահանդական անստուգութեան չըջան մը կը բանար հոկտեմբեր 4ի օրը, թուրքիոյ կողմէ եղած պատերազմի յայտարարութեամբ. Ի՞նչ պիտի ըլլար հետեանքը, տագնապը որքան պիտի տուէր, ո՞ր կողմը պիտի դառնար յաղթական, դաշնակիցները՝ որոնք իրարմէ տարանջատ մնալու այնքան խոր ու հիմնաւոր պատճառներ ունէին՝ պատերազմական իրադարձութեանց ընթացքին պիտի կրնային անվթար պահել զիրենք միացնող զիւրաբեկ համաձայնութիւնը: Եւրոպական ղիւանագիտութիւնը այս հանելուկներուն առջև սահմակած կը մնար, և ամէն բան ցոյց կու տար թէ ինքն իսկ ուղղութիւնը կորսնցուցած նաևու մը երանեալ տատանեալ դրութեան մատնուած է ծագող փոթորիկին մէջ: Իրեն համար կային մտահոգութեան աւելի ահաւոր պատճառներ. կարելի պիտի ըլլար պատերազմը սահմանափակել լոկ Պալքաններու մէջ, — նպատակ որուն համար ամէն ճիգ կը թափուէր այդ միջոցին՝ մասնաւորապէս Բարիզի և Լոնտոնի դաշլիճներուն կողմէ: Պայքարը լոկ թուրքիոյ և Պալքանեան Պետութեանց կռիւ չէր, այլ մանաւանդ Սլաւութեան և Գերմանութեան կռիւ: Դարերու մաքառման, դէպի Արևելք ծաւալման համար կատարուած փոխադարձ ջանքերուն բախտը պիտի վճռէր պատերազմը, և անոր արդիւնքը ծանրապէս պիտի ճնշէր մէկ կամ միւս կողմը: Դեռ Պալքաններու մէջ թնդանօթին ձայնը չէր գոռացած երբ արդէն իսկ լուր ելած էր թէ Աւստրիա և Ռուսիա, Գերմանութեան ու Սլաւութեան ախոյեանները, կը պատրաստուին սպառազինուիլ, պէտք ու Սլաւութեան ախոյեանները, կը պատրաստուին սպառազինուիլ, պէտք եղած ատէն զէն ի ձեռին միջամտելու համար կռուի մը որ բուն պատերազմէն ամենաւաղ յետեւին չէր իր կարգին պիտի ստիպուէր անոնց հետեւի, ամբողջ Եւրոպան էր որ իր կարգին պիտի ստիպուէր անոնց հետեւի:

առաջ բերելով իրերու դրուժիւն մը՝ որուն վրայ խորհիլն իսկ գլխու պտոյտ կը պատճառէր:

Ահա այս խելայեղիչ անստուգութեան մէջ Պոլսէն մեկնեցան Պալքանեան Դաշնակիցներու երեք ղեկավարները, երբ անդին պատերազմը սկսած էր արդէն, և Պուլիար, Յոյն, Սերպ բանակները միանգամայն ութ կէտերէ կը խուժէին Օսմ. հողը:

ՎԵՐՋ Գ. ՀԱՏՈՐԻՆ ԵՒ Ա. ՄԱՍԻՆ



Էնվէր Պէյ Տրեպուսոյ մէջ

ՅԱՆԿ Գ. ՀԱՏՈՐԻՆ



ԳԼՈՒԽ ԺԳ. — ԻՆՅՎԷՆ ԺԱՂԵՅԱԸ ԱԿՏԵՐԱԳՄԸ

1908 Յուլիսի յեղափոխութեան դերը ներկայ պատերազմին մէջ. — Անդրանիկ երեսփոխանական ընտրութեանց պատճառած հիասթափութիւնը. — Ժէօն-Թիւրքերու ազգայնամոլութիւնը. — Նոր էրաւատէր մը Մակեդոնիոյ մէջ. — Ժէօն-Թիւրքերուն փորձած զինուորական կազմակերպութիւնը և Պալքանեան Պետութիւնները. — Անհրաժեշտութիւն Պալքանեան Դաշնակցութեան. — Ժէօն Թիւրքերու սխալները Մակեդոնիոյ մէջ. — Եւրոպացի գործակալներու ճամբուիլը և Մակեդոնիոյ հրոսապետներուն դէմ կիրարկուած հալածանքը. — Ընկերակցութեանց օրէնքը և իր 4րդ յօդուածը. — Չէթէներու օրէնքը. — Չինահաւաքութիւն. — Յաւալի ծայրայեղութիւններ. — Մակեդոնիոյ խոշտանգումներուն ու բռնութեանց նկարագրութիւնը երեսփ. ժողովին մէջ. — Մերձեցման նշաններ Պալքանեան ժողովուրդներուն միջեւ. — Եկեղեցիներու օրէնքը. — Յունաց Պատրիարքարանը Համազգային ժողովը նիստի կը հրաւիրէ. — Կառավարութիւնը կ'արգիլէ. — Մերձեցում Պատրիարքարանին և Էկարքարանին միջեւ. — Մուհամմադներու հարցը Պալքանեան մերձեցումը կը փութացնէ. — Ալպանական ապստամբութիւնը և Մակեդոնիա. — Չէթէները կը վերայտնուին. — Պալքանեան Դաշնակցութեան նախանշանները. — Սահմանազուլուի ընդհարումներ. — Մալիսոյներու մեծ ապստամբութեան մը երկիւղը. — Շիթլի և Քոչանայի ջարդերը. — Յուզում Պուլկարիոյ մէջ. — Պատերազմաշունչ միջիններ. — Պէրանայի ջարդերը. — Պոմպաներու արհաւիրքը. — Պալքանեան Դաշնակցութիւնը այլևս կասկած չի վերցնար. — Կոմս Պէրիթուտի առաջարկը. — Թուրքիոյ շահը ո՛րք էր և ի՞նչ ըրաւ — Չախուղուած Պէրիթուտի առաջարկին 371

ԳԼՈՒԽ ԺԵ. — ՍԵԿՈՒՆԴԻ ՕՐԵՐ

Միթիկներու շրջանը. — Օգոստոս 12ի Սօֆիայի հսկայ միթիկը. — Բուռն ճառեր կառավարութեան և Ֆէրոփնանտ Զարին դէմ. — Իգսալ ինչպէ՞ս կը նկարագրէր Օսմ. բանակը. — Հրոսակներ, պոմպաներ, սահմանազուլուի ընդհարումներ. — Նախկին նախարար Կէնատիէֆի յօդուածները. — Պուլոյ Էկարքարանը և Պուլկարիոյ պատերազմախորհրդի յօդուածները. — Միթիկները Սերպիոյ մէջ. — Նոր ջարդեր Հին Սերպիոյ մէջ. — Օսմ. կառավարութիւնը վար կը դնէ Սերպիոյ ապստամբութիւնը. — Միթիկները Յունաստանի մէջ. — Ամէն կողմ պատերազմի պահանջ Պալքանեաներու մէջ. — Պ վէնիզէլոս կը զգացնէ թէ կռուի կը պատրաստուին. — Գարատաղ անպաշտօն պատերազմի մէջ. — Դիւանագիտութեան գերագոյն ձիգերը. — Պ. Բուսնքարէի գործունէութիւնը. — Կոմս Պէրիթուտի նոր ճառը. — Թուրքիա 50,000 հոգի կը զրկէ Մակեդոնիա. — Որոշում թրքական մեծ ռազմափորձերու. — Գրգուութիւնը կաւեշնայ Պուլկարիոյ մէջ. — Պ. Սազօնօֆի այցելութիւնները. — Պալքանեան պետութիւնները կը սպառազինուին. — Սամսի ապստամբութիւնը. — Յունական Բուլկի նաւուն միջադէպը. — Մալիսոյներու ընդհանուր ապստամբութիւնը. — Մուխթար փաշայի դահլիճին դիրքը. — Իթիհատի խլրտումները. — Հիւսէին բուհիտ և ձավիտ պէյերու բանտարկութիւնը. — Բարենորոգմանց նոր ծրագիր. — Միշտ խոստում, և դրական ոչինչ. — Իթիհատական մամուլին քննադատութիւնները Դահլիճին դէմ. — «Պէրիկի Դաշնագիրը գոյութեան իրաւունք չունի . . . ». — Փոթորիկը կը պայթի 400

ԳԼՈՒԽ ԺԶ. — Խօսքը բնդանօրինն է

Սեպտեմբեր 18ի օրը. — Պոլսոյ դրուժիւնը այդ միջոցին. — Սրկորի հարց. — Խաղաղութեան մասին յուսակց ժողովուրդը յանկարծ հիտսթափուած. — Հեռագրերները կը ծանուցանեն թէ Պալքսնեան Պետութիւնները ընդհանուր զօրահանութեան ձեռնարկած են. — Առաջին մտնրամանութիւնները. — Պոլսոյ թուրք մամուլը և «Պուլկարական վայրագութիւններ»ը. — Նախարարաց Խորհուրդին արտաքոյ կարգի նիստը. — Զիջումներ Դրան կողմէ. — Պատերազմի ի նպատակ շարժում. — Զօրահանութիւն թուրքիոյ. — Դաւառային ցոյցերը. — «Դէպի Սօֆիա» . . . դէպի Սօֆիա» . . . — Մեծ սաղմուտները կը յետաձգուին. — «Հայրենիքը վտանգի մէջ է» . — Կուսակցութիւններն ու Մամուլը կը խտտանան ձեռք ձեռքի տալ — Բնդհանուր շփոթութեան մէջ Սուլթանին ծննդեան տարեգարձին օրը կը մուրաբի. — Յունական և պուլկարական շրգանաւերը արգելքի տակ առնելու հրաման — Համալսարանական ուսանողներու առաջին ցոյցը. — Ալի Բէմալ պէյի ձուլը. — Ուսանողները կը համբուրեն Քեամիլ փաշան. — «Կեցցէ՛ թիհատը» . — Ազա Կիւնջիլզի յօդուածը թանկի մէջ. — Տխուր մտայնութիւն — Սեպտեմբեր 21ի օրը — Իթիլաֆի և Իթիհատի Իրկին միթիւնները. — Թափօրներ փողոցներուն մէջ. — «Նորա իսթէրիդ» . . . հ'ս'ս' . . . հ'ս'ս' . . . հ'ս'ս' . . . — Նորաստեղծեան էֆ. կը յայտարարէ թէ թշնամի երկրին մէջ ջարդ չպիտի ըլլայ. — Սօֆիայի առման նախափորձը Սալամուրի դաւաժմովն վրայ — Յուցարարները կը յարձակին Պալքսնեան Պետութեանց դեսպանատուններուն դէմ. — Կտորած ապակիները. — «Փիճ», «Քէօփէք սոյու», «Չանաք եալայըճը» անականները Պուլկարներու հօսցէին. — Սուլթանը յուզուած՝ լալու աստիճան. — Յայտերը քրոնիկ. Կամուսորներու արձանագրութիւնը — Հայկաթօրիկ վարդապետ մը կա նուար. — Խլրտում իսլամական աշխարհին մէջ — Բ. Դրան ձիգերը խաղաղութեան պահպանման համար. — Նոր զիջումներ. — Պոլսոյ ցոյցերուն ազդեցութիւնը Պալքսնեան Պետութեանց մօտ. — Պուլկարական և Սերպիական Խորհրդ. դարաններու բացումը. — Դահաճաւերը. — Բուլկարիկութիւն արտասովոր պարկերու. — Բոլոր կուսակցութիւնները ձեռք ձեռքի. — Դահլիճը ինչո՞ւ չէր ուզեր պատերազմել. — Նազըմ փաշայի վերագրուած խօսք մը. — Երկու սրտ ճասանքներ խաղաղասէրներն ու պատերազմասէրները. — Պէրլինի Դաշնագրին 23րդ յօդուածը. — 1880ի վիլայէթներու օրէնքը. — Բ. Դուռը կը ձգնի այդ օրէնքին գործադրութեան խտտումով անցընել տալնապը — Պ. Բուսնքարէի ջանքերուն ար. իւնքը. — Խաղաղութեան յոյսեր. — «L'a guerre est écartée», «Պատերազմ ին առաջը տանուած է», կ'ըսեն Պոլսոյ դեսպանները. — Անգլիոյ նախարարապետին յուստեսութիւնը. — Օսմ. Համալսարանի ուսանողներուն երկրորդ ցոյցը, ընդ դէմ դահլիճին, 23րդ յօդուածին և 1880ի օրէնքին. — Աւելի Իթիհատական քան Համալսարանական ցոյց. — Զինուոր կը կանուր Բ. Դրան պաշտպանութեան համար. — Զինուորական ըմբոստութեան վախ. — «Անկցի՛ հաւասարութիւնը». — Երկու Մուխթար փաշաները և ձեռք առնուած զինուորական միջոցները կը յաջողին հանդարտեցնել ցուցարարները. — Պաշարման վիճակի հրատարակութիւն և ձերբակալութիւններ. — Արգելք մամուլին՝ ցոյցին վրայ խօսելու. — Պատերազմը այլևս անխուսափելի. — Դարատաղ պատերազմ կը յայտարարէ թուրքիոյ դէմ. — Պ Բլումբնայի մեկնումը. — Տէրութիւնները յուսահատ խաղաղութեան պահպանման մասին. — Իթիհատական թերթերու ուրախութիւնը. — «Դարատաղ տակաւին շատ պզտիկ պատու մըն է թուրքիոյ կլափին համար» 423

ԳԼՈՒԽ ԺԷ. — Թուրքիոյ պատերազմական ոյժը

Պոլսոյ մէջ պարզուած տեսարանը Դարատաղի պատերազմի յայտարարութենէն վերջ. — Թուրք Մամուլին անդրանիկ երեւակայական յաղթանակները. — Թանիկ բացառութիւն կը կազմէ. — Զիբուր և մորակներու հաւաքում. — Պոլիս պատերազմական

քաղաք. — Թուրքահիւները. — Եղերական և զուարճալի դրուագներ. — Զի մը դետնափորի մը մէջ թաղուած. — Մահմուտ Շէվքէթ փաշայի աշխատութեան արդիւնքը. — Թուրք զինուորները այն համազումը ունին թէ զինուորական պտոյտի կերթան և թէ «Պուլկար աղջիկներ պիտի խաղցնեն» — Այսթէֆանօի բանակետը. — Նորագիրներու ժամանակը Պոլիս. — Թուրքիոյ զինուորական կազմակերպութիւնը. — Ֆօն տէր Կօլց փաշայի գործը. — Ժէօն-Թիւրքերուն ձիգերը բանակին վերակազմութեան համար. — Գրիստօնայ զինուորները. — Բաղդատութիւն պատերազմիկ բանակներուն. — Թուրք բանակին կրկնակի տկարութիւնը. — Ինչ թրքական ոյժեր պիտի մասնակցէին կուռին. — Թնդանօթները թուրք բանակին մէջ. — Ապարապետ Նազըմ փաշա. — Կենսագրական գիծեր. — Աքսորը. — Փախուստ արտարաւարէն՝ Հայերու միջոցաւ. — Նազըմ փաշա և Իթիհատը. — Նազըմ և Մահմուտ Շէվքէթ փաշաները. — Սթէֆան Լօզանի նկարագրութիւնը. — «Նորա» փաշա միշտ ուշ կը մտայ. — Նորաստեղծեան Դարբիէլ էֆէնտի պատմած մանրագէպը. — Նազըմ փաշայի հոգին 465

ԳԼՈՒԽ ԺԸ. — Վերջին արարուածը

Իսլամական աշխարհը պատերազմի ի նպատակ շարժման մէջ. — Թուրք դրագիտուհի մը կոչը. — Թուրքիա և Պալքսնեան Պետութիւնները Գարատաղի պատերազմի հրատարակութեան նախօրեակին. — Տէրութեանց սեպտեմբեր 25ի Ծանուցագիրը Պալքսնեան Պետութեանց. — Աւս'դ, արդէն իսկ զօրքը շարժման մէջ դրուած է. — Ծանուցագրին գտած ընդունելութիւնը. — Տէրութեանց Սեպտեմբեր 27ի Ծանուցագիրը Բ. Դրան. — Անընդունելի պահանջներ. — Տրիպոլսոյ պատերազմը վերջացնելու անհրաժեշտութիւն. — Իտալիոյ սպանոյիքը — Բ. Դուռը կը ստիպուի հաշտութիւն կնքել Իտալիոյ հետ. — Իթիհատը և Դահլիճը. — Տէրութիւնները պէտք չէ միջամտեն բարենայտագրմանց կիրարկման գործին. — Սուլթանին յայտարարութիւնը՝ ուղղուած բանակին. — Խաղաղութիւնը այլևս բանագաւառման մըն է. — Սերպ բանակներ Պուլկարիա կը մանեն՝ Պուլկար զինուորներուն աջակցելու. — Պ. Կէշօֆ առաջին անգամ ըլլալով իսլաւկիրոսիան ինչոր կը հանէ. — Պալքսնեան Պետութեանց պատասխանը Տէրութեանց Ծանուցագրին. — Վերջնապիւր չէ, բայց թուրքիոյ պատիւը ոտնակոխ կ'ընէ. — Նորաստեղծեան էֆէնտի կը պատասխանէ Տէրութեանց Ծանուցագրին. — Կայսրութեան արժանապատուութիւնը փրկելու միտում. քան խաղաղութիւնը պահպանելու փորձ. — Պալքսնեան Պետութիւնները ինչ կը պահանջէին — Բ. Դուռը յարաբերութիւնները կը իզէ Դաշնակիցներուն հետ. — Օսմ. դեսպանները ետ կը կանչուին. — Նոր ձիգ արութեանց կողմէ, դարձեալ անյաջող. — Բ. Դուռը պատերազմ կը յայտարարէ Սերպիոյ և Պուլկարիոյ դէմ, հրաւիրելով անոնց դեսպանները որ մեկնին Պրլէն. — Նազըմ փաշայի յայտարարութիւնը ուղղուած բանակին. — Պատերազմի յայտարարութեան յարուցած խանդավառութիւնը թուրքիոյ մէջ. — Պուլկարիա և Սերպիա նոյնպէս պատերազմ կը յայտարարեն թուրքիոյ դէմ. — Դաշնակիցներու պատերազմի յայտարարութեան զեկոյցը Դրան և Տէրութեանց. — Թուրքիա ինչո՞ւ միեւնոյն տտեն պատերազմ չյայտարարեց Յունաստանի դէմ. — Աթէնքի իրադարձութիւնները. — Եւրոպի թագաւորին վերագարձը. — Կրէտացի երեսփոխանները կ'ընդունուին Հելլեն խորհրդարան. — Գահաժառանգը կը մեկնի սահմանագլուխ. — Յունաստանը Պալքսնեան Դաշնակցութենէն անջատելու անպտուղ փորձը. — Թուրքիոյ համար ինչ նշանակութիւն ունէր Յունաստան. — Իտալիկութեան հաշտութիւնը և ծովային գերակշռութեան հարցը. — Դրան զիջումները. — Կրէտէն տալու տրամադրութիւն. — Յունաստանի շահը Պալքսնեան Դաշնակցութեան հաւատարմութենէն. — Յունաստան ինք կը փութայ պատերազմ յայտարարել թուրքիոյ դէմ. — Պատերազմը կը սկսի խելայեղիչ անստուգութեան մը մէջ. 493

Ք Ա Ր Տ Է Ս Ն Ե Ր

23. Կէլիպօլուի թերակղզին և շրջակաները. 377

24. Բաղդատական ըստէս պատերազմիկ տէրութեանց տարածութեան,
բնակչութեան, հանրային հասոյթներուն և զինուորական ոյժին. 389


25. Պատերազմիկ բանակներու զիրքը Սեպտեմբեր 18ին 415

26. Թուրք և Իտրատաղեան բանակներու զիրքը պատերազմի յայտա-
բարութեան միջոցին 457

27. Օսմ. բանակներու համարմբութիւնը դաշնակից բանակներու դէմ,
պատերազմի յայտարարութեան օրը. 473

Յ Ա Ւ Ն Է Լ Ո Ւ Յ Պ Ն Ե Ր

- 5. Թնդանօթի փոխադրութիւն Նքօտրայի լիճին վրայ
- 6. Զօրահանութեան տեսարանը Պոլսոյ փողոցներուն մէջ
- 7. Զօրահանութեան տեսարանը Սպարապետութեան Դրան առջեւ



Հէլէն գահաժառանգը սահմանադրուիս կը մեկնի

6103
6104
6105
6106
6107

2013

